Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Գ պրակ

ԵՐԵՎԱՆ - 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Գ պրակ

ԱՍՈՂԻԿ

Երևան
«Ասողիկ» հրատարակչություն
Երևան - 2017

The National Academy of Sciences of the Republik of Armenia
H.Acharian Institute of Language

Национальная академия наук Республики Армения
Институт языка имени Р. Ачаряна

NEW WORDS

Volume 3

НОВЫЕ СЛОВА

Выпуск 3

Yerevan – 2017 - Ереван

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա.Ս.Գալստյան, Ս.Ա.Գալստյան, Գ.Կ. Հովսեփյան, Ա.Գ. Սահակյան

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Գ պրակ

«Ասողիկ» հրատարակչություն
Երևան-2017

ՀՏԴ 81′374=19
ԳՄԴ 81.2Հ-4
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ բ.գ.դ. Վ.Լ.Կատվալյան
Գրախոս՝ բ.գ.թ., դոցենտ Լ.Գ.Թելյան

Ն 930 Նոր բառեր. Գ պրակ/ Կազմողներ՝ Ա.Ս.Գալստյան (ղեկավար), Ս.Ա.Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան. Եր., «Ասողիկ» հրատ., 2017, 158 էջ:

Սույն գիրքը «Նոր բառեր. Բ պրակի» շարունակությունն է: Գրքում ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում: Աշխատանքը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառագիտությամբ հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին:

ՀՏԴ 81′374=19
ԳՄԴ 81.2Հ-4

ISBN 978-9939-50-393-6

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառեր. Գ պրակը» պարունակում է ավելի քան 1440 բառամիավոր, որոնք գրանցված չեն պրակի 157-րդ էջում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բառարանը կազմել են՝ Ա.Ս.Գալստյան (400 բառահոդված), Ս.Ա. Գալստյան (500 բառահոդված), Գ.Կ.Հովսեփյան (300 բառահոդված), Ա.Գ.Սահակյան (240 բառահոդված):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած- ածական
բ. - բայ
բնստ. - բանաստեղծական
գ. – գոյական
գրկն. – գրականագիտական
դրձվ. - դարձվածք
դիպվ. –դիպվածային
ժրգ. - ժարգոնային
իմ.նորբ. – իմաստային նորաբանություն
իրավ. – իրավաբանական
լեզվբ. –լեզվաբանական
կենս. –կենսաբանական
կր. և չբ. – կրավորական և չեզոք բայ
հեգն. – հեգնական
հզվդ. - հազվադեպ
հրկտր դ. – հարակատար դերբայ
մկբ. – մակբայ
մարզ. – մարզական
մսնգ. - մասնագիտական
նբ. – ներգործական բայ
շին. - շինարարական
ռազմ. – ռազմական
սնոտ. - սնոտիապաշտական
տեխ. - տեխնիկական
տնտգ. – տնտեսագիտական
փխբ. – փոխաբերական
քղք. - քաղաքական

Ա

ԱԳՌԱՎԱԲՈՒՆ, գ. **Ագռավի բուն**: …. Փոսում կանգնած **ագռավաբունը** կքանդեր, եթե ուզենար *(Գյուլ., էջ 410):*

ԱԳՐՈՇՈՒԿԱ, գ. **Գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկա**: Դա հնարավորություն կտա **ագրոշուկայի** ձևավորմանն ու զարգացմանը…. *(Ազգ, 03.02.2017):*

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ, ած. **Գյուղամթերք վերամշակող**: Մրցունակ արտադրանք թողարկելու համար գրեթե բոլոր **ագրովերամշակող** ընկերություններն ունեն վերազինման կարիք …. *(Ազգ, 03.02.2017):*

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄ, գ. **Ագրարային զբոսաշրջություն:** …. **Ագրոտուրիզմը** Հայաստանի համար մեծ հեռանկար ունի *(ՀՀ, 11.02.2017):*

ԱԶԳԱԶԱՆԳՎԱԾ, գ. **Նույն ազգին պատկանող մարդկանց ամբողջությունը**: Պետք է կրթել ու դաստիարակել հայորդիներով համախմբված այնպիսի հզոր **ազգազանգված**, որ կարողանա հայրենիքի սահմանները համատեղել Աստծու կողմից պարգևած Հայկական լեռնաշխարհի սահմաններին *(ԳԹ, 19.03.2017):*

ԱԶԳԱՊԱՇՏԱԿԱՆ, ած. **Ազգը պաշտող**: ….Այսպիսի **ազգապաշտական** զգացումներ փոխանցվում են ժողովրդին միայն հողի և արյան միջոցով *(ԼՄ2, էջ 170):*

ԱԶԴՐԱՇՈՐ, գ. **Ազդրը՝ կոնքից մինչև ծունկը ծածկող շոր**: …. Նրա համար պատրաստում են նոր **ազդրաշոր** *(Ֆր., էջ 256):*

ԱԶՆՎԱԼԻՐ, ած. **Ազնիվ:** Շատերը չէին ճանաչել գրողի **ազնվալիր** հոգու գանձարանը *(Նորք, թ.1, 2017):*

ԱԼՅՈՒՐԱԹԵՐԹ, գ. **Ալյուրից պատրաստված խմորի բարակ՝ թերթի հաստությամբ շերտ**: Խմորի գունդը, …. վերածված թափանցիկ **ալյուրաթերթի,** դրված էր …. սինու վրա *(Վեռնոյ, էջ 28):*

ԱԼՐԱՏԵՐ, գ. **Ալյուրի տերը**: **Ալրատերը** բաղարջի կտորը մեկնեց Տավրոսին…. *(ՋԽ, էջ 225):*

ԱԽՏԱՃԱՆԱՉԵԼ, նբ. **Ախտը՝ հիվանդությունը ճանաչել, ախտորոշել**: Բժիշկը **ախտաճանաչեց** ամենավտանգավոր բորբոքային տենդը …. *(ԲՇ, էջ 210):*

ԱԾԽԱՄԱՏՈՒՅՑ, ած. **Ածխամատակարար:** Այնտեղ ապրանքատար շոգեքարշների կլոր դեպոն էր, **ածխամատույց** կետը… *(ՌՄՊ, հ. 1, էջ 396):*

ԱԿԱՆԱՀՈՍ, ած. **Ականով՝ փոսով հոսող**: **Ականահոս** ջրեր *(ԲՇ, էջ 441):*

ԱԿԱՆՋԱԴՐՈՒՄ, գ. **Ականջ դնելը, գաղտնաբար լսելը**: …. Իմ **ականջադրման** դիրքից պակասում էր լսելու հնարավորությունը *(Վեռնոյ, էջ 144):*

ԱԿՆԵՑԻ, գ. **Ակն գավառում ապրող:** Գաղթական **ակնեցին** նույն դժբախտ անեցին է, որին հալածեց թուրք-սելջուկ թշնամին *(ՌԿ, էջ 291):*

ԱԿՈՒՄԲԱՍԵՐ, ած. **Ակումբ հաճախելու սեր ունեցող**: …. Վերարկուները ետ գցած …. **ակումբասերների** նման …. *(Գոլս., էջ 161):*

ԱՀԱՍԱՍՏՈՒՄ, գ. **Ահասաստելը**: Հոչակված կախարդ էր դարձել, բայց դա առանց **ահասաստման** չէր հաջողվել նրան *(Ֆր., էջ 103):*

ԱՀԵՂԱԳՈՉԵԼ, բ. **Ուժգին հնչել, ահազանգել:** Թող այս ժամից ղողանջեն Մայր տաճարի զանգերը սարսռաձայն, թող **ահեղագոչեն** Սուրբ Էջմիածնի բոլոր վանքերը *(ՌԿ, էջ 141):*

ԱՀԵՂԱՄԱՐՏ, գ. **Ահեղ մարտ:** Սկսվեց կատարյալ **ահեղամարտ** *(ՌԿ, էջ 165):*

ԱՀԵՐԳ, գ. (Վերնագիր) **Ահի՝ վախի զգացումին նվիրված երգ:** *(ԼՄ4, էջ 100):*

ԱՂԲԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ, գ. **Աղբի այրումից գոյացող էներգիայով աշխատող էլեկտրակայան**: …. Դիտել եմ Ավստրալիայի Մելբուռն քաղաքում աղբի այրման միջոցով էլեկտրաէներգիայի ստացման գործարանի գործունեությունը, այսպես ասած, **աղբաէլեկտրակայանի** աշխատանքը: *(Իր., 07.03.2017):*

ԱՂԲԱՅՐԻՉ, ած. **Աղբը այրող**: Վարչապետ Դմիտրի Մեդվեդևի աշխատակազմի չինովնիկները մասնագիտացված **աղբայրիչ** գործարան կառուցելու ծրագիր են մշակում *(ՀՀ, 21.02.2017):*

ԱՂԲԱՍԱՐ, գ. **Աղբ կուտակելուց՝ թափվելուց առաջացած աղբի սարանման կույտ, աղբակույտ**: Իշխանյանի կարգադրությամբ …. գործարանի կենցաղային, ոչ կենցաղային և շինարարական աղբը հանեցին թափեցին գործարան մտնող մայրուղու տարածքում: **Աղբասարում** վխտում էին անտեր շները …. *(Մարտ., էջ 168):*

ԱՂԵՏԱԾԻՆ, ած. **Աղետի պատճառ դարձող**: Այդ ցանկում գերադաս են հողի, ջրի պահպանության մտահոգությունը, մթնոլորտի աղտոտվածության **աղետածին** հետևանքները, անխոհեմ ծառահատումների վնասները *(ՄՂ, էջ 3):*

ԱՂՄԿԱՀՈՐԴ, ած. **Բանուկ, աղմկալից:** Շոգենավերը խնամքով տանում են իրենց բեռը…., որպեսզի չդադարի եռալ …. խորհրդավոր աշխատանքը **աղմկահորդ** փողոցներում…., հայելատիպ …. ապակիների ետևում *(ՌՍՊ, հ. 1, էջ 178):*

ԱՂՈԹԱԼԵՋՈՒ, գ. **Աղոթելու համար պատշաճ՝ հարմար:** Գրիգոր Նարեկացին իր բեղուն, **աղոթալեզու,** առինքնող հայերենով լայնորեն բացեց աստվածամերձ հոգու դռները…. *(Գարուն, թ. 5, 1999):*

ԱՂՑԱՆԱՎԱՃԱՌ, գ. **Աղցանացու բանջար վաճառող**: Դա **աղցանավաճառի** գործն է *(Բ7, էջ 799):*

ԱՄԵՆԱԳԻՇԵՐՅԱ, ած.**Ամեն գիշեր կատարվող:** ….Անձնակազմը …. փոխարինել էր ճապոնական կղզիների վրա կատարվող **ամենագիշերյա** թռիչքներին *(ՌՍՊ, հ. 2, էջ 63):*

ԱՄՊԱՑՐՈՂ, ած. **Ամպացիր, կարկտաբեր թուխպերը ցրող**: …. Գործադիրի ղեկավարը գյուղատնտեսության նախարարին հանձնարարել է, որ հայեցակարգի շրջանակում անդրադարձ կատարվի նաև **ամպացրող** թնդանոթների և կարկտապաշտպան ցանցերի արդյունավետության ու տնտեսական իրացվելիությանը…. *(ՀՀ, 27.01.2017):*

ԱՄՊԱՓՈՇԻ, գ. **Փոշուց առաջացած ամպ, ամպ դարձած՝ ամպի վերածված փոշի**: …. Ինչպես էին …. անհետանում պտտվող ավազի կարմիր **ամպափոշու** մեջ *(Ֆր., էջ 105):*

ԱՄՊՐՈՊԱՔԱՐ, գ. **Երկնաքար, օդաքար**: Նովգորոդում մի ժամանակ կանգնած էր մարդու կերպով և **ամպրոպաքարը** ձեռքին Պերունի արձանը *(Ֆր., էջ 195):*

ԱՄՐԱՔԱՅԼ, մկբ., ած. **Ամուր՝ հաստատուն քայլերով**: …. **Ամրաքայլ** շարունակում էր գնալ …. փողոցով ….. *(Գոլս., էջ 84):*

ԱՄՐՈՑԱՎԱՆ, գ. **Ամրոց ունեցող ավան , որպես ամրոց ծառայող ավան**: Երևում է, որ միջին դարերում համբավ ունեցող **ամրոցավան** է եղել *(ՍԽ, էջ 88):*

ԱՅԳԵԶՈՒՐԿ, ած. **Այգուց զրկված**: …. Դու կնմանվես **այգեզուրկ** պարտիզպանի, որ ժայռերի մեջ է փնտրում իր երևակայական այգին *(ԳԹ, 24.03.2017):*

ԱՅԼԱՑԵՂԱՅԻՆ, 1. գ. **Այլ՝ ուրիշ ցեղի պատկանող**: Կտրուկ առարկում էին այն բանի դեմ, որ իրենց անունները հայտնի դառնան **այլացեղայիններին** *(Ֆր., էջ 296):* 2. ած. **Այլացեղին՝ այլացեղայնության հատուկ՝ վերաբերող, այլացեղի, այլացեղության**:

ԱՅԾԱԿԵՐՊ, ած. **Այծի կերպարանքով՝ տեսքով**: Ցորենի ոգին …. պատկանում է անտառի **այծակերպ** ոգիների բազմաթիվ տարատեսակներից մեկին *(Ֆր., էջ 545):*

ԱՅՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ, ած. **Այս՝ նյութական աշխարհին վերաբերող՝ հատուկ, այսաշխարհի**: …. Կանոնական ձևակերպումների խոհական հիմնավորումը հանգեցնում է «կույր մտքի» **այսաշխարհային** հիմնավորումներին *(Սաֆ., էջ 60):*

ԱՅՍԿՅԱՆՔԱՅԻՆ, ած. **Այս կյանքին՝ նյութական աշխարհին հատուկ, այսաշխարհային**: Հողից ծնված ու հող դարձած մարդու այս …. ճանապարհը, որ այն կյանքում էլ շատ **այսկյանքային** է, …. անշուշտ թողնում է իր ազդեցությունը *(Սաֆ., էջ 235):*

ԱՅՐԱՎԱՆ, գ. **Այրերի ավան՝ երբեմնի բնակելի քարանձավների ամբողջությունը**: Ձորում Քարկոփ անունով **այրավան** կա, վաղուց, շատ վաղուց լքված *(ՍԽ, էջ 110):*

ԱՆԱՌԱԿՈՒՀԻ, գ. **Անառակ՝ անբարոյական կին:** Տասնիններորդ դարի առաջին կեսի նշանավոր **անառակուհի**… *(ՌՍՊ, հ. 1, էջ 91):*

ԱՆԳՂԱՔԻԹ, ած. **Անգղի կտուցի նմանվող քթով:** …. **Անգղաքիթ** դեմքը շառագունեց, խոպոտ ու բարակ ձայնն ավելի բարակեց *(ՌՍՊ, հ. 2, էջ 112):*

ԱՆԴՐՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Տարածաշրջանին հարակցվող**: …. Այս գիտելիքներն ու փորձը վերածվել են տարածաշրջանային ու **անդրտարածաշրջանային** համագործակցության խթանմանն ուղղված մեր արտաքին ու պաշտպանական քաղաքականության՝ որպես առկա վեճերի կարգավորման և տևական խաղաղության երաշխավորման հնարավոր միակ միջոց *(ՀՀ, 21.02.2017):*

ԱՆՁԳՈՒՇԱՉԱՓ, ած. **Անզգուշության հասնելու չափ, անզգուշություն դառնալու չափ**: Սիրտը կարո՞ղ է …. **անզգուշաչափ** դժբախտության ճնշման ներքո ձեռք բերել անբուժելի տգեղություններ *(Հյուգո, էջ 99):*

ԱՆԿԱՍԿԱԾԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Անկասկածություն**: …. Իր իմացական **անկասկածելիությունը** Մագիստրոսը ձևակերպում է …. մի ուղերձի մեջ *(Սաֆ., էջ 160):*

ԱՆԿՈՂՆԱԳՈՐԳ, գ. **Անկողնու վրա որպես ծածկոց գցվող գորգ:** …. Գրասենյակի կանաչ մահուդից սկսած մինչև **անկողնագորգը** նման էր այն պառաված աղջիկների ցուրտ կացարաններին …. *(Բ5, էջ 163):*

ԱՆԿՈՂՆԱԶԳԵՍՏ, գ. **Գիշերազգեստ, գիշերանոց**: Նա **անկողնազգեստի** բաճկոնակ էր *(Օպ. հայ գր., 11.02.2017):*

ԱՆՁԱՎԱԳԻՐ, ած. (փխբ., դիպվ.): ….Դռնից միջանցքի վերջում նպատակային դուռը, որից այն կողմ համաշխարհային գրադարանն էր՝ անշարժացած բառերի **անձավագիր** լռությամբ *(Անդին, թ. 2, 2017):*

ԱՆՁԱՎԱՆՄԱՆ, ած. **Անձավի նմանվող**: Տավրոսը ներս մտավ **անձավանման** խորշը *(ՋԽ, էջ 483):*

ԱՆՁՆԱՄԱՏՆԻՉ, ած. **Անձը մատնող**: …. Դժգոհելով յուրայինների բնավորության վայրիվերո, երբեմն **անձնամատնիչ**, երբեմն կենտրոնախույս դրսևորումներից՝ ասում են մերոնք…. *(ԱԱ, ԸԵ, էջ 25):*

ԱՆՁՐԵՎԱՀԱՐՈՒՅՑ, ած., գ. **Անձրև հարուցող՝ առաջացնող**: …. Ցեղերի առաջնորդների մեծ մասը **անձրևահարույցներ** են *(Ֆր., էջ 105):*

ԱՆՁՐԵՎԱՀՄԱ, գ. (սնոտ.): **Հմայությամբ անձրև առաջացնող՝ բերող**: Հաջողակ **անձրևահման** …. օգտվում է շատ մեծ իշխանությունից *(Ֆր., էջ 321):*

ԱՆՁՐԵՎԱՄՇՈՒՇ, գ. **Անձրևների տեղումից առաջացած մշուշ**: Ծիածանախառն լույսի և **անձրևամշուշի** գարնանային այդ հրաշալի օրը լույս աշխարհ են գալիս կույր գայլուկներ *(ՋԽ, էջ 192):*

ԱՆՁՐԵՎԱՎԱՐ, գ. **Անձրև առաջացնելու համար որոշ ժողովուրդների կողմից կատարվող ծես**: Կովկասում փշավներն ու խևսուրները երաշտի ժամանակ կատարում են մի ծես, որը կոչվում է «**անձրևավար**» *(Ֆր., էջ 87):*

ԱՆՁՐԵՎԱՑՈՂ, գ. **Ցողանման՝ մանր՝ բարակ անձրև**: …. Պարզ է ու արև, սակայն երբեմն աննկատելի **անձրևացողի** մի ալիք է զարնվում մեզ ու ցորենի շեղջերին *(ՍԽ, էջ 414):*

ԱՆՊԱՅՄԱՆԱԴԻՐ, ած. **Առանց պայմանագրի, անպայմանագրորդ:** Այդ երկյուղած չափավորությունը, չափավորի հանդեպ այդ **անպայմանադիր** պարտավորությունը մեզ ստիպում էր նկատել, թե գուցե հարկ չկա մեր ազնվությունը փնտրել արյունով լերդացած նեղուցներում…. *(ՀՄ, էջ 6):*

ԱՆՋՐՊԵՏՎԱԾՔ, գ. **Անջրպետում:** Յուրաքանչյուր առաջընթաց հաղթանակ է՝ առանձին վերցրած և **անջրպետվածք՝** ամբողջի մեջ *(Անդին, թ. 2, 2017):*

ԱՆՎԱԿՈԽ, ած. **Անիվներից տրորված, կոխկոտված:** Հազվադեպ մի անցորդ էր լինում, որն արևածաղկի սերմ էր չրթում ու թքում **անվակոխ** փողոցի ցեխի մեջ…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 260):*

ԱՆՎԱՆԱՆՇԵԼ, նբ. **Անվանել, անվանակոչել, անուն տալ**: Մեր բարեկամները …. իրենց կամավոր նվիրատվությունները **անվանանշեն** որպես անդամավճարներ *(Հայրունի 1, էջ 479):*

ԱՆՎԱՆԱՎԱԿ, ած. **Անիվավոր՝ անիվներ ունեցող նավակ**: Բնիկները զբաղված են առագաստներով հանդերձված երկու **անվանավակ** կառուցելով *(Ֆր., էջ 666):*

ԱՆՎԱՆՈՒՄԱՅԻՆ, ած. **Անվանմանը հատուկ՝ վերաբերող, անվանմանը տրվող**: …. Հետաքրքրիր է հանելուկի **անվանումային** բնութագիրը *(Սաֆ., էջ 177):*

ԱՆՏԱՌԱՋԱՆԳՎԱԾ, գ. **Մեծ տարածություն ընդգրկող անտառներ**: Մարդու հայացքի առջև բացվում էին **անտառազանգվածներ** *(Ֆր., էջ 183):*

ԱՆՑՈՐԴՈՒՀԻ, գ. **Անցորդ կին**: **Անցորդուհի** (Բանաստեղծության վերնագիր) *(ՎԴ, էջ 33):*

ԱՆՈՒՇԱՋՈՒՐ, ած. **Քաղցր ջուր ունեցող**: Պարսիկները խենթանում էին Սևանի ջրի կարոտից: Նրան ասում էին «Դերիա շիրին»-**անուշաջուր** ծով *(ՍԽ, էջ 129):*

ԱՆՈՒՐՎԱԳԻԾ, ած. **Ուրվագիծ չունեցող:** Տաղանդը հիշողության այն դրսևորումն է, որը նրանց ի վերջո հնարավորություն կընձեռի մոտենալ այդ **անուրվագիծ** հիշողությանը, հստակ լսել այն, գրի առնել…. *(Անդին, թ. 2, 2016):*

ԱՇԽԱՏԱԳՈՐԾԸՆԹԱՑ, գ. **Աշխատանքային՝ աշխատանքների գործընթաց**: Ծանոթանալով **աշխատագործընթացներին** …. *(Հայրունի 1, էջ 94):*

ԱՇԽԱՏԱԴԱՇՏ, գ. (փխբ.): **Աշխատանքի ասպարեզ**: **Աշխատադաշտը** ընդլայնելու նպատակով …. *(Հայրունի 1, էջ 168):*

ԱՇԽԱՏԱՃՅՈՒՂ, գ. **Աշխատանքի բնագավառ՝ ճյուղ**: …. Պոլսում մի նոր **աշխատաճյուղ** հիմնել …. *(Հայրունի 1, էջ 357):*

ԱՇԽԱՐՀԱԳԻՏԱԿ, ած. …. Այդ մարդու **աշխարհագիտակ** երգն էի ես լսում ապշած, զարմացած… *(ՎՓ, էջ 130):*

ԱՇԽԱՐՀԱՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Աշխարհի փոփոխություն, աշխարհափոխում**: **Աշխարհափոփոխությունները**, ծառացած մարտահրավերները իրենց ազդեցությունն են թողնում և՛ Հայաստանի, և՛ Սփյուռքի վրա *(Լրաբեր, 3, 2016, էջ 3)*:

ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ, ած. **Ապակողմնորոշող**: …. Պայքար մղել …. **ապակողմնորոշիչ** լրատվության դեմ *(Հայրենի 1, էջ 63)*:

ԱՊԱՀԱՇՎԱՐԿ, գ. **Հաշվարկին հակադիր իրադրություն**: …. Տարածաշրջանային, աշխարհաքաղաքական արագ զարգացումների այս պայմաններում ցանկացած **հաշվարկ** նույնքան արագ կարող է ապահաշվարկի վերածվել: *(Իր., 04.10.2016)*:

ԱՊԱՇԽԱՐՈՂՈՒՀԻ, գ. **Ապաշխարող կին**: Եկեղեցականը …. անմիջապես մոտենալով իր **ապաշխարողուհուն** …. սկսեց խոսել նրա հետ …. *(Բ7, էջ 743)*:

ԱՊԱՐԱՆԱՊԱՀ, գ., ած. **Ապարանք պահող՝ հսկող**: …. Մորական պապդ **ապարանապահ** է եղել *(Պրուս, էջ 514)*:

ԱՌԱԾԱԽՈՍԵԼ, բ. **Առածներով խոսել:** - Առևտուրի մեջ շահն ու վնասն իրարու հետ ախպեր են,- մխիթարում էր այդ օրը վնաս արած ընկերոջն ուղեկիցը՝ **առածախոսելով** *(ՄԽ, էջ126)*:

ԱՌԱԾԱՍԱՑ, գ. **Առած ասող**: …. Էպոս ասացողը՝ էպոսասացը, ավելի թույլ է կարողանում պատկերացնել իր ասածի ժանրը, քան, ասենք, հեքիաթասացը, անեկդոտ պատմողը, առակասացն ու **առածասացը**…. *(Տոն., էջ 307)*:

ԱՌԱՋԱԹԵՎ, գ. **Շարքի առջևի մասը՝ թևը:** Պանծալի այդ տեսքով....արտիստը բարձրաստիճան զինվորականների **առաջաթևում** բռնել է դագաղի կանթից *(ՌԿ, էջ 251)*:

ԱՌԱՋՆԱԲԵՐՔ, գ. **Առաջին բերք**: (Որը) աներկյուղ ձեռք է տալիս սրբազան **առաջնաբերքին** *(Ֆր., էջ 547)*:

ԱՌԱՐԿԱՅԱԽՈՒՄԲ, գ. **Դասավանդվող առարկաների խումբը**: Մենք պետք է փորձենք մեր **առարկայախմբերը** հարմարեցնել այս սերնդի մտածողությանը … *(ԳԹ, 10.02.2017)*:

ԱՌԵՎՏՐԱՊԱՇՏՈՐԵՆ, մկբ. **Առևտուրը պաշտելով**: …. **Առևտրապաշտորեն** քրիստոնեական հաստատությունները …. երակներով շրջող կենդանի արյուն են *(Գոլս., էջ 299):*

ԱՌՅՈՒԾԱՆՈՑ, գ. **Առյուծները պահելու տեղ**: …. Իրեն առաջնորդեցին դեպի **առյուծանոցը** *(Գոլս., էջ 219):*

ԱՌՈՂՋԱՏԵՍ, ած. **Առողջ տեսք ունեցող, առողջ տեսքով**: **Առողջատես** միջահասակ մի ամերիկուհի *(Հեմ., էջ 81):*

ԱՍՊԵՏԵԼ, բ. **Հերոսանալ:** Պավել բեգին արժանի այդ հասակը առլեցուն է հպարտությամբ, և **ասպետելու** տենչը խտանում է նրա երակներում *(ՌԿ, էջ 157):*

ԱՍՏԻՃԱՆԱՇԱՐՔ, գ. **Իրար հաջորդող աստիճանների ամբողջությունը**: Այն ժամանակ որևէ պատճառ չունեի հինգ **աստիճանաշարքերը** մի շնչով չհաղթահարելու *(Սար., էջ 379):*

ԱՍՏՂԱԹԱՓՈՆ, գ. (բնստ.): **Աստղաթափ:** Գիշերասահ մոխրաբլուր մի ամայք, // Աստղաթափոն, մայրցամաքվող շիրմալույս, // Պսակակիր խորհրդաժամի հմայք *(ԲԱ, էջ 19):*

ԱՍՏՂԱՀԱՆԴԵՍ, գ. (բնստ.): **Աստղերի հանդես**: Քայլիր, գարուն է և **աստղահանդես** …. Քայլիր, գարուն է դարձի ջրերում, // ուր խնկահոտն է օրորոցների, // ուր մի մանուկ է ջուրը օրորում, // նոր ընթացքի հետ **աստղահանդեսի** *(ԳԹ, 09.12.2016):*

ԱՍՏՂԱՇՌԱՅԼ, ած. **Աստղառատ**: ….Կիսաթափանց **աստղաշռայլ** երկնքի տակ ծխախոտդ գիշերվա մեջ շիկացնում է կայծկլտումներ *(Ապրիկ, 2-3, 1990, էջ 81):*

ԱՍՏՂԱՇՐՋԱՆԱԿ, գ. **Աստղաձև շրջանակ**: Ութանկյուն **աստղաշրջանակների** մեջ քանդակված են …. *(ՍԽ, էջ 40):*

ԱՍՏՂՈՐԴԻ, գ. (դիպվ.): **Աստղից սերված, աստղի որդի**: …. Մենք կատարում ենք **աստղորդիների** մեր դերը՝ մեր կենսակերպի, մեր հոգեկերտվածքի արժանապատվության տերը լինելով հանդերձ *(ԳԹ, 10.03.2017):*

ԱՍՏՎԱԾԱՀՈՒՆԴ, ած. **Աստվածային հունդերից սերած**: Համոզված եմ, որ չկա (և չի էլ եղել) առավել նշանակալից պարգև հայոց

մայրության և գեղեցկության տոնի առթիվ, քան աստվածահունչ սիրո և պոեզիայի **աստվածահունդ** կատարելության գովքը՝ ի նվիրումն մեր մայրերի, կանանց և դուստրերի *(Իր,, 14.03.2017):*

ԱՍՏՎԱԾԱՀՈՒՆՉ, ած. **Աստվածային հնչողություն ունեցող**: Տե՛ս ԱՍՏՎԱԾԱՀՈՒՆԴ-ի օրինակը:

ԱՍՏՎԱԾԱՊԱՀԱՆՋ, ած. **Աստծու կողմից պահանջված:** Շտապորեն ետ վերադառնալու հանկարծակի պահանջը նրա մեջ խորացավ, երբ մեկեն տեղեկացավ և զգուշացավ. հաստատ կուշանա **աստվածապահանջ** երեկոյից *(ՌԿ, էջ 416):*

ԱՎԱԳԱԿՈՉ, գ. **Ավագի կոչ:** Նրա ձայնը հնչում էր որպես **ավագակոչ** *(ՌԿ, էջ 170):*

ԱՎԱՋԱԽԻՐ, ած. **Ավազների մեջ խրված, ավազախառն**: Կատարյալ անապատ է այս Արազդայանի դաշտը՝ խանձված փշերով, **ավազախիր** հողով …. *(ՍԽ, էջ 8):*

ԱՎԱՋԱՓՈՐ, ած. (իմ. նորբ.): **Ավազի մեջ փորած**: Ասել էին, որ դաշտային խոհանոց է լինելու և **ավազափոր** աղյուսե թոնիր *(Բոհջ., էջ 154):*

ԱՎԱՋԱՔԱՐԵ, ած. **Ավազաքարով ծածկված՝ պատված**: Հետո **ավազաքարե** ու կավե դարալանջեր էին գնացքին ընդառաջ վազում *(Հեմ., էջ 80):*

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Ավետարանական դառնալը՝ դարձնելը**: Մահմեդականների **ավետարանականացում** *(Հայրունի 1, էջ 59):*

ԱՎՅՈՒՆԱՎՈՐԵԼ, նբ. **Ավյուն՝ ուժ ու եռանդ տալ, ոգևորել**: …. Պատերազմը կարծես **ավյունավորեց** նրան *(Գյուլ., էջ 329):*

ԱՎՇԱԼԻ, ած. **Ավիշով լի, ավշառատ, ավշաշատ**: …. Ինչպես է աճում ծառը …. ջլուտ ու **ավշալի,** նվազ դիմացկուն բույսերի մեջ *(Գոլս., էջ 14):*

ԱՎՍՏՐԱՀԱՅ, գ. **Ավստրիայում ապրող՝ ապրած հայ:** Հետագա տասնամյակներում **ավստրահայերի** թիվն աճեց նաև երկրի երկրորդ քաղաք Գրացում *(Գարուն, թ. 5, 1999):*

ԱՎՏՈՄԱՆԴՈՒՂՔ, գ. **Ավտոմեքենաների վրա հարմարեցված սանդուղք:**….Դեպքի վայր մեկնեցին 13 մարտական հաշվարկ, 2 **ավտոսանդուղք** *(Հրապ., 13.07.2016):*

ԱՏԱՄՆԱՊԱՐԻՍՊ, գ. **Ատամնավոր պարիսպ**: …. Հին դղյակի ատամնապարիսպները *(Ֆր., էջ 42):*

ԱՐԱԲԱԶԱՐԴ, գ. **Արաբական ոճով զարդ:** ….Որի [պատի] վրա նրբահյուս **արաբազարդեր** կային *(ՌՍՊ, հ. 1, էջ 105):*

ԱՐԱԲԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Արաբական դարձնելը, վերածելը**: Հատկապես 1952 թ. հեղափոխությունից հետո երկրում իրականացված մասնավոր սեփականության ազգայնացման և համատարած **արաբականացման** քաղաքականության պատճառով հայ համայնքի գերակշիռ մեծամասնությունը արտագաղթեց Եգիպտոսից *(Լրաբեր, 3, 2016, էջ 46):*

ԱՐԱԳԱԾԱՀԱՅԱՑ, ած. **Արագածին նայող**: Գեղազնիկը ծնվել էր Սասունից շատ հեռու՝ **արագածահայաց** Լեռնարոտ գյուղում…. *(Ջան., էջ 12):*

ԱՐԱՐՉՈՒՀԻ, գ. **Աստվածուհի**: Իրիսի համար օգտագործվող մակդիրների թվում կան այսպիսիները. «ամենայն կանաչի **արարչուհի**», «կանաչի դիցուհի» *(Ֆր., էջ 150):*

ԱՐԳԵԼԱԿԱՂԱՊԱՐ, գ. **Արգելք հանդիսացող նմուշ, օրինակ:** ….Վագոններից մեկի **արգելակաղապարն** ընկավ…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 392):*

ԱՐԵՎԱԲՈՒԺԱՐԱՆ, գ. **Բուժարան, որտեղ բուժում են արևի ճառագայթներով**: Գործողության վայրը՝ Սան Ֆրանցիսկոյի քաղաքային հիվանդանոցի երրորդ բաժանմունքի **արևաբուժարանը** *(Օպ. Հայ գր., էջ 459):*

ԱՐԵՎԱԳՈՉ, ած. (փխբ., բնստ.): **Հնչեղ:** ….Սա աշխարհի ամենահզոր ջրվեժն է՝ ամենագեղեցիկ ծիածանով, որի **արևագոչ** ձայնը լսվում է շատ հեռուներում *(ԴԵ, էջ 35):*

ԱՐԵՎԱԹԱՂԱՆԹ, ած. (փխբ., բնստ.): **Արևի լույսով շաղախված:** Տիրող աշխատանքային թոհից այն կողմ, նորաբաց **արևաթաղանթ** իրականության հեռվում …. մարդը վրանների մի խումբ տեսավ *(Ամդին, թ. 2, 2017):*

ԱՐԵՎԱՀԱԾ, ած. (փխբ., բնստ.): **Միշտ արևոտ, արևառատ:** …. Պտտվում է հայրենիքի եզերքների **արևահած** գլխին, հեռանում ու կրկին մոտենում նրան…. *(ԳԹ, 28.04.2017):*

ԱՐԵՎԱՀԱՆԴԵՍ, գ. (փխբ.): **Արևի հանդես, արևազօծ տեսարան:** Մայիսյան մայրամուտի **արևահանդեսը**… *(ՌԿ, էջ 194):*

ԱՐԵՎԱՀՈՐՁԱՆՔ, գ. (փխբ.): **Արևի ճաճանչների հորդում, առատ շողարձակում:** Ահա այն պատվանդանը, որի հիմքի վրա վեր էր խոյանում անտեսանելի **արևահորձանքից** բոցավառվող մի կոթողային կերպարանք…. *(Հ, էջ 134):*

ԱՐԵՎԽՈՑ, գ. **Արևից առաջացած խոց:** Իսկ քթին նկատվում էր **արևխոցը,** որն այդպես էլ չբուժվեց *(Անդին, թ. 3, 2016):*

ԱՐԹՄՆԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Արթուն վիճակում գտնվելը**: Ծիսակատարությունների թվում են …. նախնական պասը, ջահերթը, համագիշերային **արթմնիությունը** …. *(Ֆր., էջ 464):*

ԱՐԺԵՔԱՇԱՏ, ած. **Շատ արժեքներ ունեցող, բազմարժեք**: **Արժեքաշատ** հոդված *(Աբով., էջ 10):*

ԱՐԻՏՈՒՆՑԻ, գ. (դիպվ.): **«Արի տուն» ծրագրի մասնակից**: …. Կազմակերպվեց **արիտունցիների** հավաք…. *(ՀՀ, 04.03.2017):*

ԱՐԾԱԹԱՄԵՋՔ, ած. **Արծաթագույն:** Մարգագետիններում ու կիրճերում **արծաթամեջք** ձկների նման ոլոր-մոլոր են անում գետերն ու գետակները *(ՄՄ, էջ 102):*

ԱՐԾՆԱՊԱԿԵ, ած. **Արծնապակյա, արծնապակիով ծածկված՝ պատված**: **Արծնապակե** բաժակ *(Գյուլ., էջ 203):*

ԱՐԾՎԱՀԱՍ, ած. (բնստ.): **Բարձր, արծվի թռիչքի բարձրության հասնող**: …. Նորից ցնցված են Նաիրի երկրի **արծվահաս** ամրություններն ու անարգ թշնամու համար մահասփյուռ անդնդախոր ձորերը *(Անդին, թ. 1, 2017):*

ԱՐՄԱՎԱԳԻՆԻ, գ. **Արմավից ստացվող գինի**: …. Ուտում է անլվա ձեռքերով, խմում է միայն **արմավագինի** *(Ֆր., էջ 85):*

ԱՐՄԱՏԱՍՓՅՈՒՌ, ած. **Արմատները սփռած՝ տարբեր կողմեր տարածած**: Սկսում է լալ **արմատասփյուռ** մայրու մոտ *(Ֆր., էջ 386)*:

ԱՐՄՏԻՔԱՎԱՃԱՌ, գ. **Արմտիք վաճառող**: …. Օգտվելով **արմտիքավաճառի** զարմանքից …. որոտացող ձայնով գոռաց …. *(Բ7, էջ 534)*:

ԱՐՅՈՒՆԱԵՐԱԽ, ած. **Արյունոտ երախ ունեցող**: …. Ատամները կոճտացրեց մի **արյունաերախ** գայլ *(Մարտ., էջ 87)*:

ԱՐՅՈՒՆԱԾԱԾԿ, ած. **Արյունով ծածկված, արյունապատ**: Շարունակ հանդիպում էին **արյունածածկ** վայրեր *(Հայրունի 1, էջ 226)*:

ԱՐՇԱՎԱՄՐՑՈՒՄ, գ. **Մրցում՝ արշավով՝ արագ վազքով**: Մարայան դաշտում երկանիվ կառքով **արշավամրցումներ** էին կազմակերպում *(Ֆր., էջ 561)*:

ԱՐՋԱՊԱՇՏ, ած. **Որպես տոտեմի կենդանու՝ արջին պաշտող**: …. Այներին (Եղո կղզում ապրող նախնադարյան ազգույթ) կարելի է բնորոշել որպես **արջապաշտների** …. *(Ֆր., էջ 593)*:

ԱՐՋԱՏՈՆ, գ. **Արջի տոն՝ գիլյակների (նիվխերի) ծիսական տոներից մեկը**: Տան ամբողջ սպասքը զարդարված է արջերի փորագիր պատկերներով …..., որոնք առնչվում են **արջատոնի** հետ *(Ֆր., էջ 602)*:

ԱՐՋԱՓՈՍ, գ. **Արջերը գազանանոցում պահելու համար պատրաստված փոս**: Իր որդին ու երկու թոռները ահա կանգնել էին **արջափոսի** եզրին …. *(Գոլս., էջ 219)*:

ԱՐՎԵՍՏԱԼԵԶՈՒ, գ. **Արվեստի միջոցով արտահայտված միտք, լեզու:** Պատմիչների ու հայ գիտնականների անզգացմունքային ու անըմբռնելի թվացյալ կոպիտ լեզուն այլևս **արվեստալեզու** է…. *(Գարուն, թ. 5, 1999)*:

ԱՐՎԵՍՏԱԾԱՐԱՎ, ած. **Արվեստի նկատմամբ ծարավ ունեցող**: Այդ ոճը բխեց **արվեստածարավ** հոգիների մրմունջից *(ԼՄ, էջ 21)*:

ԱՐՏԱԲԱԺԱՆ, ած. **Արտերը իրարից բաժանող**: **Արտաբաժան** սահմանում Նավասարդի հոտաղը լծկանների գլուխը շուռ էր տալիս *(ՋԽ, էջ 206)*:

ԱՐՏԱԺԱՄԱՆԱԿԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Արտաժամանակային դառնալը՝ դարձնելը**: Իհարկե, մինչև որևէ հերոսական դրվագի գեղարվեստական **արտաժամանակայնացումը** էպոս դառնալու հավակնող գեղարվեստական տեքստն անցնում է հերոսավեպի տեքստային փուլը…. *(Տոն., էջ 299):*

ԱՐՏԱԺԱՄԱՆԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտաժամանակային լինելը**: … Որպեսզի ապահովվի էպոսի ամենակարևոր առանձնահատկություններից վերը նշվածը՝ **արտաժամանակայնությունը** (կամ վերժամանակայնությունը)…. *(Տոն., էջ 299):*

ԱՐՏԱԻՐԱԿԱՆ, ած. **Իրականությունից դուրս, ոչ իրական**: Թվում է՝ հայտնվում ես **արտաիրական** տարածության մեջ ….. *(Արով., էջ 97):*

ԱՐՏԱՌՈՑՈՐԵՆ, մկբ. **Արտառոց կերպով:** [Սենյակները] մնում էին **արտառոցորեն** ավերված ու մերկ վիճակում *(Բ5, էջ 320):*

ԱՐՑՈՒՆՔԱՀԵՂՁ, ած. **Արցունքներից հեղձվող, արտասվախեղդ, արցունքախեղդ**: Առջևից գնում է …. սևազգեստ և արցունքախեղդ կինը *(Ֆր., էջ 360):*

ԱՐՑՈՒՆՔԱՌԱՏ, ած.**Առատ արցունքով:** Աչքերի մեջ **արցունքառատ** //Ես տեսնում եմ զվարթ աստղեր *(ԼՄ4, էջ 24):*

ԱՐՑՈՒՆՔԱՑԱՅՏ, ած. **Արցունք ցայտող**: Նրանց **արցունքացայտ** աչքերի առաջ հաճախ տեսլանում էին միասին, սակայն տարբեր կերպ, ապրած օրերն ու դրանց հետ կապված ողջ հմայքը …. *(ԳԹ, 28.04.2017):*

ԱՔՍՈՐԱՃԱՆԱՊԱՐՀ, գ. **Աքսոր տանող ճանապարհ, աքսորաճամփա**: Ամբաստանել [էին] **աքսորաճանապարհի** մերձակա գյուղերում *(Հայրունի 1, էջ 234):*

Բ

ԲԱԶՄԱԳԻՏԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Բազմագիտակ լինելը, շատ գիտելիքներ ունենալը**: Ջ. Ֆրեզերի ստեղծագործական բեղունությունը բացատրվում է նրա հսկայական **բազմագիտակությամբ** *(Ֆր., էջ 841)*:

ԲԱԶՄԱՋԻՆՎՈՐ, ած. **Մեծաթիվ զինվորներով:** Որքան անսպասելի և ավերիչ էր գնդակոծությունը, նույնքան անգամ անհավատալի ելան **բազմազինվոր** հարձակվողները *(ՌԿ, էջ 161)*:

ԲԱԶՄԱԺԱՆԻՔ, ած. **Բազում ժանիք ունեցող:** …. Որոնք հոշոտվեցին սեփական գլխի **բազմաժանիք** երախով *(ՍՀ, էջ 12)*:

ԲԱԶՄԱԽՈՍՈՒՆ, ած. **Շատ բան ասող, բազմաբովանդակ**: Խ. Աբովյանը …. իր հանճարեղ ստեղծագործությանը տվեց «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» **բազմախոսուն,** ամեն ինչ ասող վերնագիրը *(Աբով., էջ 8)*:

ԲԱԶՄԱՄՂՈՆ, ած. **Շատ մղոններ ընդգրկող**: …. Ծովագնացները հոտով **բազմամղոն** հեռավորությունից իմանում են, որ մոտենում են Ցեյլոնին *(Անդր., էջ 298)*:

ԲԱԶՄԱՓԵՇ, ած. **Բազում փեշեր ունեցող:** Նա պարի մեջ չնկատեց՝ ինչպես վրայից իջավ հագի **բազմափեշ** ղաբան *(ՌԿ, էջ 172)*:

ԲԱԶՄԵՂԱՆԱԿ, ած. **Բազմաձև:** Առհասարակ հասարակությունների սոցիալական գենետիկան չափազանց բարդ և **բազմեղանակ** կառուցվածք ունի…. *(ՍՍ, էջ 54)*:

ԲԱԶՄԵՐԵՍԱՆԻ, ած. **Շատ երեսներ ունեցող, բազմերես: Բազմերեսանի** կրկնակի հայելիները …. ըստ ցանկության երկարացնում են կամ տափակեցնում դեմքերը *(Բ5, էջ 298)*:

ԲԱԺՆԵԴՐԱՆՔ, գ. **Որպես բաժին դրված՝ հատկացված բան՝ նվիրատվություն**: Նաչեյ ցեղի հնդկացիները (Հյուսիսային Ամերիկա) գարնանը սովորաբար **բաժնեդրանք** են անում, որ ցանքերի համար կախարդներից բարենպաստ եղանակ գնեն *(Ֆր., էջ 79)*:

ԲԱԼԵՏԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Բալետագիտությանը վերաբերող**: …. **Բալետագիտական** գրքերի անգլերեն և ֆրանսերեն գրախոսականներ…. *(Ազգ, 08.09.20176):*

ԲԱՄԻԱՎԱՃԱՌ, գ. **Բամիա վաճառող, բամիայի վաճառքով զբաղվող**: - Արի բամիան բարձենք քո ավտոմեքենան ու շուկա տանենք: - …. Ես **բամիավաճառ** չեմ *(Մարտ., էջ 306):*

ԲԱՆԱԿՑԱԳՈՐԾԸՆԹԱՑ, գ. **Բանակցության՝ բանակցային գործընթաց**: …. Հայկական հարցին վերաբերող սպասվող **բանակցագործընթացը** ….*(Հայրունի 2, էջ 85):*

ԲԱՆԱՆԱՀԱՄ, ած. **Բանանի համ ունեցող**: …. Խնձորենու ճյուղերից կախված երկու **բանանահամ** սպիտակ ու պիրկ խնձորներն իրար էին դիպչում ու շրխկշրխկում *(Մարտ., էջ 361):*

ԲԱՆԱՆԱՀՈՏ, ած. **Բանանի հոտ ունեցող:** Տեսողությունս կորցրած քայլում եմ **բանանահոտ** փողոցներով…. *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ԲԱՆԴԵՈՆԱՀԱՐ, գ. **Բանդեոն նվագող երաժիշտ**: Աշխարհահռչակ **բանդեոնահարի** և հայ հանդիսատեսի առաջին հանդիպումը տեղի ունեցավ այս տարվա մայիսին…. *(Իր., 29.11.2016):*

ԲԱՌԱԿԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ, ած. (լեզվբ.): **Բառակազմագիտությանը վերաբերող**: **Բառակազմագիտական** տերմինների հետագա ճշգրտմանը նպաստել են հատկապես Ա.Ա. Աբրահամյանը և Է.Բ. Աղայանը *(Լ.Հովսեփյան, էջ 15):*

ԲԱՌԱԿԱԶՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (լեզվբ.): **Բառագիտության ենթաբաժին, որն ուսումնասիրում է բառակազմության օրինաչափությունները:** Գ. Ջահուկյանը հայերենի **բառակազմագիտության** մեջ նշանակալից նորություններ է բերում…. *(Լ. Հովսեփյան, էջ 18):*

ԲԱՌԱԿՈՒՏԱԿ, ած. **Բառերի անիմաստ կուտակում ունեցող:** Եվ նույնպես ոչ մի կապ Քրիստոֆ Ռանսմայերի և Միխայիլ Քյոլմեյերի **բառակուտակ** պատմվածքների հետ *(Գարուն, թ. 5, 1999):*

ԲԱՌԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Բառային մտածողություն**: ….Նորովի հաստատումն է արևելյան գունագեղ երևակայության և **բառամտածողության** տարածումների *(Աբով., էջ 92):*

ԲԱՌԱՆՇԱՆԱՅԻՆ, ած. **Բառերով և նշաններով արտահայտվող՝ ցուցադրվող**: .... Գեղարվեստական գրականության առաքելությունը իրականության **բառանշանային** վերակերտումն է *(Արով., էջ 101):*

ԲԱՌԱՏԱՂԶ, գ. **Գործածված հիմնական բառանյութ**: .... Մասնավորապես նշելի է **բառատաղձի** զուտ շերտը, որը կապված է ժամանակակից ժողովրդական կյանքի հետ *(Ասպղիկ, 1, էջ 180):*

ԲԱՌԱՓՇՈՒՐ, ած. (փխբ., դիպվ.): **Հայերենի՝ հայոց բառի մասունք:**Ես կմնամ այստեղ՝ հայրենիքից հեռու՝ // Որպես Արարատյան **բառափշուր** շուշան.... *(ԳԹ, 10.02.2017):*

ԲԱՐԱԿՇՅՈՒՂ, ած. (փխբ.): **Բարակիրան: Բարակշյուղ** քանոնահարուհու բեմելույթը հիշվել է դեռ «Տաղարանի» նախորդ համերգաշրջանից.... *(Անդին, թ. 2, 2016):*

ԲԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Բարդ՝ դժվար ընկալելի՝ անհասկանալի լինելը**: .... **Բարդագրություն** չի երևում .... ամիրային գրած ծավալուն թղթակցություններում .... *(Սաֆ., էջ 158):*

ԲԱՐԴԱԿԱԶՄ, ած. **Խրթին ձև, կառուցվածք ունեցող:** ....Գյուղացիները սիրում են ծխել այսպիսի խոշոր ու **բարդակազմ,** եռածունկ կամ քառածունկ ծխամորճներ, ճենապակյա ծխաթասով, որի վրա անմոռուկներ են պատկերված.... *(ՌՍՊ, հ. 1, էջ 32):*

ԲԱՐԴԱՀՅՈՒՍ, գ. (փխբ.): **Բարդ հյուսվածք՝ կառուցվածք ունեցող:** Եվ այդ լեզուն ոչ մի առնչություն չունի Էռնստ Յանդլի կամ Հանս Արթմանի **բարդահյուս** ստեղծագործությունների լեզվի հետ.... *(Գարուն, թ. 5, 1999):*

ԲԱՐԵԱՉՔ,ած. **Բարի աչք ունեցող, բարյացակամ:** Ապա՝ շարքշարք լռել են **բարեաչք** ու կորովի երիտասարդ սպասավորները *(ՌԿ, էջ 141):*

ԲԱՐԵԾԻՆ, ած. **Ազնվատոհմից սերված՝ ծնված, ազնվազարմ, բարձրածնունդ**: Երբեք չեմ ճանաչել ավելի հրաշալի ջենտլմենների, քան այն մի քանի **բարեծին** մալայացիները, որոնց հպարտ եմ իմ ընկերներն անվանելու *(ՍՍ, էջ 331):*

ԲԱՐՁՐԱԽՈՍԵԼ, բ. **Բարձր խոսել:** Դեռևս չկարդացած, **բարձրախոսեցի՝** գտնված է.... ժողովուրդը՝ հոտ, նրան առաջնորդողը՝ հրաշասուրբ Կոմիտաս *(ԼՄ3, էջ 166):*

ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼԻ, ած. **Բարձրաձայն ասվելու ենթակա**: .... Ներքին խոհանոցային խնդիրներ, իհարկե, կան, որոնք **բարձրաձայնելի** չեն.... *(Անդին, թ. 7, 2016):*

ԲԱՐՁՐՕՁԻՔ, ած. **Բարձր օձիք ունեցող:** Մի լուսանկարում նա ֆլանելե սպորտային կոստյումով էր, մեկ ուրիշում՝ **բարձրօձիք** ֆրակով *(ՍՄ, էջ 21):*

ԲԱՐՈՅԱՊԱՀԱՆՋ, գ. **Բարոյականության՝ բարոյական կանոնների պահանջ**: Փաստը կանոնիկ **բարոյապահանջի** մեջ գեղարվեստական հնչեղություն է ձեռք բերում .... *(Սաֆ., էջ 65):*

ԲԱՑԱՁԱՅՆՈՒՄ, գ. (փխբ.): **Խոսք:** ....Նա....մտերմիկ նայում է Հայրապետին, լսում նրա բոլոր **բացաձայնումները**.... *(ԱԱ, ԸԵ, էջ 176):*

ԲԱՑԱՏՐԱԳՐՔՈՒՅԿ, գ. **Բացատրություններ պարունակող գրքույկ:** Այն ունի հուզիչ մի նախապատմություն, որի մասին տեղեկանում ենք կոնցերտի ձայնասկավառակի **բացատրագրքույկում** զետեղված Վոլֆգանգ Շտառի հոդվածից *(ԴԵ, էջ 182):*

ԲԱՑԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Բացատրելի լինելը**: .... Վերածննդի պաշտպանները լիարժեք **բացատրելիությամբ** Նարեկացուն որակում են որպես միջնադարի հանճար .... *(Սաֆ., էջ 4):*

ԲԵԴՎԻՆԱԲՆԱԿ, ած. **Որտեղ բեդվիններն են բնակվում**: **Բեդվինաբնակ** բնակավայրեր *(Հայրունի 1, էջ 410):*

ԲԵԿԱԿԱԼ, գ. **Կոտրված որևէ բանի՝ օրգանի և մասերի շարժունակությունը կանխելու համար նրանց ամրացնող բան**: Երբ Բավարիայի .... գյուղացիներից մեկի խոզի կամ ոչխարի ոտը կոտրվում է, նա փաթաթան ու **բեկակալ** է կապում աթոռին *(Ֆր., էջ 55):*

ԲԵՂԱՓՈՒՆՋ, գ. **Բեղերի փունջ**: ...Նրանց նորելուկ **բեղափնջերը** տղամարդ երևալու ջանքերի արդյունք են *(Բոհջ., էջ 20):*

ԲԵՄԱՃԵՂՔ, գ. **Բեմի ճեղք:** ...Ծանոթ դեմքերով խամաճիկներ են ծիկրակում **բեմաճեղքերից** *(ՍՀ, էջ 13):*

ԲԵՆԶԻՆԱՌԱՔԻՉ, գ. **Բենզին առաքող:** ....Ստիպված եղան մեքենան հրել դեպի մոտակա սպասարկման կայան՝ արթնացնելով **բենզինառաքիչին** *(ԻԿ, էջ 9):*

ԲԵՌԱՇԱՏ, ած. (Ճիշտ է՝ բեռնաշատ):**Առատ բերքով:** Այդ միջոցին ծիրանի դեռևս խակ **բեռաշատ** մի ճյուղ ընկավ դաժան զսպողի ուսի վրա *(ՌԿ, էջ 183):*

ԲԵՌՆՈՑԱՄԱՍ, գ. **Բեռնախցիկ**: ....Փախստականը....կարողացել է ցատկել մայթին և երեք անգամ օդամղիչ ատրճանակից կրակել մեքենայի **բեռնոցամասին** *(Հրապ., 13.07.2016):*

ԲԵՎԵԿՆԱԳՈՒՅՆ, ած. **Բևեկնի՝ սոճիներից արտահոսող խեժի գույն ունեցող՝ գույնի**: .... Հայելանման ջրի մեջ արտացոլվում են **բևեկնագույն** անտառների մութ թավուտները *(Անդր., էջ 220):*

ԲԵՐԿՐԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Բերկրանք առաջացնող:** Գորշ խոպանի վրա արդեն **բերկրահարույց,** նուրբ կանաչն էր երևում տեղ-տեղ *(ՌՍՊ, հ. 1, էջ 531):*

ԲԼՐԱՓՈՍ, գ. **Բլրակի վրայի փոս**: .... Կարծել էին, թե արջը կանգ կառնի **բլրափոսի** մոտ.... ջուր խմելու .... *(Ասպղիկ, 2-3, 1990, էջ 131):*

ԲԼՐԱՔԱՐ, գ. **Բլուրի նմանվող քար:** Բարձր **բլրաքարին** նույն անշարժ դիրքով կանգնել է ծերունի դերվիշը *(ՌԿ, էջ 285):*

ԲԾԱՌԱՏ, ած. **Շատ բծեր ունեցող**: .... Ժամանակաշրջան, որը մեզ երևում է սև ու սպիտակ լուսանկարների կամ քերծված և **բծառատ** ու կետածածկ համր տեսաֆիլմերի մշուշի միջով.... *(Բոհջ., էջ 13):*

ԲՆԱԳՈՒՇԱԿ, գ. **Բնության երևույթների միջոցով գուշակություն անող**: **Բնագուշակը** կանգնում է գերեզմանի այն կողմում, որը պաշտպանված է արևից *(Ֆր., էջ 230):*

ԲՆԻԿՈՒՀԻ, գ. **Տեղաբնակ կին**: Այդ գեղեցիկ, արդեն ոչ այնքան երիտասարդ **բնիկուհին** հազիվ մի քանի բառ էր անգլերեն խոսում *(ՍՍ, էջ 288):*

ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆ, գ. (փխբ.): **Ամբողջական շրջան, փուլ, ամբողջականություն**: Պատկերագրքում հայտնված այս կամ այն նկարչի մեկ ստեղծագործությունն ասես պաստառված **բոլորաշրջան** է, կտրված շնչառություն, բայց յուրաքանչյուրն առիթ է տալիս կրկին անգամ սուզվել այն մեկ ուրիշ ապրելակերպի մեջ, որը հեռու է որևէ տեսակի կաղապարատիպերից…. *(Ազգ, 10.02.2017):*

ԲՈԼՈՐԱՏՈՒՆԿ, ած. **Բոլորաձև տնկված**: …. Աչքերը հառել էր… անմիջապես պատի ներսում ցցված **բոլորատունկ** ծառերին *(Բոհջ., էջ 18):*

ԲՈԼՈՐԱՔԱՆԴԱԿ, գ. **Քանդակի տեսակ**: Նիկողոսյանի աշխատանքների ցուցասրահում էին նաև նրա փոքր **բոլորաքանդակներից** մի քանիսը *(Ազգ, 27.01.2017):*

ԲՈՇԽՈՒՏ, գ. **Որտեղ շատ բոշխ՝ճահճաբույս է աճում:** Ճանապարհը գնում էր կիսով **բոշխուտ** դարձած լճի մոտով …. *(ՌՍՊ, հ. 1, էջ 249):*

ԲՈՍՈՐԱԴԵՄ, ած. **Կարմրադեմք:** Ոտքը դեռ հյուրասենյակ չդրած՝ նկատեց տանտիրուհու հյուրին՝ **բոսորադեմ** ոստիկանին *(ԻԿ, էջ 119):*

ԲՈՎԱԽԱՆՁ, ած. **Խանձված, բովված:** Մեր գյուղի բնակչությունը տեղափոխվեց դեպի հանդերը՝ …. **բովախանձ** ցորենը հավաքելու *(ՌՍՊ, հ. 2, էջ 453):*

ԲՈՎԱՆԴԱԿԱԿԻՐ, ած. **Բովանդակություն կրող**: Էականը, որոշիչը **բովանդակակիր** ձևն է *(ԲԱ1, էջ 116):*

ԲՈՎԱՆԴԱԿԱՓՈԽՎԵԼ, բ. **Բովանդակությունը փոխվել**: Անկախության սերնդին ռացիոնալն ու ողջախոհը չես բացատրի, առավել ևս, երբ ժամանակի մեջ **բովանդակափոխվել** են *(Իր., 20.12.2016):*

ԲՈՐԱԿԱԿԱԼԵԼ, չբ. **Բորակով հագենալ՝ պատվել**: **Բորակալված,** կանաչավուն …. պատերը …. խոնավություն էին արձակում *(Բ5, էջ 39):*

ԲՈՐԲՈՍԱԳՈՒՅՆ, ած. **Բորբոսի գույն ունեցող**: …. Կապույտը դարձել էր **բորբոսագույն** կանաչ, կանաչը՝ գորշ, իսկ դեղինը՝ հին, կեղտոտ սպիտակ…. *(Ապրիկ, 4, էջ 148):*

ԲՐԴԱՀՅՈՒՍ, ած. **Բրդից՝ բրդի թելերից հյուսված**: …. Լույսի տակ ճաճանչում էին …. ոսկեզօծ աթոռները իրենց **բրդահյուս** նստատեղիով *(Գոլս., էջ 58):*

ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ, գ. **Տվյալ ապրանքի հատկացումը որևէ բրենդի**: Կողմերը կարևորել են հայկական գինեգործական արտադրանքի **բրենդավորման** և արտահանմանը միտված քաղաքականության արդյունավետ կազմակերպման հարցերը *(Ագրոլրատու, 05.12.2016):*

ԲՐՆՁԱՀԱՎԱՔ, գ. **1.Բրնձի բերքահավաք: 2.Բրնձի բերքահավաքի ժամանակը**: **Բրնձահավաքի** վերջում …. հավաքվում են ծիսական և համատեղ հացկերույթի *(Ֆր., էջ 566):*

ԲՐՈՆԶԱՃԵՐՄԱԿԱՎՈՒՆ, ած. **Բրոնզագույնին և սպիտակին տվող:** Դեմքը **բրոնզաճերմակավուն** ժպիտով էր լուսավորվել *(ԻԿ, էջ 150):*

ԲՐՈՆԶԱՆԵՐԿ, ած. **Բրոնզով ներկված**: …. Նենեի գերեզմանի տեղում վրացագիր երկու շիրմաքար էր դրված՝ **բրոնզաներկ** ցանկապատով, լալկան ուռենիով, խնկամանով…. *(Ռ. Հովս., էջ 83):*

ԲՈՒԺԱՆՈՑ, գ. **Բուժելու տեղ՝ բուժարան**: …. Հայրս …. **բուժանոցում** էր …. *(Բ7, էջ 502):*

Գ

ԳԱԼԱՐԱԺԱՊԱՎԵՆ, գ. Ոլորուն ժապավեն: Ոսկեհեր տղան բազմագույն գալարաժապավենների գնդաձև կծիկներ սարքեց…. *(ԳԹ, 17.02.2017):*

ԳԱԼԱՐԱԺԱՊԱՎԵՆԵ, ած. **Գալարաժապավենից սարքած**: **Գալարաժապավենե** կծիկները վայրէջք էին կատարում …. *(ԳԹ, 17.02.2017):*

ԳԱՂԱՓԱՐԱԴՐՈՒՅԹ, գ. **Գաղափարական՝ գաղափարների դրույթ՝ հիմունք, ելակետային սկզբունք**: …. Աբովյանը …. ամենից առաջ …. սկիզբ էր, մեծ սկիզբ …. հայրենիքի **գաղափարադրույթը** նոր ժամանակներում ազգի մեջ հիմնավորելուն *(Աբով., էջ 46):*

ԳԱՂԱՓԱՐԱԿՈՎԱՆ, գ. **Գաղափարական կովան, հենարան**: Վ. Տերյանը հանդես եկավ «Հոգևոր Հայաստան» ծավալուն հոդվածով, որի առանցքն այն **գաղափարակովանն** էր…. *(Լրաբեր, 3, 2016, էջ 22):*

ԳԱՂԱՓԱՐԱՀԵՆՔ, գ. **Գաղափարական հենք**: Շարժման **գաղափարահենքն** ինձ ծանոթ և հարազատ է վաղուց *(Իր., 11.10.2016):*

ԳԱՂՏՆԱՂԲՅՈՒՐ, ած. **Գաղտնի, ոչ բացահայտ պատճառ՝ աղբյուր ունեցող:** …. Ինչպես է որդը մաշում նույնիսկ քանդակի մարմարը, ուժից զրկելով **գաղտնաղբյուր** բոլոր տպավորությունները *(ՌՍՊ, հ. 1, էջ 66):*

ԳԱՂՏՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Խիստ գաղտնապահություն**: Այդ զարմանալի **գաղտնամոլության** մասին բավականին դիպուկ արտահայտվել է քաղտեխնոլոգ Արմեն Բաղալյանը…. *(Իր., 29.11.2016):*

ԳԱՅԼԱՎԱՐԻ, մկբ. **Գայլի նման, ինչպես գայլը, գայլաբար**: Նրանք **գայլավարի** մեր տուն մտան՝ չորեքթաթ *(Ֆր., էջ 822):*

ԳԱՅԼԱՏԱՄ, գ. 1. **Գայլի ատամ: 2. Գայլի ատամի նմանողություն ունեցող**: …. Ծաղիկներ կային լաքած և **գայլատամի** ոսկեզօծ կտրվածքներով դույլերում *(Բ7, էջ 55):*

ԳԱՎԱԹԱԿԵՐՊ, ած. **Գավաթի կերպ ունեցող, գավաթանման:** …**Գավաթակերպ** գոգավորության մեջ …. սփռված էր քաղաքը *(ՌՍՊ, հ. 2, էջ 75):*

ԳԱՐՆԱՆԱԳԱԼ, գ. 1. **Գարնան գալու ժամանակը**: **Գարնանագալին** վերստին կհառնի…. *(Հեմ., էջ 110):* 2. **Գարնան գալը**:

ԳԵՂԱՁԵՎԵԼ, բ. **Ձևակերպել, արտահայտել, բանաձևել**: Ջոհրապն այսպես է **գեղաձևում** նոր գրականությունը ստեղծողների հավատամքը *(Գևորգյան, էջ 112):*

ԳԵՂԱՄԱՐԶԱՆՔ, գ. **Գեղեցիկ՝ ընտիր մարզանք**: Ամեն առավոտ իմ լարովի ձայնարկիչի վրա ես դնում եմ «Երկնագույն ռապսոդիա» ձայնապնակը, կատարում եմ **գեղամարզանք,** հագնվում ու դուրս գալիս տնից *(Սար.,էջ 545):*

ԳԵՂԵՑԿԱՃԱԿԱՏ, ած. **Գեղեցիկ ճակատ ունեցող:** Նա **գեղեցկաճակատ** է և հանդիսավոր *(ՌԿ, էջ 437):*

ԳԵՂՋԿԱՁԱՅՆ, ած. **Գեղջկական ձայնով:** Գեղջկուհիներից հետո փողոցում հնչում են նոր կանչեր, մեծ մասամբ կանացի, **գեղջկաձայն** կանչեր *(ՄԽ, էջ 112):*

ԳԵՏԱԼՃԱԿ, գ. **Գետախորշ**: …. Դուրս է հանում հոգին և տանում իր կացարաններից մեկը (փչակ, ժայռի ծերպ կամ **գետալճակ**) *(Ֆր., էջ 51):*

ԳԵՏՆԱՓՈՇԻ, գ. **Գետնի փոշին**: Ավերմունքի վրա սգվորուհու գլխաշորի նման դեռ ծածանվում են ծխի և **գետնափոշու** միաձույլ ամպերը *(ՌԿ, էջ 165):*

ԳԵՐԵԶՄԱՆԱՀԱՐԴԱՐ, գ. **Գերեզմանը հարդարող՝ խնամող:** …. Անմխիթար ցավ է սրտիս, …. գալ ծնրադրել անհայտ գերեզմանիդ և մեծ հոգիդ խնկարկելու անանց պահանջից հետո՝ **գերեզմանահարդարը** լինել անհայտ շիրիմիդ *(ՎՓ, էջ 79):*

ԳԵՐԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափազանցված երևակայություն:** 21-րդ դարի համար սա արդեն ցնորամտություն չէ, **գերերևակայության** արդյունք չէ *(ԱԱ, ԸԵ, էջ 174):*

ԳԵՐԽՏԱՑՈՒՄ, գ. **Գերխտանալը, չափազանց՝ ծայրահեղ խիտ բովանդակություն ստանալը:** «Նավզիկեն» սիրերգության **գերխտացումն** է *(ՀՀ., 25.01.2017):*

ԳԻՆԵԺՈՒԺԿԱԼ, ած. **Գինին չափավոր խմող, օգտագործող**: Եթե չիմանայի, որ նա **գինեժուժկալ** մարդ է, կմտածեի, որ խմած է *(ՍՄ, էջ 113):*

ԳԻՆԵՍԹԱՓՎԵԼ, բ. **Հարբածությունից սթափվել, լրջանալ, զգաստանալ:** …. Արդեն բավական **գինեսթափվելով**՝ հարցրեց Ղևոնդը *(ԱԱ, ԸԵ, էջ 93):*

ԳԻՇԵՐԱԺՈՂՈՎ, գ. **Հարբածությունից սթափվել, լրջանալ, զգաստանալ: Գիշերվա ընթացքում անցկացվող ժողով**: …. Վհուկները **գիշերաժողով** են անում …. *(Ֆր., էջ 659):*

ԳԻՇԵՐԱԼԱՊՏԵՐ, գ. **Գիշերային լապտեր, լամպար:** Աղջիկներն ու կանայք ամոթահար շրջում էին հայացքները…. և հարց էին տալիս իրենց. իսկ ինչ էր իրենց դուր գալիս այս տձև մարմինների և առօրեական դեմքերի մեջ, ծխացող **գիշերալապտերների** պես աղոտ աչքերի մեջ *(ՌՍՊ, հ. 1, էջ 21):*

ԳԻՇԵՐԱԼՈՒՅՍ, գ. **Գիշերվա լույսը:** Նրա արյունոտ շապիկը պսպղում էր **գիշերալույսից** *(ՌԿ, էջ 191):*

ԳԻՇԵՐԱԽԱԼԱԹ, գ. **Գիշերային խալաթ:** Նա **գիշերախալաթ** հագավ և մոտեցավ պատուհանին *(ՄԼ, էջ 150):*

ԳԻՇԵՐԱՀԱՉ, գ. **Գիշերվա հաչոց:** Ինչպես և աշխարհի բոլոր շները, իրենց հացը նրանք **գիշերահաչով** էին վաստակում *(ՌՍՊ, հ. 2, էջ 518):*

ԳԻՇԵՐԱՈՐՋ, գ. **Գիշերային հավաքավայր:** Ովքե՞ր են **գիշերաորջերի** իրական սեփականատերերը, դժվար չէ կռահել *(Իր., 30.06.2017):*

ԳԻՇԵՐԱՍԱՀ, ած. (բնստ.): **Գիշերվա միջով սահող:** Տե՛ս ԱՍՏՂԱԹԱՓՈՆ-ի օրինակը:

ԳԻՇԵՐԱՍԵՂԱՆ, գ. **Ննջասենյակի փոքրիկ սեղան**: Փողոցին նայող պատուհանի մոտ կար մի **գիշերասեղան** *(Օր. հայ գր., էջ 357):*

ԳԻՊՍԱՍՏՎԱՐԱԹՂԹԱՅԻՆ, ած. **Շինանյութի տեսակ:** …. Հայտարարագրված ավելի քան 20 տոննա **գիպսաստվարաթղթային** սալիկից բացի բեռնատարում մաքսային հսկողությունից թաքցված այլ ապրանք ևս կա…. *(ՀՀ, 21.02.2017):*

ԳԻՏԱԿՑԱՓՈԽԻՉ, ած. (դիպվ.)**: Գիտակցությունը փոխող**: **Գիտակցափոխիչ** թմրանյութեր կխառնվեն սննդամթերքին և խմելու ջրին *(Իր., 21.02.2017):*

ԳԻՏԱՍՓՅՈՒՌ, գ. **Գիտելիքներ տարածող և գյուղատնտեսական ընկերություններին աջակցող կազմակերպություն**: **Գիտասփյուռի** համակարգում ներգրավվում են արտադրողների կազմակերպություններ, համալսարաններ…. *(Ագրոլրատու, 05,11.2016):*

ԳԻՏԱՐԱՆ, գ. **Հանրագիտարանային տեղեկություններ պարունակող աշխատություն:** Մշակութային **գիտարանի** հարյուրավոր բառահոդվածների մեջ ուշագրավ է նաև շուրջ 80 տեղանունների մասին տեղեկատվությունը *(ԳԹ, 28.04.17):*

ԳԻՏԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ, ած. **Նյութերի գիտական ուսումնասիրության և ցուցադրման համար նախատեսված:** Նյութերը…. ձևավորել է ԳԱԹ-ի **գիտացուցադրական** բաժնի վարիչ, գեղանկարիչ Դավիթ Պետրոսյանը *(ԳԹ, 17.03.2017):*

ԳԻՏԱՓԱՌԱՏՈՆ, գ. **Գիտական փառատոն: Գիտափառատոնի** հիմնական նպատակը գիտության տարբեր ճյուղերի գործունեությունն ընկալելի ու մատչելի դարձնելն էր հատկապես ուսանողների և աշակերտների համար *(Եր. համ., թ. 9, հոկտ., 2017):*

ԳԻՏԱՔՆՆԱԿԱՆ, ած. **Գիտական և քննական**: …. Աղբյուրների և նյութի նկատմամբ **գիտաքննական** վերաբերմունքը …. *(Սաֆ., էջ 38):*

ԳԼԱՔԱՐԵ, ած. **Գլաքարով սալարկված: Գլաքարե** սալահատակի վրա լսվում էր ինչ-որ մեկի փայտե կրունկների կտկտոցը *(ԻԿ, էջ 166):*

ԳԼԽԱԳՈՒՆԴ, գ. **Վերին ծայրի գնդաձև մաս**: …. Ձինված …. ձեռնափայտով, որի **գլխագունդը** կապարից էր …. *(Բ7, էջ 397):*

ԳԼԽԱՐՁԱԿ, ած. **Սանձը արձակած: Գլխարձակ** ձին խոնարհ կանգնել էր կողքին *(ՌԿ, էջ 174):*

ԳԾԱՄՈՏԻԿ, մկբ. **Գծին մոտիկ: Գծամոտիկ** կանգնած սպանելից մեկն այս ամենի հետ նկատեց անհամար ծաղկեփնջեր, որ բռնել են Ազնիվ օրիորդաց դպրոցի սանուհիները *(ՌԿ, էջ 213):*

ԳՅՈՒՂԱԲՆԱԿԵՑՈՒՄ, գ. **Բնակեցում գյուղում՝ գյուղական վայրերում**: Հայ փախստականների **գյուղաբնակեցման** ծրագրեր *(Հայրունի 1, էջ 441):*

ԳՅՈՒՂԱԴԱՇՏ, գ. **Գյուղի դաշտը:** Քյորփալու **գյուղադաշտ** թռած արկերը յուրաձև խոփերի նման շրջեցին հողը *(ՌԿ, էջ 212):*

ԳՆԱՀԱՏԱԼԻՑ, ած. **Գնահատելի, գնահատանքի արժանի**: **Գնահատալից** հիշատակման է արժանի …. *(Հայրունի 1, էջ 28):*

ԳՆԴԱԿԱԺԱՊԱՎԵՆ, գ. **Ձենքի ժապավենաձև պահունակ:** ….Մինչև արյան վերջին կաթիլը կհասցնի՞ արդյոք եղած **գնդակաժապավենները** պարգև ուղարկել տաճիկի կրծքին *(ՌԿ, էջ 186):*

ԳՆՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին գնորդ, գնորդ կին**: Խանութում մի նոր **գնորդուհի** հայտնվեց *(Պրուս, էջ 521):*

ԳՈՄԱՏԱՐԱԾՔ, գ. **Գոմի տարածքը**: Երբեմնի **գոմատարածքներից** մեկը վերակառուցել և զբոսաշրջիկների ընդունատեղի են դարձրել.... *(Իր., 06.12.2016):*

ԳՈՄՇԱՆԱԽԻՐ, գ. **Գոմեշների նախիր**: Ավագ հովիվը նշան է անում **գոմշանախրի** հովիվներին *(ՄՄ, էջ 121):*

ԳՈՄՇԱՍԱՅԼԱՎՈՐ, ած. **Գոմշասայլ վարողը:** Քիչ հեռու պառկած էր **գոմշասայլավոր** ծանոթ գյուղացին *(ՌԿ, էջ 173):*

ԳՈՅԱՆՈՒՆ, գ. (իմ.նորբ.): **Գոյական անուն**: .... Վերացական և նյութական **գոյականունների** փոխատեղում *(ԲԱՄ, էջ 238):*

ԳՈՅԱՊԱՅՔԱՐՈՂ, ած. **Գոյության համար պայքար մղող**: Օսմանյան կայսրության հպատակությամբ **գոյապայքարող** հայ ազգը պետք է «հանրային գործի հոգածություն» և ներքին կազմակերպվածություն ունենա *(Գևորգյան, էջ 59):*

ԳՈՅԱՊՐԵԼ, բ. **Գոյատևել:** Սիրիական պատերազմի դժվարին չորս ու կես տարիներ **գոյապրած** ….բազմաթիվ ընտանիքների նման ապաստան գտանք մայր հայրենիքում *(Անդին, թ. 2, 2017):*

ԳՈՅԸՆԹԱՑ, գ. **Գոյության ընթացքը:** Կյանքի ջերմությունը, օրգանական աճը արգանդում, սեռականության ինտենսիվությունը և միստիցիզմի ծայրահեղությունը՝ **գոյընթացի** ամբողջականությունը, պետք է հիմնովին ընկալվեն ու դառնան տեսանելի *(Գարուն, թ. 5, 1999):*

ԳՈՏԵԱՐՁԱԿ, մկբ. **Գոտին արձակած:** Անսանձ դարձավ Արբակը, ճախրեց **գոտեարձակ**՝թևի տակ նաև հսկա փոցխ- եռաժանի *(ՌԿ, էջ 164):*

ԳՈՐԳԱՀՅՈՒՍ, 1. ած. **Գորգ հյուսող՝ գործող**: Այստեղ հիմա 1400 մարդ է աշխատում: Բեռլինից բերած **գորգահյուս** դազգահների վրա: *(ՍԽ, էջ 120):* 2. գ. **Գորգ հյուսող (անձ), գորգագործ:**

ԳՈՐԾԱՄԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գործամետ լինելը**: Նրանց համար, ում հավատը հրաշքների հանդեպ չի անհետացել արդի աշխարհի **գործամետության** մեջ, գոյություն ունեն կախարդական հույսերի և իրականացած երազանքների վայրեր *(Ազգ, 27.01.2017):*

ԳՈՐՇԱԳԱՆԳՈՒՐ, ած. **Գորշ և գանգուր:** Հանկարծ երկինքը լցվեց ամպերով, ու կայծակի երկայնաձիգ, հրացայտ ձողը, ձաղկելով մթնած երկինքը, թաղվեց **գորշագանգուր** ամպերի մեջ *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ԳՈՐՇԱԿԱՐՄԻՐ, ած. **Գորշավուն կարմիր**: …. Մի աղջնակ ձեռքերի մեջ բռնել էր մի **գորշակարմիր** կատու *(Կորպ., էջ 59):*

ԳՐԱԲՈՒՍ, գ. **Շարժական գրախանութի անվանումը**: Գիրք նվիրելու օրը Երևանում կշրջի «**Գրաբուս**» շարժական գրախանութը *(ՀՀ, 15,02,2017):*

ԳՐԱԽԱՋ, գ. **Խազերով գիր՝ տառ:** Ճկնապտույտ **գրախազերը** կորցնում էին մարդուն իր մեջ խաչքարային սարդացանց նախշերի զգայականությամբ՝ շոյելու և ունենալու անվերադարձ քնքշանքով *(Անդին, թ. 2, 2017):*

ԳՐԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, գ**. Գրականության պատմություն:** Նրա պատմվածքները ....հավերժ կմնան մեր **գրապատմության** մեջ *(Նորք, թ. 1, 2017):*

ԳՐԿԱՀԱՄԲՈՒՅՐ,գ. **Ողջագուրանք :** Դանիելը մտովի մեկ առ մեկ կրկին առանձնացրեց զինակիցների սխրալի դեմքերը, որոնցից յուրաքանչյուրի հետ քիչ առաջ բաժանվեց **գրկահամբույրով** *(ՌԿ, էջ 148):*

ԳՐՔԱԽԱՌՆՎԵԼ, բ. (դիպվ., փխբ.): **Գրքերը փոխադարձաբար ընծայել, փոխանակել:** «Արի **գրքախառնվենք**» խորագիրն էր կրում «Բուկինիստ» սիրված գրախանութի ծննդյան 84 և «Արևիկ» հրատարակչության 30- ամյակների առիթով կազմակերպված միջոցառումը *(Իր., 29.11.2016):*

ԳՐՔԱԽԱՌՆՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Գրքախառնվելը, գրքերի փոխադարձ ընծայում, փոխանակում:** «**Գրքախառնության**» օրվա մասնակիցների մեծ մասը երիտասարդներ էին *(Իր., 29.11.2016):*

ԳՈՒՂՁԱՊԱՏ, ած. **Գուղձերով պատած:** ….Ճանապարհի վրա կարելի էր զանազանել փորփրված խանդակները, **գուղձապատ** ելուստները…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 125):*

ԳՈՒՄԱՐԱՉԱՓ, գ. **Գումարի չափը, արժույթի քանակը**: …. Առաջարկեց իրեն հասանելիք **գումարաչափը** *(Մարպ., էջ 136):*

ԳՈՒՆԱԳԻԾ, գ. (փխբ.): **Հատկանիշ, առանձնահատկություն**: Եվ ամենանշանակալից ու բնորոշ **գունագիծը՝** հայոց հասարակագիտությանն ու գրականությանը անմնացորդ նվիրվածություն *(ԳԹ, 17.02.2017):*

ԳՈՒՆԱԴԻՏԱԿ, գ. (փխբ.): **Բազմապիսի գույներ արտացոլող դիտակ, գեղադիտակ:** …. 20-րդ դարը **գունադիտակի** պես փոփոխվող ուղղությունների, նորանոր «իզմերի» ու ոճերի մի խճանկար է *(ԴԵ, էջ 36):*

ԳՈՒՆԱՆԵՐԿԵԼ, նբ. **Գույներով ներկել**: …. Կարդում և հյուսում էր …. **գունաներկված** փետրախոտի հովանու տակ *(Գոլս., էջ 14):*

ԳՈՒՆԱՍԱԼԻԿ, գ. **Գունավոր սալիկ**: **Գունասալիկներ** արտադրող գործարան *(Կորպ., էջ 44):*

ԳՈՒՆԱՍԱՆԴՂԱԿ, գ. (փխբ.): **Գույների սանդղակ:** Բայց ավելի մեծ ու զորեղ է աստղերին չափ տալը՝ ըստ սեփական արյան շրջանառության առաջադրած տակտի, սեփական աչքի ցանցաթաղանթի **գունասանդղակը** աշխարհի կենտրոնում տեղադրելը…. *(Հ, էջ 141):*

ԳՈՒՆԴՈՒԿԼՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Գունդուկլոր լինելը**: …. Տիկին Պելեգրենը հայտնվեց իր ամբողջ **գունդուկլորությամբ** *(Վեռնոյ, էջ 18):*

Դ

ԴԱԼԱՐԱՑԱՆԿ, գ. **Դալար ճյուղերից պատրաստված պատնեշ՝ ցանկապատ**: …. Նա գնում էր **դալարացանկի** երկարությամբ *(Բ7, էջ 67):*

ԴԱԼԿԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Բաց դեղնավուն ոսկեգույն**: Մեջտեղից բացված **դալկաոսկեգույն** մազերը …. թափվում էին նրա այտերի շուրջը …. *(Բ7, էջ 755):*

ԴԱՇՆԱՁԱՅՆԵԼ, բ. **Դաշն՝ ներդաշնակ հնչել:** ….Թվում էր, թե երկինքն ու երկիրն էին մշտապես, պահի հավերժությամբ արբած, մի կատարյալ երաժշտության մեջ **դաշնաձայնում** *(Հ, էջ 190):*

ԴԱՇՏԱԽՈՐՔ,գ. **Դաշտի խորքը:** Դանիել Բեգը հեռացավ **դաշտախորք** *(ՌԿ, էջ 173):*

ԴԱՇՏԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Դաշտի կենտրոնը:** Չհասած **դաշտակենտրոն**….հայերը մեկից դարձան այլակերպ և արծվային *(ՌԿ, էջ 163):*

ԴԱՇՏԱՄԱՐԳ, գ. **Դաշտի մարգերը:** 6000 տարի առաջ կանաչ **դաշտամարգերի** վրա տարածվել են հայոց բանակների զորականչերը *(ՌԿ, էջ 419):*

ԴԱՇՏԱՇԽԱՐՀ, գ. **Դաշտավայր:** Այնտեղ էր ասես երանելի դրախտադուռը, որտեղից օծված որդան կարմիրով, հանդարտ պիտի շարժվեին դեպի Արարատյան **դաշտաշխարհ** *(ՌԿ, էջ 14):*

ԴԱՎԱԽՈՍ, ած. **Խոսքի մեջ դավադրություն պարունակող:** -Քանի՞ տարեկան է **դավախոս լեզուդ** *(ՌԿ, էջ 269):*

ԴԱՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. (բնստ., դիպվ.): **Դավի երգ:** Հրեշավոր **դավերգությամբ** շիրմափակվեմ ես անսոսափ ու անեղեգ *(ԲԱ, էջ 12):*

ԴԱՐԱՇՈՒՆՉ, գ. **Դարի շունչը**: ….Նորովի՝ 21-րդ **դարաշնչի** մեջ մեր զարթոնքը ապրեցնելու խնկելի հնարավորությունը դրեցին առժամանակ հարցականի տակ՝ քանդելով մեր ներսը *(Անդին, թ. 7, 2016):*

ԴԱՐԲՆԱԿԵՐՊ, ած. **Դարբնին բնորոշ տեսքով**: …. Մտովի տեսնում էի նրանց աչքերի գույնն ու ձևը, հորս խամրած աչքերը, նրա **դարբնակերպ** դեմքը *(Սուրյան, էջ 132):*

ԴԱՐՁԱԾԱԼԵԼ, բ. **Դարսել իրար վրա**: Հնամաշ գոտին ազատված օղակից **դարձածալել** էր կողքին *(ՌԿ, էջ 218):*

ԴԱՐՉՆԱՄՈՐԹ, ած. **Դարչնամաշկ:** Հայհոյանքի և մտրակների շառաչի ներքո դեղնամորթ, **դարչնամորթ**, սևամորթ ստրուկները շոգենավերի երկաթյա որովայններն են բեռնում…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 178):*

ԴԵՂԱԿԱԹԻԼ, գ. **Դեղի կաթիլ**: Հրաշագործ **դեղակաթիլի** նման ձնաջուրը կճեպի պորտից խցկվելով՝ թրջում-կակղեցնում էր չոր միջուկը…. *(Ռ. Հովս., էջ 194):*

ԴԵՂԱՐԿՂԻԿ, գ. **Փոքր դեղարկղ**: …. Լոգարանում ատամիս խոզանակն ու սափրվելու պարագաներս էի տեղավորում լվացարանի վերևի **դեղարկղիկի** մեջ …. *(Սուրյան, էջ 80):*

ԴԵՂՆԱԱՐԾԱԹԱԳՈՒՅՆ, ած. **Դեղնին տվող արծաթագույն**: Կարմրապոչ Ժակո թութակն իր **դեղնաարծաթագույն** աչքերը չռած՝ խուճապահար ետ ու առաջ էր թռչում *(ԳԹ, 17.02.2017):*

ԴԵՂՆԱԳՈՒՆԱՏ, ած. **Դեղնադալուկ, դեղնադժգույն**: **Դեղնագունատ** հրամանատարն իր զորքի հետ քնած էր սաղարթախիտ անտառում՝ մոխրագույն լճի մոտ *(ԳԹ, 17.02.2017):*

ԴԵՄԱՍԵՂԱՆ, գ. **Դիմացը դրված սեղան:** ….Կաղնեփայտե **դեմասեղանների** մոտ նստած գրադարանավարուհիները արձակուրդ էին անրջում *(ՌՍՊ, հ. 2, էջ 458):*

ԴԵՄԻՐՃՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործությունը ուսումնասիրող գիտություն**: …. Ժողովածուն…. կդառնա կարևոր ձեռնարկ **դեմիրճյանագիտությամբ** զբաղվող գիտնականների, ուսուցիչների, ուսանողների համար *(ԳԹ, 17.03.2017):*

ԴԻԱԿԱՊՏՈՒՀԻ, գ. **Դիակը կապտող, կողոպտող կին:** ….Գլխումս հանկարծ ծնվեց բառը՝ **դիակապտուհի** *(ՌՍՊ, հ. 2, էջ 602):*

ԴԻՄԱՊԱՏԿԵՐԵԼ, բ. **Դիմանկարել**: Չէ՞ որ դիմանկարը **դիմապատկերվածի** հոգին կամ, առնվազն, կենսական կարևոր մասն է *(Ֆր., էջ 232):*

ԴԻՄԱՏԵՏՐ, գ. **Ֆեյսբուք**: Օրվա մտորումները, խոհերը սեփական փորձառությամբ նախ հանձնել հազարավոր ընթերցողների

դատին, լսել նրանց կարծիքները ֆեյսբուքի (**դիմատետրի**) միջոցով, իսկ հետո ընտրողաբար ներկայացնել ժողովածուում *(ԳԹ, 25.11.2016):*

ԴԻՄԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Դիմելու հաճախականությունը և քանակը**: 2016թ. զեկույցում… տրվել են մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և **դիմելիության** գնահատականները…. *(ՀՀ, 21.01.2017):*

ԴԻՏԱԽՈՐՇ, գ. **Դիրքերի դիտարկմանը հարմարեցված խորշ, դիտանցք**: **Դիտախորշում** հերթապահության ժամանակ կես ժամվա մեջ հրացանի փողը հինգ անգամ կմտցնեիր բերանդ, կհանեիր…. *(Պաչյան, էջ 63):*

ԴԻՐՔԱՏԵՂ, գ. (բնստ.): **Ռազմական դիրքի վայրը:** Թուրք հրաձիգները..... իսպառ կոչնչացնեն հանդիպակաց կասկածելի **դիրքատեղերը** *(ՌԿ, էջ 158):*

ԴԻՑԵՐԳԱԿԱՆ, ած. (բնստ.): **Դիցական շունչ ունեցող:** Ես՝ իմ մեջ հյուսված թուխպ ու եղյամի //Եթերախորան ու մենամորմոք, // Ես՝ **դիցերգական** անձավ ու քամի…. *(ԲԱ, էջ 13):*

ԴՅՈՒՐԱԶՎԱՐԹ, ած. **Հեշտությամբ զվարթահայաց դարձող**: …. **Դյուրազվարթ** դեմք *(Հյուգո, էջ 81):*

ԴՅՈՒՐԱԽՌՈՎ, ած. **Դյուրությամբ՝ հեշտությամբ հուզվող, անհանգստացող, խռովվող: ….** Այն վերընդունում էր իր այնքան **դյուրախռով** անդորրը *(Բ5, էջ 88):*

ԴՈՆԱԾԱԾԿ, գ. **Դոան ծածկը:** Եղիշեն վայրկենաբար ետ տարավ վրանի **դոնածածկը**, լուսավորեց շրջապատը *(ՌԿ, էջ 223):*

ԴՐԱԽՏԱԴՈՒՌ, գ. (փխբ.): **Դրախտի մուտքը:** Տես ԴԱՇՏԱՇԽԱՐՀ-ի օրինակը:

ԴՐԱԽՏԵ, ած. (դիպվ.): **Դրախտային**: …. Անողոք ձայնը, որ ամեն հարվածից հետո փոշիացնում էր **դրախտե** պարտեզը…. *(Պաչյան, էջ 162):*

ԴՐՈՇԱԶԵՐԾԵԼ, բ. **Դրոշը հեռացնել, հանել:** Կիսաձայն, բայց հատու հրահանգեցինք Ռաֆիկին աննկատ բարձրանալ վերև և վայրկյան առաջ **դրոշազերծել** տանիքը *(Անդին, թ. 3, 2016):*

ԴՐՈՇԱԿԱՓՈՒՆՋ, գ. **Դրոշակների փունջ**: Վերևում կախված **դրոշակափունջը** անշարժ էր ու գլխահակ *(ՌԿ, էջ 263):*

ԴՐՎԱԳԱԲԱՐ, մկբ. (փխբ.): **Հատվածաբար, աստիճանաբար**: Այս սովորույթը համոզչորեն հաստատում է …. **դրվագաբար** սպանելու պատճառների մասին մեզ տված բացատրությունը *(Ֆր., էջ 485):*

Ե

ԵԶԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Եզ սպանելը, եզան մորթը**: Հնում Ատտիկայում **եզասպանությունը** համարվում էր հանցագործություն *(Ֆր., էջ 547):*

ԵԶԴԻԱՀԱԼԱԾ, ած. **Եզդիներին հալածող**: Թուրքիան այսօր էլ շարունակում է նույն հայահալած, քրդահալած, **եզդիահալած**…. քաղաքականությունը…. *(ԳԹ, 03.02.2017):*

ԵԼՈՒՅԹԱՇԱՐ, գ. **Ելույթների շարք:** …. Հոկտեմբեր-նոյեմբերին սպասվում է եվրոպական ջազի…. **ելույթաշար** *(Ազգ, 30.06.2017):*

ԵԿՎՈՐՈՒՀԻ գ, **Եկվոր կին:** Խուճապագոչ **եկվորուհին**, ինչպես երևում է , երկար ճանապարհ է կտրել *(ՌԿ, էջ 169):*

ԵՂԵԳՆԱՀԱՄ, ած. **Եղեգնի համ ունեցող**: Ջուրը սառն էր ու **եղեգնահամ** *(ՋԽ, էջ 462):*

ԵՂԵՌՆԱԲԱԽՏ, ած. **Եղեռնի ենթարկված:** Չուշացան Եզնիկ, Դանիել և Թադևոս վարդապետները, որոնք եկան տաճարամերձ շրջագայությունից, ուր ժամ առաջ մեկնել էին Աստծո գութ և սփոփանք տանելով **եղեռնաբախտ** գաղթականներին *(ՌԿ, էջ 141):*

ԵՂԵՌՆԱՇՈՒՆՉ, ած. **Եղերաշունչ, եղեռնային, եղերական**: …. Կոմիտասի 14-հատորյակը բարձրաձայնում է նրա **եղեռնաշունչ** լռությունը *(ԳԹ, 24.03.2017):*

ԵՂԵՎՆԱՀՅՈՒՍ,ած. **Եղևնու ճյուղերից հյուսած:** Գալիս էին կանաչ բեռով՝ //**Եղևնահյուս** պսակներով *(ԼՄ2, էջ 193):*

ԵՂԵՎՆԱՇԵՆ, ած. **Եղևնիներից շինված, սարքված:** Արդեն երեսուն տարի է անցել, բայց ես …. պարզորոշ տեսնում եմ…. այդ տնակը՝ սպիտակեցված **եղևնաշեն** աստիճաններով ու միջնահարթակներով…. *(Հ, էջ 14):*

ԵՂՅԱՄԱԳՈՒՅՆ, ած. **Եղյամի գույն ունեցող**: Փշատի **եղյամագույն** տերևները թրթռում էին հողի վրա ցնցվող մարմնից…. *(Պաչյան, էջ 161):*

ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱՊԱՏՈՒՄ, գ. **Ենթագիտակցականի նկարագիր, ներկայացում**: Աստվածային սերը և պոեզիան **ենթագիտակցապատումի** լույսով *(Իր., 14.03.2017):*

ԵՆԹԱԴՐՍԵՎՈՐՈՒՄ, գ. **Դրսևորման ենթաձև, ենթատեսակ**: … Վեպը, պատմվածքը և նորավեպը շատ անգամներ են քննության առնվել, վերլուծվել են ըստ ներքին և արտաքին կառուցվածքի՝ ըստ բովանդակության …. թեմատիկ-գաղափարական **ենթադրսևորումների**…. *(ԲԱ1, էջ 111):*

ԵՆԹԱՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Հանրության ենթախումբ: Ենթահանրություններից** կազմված հատվածակազմ հասարակությունների անթրոպոլոգիական կոնցեպցիան ենթադրում է տվյալ հատվածի ինքնուրույն վերարտադրության հնարավորություն…. *(ՍՍ, էջ 54):*

ԵՆԹԱՆՈՒՆ, գ. **Ստորաբաժանման՝ ոչ հիմնական անուն**: Վճռվեց կազմակերպությունը վերանվանել «Գերմանական առաքելություն արևելքում» իսկ նախկին՝ «Հայաստանի օգնություն» անվանումը դարձնել **ենթանուն** *(Հայրունի 2, էջ 21):*

ԵՆԹԱՏԵՔՍՏԱՅԻՆ, ած. **Ենթաիմաստային, ներքին՝ ծածուկ իմաստին՝ բովանդակությանը հատուկ՝ վերաբերող**: …. «Պատմության» ավարտը դարձած այս թռիչքի մեջ Դրասխանակերտցին **ենթատեքստային** նրբերանգներ է հուշում …. *(Սաֆ., էջ 117):*

ԵՌԱԾՈՒՆԿ, ած. **Երեք ծնկանի:** Տե՛ս ԲԱՐԴԱԿԱԶՄ-ի օրինակը:

ԵՌԱՀԱՅԵԼԻ, գ. **Եռամաս մեծադիր հայելի:** …. Դուրս էի եկել մեր ճեմասրահը և մեծ **եռահայելու** առաջ սկսել պարահանդեսային պարի մի պարաքայլ սովորել *(ՌՄՊ, հ. 2, էջ 597):*

ԵՌԱՀԵՆԱՐԱՆ, ած. **Երեք հենարան ունեցող**: **Եռահենարան** Հայաստան *(Աբով., էջ 91):*

ԵՌԱՄԵԾԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Եռամեծար լինելը:** Նրա արձակում և նրա մարդկային բնույթի մեջ նկատելի են **եռամեծարություն՝** ընտանիք, հայրենիք, մարդկություն *(Նորք թ. 1, 2017):*

ԵՎՐՈԱՂԲԱՎԱՅՐ, գ. **Եվրոպական չափանիշներին համապատասխանող աղբավայր**: «**Եվրոաղբավայրեր**» ենք ունենալու *(ՀՀ, 25.02.2017):*

ԵՎՐՈԱՐԺՈՒՅԹ, գ. **Եվրամիության գործող արժույթ**: **Եվրոարժույթի** համակարգն ավարտվում է փլուզմամբ…. *(ՀՀ, 26.01.2017):*

ԵՐԱԺՇՏԱՁԵՎ, գ. **Երաժշտատեսակ:** Հայդնի **երաժշտաձևերի** թափանցիկությունը, հստակությունը, լակոնիկությունը այնքան կատարյալ են, որ առաջին հայացքից ձևը թողնում է պարզունակ տպավորություն *(ԴԵ, էջ 91):*

ԵՐԱԺՇՏԱՍԵՆՅԱԿ, գ. **Երաժշտության սենյակ, սենյակ, որտեղ զբաղվում են երաժշտությամբ**: …. Բարձրացավ **երաժշտասենյակը** *(Գոլս., էջ 455):*

ԵՐԱԽՏԱՊԱՐՏԵԼ, բ. **Երախտապարտ դարձնել:** Եվ դու, Արամ, որ քաջամիտ եղար, ժողովուրդը անունդ **երախտապարտեց՝** ի շնորհ Վասպուրաց գոյամարտիդ *(ՌԿ, էջ 140):*

ԵՐԵԽԱՋՈՒՐԿ, ած. **Երեխա չունեցող:** Ասաց, որ անանուն մի ունևոր՝ **երեխազուրկ** ու երեխասեր մի ընտանիք, կամենում է որդեգրել տղային *(ՌՍՊ, հ. 1, էջ 44):*

ԵՐԵՎԱՆԱՇՈՒՆՉ, ած. (փխբ.): **Երևանին բնորոշ:** …. **Երևանաշունչ** շենքերի պատկերները …. վայելելու արարողությունը թերևս նյարդերի որոշ թուլացում կբերի…. *(Անդին, թ. 7, 2016):*

ԵՐԿԱԹԱՓԵՂԿ, գ. **Երկաթյա փեղկ**: **Երկաթափեղկն** իջեցված էր, և ոչ մի հայտարարություն, նույնիսկ մահազդ չգտավ *(Օտ. հայ գր., էջ 340):*

ԵՐԿԴԵՂՆՈՒՑ, ած. **Երկու դեղնուց ունեցող**: …. **Երկդեղնուց** ձվեր *(Մարտ., էջ 181):*

ԵՐԿՅՈՒՂԱԲԱՐ, մկբ.**Ահաբեկված:** Այժմ բազմությունը գնում էր **երկյուղաբար** ճանապարհի երկու եզրերով *(ՌԿ, էջ 136):*

ԵՐԿՅՈՒՂԱՁԱՅՆ, մկբ. **Երկյուղալի ձայնով:** -Գնդապետ Պապաշա,-**երկյուղաձայն** կանչեց մի դիրքապետ, և զինվորները խշրտոցով շարժեցին հրազենի փակաղակները *(ՌԿ, էջ 155):*

ԵՐԿՅՈՒՂԱՄՈԼ, ած. **Խիստ վախեցած**: **Երկյուղամոլ** խորհուրդը ում հույսին է թողնում Հայոց վշտալի աշխարհը *(ՌԿ, էջ 130):*

ԵՐԿՆԱԽՈՐ, ած. **Երկնքի խորքից:** Անժամկետ, **երկնախոր** խավարում //Ինձ լքեց՝զորավարգը արյան *(ԲԱ, էջ 18):*

ԵՐԿՆԱՀՈՒՆՉ, ած. **Երկնային հնչողություն ունեցող**: Անդունդներ կան Էդգար Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիայում ժայթքող **երկնահունչ** տաղի և Տիգրան Մանսուրյանի գողտրիկ, ակվարելային տարբերակի միջև *(Իր., 03.02.2017):*

ԵՐԿՆԱՄԻՏ, ած. **Երկնային մտքի՝ բանականության կրողը:** Եղավ, որ Գրիգոր Նարեկացի՝ **երկնամիտը,** իր երկրային կյանքից հազար տարի ի վեր, սրբադասվեց Եվրոպայի հոգևոր սրտի մեջ, կանոնիկ եկեղեցու ծեսով ու օրենքով *(Անդին, թ. 3, 2016):*

ԵՐԿՆԱՑԱՎ, գ.**Երկունքի ցավ:** Ինձնից կծորի **երկնացավերով** հակինթ ու ոսկի *(ԲԱ, էջ 9):*

ԵՐԿՆԵՐԱՆԳ**,** ած. **Երկնագույն երանգով**: **Երկներանգ** շրթնագծեր՝ հուզմունքից շառագունած *(Պաչյան, էջ 9):*

ԵՐԿՆՈԼՈՐՏԱՅԻՆ, ած. **Երկնային ոլորտին վերաբերող:** ….Հայաստանի **երկնոլորտային** շերտը կազմավորող օդերևույթը և ընդերքի պեղումնառատ հողերևույթը շա՛տ են հայկական…. *(Անդին, թ. 2, 2017):*

ԵՐԿՎԱՆԿԵԼ, նբ. **Երկվանկ բառ դարձնել. ինչպես՝ Արտավազդ-Արտո, Վաղինակ-Վաղո**… Գյուղացիք սովորություն ունեն բոլոր անունները **երկվանկելու** *(Գյուլ., էջ 410):*

ԵՐԿՐԱՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Երկրագնդի ստորգետնյա շերտերի ուսումնասիրությանը վերաբերող:** ….Եվ քայլեց անսահմանորեն

ձգվող **երկրաձևաբանական** ծավալների միջով դեպի անվերջ հեռացող արևածագը *(Անդին, թ. 5, 2016):*

ԵՐՆՋԱԿԱՇՎԵ, ած. **Երնջի կաշից կարված:** ….Նա հագել էր …. մուգ կապույտ շալվար և **երնջակաշվե** կոկիկ սապոգներ *(ՌՄՊ, հ. 2, էջ 146):*

ԵՐՓՆԱՀՅՈՒՍ, ած. **Գունագեղ հյուսված:** …. Հագին ուներ **երփնահյուս** գուլպաներ *(Բ5, էջ 91):*

Զ

ԶԱՄԲՅՈՒՂԱԶԱՐԴ, ած. **Զամբյուղներով զարդարված:** Անցան **զամբյուղազարդ** սենյակով, ուր մինչ այժմ չէին թառամել արմավենու ճյուղերը…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 92):*

ԶԱՆԳԱԼԱՐ, գ. **Զանգի լեզվակին կապված լար, որով լեզվակը խփում են զանգի պատերին, զանգաթել**: …. Դռնապանը **զանգալարը** ձգեց …. *(Բ7, էջ 23):*

ԶԱՆԳԱԿԱԿԱՆՉԵԼ, բ. **Զանգակ հնչեցնելով կանչել:** Թող **զանգակականչեն** Արագածի զույգ լանջերից մինչև Արաքս *(ՌԿ, էջ 141):*

ԶԱՆԳԱՆՄԱՆ, գ. **Զանգի նմանություն՝ տեսք ունեցող**: **Զանգանման** լայնեզր գլխարկը ծածկում էր դեմքի կեսը *(Վեռնոյ, էջ 94):*

ԶԱՐԴԱՊԱՍՏԱՌ, գ. **Սենյակը զարդարելու համար օգտագործվող պաստառ:** Անհետացել էին խիստ կրետոններն ու Մորիսի **զարդապաստառները** …. *(ՍՄ, էջ 223):*

ԶԱՐԴԱՊԻՏՈՒՅՔ, գ. **Որպես զարդ ծառայող պիտույք՝ իր**: …. **Զարդապիտույքների** պայուսակ *(Գոլս., էջ 396):*

ԶԱՐԴԱՊՆԱԿ, գ. 1. **Զարդանախշված ափսե: 2. Պատին որպես զարդ կախվող պնակ**: Նա սիրում էր սրահի հանգստավետ կահավորումը, պատի **զարդապնակները**, ցածր սեղանները, փափուկ բազկաթոռները *(Օտ. հայ գր., էջ 313):*

ԶԲՈՍԱՎԱՐՈՒՀԻ, գ. **Կին զբոսավար**: Բլրագագաթից իջնող քարասանդուղքին հայտնվում է **զբոսավարուհին** *(ՔԽ, էջ 453):*

ԶԻՆԱՆՇԱՆԱԿԻՐ, գ. **Զինանշան կրող՝ ունեցող**: …. Մեկը այն ոսկեճամուկ, **զինանշանակիր** և ապահովված մարդկանցից …. *(Հյուգո, էջ 48):*

ԶԻՆՎՈՐԱԶԳԵՍՏ, գ. **Զինվորական համազգեստ:** Հանդիպակաց պատին կախված **զինվորազգեստը** պեծպեծին տվեց փայլերի մեջ *(ՌԿ, էջ 232):*

ԶՈՀԱԿԵՆԴԱՆԻ, գ. **Զոհելու համար նախատեսված՝ որպես զոհ սպանված կենդանի**: **Զոհակենդանու** խրտվիլակ *(Ֆր., էջ 622):*

ԶՈՀԱՕՋԱԽ, գ. **Զոհատեղ, զոհարան, զոհավայր**: Աթենքում քաղաքային պատի վրա կար Զևս Ամպրոպածինի **զոհաօջախը** *(Ֆր., էջ 194):*

ԶՈՐԱՎԱՐԳ, գ. (փխբ.): Զորավազք: Տե՛ս ԵՐԿՆԱԽՈՐ-ի օրինակը:

ԶՈՔԱՆՉԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ., դիպվ.): **Զոքանչին սիրելը:** Շատ պաշտոնյաների **զոքանչասիրությունից** եմ վախենում *(Անդին, թ. 2, 2017):*

ԶՎԱՐՃԱՄԻՏ, ած. **Ուրախ, զվարթ միտք ունեցող:** Սակայն չնայած **զվարճամիտ** տրամադրությանը, մարդկանց չէր լքում տագնապը…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 362):*

ԶՈՒԳԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեկը մյուսի հետ զուգակցելը:** Խաղի և աշխատանքի **զուգամիասնություն** *(Հայրունի 1, էջ 77):*

Է

ԷԹՆԻԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգային նկարագիր, գիտակցություն:** Էթնոկենտրոնությունն առավել ուժգնորեն արտահայտվում է առաջին՝ Ա մակարդակում, …. իսկ ամենաթույլը հինգերորդ՝ Ե մակարդակն է, երբ մարդու **էթնիկականությունն** այնքան է խամրել, որ

նա դարձել է «ինչ տարբերություն՝ թե ինչ ազգի ես պատկանում» կենսափիլիսոփայության կրող *(ՀՀ, 14.03.2017):*

ԷԹՆՈԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգակենտրոնություն:** Տես ԷԹՆԻԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ԷԹՆՈՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգի հիշողություն:** Այսինքն՝ կրկին առաջնագծում է մնում ազգային ինքնագիտակցությունն ու իրենց ծագման մասին **էթնոհիշողությունը** *(Ազգ, 22.09.2017):*

ԷԹՆՈՆԻՀԻԼԻՍՏ, գ. **Ազգային գիտակցության անտեսում, ժխտում: Էթնոնիհիլիստն** այն մարդն է, ով ծայրահեղ ժխտողական և ագրեսիվ դիրքորոշում ունի սեփական էթնիկական խմբի նկատմամբ *(ՀՀ, 14.03.2017):*

ԷԿՈԿԵՆՏՐՈՆ, գ. **Էկոլոգիական կենտրոն**: **Էկոկենտրոնն** իրականացնում է տարածքի էկոլոգիական իրավիճակի գնահատման աշխատանքներ.... *(ՀՀ, 25.01.2017):*

ԷԿՈԿՐԹԱԿԱՆ, ած. ....Բացվել է **էկոկրթական** կենտրոն *(Հեռ., Շանթ, 09.11.2017):*

ԷԿՈՏՈՒՆ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող տուն:** Եվրոպայում և Չինաստանում .... այս զրոյական տներն անվանում են **էկոտներ**, որովհետև ջերմամեկուսացման համար օգտագործվում են բնապահպանապես մաքուր նյութեր, ավանդական էներգիայի փոխարեն՝ այլընտրանքային էներգիա *(ՀՀ, 21.02.2017):*

ԷՊՈՍԱՍԱՑ, գ. **Էպոս ասացող**: Տես ԱՌԱԾԱՍԱՑ-ի օրինակը:

Ը

ԸՄԲՈՍՏԱՀՈԳԻ, ած. **Ըմբոստ՝ հանդուգն, անհնազանդ [հոգի ունեցող]**: Մանկուց, մանկուց պետք է ըմբոստություն սերմանել, **ըմբոստահոգի** պետք է ծնվել *(Մարտ., էջ 260):*

ԸՆԴՈՒՆԱՏԵՂԻ, գ. **Ժամանողներին առաջարկվող տեղ՝ հանգրվան**: Տես ԳՈՄԱՏԱՐԱԾՔ-ի օրինակը:

ԸՆՁՈՒՂՏԱՁԵՎ, ած. **Ընձուղտի ձև ունեցող**: …. Ապրում էր …. գագաթին՝ **ընձուղտաձև** մի տան մեջ *(Գոլս., էջ 34):*

ԸՆՏՐԱՇՈՒԿԱ, գ. **Ընտրական շուկա**: …. Սեփական ֆավորիտն ունի հայաստանյան **ընտրաշուկայում**…. *(Ազգ, 27.01.2017):*

Թ

ԹԱԽԾԱՄՐՄՈՒՆՋ, ած. (բնստ.): …. **Թախծալի մրմունջով**: Նրանք….միս ու արյուն են առել հեռամնա **թախծամրմունջ** խրճիթներից *(Նորք, թ. 1, 2017):*

ԹԱԽՏԸՆԿԵՑ ԱՆԵԼ, բ. **Պաշտոնանկ անել:** ….Համիդին՝ իրենց թշնամուն…. չորս տարի առաջ **թախտընկեց էին արել** …. *(ՀՄ, էջ 13):*

ԹԱՆՁՐԱՊՂՏՈՐ, ած. **Թանձր և պղտոր:** Նա այս անգամ սկսեց ուսումնասիրել ծովահրեշի լպրծուն մարմինը, ծծիչների անցքերը, ամբողջովին կարմիր, **թանձրապղտոր** աչքերը *(ԻԿ, էջ 160):*

ԹԱՆՁՐԱՍՐՃԱՐԺԵՔ, գ. (դիպվ.): **Թանձրասուրճի արժեք**: Թանձրասուրճ պատվիրեցի՝ ջրասուրճ մատուցեցին, **թանձրասրճարժեք** վերցրին *(Մարտ., էջ 302):*

ԹԱՆՁՐԱՍՈՒՐՃ, գ. **Թանձր սուրճ**: Տե՛ս ԹԱՆՁՐԱՍՐՃԱՐԺԵՔ-ի օրինակը:

ԹԱՏԵՐԱԶԳԵՍՏ, գ. **Թատերական զգեստ:** Այստեղ շատ խնամքով ու հոգատարությամբ ցուցադրված են թատրոնի պատմության մասին վկայող **թատերազգեստներ**, գրականություն, ազդագրեր, նկարներ, պատվոգրեր, դեկորացիաներ *(Հրապ., 16.12.2016):*

ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ, ած. **Թատերական և համերգային**: …. ՀՀ և ԼՂՀ 130 համայնքներում կկազմակերպվի 426 միջոցառում՝ **թատերահամերգային** ծրագրեր, ցուցահանդեսներ, կինոցուցադրություններ *(ՀՀ, 21.02.2017):*

ԹԱՓՈՆԱԿՈՒՅՏ, գ. **Թափոնների կույտ:** …. Միայն Հայաստանի նման երկրների լեռնահանքային արդյունաբերության մեջ է հնարավոր

օգտագործել էժան ու վտանգավոր տեխնոլոգիաներ….՝ բնությանը որպես հիշատակ թողնելով թունավոր պոչամբարներն ու իրենցից լուրջ վտանգ ներկայացնող այլ **թափոնակույտերը** *(Իր, 27.01.2017):*

ԹԵԹԵՎԱՁԵՌՆ, ած. (դրձվ.): **Թեթև ձեռքով:** ….Որպեսզի վայ խորենացիագետները մեր ազգային արժանապատվությունը ոտնահարող նոր, **թեթևաձեռն** մտամարզանքների չգնան *(ԼՄ2, էջ 221):*

ԹԵԼԱԾԱՅՐ, գ. **Թելի ծայրը**: …. Իսկույն էլ նոր շարանի **թելածայրն** ասեղի անցքը խոթեց *(Ռ. Հովսեփյան, էջ 4):*

ԹԵԼԱԿ, գ. (իմ. նորբ.): **Բարակ թելիկների ձև ունեցող թել պանրի անվանումը**: Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղի «Չիզլեր» ՍՊԸ-ն արտադրում է «**Թելակ**» պանիր:

ԹԵԼԱԿԱՊԵԼ, բ. (փխբ.): **Թելով կապել, ամրացնել, այստեղ՝ սահմանազատել, սահմանանշել**: Բայց մի առավոտ, երբ անթիվ ու անհամար ծիծեռնակները խլացնում էին տարածքը և անսահմանը **թելակապում**, նա տիկնիկի վիզը բռնեց…. *(Արտ.գրակ., 4, 2016, էջ 8):*

ԹԵԼԱՓՈՒՆՋ, գ. 1. **Թելերի փունջ՝ փնջաձև կապուկ:** 2. (փխբ.): **Բարակ ցողուններով բույսերի թելաձև փունջ**: Մորթուն փոխարինում են արմավենու բնին աճող **թելափնջերը** *(Ֆր., էջ 815):*

ԹԵՎԱԲԱՂՁ, ած. **Թևելու, թևածելու բաղձանք ունեցող**: **Թևաբաղձ** ու թռիչքի պատրաստ նրա քնարական հերոսը, որ հավերժ շարժման մեջ է, մշտատև է իր տեսակի մեջ…. *(ԳԹ, 10.02.2017):*

ԹԵՎԱԾԱԿ, գ. **Թևերը հագնելու համար անցք:** Պրեզիդենտը …. կանգնած էր բութ մատները խրած բաճկոնի **թևածակերի** մեջ *(ՍՄ, էջ 465):*

ԹԵՎՔԱՃԱՐՄԱՆԴ, գ. **Թևքի ճարմանդ**: **Թևքաճարմանդներ ….,** սովորական **թևքաճարմանդներ՝** ոսկյա կամ պողպատյա *(Պրուս, էջ 131):*

ԹԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄ, գ. **Թերարժևորելը, թերարժևորվելը, ըստ արժանվույն չգնահատելը, թերարժեքավորում**: Հիշյալ տեսակետը բխել է պարզապես այդ իրողության **թերարժևորումից** *(Հայրունի 1, էջ 20):*

ԹԵՔԱՀԱՐ, ած. **Թեքությամբ՝ շեղությամբ հարվածող:** ….Նա հայացքը հառեց **թեքահար** անձրևին …. *(ՍՄ, էջ 250):*

ԹԻԹԵՂԱԿԻՐ, ած. **Թիթեղ կրող:** Մարդը կատարելապես մերկ էր, եթե չհաշվենք բաց սրճագույն կարճ շալվարը…., որը փորի վրա կապված էր ….**թիթեղակիր** գոտիով *(ՌՍՊ, հ. 1, էջ 87):*

ԹԽԱՄՈՒՅՐ, ած. **Թուխ:** Նրա շագանակագույն մազերը հարդարված էին ու փայլում էին **թխամույր** մորթու պես *(ՌՍՊ, հ. 1, էջ 262):*

ԹՂԹԱՇԵՐՏ, գ. **Թղթերի շերտ:** Մի լրիվ ձմեռ փոշոտ մնացած, **թղթաշերտերը** դեռ չպոկած լուսամուտներից ներս էր խուժում գարնանային տաք արևը…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 525):*

ԹՂԹԱՓՈՒՆՋ, գ. **Թղթի փունջ:** Նա մի պահ վարանած նայեց բազմությանը և ձեռքի **թղթափունջը** հերսոտած շաղ տվեց օդում *(ՌԿ, էջ 257):*

ԹՄԲԻՐԱՆՄԱՆ, ած. (փխբ.)**: Թմբիրի նմանվող**: Սպասման տանջանքը ջղաձգումով պարպվեց ու **թմբիրանման** ճոճք կապեց տղայի համար *(ԳԹ, 03.02.2017):*

ԹՇՎԱՌԱՔՐՏԻՆՔ, ած. **Ընչազուրկ, ծանր աշխատանքով ապրող:** …. Մարտունը սկսեց ավելի հաճախակի բերել մոր մոտ իր **թշվառաքրտինք** ընտանիքին *(ԱԱ, ԸԵ, էջ 85):*

ԹՈՆՐԱՀՈՏ, գ. **Թոնրի հոտ**: …. Մորս շորերից **թոնրահոտ** է գալիս *(Գյուլ., էջ 203):*

ԹՈՔԱԿԱՆՉ,գ. **Հաղթական գոչյուն**: Սակայն զինվորները այդ **թոքականչը** դեռ չեն արձակում *(ՌԿ, էջ 129):*

ԹՌՉՆԱՊԱՏԿԵՐ**,** գ. **Թռչունի պատկեր՝ նկար**: …. Քանդակված են …. **թռչնապատկերներ** *(ՍԽ, էջ 40):*

ԹՐԱԴԱՍՏԱԿ, գ. **Թրի կոթ՝ դաստակ:** Սիլիկյանն անվրդով դիտում էր այդ ամենը՝ ձեռքը **թրադաստակին** *(ՌԿ, էջ 186):*

ԹՐԱԿԻՐ,ած. **Թուր կրող:** Ճանապարհ, ճանապարհ,- միաձայն գոչում էին **թրակիր** ուղեկցողները *(ՌԿ, էջ 129):*

ԹՐԻՔԱՊԱՏ, ած. **Թրիքով պատված:** ….Նա սանձը բռնած ձիով կանգնած էր կայարանի կեղտոտ ու **թրիքապատ** ձյան վրա …. *(ՌՄՊ, հ. 1, էջ 247):*

ԹՐՄԱԲՈՒՅԼ, գ. **Թրմախառնուրդ:** Ես այսօր ապրեցի...պորտապար պարող թխամորթ գեղեցկուհիներից եկող **թրմաբույլերի** ու հաշիշի ծխի մեջ *(ՍՀ, էջ 19):*

ԹՐՄԱՄԱՆ, գ. (փխբ.): **Թրմելու աման:** Մեծ մարդկանց **թրմաման:** *(Բ5, էջ ?):*

ԹՐՔԱԳՈՉ, ած. **Թուրքերեն արձակված՝ հնչած:** Նրանք սպասում էին պրոֆեսորի ետևում հայտնված **թրքագոչ** ազդանշանին *(ՌԿ, էջ 420):*

ԹՐՔԱԿՈՒՅՏ, գ. **Թրիքի կույտ**: …. Ձիերից մեկը թրքել էր, և փոքրիկ տղաներից երկուսը չորեքթաթ սողացել էին **թրքակույտի** մոտ և սկսել էին մատներով խառնել այն, որպեսզի չմարսված կեր կորզեին *(Բոհջ., էջ 154):*

ԹՐՔԱՋՈՒՐ**,** գ. **Թրքի ջուր**: Գյուղի փողոցներն ուղղակի զզվանք են առաջացնում ցեխի ու **թրքաջրի** դերբուկներով *(ՄԽ, էջ 124):*

ԹՐՔԱՏԻՊ,ած. **Թուրքի նման** :- Պարոններ, խնդրում եմ ուշադիր նայեցեք այս **թրքատիպ** ոճրագործին *(ՌԿ էջ 129):*

Ժ

ԺԱՄԱՆԱԿԱԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Ժամանակի ընկալում**: Իսկ տեքստի մեջ **ժամանակաընկալումը** ստեղծվում է հետևյալ շերտերով…. *(ԲԱ1, էջ 238):*

ԺԱՄԱՆԱԿԱԽԱԽՏՈՒՄ, գ. **Ժամանակավրիպություն, անաքրոնիզմ: Նշված ժամի խախտում:** Բարձր գնահատելով և մեծապես օգտվելով Խուբովի աշխատությունից՝ արտահայտենք մեր տեսակետն այդ **ժամանակախախտման** վերաբերյալ *(ԴԵ, էջ 216):*

ԺԱՄԱՆԱԿԱՓՈՓԽՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Ժամանակները փոխվելը**: Համայնավար երկրում անշեղորեն էր բարձրանում, **ժամանակափոփոխության** թնջուկում՝ տեղ-տեղ շեղված…. *(ԳԹ, 03.03.2017):*

ԺԱՄԱՆՑԱՐԱՆ, գ. **Ժամանցի տեղ՝ ժամանցատեղ, ժամանցավայր**: …. Էժանագին **ժամանցարան** *(Սար., էջ 41):*

ԺԱՄՍՏՈՒԳԻՉ, ած. **Ժամը՝ ներկայանալու պահը ստուգող և գրանցող**: …. Առաջին անգամ դեղին քարտը չի ներկայացնելու գործարանի սրածայր, **ժամստուգիչ** գործիքին *(Վեռնոյ, էջ 168):*

ԺԱՅՌԱԾԱԾԿՈՒՅԹ, գ. **Ժայռազանգված:** Եֆիմը կանգնել էր հասակով մեկ, տեսնելու, թե ինչ է կատարվում **ժայռածածկույթի** տակ *(ՌՍՊ, հ. 1, էջ 509):*

ԺԱՅՌԱԾԻՆ **, ած. Ժայռից ծնված**: Բետոնը հող չէ բարի, //Ոչ էլ քար է **ժայռածին** *(ԼՄ4, էջ 108):*

ԺԱՅՌԱՈՍՏ, գ. **Ժայռի դուրս ցցված մասը**: …. Արագած լեռան մի **ժայռաոստի** վրա հնադարյան ամրոց կա *(ՍԽ, էջ 32):*

ԺԱՅՌԱՓՈՍ, գ. **Ժայռի մեջ գոյացած փոս**: Թռչունը **ժայռափոսն** էր ընտրել որպես մահվան հանգրվան *(Սար., էջ 351):*

ԺԱՆԳԱՀԵՏՔ, գ. **Ժանգի հետք**: …. **Ժանգահետքերով** սավանի տակ պառկած էր Աննին …. *(Հունգ., էջ 158):*

ԺԱՆԳԱՁԱՅՆ, ած. **Ժանգոտ իրի ձայն ունեցող:** Իոնայի գլխում անիվներ ճռճռացին **ժանգաձայն** *(ՌՍՊ, հ. 1, էջ 97):*

ԺԱՆԵԿԱՇԱՐ, գ. **Ժանյակների շար:** ….Նորից տեսավ նրա սպիտակ ձեռքերն ու փրփրաճերմակ պարանոցը՝ **ժանեկաշարերի** միջից վեր խոյացող *(Հ, էջ 102):*

ԺԱՊԱՎԵՆԱՀՅՈՒՍ, ած. **Ժապավեններով հյուսված**: Թագավորին հագցնում են կեղևից պատրաստված, ծաղկափյուռ և **ժապավենահյուս** թիկնոց *(Ֆր., էջ 355):*

ԺԽՈՐԱՀԵՐՁ, ած. **Աղմկաձայն, աղմկոտ:** ….Մարդը **ժխորահերձ** հոսքից անջատվելով, տեսավ կիսավեր պարսպի մոտ կանգնած մի խումբ մարդկանց…. *(Անդին, թ. 2, 2017):*

ԺԽՈՐԱՏԱՐԱՓ, ած. **Աղմկոտ, ժխորահերձ:** Անծանոթը, որ այլևս ինչ-որ չկայացած քաղաքական գործչի էր հիշեցնում, խառնվեց մարդկանց **ժխորատարափ** հոսքին ու անհետացավ *(Անդին, թ. 2, 2017):*

ԺՈԿԵՅՈՒՀԻ, գ. **Ձիարշավի հեծնորդուհի՝ կին հեծնորդ**: …. Գեղեցիկ թանաքաման՝ թամքով, վրան էլ մի **ժոկեյուհի** *(Պրուս, էջ 132):*

ԺՊՏԱՓՈՍԻԿ, գ. **Այտի վրա ժպիտից առաջացած փոսիկ**: …. Վարսերը ետ տանող աղջկա նուրբ մատները շոյում են թշիդ վրա գոյացած **ժպտափոսիկը**… *(Պաչյան, էջ 48):*

ԺՐԱԽՈՍԵԼ, բ. **Աշխույժ խոսել:** Դիլբարը …. մեր բժշկապետն է, եկեք կենացը խմենք, ուրախ սեղանից **ժրախոսեց** Մուշեղ գյուղացին *(ՌԿ, էջ 136):*

ԺՐԱՁԱՅՆ, մկբ. **Ժիր ձայնով:** - Դեպի մարտ, դեպի արարչագործություն**,- ժրաձայն** ազդարարեց Դանիելը *(ՌԿ, էջ 287):*

Ի

ԻԳԱԲՈՒՅՐ, ած. (դիպվ.): **Իգականություն բուրող**: …. Դա նրա **իգաբույր** խենթությունն էր, որ անգամ հարյուր քայլի վրա դող ու թրթիռ էր հաղորդում տղամարդու ողնաշարին *(ԳԹ, 03.02.2017):*

ԻՄԻՋԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Իմիջի փոփոխություն**: ՀՀԿ-ն մինչև ընտրությունները փորձում էր **իմիջափոփոխություն** իրականացնել հնարավոր տարբեր մեթոդներով՝ պաշտոնանկություններ, նսեմացումներ…. *(ԳԹ, 25.11.2016):*

ԻՄԻՋԻԱՅԼՈՑԱՅԻՆ, ած. **Ի միջի այլոց ասվող, ոչ հիմնական, երկրորդային**: …. Կերպարում որպես **իմիջիայլոցային** փաստ ակնարկվում է …. *(Սաֆ., էջ 51):*

ԻՆՔՆԱԲԱՆՏԵԼ, նբ. **Ինքն իրեն բանտային վիճակի մեջ դնել, արգելափակել, կաշկանդել**: Քեզ չթվա, թե նրանք իրենց **ինքնաբանտել** են *(Մարտ., էջ 253):*

ԻՆՔՆԱԳՆԴԱԿԱՀԱՐ ԼԻՆԵԼ, բ. **Ինքն իրեն գնդակահարել:** Մահաշունչ երկտող նամակները պահանջում են **ինքնագնդակահար լինել** *(ՌԿ, էջ 178):*

ԻՆՔՆԱԶՐՊԱՐՏՈՒՄ, գ. **Ինքն իրեն զրպարտելը:** …. Լավ կանես …. կարճ կապես, քան թե մեզ մղես **ինքնազրպարտման** *(Բ5, էջ 714):*

ԻՆՔՆԱԽԱԲԵԼ, բ. **Ինքն իրեն խաբել:** – Ձինվոր՝ կնշանակի լինել միշտ ոտքի վրա,– **ինքնախաբեց** դիմացինը *(ՌԿ, էջ 220):*

ԻՆՔՆԱԽՂՃՄՏԱՆՔ, գ. **Ինքն իր նկատմամբ խղճահարություն զգալը՝ տածելը**: …. Նախքան **ինքնախղճմտանքով** կխորհեի դրանց անարդարացիության շուրջ, մեղքի զգացումը համակեց ինձ…. *(Սուրյան, էջ 132):*

ԻՆՔՆԱԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԱՅԻՆ, ած. **Ինքնախոստովանքային, ինքնախոստովանքի բնույթ ունեցող**: Ղուկաս Սիրունյանի պոեզիան միշտ էլ բնորոշվել է **ինքնախոստովանանքային** երանգներով…. *(ԳԹ, 03.02.2017):*

ԻՆՔՆԱԽՈՒԶԱՐԿՈՒՄ, գ. **Ինքն իրեն խուզարկելը, հետազոտելը, քննելը**: …. Մ. Գրաբսկու բանաստեղծական հմտությունը **ինքնախուզարկումով**, ինքնաքննումով անցյալից ներկա գալն է և վերհուշը ներկա հասցնելը *(ԳԹ, 10.03.2017):*

ԻՆՔՆԱԿՊՉՈՒՆ, ած. **Ինքն իրեն ամրացող, կպչող**: Ներկիր **ինքնակպչուն** պիտակներով *(գրքի վերնագիր):*

ԻՆՔՆԱԿՏՏԱՆՔ, գ. **Ինքնախոշտանգում, ինքնատանջանք, ինքը իրեն տանջելը՝ սաստիկ ցավ պատճառելը**: …. **Ինքնակտտանքն** ու ողբը միջնադարյան …. ազգային-քաղաքական իմաստավորում ունեն …. *(Սաֆ., էջ 130):*

ԻՆՔՆԱՀԱՄՈԶՈՒՄ, գ. **Ինքնահամոզելը, ինքնահամոզվելը, ինքն իրեն համոզելը**: …. **Ինքնահամոզումի** առիթով հիշված Սուրբգրյան միտքը …. *(Սաֆ., էջ 67):*

ԻՆՔՆԱՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ, գ. **Հանձնարարական ինքն իրեն**: Սակայն բնավորության գեղագիտական վերաիմաստավորումից բացի

այս շարքը նաև եզակի **ինքնահանձնարարականների** փունջ է *(ԲԱ1, էջ 227):*

ԻՆՔՆԱՀԱՎԱՔՈՒՄ, գ. **Ինքնատիրապետում:** Սակայն պահանջվող գերլարումը, վերջին ճիգով ձեռքբերելիք **ինքնահավաքումը** չափազանց դժվար էր…. *(Հ, էջ 54):*

ԻՆՔՆԱՀՂՈՒՄ**,** գ. **Ինքն իրեն՝ իր գրածին հղելը**: …. Գիրքը լեցուն է տեղի ու անտեղի **ինքնահղումներով….** *(Ազգ, 15.09.2017):*

ԻՆՔՆԱՆՈՒՅՆԱՆԱԼ**,** բ. **Որևէ մեկի՝ երևույթի հետ ինքն իրեն նույնացնել**: …. Որքան ավելի մեծաթիվ են սեփական էթնոսի հետ հոգեբանորեն **ինքնանույնացած** մարդիկ, այնքան ավելի կենսունակ և ուժեղ է խումբը *(ՀՀ, 14.03.2017):*

ԻՆՔՆԱՍՈՍՆՁՎՈՂ**,** ած. **Ինքն իրեն սոսնձվող**: … Հանձնաժողովի անդամը …. քվեաթերթիկին է փակցնում **ինքնասոսնձվող** դրոշմանիշը …. *(ՀՀ, 15.02.2017):*

ԻՆՔՆԱՎԵՐԱԴԱՐՁ, գ. **Վերադարձ ինքն իրեն:** ….Սակայն այդ երկրները դեռ բավականաչափ հասուն չէին՝ **ինքնավերադարձի** համար *(Գարուն, թ. 5, 1999):*

ԻՆՔՆԱՎԵՐԾԱՆՈՒՄ, գ. **Ինքն իրեն վերծանելը, վերլուծելը**: Եվ գրականագետների գործը հեշտացնելու համար հեղինակը **ինքնավերծանում** է կատարել («**Ինքնավերծանում**») *(ԳԹ, 10.03.2017):*

ԻՆՔՆԱՏԱՐԱԾՈՒՄ**,** գ. **Ինքն իրեն տարածվելը**: …. Տեղեկատվական պատերազմները պարունակում են ինքնազարգացման, **ինքնատարածման** մեխանիզմներ …. *(Իր, 26.07.2016):*

ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ**,** բ. **Ինքն իրեն արտահայտել**: …. Գրականությունը կնոջ կամ տղամարդու համար **ինքնարտահայտվելու**, իր խոսքի իրավունքին տիրելու ու, իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ, լսելի լինելու միջոց է *(Անդին, թ. 7, 2016):*

ԻՆՔՆԱՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**,** գ. **Ինքնաոչնչացում:** …. Ահագնացող ծավալ ընդգրկող հակամարտությունների, պատերազմների, ահաբեկչությունների էսկալացիան սպառնում է աշխարհին …. **ինքնացեղասպանությամբ** *(Իր., 07.02.2017):*

ԻՆՔՆԱՑՈՒՑԱԴՐԱՆՔ, գ. **Ինքն իրեն ցուցադրելը:** Շնորհիվ հեղինակի համեստ **ինքնացուցադրանքից** զերծ, սակայն անդուլ ջանադրանքով և չթուլացող ուշադրությամբ օժտված անհատականության, գիրքը նաև ասպետական որոնումների պատմություն է…. *(Սուրյան 1, էջ 135):*

ԻՆՔՆԱՔՆՆՈՒՄ, գ. **Ինքն իրեն քննելը, հետազոտելը**: Տե՛ս ԻՆՔՆԱԽՈՒԶԱՐԿՈՒՄ- ի օրինակը:

ԻՏԱԼԱՎԱՐԻ, մկբ. **Իտալացու նման, ինչպես իտալացին, իտալակերպ**: …. Արդյոք չէ՞ ուզենա, որ ինձ համբուրեր ամբողջ Փարիզի աչքի առաջ, **իտալավարի** *(Բ7, էջ 290):*

ԻՐԱՊԱՅՄԱՆ, գ. **Իրավիճակ, պայմաններ**: …. Դրանք զուտ պատերազմական գործողությունների ու պատերազմական **իրապայմանների** հետևանքներ են *(ՊԲՀ, թ. 3, 2016, էջ 240):*

ԻՐԻԿՆԱԶԳԵՍՏ, գ. **Երեկոյան զգեստ, իրիկնային միջոցառումներին հագնելու զգեստ**: …. Պատրաստեց իր փիրուզագույն, բոլորովին նոր **իրիկնազգեստը** *(Հունգ., էջ 144):*

Լ

ԼԱԹԱԳՈՏԻ, գ. **Գործված կտորից պատրաստված գոտի**: Բազմերանգ **լաթագոտի** *(Ֆր., էջ 162):*

ԼԱՅՆԱԹԱՎ, ած. **Լայն և խիտ**: Իմ առջև կանգնած էր միջին տարիքի **լայնաթավ** մորուքով, արևահար դեմքով…. մի ֆրանսիացի *(ՍՄ, էջ 198):*

ԼԱՅՆԱԿԱԶՄ, ած. **Լայն կազմվածքով՝ կազմվածք ունեցող**: Զգեստապահարանի հայելու մեջ արտացոլվեց նրա միջահասակ, **լայնակազմ** մարմինը *(Գոլս., էջ 297):*

ԼԱՅՆԱՇՈՒՐՋ, ած. **Այստեղ՝ պարաշրջանը լայնակի ընդգրկող:** Տիրապետումը բարդ թռիչքների, պտույտների տեխնիկային, հպարտ կեցվածքը, **լայնաշուրջ** շարժումները …. թույլ տվեցին պարողին ստեղծել ամբողջական և տպավորիչ կերպար *(Ազգ, 30.06.2017):*

ԼԱՅՆԱՈՒՍ, ած., մկբ. **Լայն ուսեր ունեցող**: Շահումյանը գնում է բարձրաճակատ և **լայնաուս** *(ՌԿ, էջ 211):*

ԼԱՆՋԱՓԱԿ, ած. **Լանջը փակ՝ փակող**: …. Բավարարվում էին իրենց լավագույն **լանջափակ** հագուստը …. հագնելով *(Գոլս., էջ 94):*

ԼԱՆՋԱՓՈՍ, գ. **Լանջերի փոսերը:** Շատ թուրք զինվորներ՝ կենդանի թե խեղված, լցվեցին բացված **լանջափոսերը** *(ՌԿ, էջ 196):*

ԼԱՑԱԺՊԻՏ, ած. **Լացախառն, արցունքախառն, արտասվախառն**: …. Հանդիսատեսը **լացաժպիտ** հայացքով …. անքթիթ հետևում է բեմում ծավալվող հզոր զարգացումներին *(Անդին, թ. 1, 2017):*

ԼԵԶՎԱԳԻՏԱԿ, գ. **Լեզուն իմացող:** Հրավիրիր բոլոր պերճախոս **լեզվագիտակներին** և բերեք ինձ այդ նոր անունը *(ՌԿ, էջ 271):*

ԼԵՌՆԱԳՆԱ, ած. **Լեռներ գնալու համար նախատեսված՝ հարմար**: Տեսավ նրա կնոջը՝ **լեռնագնա** կոշիկներով, …. կապույտ բերետ դրած *(Հեմ., էջ 68):*

ԼԵՌՆԱԾՎԱՐ, ած. (բնստ.): **Լեռներում ծվարած:** Մկրտիչ Սարգսյանի ծննդավայրը Զավախքն է, իսկ արմատները գնում, հասնում են **լեռնածվար** Բալխո գյուղ *(ՄՄ, էջ 3):*

ԼԵՌՆԱՀԱՐԹԱԿ, գ. **Լեռնադաշտ, սարահարթ**: Հայերիս աչքը հարթության սովոր չէ, ուստի արտառոց թվաց այս **լեռնահարթակը** *(ՍԽ, էջ 557):*

ԼԵՌՆԱՎԱՀԱՆ, գ. **Պաշտպանիչ լեռնազանգված**: Դա մի ուրույն աշխարհ է՝ թասաձև, ներփակ մի գետահովիտ՝ շրջափակված բարձր **լեռնավահաններով**, հյուսիսից՝ Մեսխեթի լեռնաշղթայով, հարավից՝ Զավախքի լեռներով՝ գմբեթ լեռնազանգվածով, արևմուտքից՝ Արսխանիի լեռնաշղթայով, արևելքից՝ Թռեղքի լեռների Բակուրիանիի լեռնազանգվածով *(Անդին, թ. 7, 2016):*

ԼԵՌՆԱՏԱՓ, գ. **Լեռնատափարակ**: Կանգ են առել այս **լեռնատափի** հին ավերակների մեջ *(ՍԽ, էջ 120):*

ԼԵՌՆԱՔԱՄԻ, գ. **Լեռնային քամի:** Պաղ **լեռնաքամուց** փշաքաղված ծաղիկները մեղմօրոր ցնցվում էին *(ՌԿ, էջ 196):*

ԼԻԱՀԱՂՈՐԴ, ած. **Լիովին տեղյակ**: Այդ անունը հայտնի է միայն **լիահաղորդ** խմբի անդամներին *(Ֆր., էջ 293):*

ԼՈՂԱԽՑԱՆ, գ. **Լողակ (ձկնորսական):** Որպես խաղագնդակ կամ **լողախցան** նա հավերժ պետք է այս ու այն կողմ տարուբերվեր…. *(Հ, էջ 92):*

ԼՈՏՈՍԱՁԵՎ, ած. **Լոտոսի ձև ունեցող:** Տունը աչքի էր զարնում դեկորատիվ պաճուճանքներով, այուների **լոտոսաձև** խոյակներով… *(Անդին, թ. 2, 2016):*

ԼՎԱՑՔԱԼԱՐ, գ. **Լվացքը վրան փռելու լար**: …. Իրենց պատշգամբից միացրեց **լվացքալար** *(Մարտ., էջ 153):*

ԼՐԱԳՐԱՀԱՐԹԱԿ, գ. **Լրագրության ոլորտը, միջոցները**: Քծնանքն ու գովասանաճառը, որ սողեսող նվաճել են նաև այսօրվա **լրագրահարթակը** …. *(Ազգ, 24.02.2017):*

ԼՐԱՀԱՐԴԱՐՈՒՄ, գ. **Լրացուցիչ հարդարում**: Բնականաբար, հիշյալ անոթը սկզբնապես չի պատրաստվել որպես ձգում և դրա **լրահարդարումը** հավանաբար կատարվել է այն դամբարան դնելու նպատակով …. *(ՊԲՀ, 3, 2016, էջ 146):*

ԼՐԱՀԱՐԴԱՐՎԵԼ, բ. **Լրացուցիչ հարդարում ստանալ**: Նման ձևով **լրահարդարված** կավանոթների հնարավոր նշանակության վերաբերյալ…. *(ՊԲՀ, 3, 2016, էջ 143):*

ԼՐՏԵՍԱԲԱՐՈ, ած. **Լրտեսի բարք ունեցող:** Հայերի փոքրաթիվ կայազորը, որի նվազագույն ուժերին քաջ տեղյակ է **լրտեսաբարո** թուրքը, ցաք ու ցրիվ կդառնա հենց առաջին իսկ հարվածից *(ՌԿ, էջ 111):*

ԼՈՒՍԱԾՓԱՆՔ, գ. **Լույսի ծփանքը:** Աղոտ **լուսածփանքի** մեջ նա ի վերջո կարողացավ միայն նույնացնել արևելցիներին հատուկ անուրախ նայվածքը *(ՌԿ, էջ 417):*

ԼՈՒՄՆԱՌԱՏ, ած. **Լուսնի առատ լույսով ողողված**: …. Ծառերը…. ձգվում են դեպի **լուսնառատ** երկինք *(ԳԹ, 10.02.2017):*

ԼՈՒՄՆԱՍՏՎԵՐ, գ. **Լուսնի ճառագայթներից առաջացած ստվեր**: Իր **լուսնաստվերի** հետ նազանքներ անելով խայտում էր ու պարում *(ՋԽ, էջ 287):*

Խ

ԽԱԲԵԲԱՅՈՒՀԻ, գ. **Կին խաբեբա**: Ահա թե ինչու բազում տղամարդիկ այդքան թանկ են վճարում ճարպիկ **խաբեբայուհիներին** *(ԲՇ, էջ 649):*

ԽԱԲԵՀԱՉ, ած. **Սուտ հաչող:** Դրանից հետո խաբեիկ մարդիկ բաց են թողնում **խաբեհաչ** շներին…. *(Անդին, թ. 3, 2016):*

ԽԱՂԱԳՈՒՅՔ, գ. **Խաղերի համար նախատեսված գույք:** …. Գրքույկներում նշել էին, որ գրքի և **խաղագույքի** պարտքեր չունեն …. *(ՌՍՊ, հ. 2, էջ 45):*

ԽԱՂՈՂԱԹՈՒՄԲ, գ. **Խաղողի թումբ:** Ամենաբազում այդ համագնդերը բարձրացան տափատերև թփուտների, գոռուզ- գոռուզ **խաղողաթմբերի** ետևից *(ՌԿ, էջ 160):*

ԽԱՄԱՃԻԿԱՆԱԼ, բ. (դիպվ.): **Խամաճիկի վերածվել**: Նրանք չգիտեն, եթե իմանային՝ այդքան հարստության չէին ձգտի, դրանով իսկ չէին **խամաճիկանա** *(Ազգ, 17.02.2017):*

ԽԱՅԱՄԱՎԱՐԻ, մկբ. **Խայամի նման**: Նա գտնում է նաև վաղանցուկ կյանքի իմաստավորման կերպն ու իսկությունը, Արևելքի երգի պերճաշուք ոճով, **խայամավարի** մեկնում իր իսկ կողմից կատարված հայտնության խորհուրդը՝ մարդու գոյության առեղծվածը *(ԳԹ, 10.02.2017):*

ԽԱՅՏՈՒՑԱՎՈՐ, ած. **Խայտուցներով՝ բծերով**: …. Հասակը հինգ ոտնաչափ ու հինգ մատնաչափ էր, դեմքը՝ **խայտուցավոր** *(Գոլս., էջ 32):*

ԽԱՆԴԱՎԱՌԱՆՔ,գ. **Խանդավառություն:** Հայությունը ամենայն **խանդավառանքով**….մեկնաբանեց հայ վերապրողների հոգեկան բավարարությունը *(ՌԿ, էջ 438):*

ԽԱՆՁԱՐՈՒՐԱՊԱՏՈՒՄ, գ. **Խանձարուրով փաթաթելը, խանձարուրում:** Մանուկ Աստծո ծննդյան, **խանձարուրապատման**... երաժշտական ու բանաստեղծական հանճարեղ պատկերումը ժողովրդական դարձած երգի լավագույն նմուշն է *(ԼՄ3, էջ 36):*

ԽԱՌՆԱԿԱՆՉ, ած. **Խառը, հակասական:** Մահու և կյանքի ճակատամարտ տված դաշտի բնակիչները....**խառնականչ** լուրերից խմբվեցին շեմերին *(ՌԿ, էջ 208):*

ԽԱՐԱՆԱԾԱԾԿ, ած. **Խարանով ծածկված՝ պատված:** Պատրաստի նկարը նա զետեղեց այս **խարանածածկ** օրերի ընթացքում մոռացության մատնված խոհանոցում և ավարտված համարեց իր գործը *(Հ, էջ 167):*

ԽԱՐԴԱԽԱԽՈՒՅԺ, ած.**Խարդախաբար խուժող:** Դրանով նրանք պիտի հնձեն **խարդախախույժ** թշնամուն, որն ուր որ է պիտի երևա Արագածակողմից *(ՌԿ, էջ 160):*

ԽԵՆԹԱՎԱՐԻ, մկբ. **Խենթի նման, խենթաբար:** Նա **խենթավարի** նետվեց ծանոթ դարբնոցը *(ՌԿ, էջ 286):*

ԽԵՑԳԵՏՆԱՅԻՆ, ած. **Խեցգետնին հատուկ, խեցգետնանման, խեցգետնի**: Ասես գայլիկոնով ծակված նրա **խեցգետնային** աչքերը խամրած էին *(Վեռնոյ, էջ 78):*

ԽԹԱՆԱԿԻՐ, ած. **Խթանավոր, խթան կրող:** Միացնելով **խթանակիր** ոտքերը, կամացուկ զրնգոց արձակեց *(ՌՍՊ, հ. 1, էջ 313):*

ԽԼԱՎՈՒՆ, մկբ. **Խուլ ձևով:** Նրա ձայնը հնչում էր **խլավուն,** հեռուներից, կրծքի խորքերից *(ՌՍՊ, հ. 1, էջ 105):*

ԽԾՈՒԾԱԿԵՐՊ, ած. **Խծուծի նման:** Հայացքս վեր սահեցրի և շատ ջահել, տասնյոթ տարեկան մի աղջիկ տեսա, **խծուծակերպ** ցից գանգուրներով *(ՌՍՊ, հ. 2, էջ 314):*

ԽՂՃԱՋՈՒՐԿ, ած. **Խղճից զուրկ, խիղճ չունեցող**: .... Բավականին **խղճազուրկ** մարդ ես, ինչո՞ւ ես ճաշերն անյուղ եփում *(Մարտ., էջ 316):*

ԽՂՃԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Խղճահարություն արթնացնող:** Գիտակցում եմ նույնպես, որ **խղճահարույց** եմ նաև իմ վարմունքով.... *(ՌՍՊ, հ. 2, էջ 217):*

ԽՃԱՀՈՂ, գ. **Խճաշատ հող**: Ճանապարհի վրա նրանց ոտքերը դեղին փոշի էին բարձրացնում: - **Խճահող է** …. *(Գոլս., էջ 85):*

ԽՄԲԱՊԵՏՈՒՀԻ, գ. **Կին խմբապետ:** Զարեն **խմբապետուհի** Ռպեի հետ կռվում է թուրքական զորքերի և քրդական խուժանի դեմ…. *(Իր., 04.06.2017):*

ԽՄԻՉՔԱՆՈԹ, գ. **Խմիչքին հատկացվող տարողություն, աման**: …. Վերցրեցի-բարձրացրեցի **խմիչքանոթը**…. *(Սուրյան, էջ 280):*

ԽՆԴԱՃԱՔ, ած. **Խինդով լի:** Նրանք զարմացած դարձան նոր եկվորներին և հետզհետե ալիք-ալիք ոստոստացին **խնդաճաք** բերաններով *(ՌԿ, էջ 196):*

ԽՆԴՐՈՂԱԲԱՐ, մկբ. **Խնդրանք արտահայտող:** Նա դադարեց **խնդրողաբար** ժպտալուց *(ՌՄՊ, հ. 2, էջ 471):*

ԽՆՁՈՐԱԲԱԺԻՆ, գ. **Բաժին խնձորը, խնձորի մասը՝ բաժինը**: Հաջորդ օրվանից իմ **խնձորաբաժինը** մեկ դույլով կրճատեցին *(Մարտ., էջ 86):*

ԽՆՁՈՐԱԴԵՄ, ած. **Խնձորի նման կլոր երես ունեցող:** Այդ ժամանակ լեռնեցի **խնձորադեմ** մի տղա …. մոտեցավ խմբին *(ԻԿ, էջ 134):*

ԽՆՁՈՐԱԾԱՌ, գ. **Խնձորի ծառ՝ խնձորենի**: Յուրաքանչյուր **խնձորածառից** մեկ հատ ամենաընտիր խնձոր [էինք] պոկում …. *(Մարտ., էջ 181):*

ԽՆՈՑԱՏՈՒՆ, գ. **Տուն, որտեղ խնոցի են հարում**: Հնդկաստանի հարավում …. թոդ խաշնարած ժողովրդի սրբավայրն է **խնոցատունը** *(Ֆր.):*

ԽՈԺՈՌԱՀՈՆ, ած. **Խոժոռ հոնքերով**: Վեղարազուրկ պատրիարք հիշեցնող լայնանիստ ու հաստորովայն Թջղլյան Էֆենտին՝ փարթամընչացք ու **խոժոռահոն** տիեզերական վարժապետը հայկաբանության…. *(ՎՓ, էջ 61):*

ԽՈՀԱՋԱՐԴ,ած. **Մտահոգ, խոհամիտ**: Ասես վախենալով ամեն վայրկյան ընկնելուց, չի բարձրացնում **խոհազարդ** գլուխը *(ՌԿ, էջ 55):*

ԽՈՇՈՐԱԾԱՎԱԼ, ած. **Խոշոր՝ մեծ ծավալ ունեցող**: Հրատարակվել է …. երկու **խոշորածավալ** ուսումնասիրություն *(Հայրունի 1, էջ 292):*

ԽՈՇՈՐԱՔԻԹ, ած. **Խոշոր՝ մեծ քիթ ունեցող**: Հիշում եմ մարմնեղ, խստաբարո, **խոշորաքիթ** ու ընչաքաղց աչքերով կանանց…. *(ՍՄ, էջ 14):*

ԽՈՇՏԱՆԳԱՀԱՐ, ած. **Խոշտանգված:** ….**Խոշտանգահար** աչքերը դուրս էին պրծնում իրենց խոռոչներից …. *(Հ, էջ 93):*

ԽՈՏԱԶՈՒՐԿ, ած. **Խոտից զուրկ:** ….Հատեց շենքի առջևի **խոտազուրկ** հրապարակը, շրջանցեց սահաբլուրը…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 381):*

ԽՈՏԱԽՈՒՐՁ, գ. **Խոտի խուրձ:** Մի բարի արագիլ մոլորված՝ եկավ իջավ ոչ հեռու **խոտախրձի** վրա *(ՌԿ, էջ 181):*

ԽՈՐԱԽԱՐԴԱԽ, ած. **Արտակարգ՝ չափազանց խարդախ**: - Հազարահմայք այս ճանապարհին **խորախարդախ** մարդու խիղճն էլ բյուրեղյա կլինի …. *(Մարտ., էջ 253):*

ԽՈՐԱԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Խորախարդախ լինելը**: **Խորախարդախությունը** չի տարբալուծվում *(Մարտ., էջ 253):*

ԽՈՐՀՐԴԱԾԻՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Խորհրդածեսի արարողություն**: **Խորհրդածիսության** մասնակցող տղան հանդես էր գալիս …. նրա որդի Հորի դերում *(Ֆր., էջ 440):*

ԽՈՐՀՐԴԱՀԱՎԱՔ, գ. **Խորհրդակցություն, խորհրդաժողով:** Պարոն Խատիսյանը նշանակել է իրիկնային **խորհրդահավաք** *(ՌԿ, էջ 282):*

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՅՆԱՑՆԵԼ, բ. **Խորհրդանշային դարձնել**: Փոքր Միհրի միջոցով հայկական էպոսը **խորհրդանշայնացնում** է տեքստը (խոսքը) …. *(Տոն., էջ 306):*

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Խորհրդանշային դառնալը՝ դարձնելը**: Մեծ Միհրի և Դավթի կերպարները Փոքր Միհրի **խորհրդանշայնացման** ճանապարհն են *(Տոն., էջ 306):*

ԽՈՐՈՎԱԾԱՇԻՇ, գ. **Խորոված պատրաստելու շիշ՝ շամփուր**: Լրագիրը թրջեց, **խորովածաշշերը** ծածկեց խոնավ լրագրով *(Մարտ., էջ 148):*

ԽՈՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Խոցելու կարողություն:** ….Աճել է նրա (հրթիռային զենքի) հեռահարությունը, դիպուկությունը և **խոցունակությունը** *(Անդին, թ. 5, 2016):*

ԽՌՈՎԱԳԻՆ, մկբ. **Խոռովահույզ:** Կաթողիկոսը…. **խոռովագին** քայլաչափելուց հետո, կսկծալով եկավ, անշարժացավ վեհարանի օվալաձև պատուհանի մոտ *(ՌԿ, էջ 128):*

ԽՌՈՎԱՀՈՒԶՎԵԼ, չբ. **Խոռովքի՝ հուզմունքի մեջ ընկնել, հուզվել, ալեկոծվել**: [Մի ուրվական]…. հաճախ ինքնիրեն **խոռովահուզվում** է իմ գլխավերևում *(Բ7, էջ 9):*

ԽՌՈՎԱՏԵՍՔ, ած. **Խոռովահույզ տեսք ունեցող:** Ծերունին սլացավ դաշտն ի խոր **խոռովատեսք** զորավարի կողքին *(ՌԿ, էջ 200):*

ԽՍԻՐԱՀՅՈՒՍ, ած. **Խսիրով հյուսված**: …. Նստեց **խսիրահյուս** բազկաթոռում …. *(Գոլս., էջ 115):*

ԽՏԱԳԻՐ, գ. 1. **Խիտ գրված գիր: 2. Համառոտագիր**: Քանդակված գրերը …. շատ դժվար է վերծանելը, քանի որ **խտագրեր** են *(ՄԽ, էջ 194):*

ԽՏԱԴՐԵԼ բ. **Խտացնել**: Հեղինակը կարծես ճկռում է ունեցած տպավորությունների, զննումների, ինֆորմացիայի անհնարին բեռան տակ, ուզում է ժամ առաջ ազատվել իր բեռից. և, ահա՛, այդ ամենը խցկում է, հա խցկում է շարադրանքի մեջ, խտացնում և **խտադրում,** մամլում է խոսքը…. *(ԼՀ, էջ 204):*

ԽՐԱՄԱՏԱՇԱՐ, գ. **Խրամատների շարք:** …. Կատարյալ պրոֆիլի **խրամատաշարը**…. տանում էր ուղիղ գետափ *(ՌՄՊ, հ. 2, էջ 153):*

ԽՐՃԻԹԱՏԵՐ, գ. **Խրճիթի տեր:** Մուսթաֆա Քեմալը իր առաջին այցելությունն արեց մութ **խրճիթատեր** ձկնորսներին *(ՌԿ, էջ 300):*

ԽՑԻԿԱՊԱՏ, գ. **Պատի վրայի խցիկը:** Ծեր Կալտորպը, որի հածանավի ադմիրալական **խցիկապատին** կախված է չորացած շնաձկան մարմինը, նամակը լուռ հանձնեց Քեմալին *(ՌԿ, էջ 302):*

ԽՈՒՃԱՊԱԳԼՈՒԽ, ած. **Խուճապի մատնված:** Ասկյարը…. թեկուզ **խուճապագլուխ,** գուշակեց մանգաղաձև հարձակվողների ծածուկ նպատակը *(ՌԿ, էջ 164):*

ԽՈՒՃԱՊԱԳՈՉ, ած. **Խուճապաձայն, խուճապ հարուցող:** Տես ԵԿՎՈՐՈՒՀԻ-ի օրինակը:

Ծ

ԾԱԽՍԱՔԱՐՏ, գ. **Վճարման քարտ**: Բոլոր հաշվարկները կկատարվեն **ծախսաքարտի** միջոցով…. *(Իր., 21.02.2017):*

ԾԱԾԿԱԲԱՑ, ած. **Տանիքը՝ ծածկը բաց**: Բայց ես տեսել եմ նաև, թե ինչպես են ժամանում միաձի բաց կառքերը, ժամանակակից **ծածկաբաց** կառքերը, որ սլանում են սովորական տաքսու ետևից, երկու ֆրանկ մեկ մահաժամի համար *(Ապրիկ, 2-3, 1990, էջ 139):*

ԾԱՂԿԱԹԵՅ, գ. **Թեյի համար նախատեսված ծաղիկներ:** Այդ սնդուկի մեջ մարզաքարեր կային, …. մտրակներ և **ծաղկաթեյ**…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 205):*

ԾԱՂԿԱՄՐՑՈՒՄ, գ. **Ծաղիկների մրցույթ:** ….Այսօր նոր բեմադրություն կա այնտեղ, **ծաղկամրցում** և պահեստային կոնդուկտորների խմբի կատակաբանների ելույթը *(ՌՍՊ, հ. 1, էջ 394):*

ԾԱՂԿԱՊՆԱԿ, գ. **Ծաղիկների տեսականի:** ….Մեր բնակարաններում տարածենք տարվա եղանակների բույրը. երկարաձգենք աշունը, երբ արդեն ձյուն է եկել, հունվարին ծնունդ տանք գարնանը ողջ **ծաղկապնակով**…. *(ՄԼ, էջ 170):*

ԾԱՂՐԱՀԱՐՎԱԾ, գ. **Ծաղրանքով կատարված հարված, ծաղրական արտահայտությունը՝ դիմումը՝ խոսքը որպես հարված**: …. Աղասու և Հասան խանի փոխադարձ **ծաղրահարվածները** հիշեցնում են ժողովրդական մտածողությանը *(Աբով., էջ 107):*

ԾԱՂՐԱՄԱԿԱՆՈՒՆ, գ. **Ծաղրական մականուն, ծաղրանուն**: Հոր [անունը] Ժան Վալժան՝ հավանաբար voilà Jean-ի **ծաղրամականվան** սղումը *(Հյուգո, էջ 91):*

ԾԱՂՐԱՄԱՀԻ ԵՆԹԱՐԿՎԵԼ, բ. **Ծաղրի ենթարկվելով սպանվել:** Ցցած՝ գլուխները նկատեցին,թե ինչպես **ծաղրամահի**

ենթարկվածը հանգավ, անշարժացավ դաշտեզրի քարակույտերի մոտ *(ՌԿ, էջ 182):*

ԾԱՂՐԱՆՄԱՆԱԿԵԼ, նբ. **Ծաղրանքով՝ ծաղրելով՝ նմանողությամբ վերարտադրել՝ պատճենել՝ կապկել**: …. **Ծաղրանմանակում** է ինձ *(Սարգր, էջ 205):*

ԾԱՅՐԱՇԽԱՐՀ, գ. **Ծայրամաս:** Հավաքվել են գաղթականները այս ու այն **ծայրաշխարհից** *(ՌԿ, էջ 292):*

ԾԱՆՐԱԳՈՒՆԴ**,** գ. **Մարզագունդ**: Գազազած՝ բարձրացրի **ծանրագունդն** ու ամբողջ ուժով հարվածեցի գլխին *(Ասպղիկ, 1, էջ 61):*

ԾԱՆՐԱԼՐՋՈՐԵՆ, մկբ. **Ծանրալուրջ կերպով**: …. Հայրը **ծանրալրջորեն** կախում է իր վերարկուն …. *(Գոլս., էջ 54):*

ԾԱՆՐԱԾՐԱՐ, ած. **Շատ ծանր: Ծանրածրար** մրրկադող է իջնում վրաս *(ԲԱ, էջ 13):*

ԾԱՆՈՒՑԱՏԱԽՏԱԿ**,** գ. **Ծանուցումների, հայտարարությունների տախտակ**: Կիսաբաց դռան առջև երկու **ծանուցատախտակ** կար *(Օտ. հայ գր., էջ 331):*

ԾԱՌԱՍԱՂԱՐԹ, գ.**Ծառի սաղարթ:** ….Լեռնային անտառի մի նեղ հատվածում, **ծառասաղարթների** ներքո տեղադրված էին քարե նստարաններ ու սեղաններ *(Հ, էջ 139):*

ԾԻԾԱՂԱՐՁԱԿ, ած. **Ծիծաղ արձակող: Ծիծաղարձակ** հայացքը հանդիպելով մարդու հայացքին, …. իրենից հեռացող ծիծաղը հետ քաշեց լեզվի տակ *(Անդին, թ. 2, 2017):*

ԾԻՐԱՆԱՃՅՈՒՂ, գ. **Ծիրանի ճյուղ:** Նրան թվաց, թե **ծիրանաճյուղից** հանկարծ բաժանվելիս՝ մեկեն պիտի դառնա շնորհազուրկ *(ՌԿ, էջ 183):*

ԾԻՐԸՆԹԱՑ**,** գ. **Ընթացքի ճանապարհը, ուղին**: Ահա միայն երկրի կապույտ ջահն է // երկչոտ իր **ծիրընթացը** լուսավորում…. *(ԳԹ, 24.03.2017):*

ԾԽԱԲՈՒՅՐ, ած. **Ծխի բուրմունք ունեցող:** ...Ներս է մտնում **ծխաբույր** ինքնաեռը՝ ճենապակե թեյամանը գլխին *(ԼՄ1, էջ 11):*

ԾԽԱԳՈՐԾ, ած. **Ծխագույն գորշ**: …. Երկաթապատ, **ծխագորշ** ապակիները թեթևակի դողում էին *(Ասպղիկ, 4, էջ 150):*

ԾԽԱԹԱՍ, գ. **Որոշ տեսակի ծխամորճների բաղադրամաս:** Տե՛ս ԲԱՐԴԱԿԱԶՄ-ի օրինակը:

ԾԽԱԿԵՐՊ, ած. **Ծխի նմանվող:** Ծովային մշուշների և **ծխակերպ** մառախուղի գիտակները…. այդ մշուշի ստույգ բնորոշումը տվեցին…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 359):*

ԾԽԱՊԱՏԿԱՆ, ած. **Ծխին պատկանող:** Հայկական յոթ եկեղեցիների ժամկոչները, յուրաքանչյուրն իր **ծխապատկան** թաղամասում ...հնչեցնում էին *կոչնակները (ՄԽ, էջ 115):*

ԾԽԵՓ, ած. **Ծխահարված, որոշ ժամանակ ծխի մեջ պահված:** Ունեմ **ծխեփ** խոզապուխտ և լավ գինի *(ԲՏ, էջ 481):*

ԾՂՐՏԱԼԻՑ, ած. **Բարակ ձայնով ճղճղալու՝ գոռգոռալու, ծղրտոցի**: Կախարդը ձայնին **ծղրտալից** երանգ տալով՝ սատանային հրամայում է հեռանալ այդ վայրից *(Ֆր., էջ 646):*

ԾՈՎԱԽՈՏԵ, ած. **Ծովախոտից, ծովախոտի նմանվող**: Նրանց [ջրահարսերի] **ծովախոտե** վարսերը տարածվում էին ջրի մեջ անսպասելի ձևեր գծելով *(ԳԹ, 24.03.2017):*

ԾՎԵՆՎԵԼ, բ. **Ծվենների վերածվել, մասնատվել, ծվեն-ծվեն դառնալ՝ լինել**: Երկինքը զարհուրելի խավար էր, բայց պարզ կարելի էր տեսնել **ծվենվող** ամպերը, իսկ նրանց միջև՝ անհատակ սև խոռոչներ *(Անդին, թ. 1, 2017):*

ԾՏԱՅԻՆ, ած. **Ծտի նման, հատուկ:** Այս ասելիս նա մի երկու անգամ իր **ծտային** հայացքն ուղղեց ծանր գորշ թուխպերին…. *(ՍՄ, էջ 234):*

ԾՐԱԳՐԱՎԱՃԱՌ, գ. **Ծրագիր վաճառող անձ:** Նրանք խառնվեցին հանդիսատեսներին՝ հուսալով նախասրահում խուսափել դռնապանների, հսկիչների և **ծրագրավաճառների** աչալուրջ հայացքներից *(ՍԼ, էջ 128):*

ԾՈՒԼԸՆԹԱՑ, ած. **Դանդաղ, միապաղաղ ընթացող, ծուլագնա**: …. Լավը թերևս սա է՝ **ծուլընթաց** այս առօրյան …. *(ԱԱ, ԸԵ, էջ 83):*

Կ

ԿԱԹՆԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնի երանգով կաթնագույն**: Մրգերի տակ սավանների պես փռած թղթերը բալերի, ելակների, մորիների ծորած հյութից տեղ-տեղ **կաթնավարդագույն** են …. *(Պաչյան, էջ 203):*

ԿԱԹՍԱՔԵՐ, գ. **Կաթսան քերելով մաքրող:** Բիկովի **կաթսաքերների** մեջ Սև ծովի ափով մեկ հոչակված էր տասնմեկամյա Միկան…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 185):*

ԿԱԽԱԿՆՈՑ, գ. **Տեղում չտեղադրելու դեպքում թելով կախվող ակնոց:** Դերվիշը դրեց իր **կախակնոցը,** դիտեց աղքատին *(Բ5, էջ 80):*

ԿԱՅԾԱԿԵ, ած. (բնստ.): **Կայծակեղեն, կայծակից կազմված**: Պարզի՛ր **կայծակե** քո ձեռքը մաքուր *(ՎԴ, էջ 188):*

ԿԱՅԾԱԿՆԱՋԱՐԿ, ած. **Կայծակնահար:** Տանիքի կղմինդրներն այնպես է վերաշարում, որ կղմինդրները հակառակ կարգով են սփռվում՝ գծագրի ճշգրտությամբ, էլ չասած արդեն **կայծակնազարկ** մարմինների վրայի լուսանկարների՝ դժբախտության պահի իրադրության լուսանկարների մասին *(ՌՄՊ, հ. 1, էջ 65):*

ԿԱՅԾԱԿՆԱՋՄԱՅԼ, ած. (բնստ.): **Կայծակին վայել զմայլանքով:** Տաղաչափության տարբեր հնարանքներով, **կայծակնազմայլ** պատկերներով ու լեզվական բացարձակ անաղարտությամբ պոեմը մի ազգավայել քանդակ էր… *(ԼՄ, էջ 66):*

ԿԱՆԱՉԱԽԵՂԴ, ած. **Կանաչահեղձ, խիտ կանաչով պատված**: Աշխարհը ձոր է, **կանաչախեղդ** և ձիգ լանջերով *(ՄՍ, էջ 173):*

ԿԱՆԱՉԱՀԱՆԴԵՐՁ, ած. **Կանաչ զգեստներ հագած՝ կանաչազգեստ**: **Կանաչահանդերձ** Ձեկ *(Ֆր., էջ 769):*

ԿԱՆԱՉԱՄՈԽՐԱԳՈՒՅՆ, ած. **Կանաչին տվող մոխրագույն**: Պղնձից ստացվող **կանաչամոխրագույն** ներկ *(Սարգր, էջ 132):*

ԿԱՆԳԱՌԱՍՐԱՀ, գ. **Փոխադրամիջոցների կանգառներում հատուկ հարմարեցված սպասատաղավար**: Մասնավորի հետ համագործակցության արդյունք են նաև 74 հեծանվականգառները, 10 նոր **կանգառասրահները** …. *(ՀՀ, 26.01.2017):*

ԿԱՆԽԱԳԱՂԱՓԱՐ, գ. **Նախնական գաղափար**: [Երկխոսությունները] …. արդյունք են գեղարվեստական **կանխագաղափարի** միտումնավոր երկատման *(Ասպղիկ, 1, էջ 177):*

ԿԱՆԽԱՋԳԱՑԱԿԱՆ, ած. **Կանխազգաց, ապագան կանխատեսող:** Իմ յուրաքանչյուր գիրք **կանխազգացական** կոահում է … *(Անդին, թ. 2, 2016):*

ԿԱՆԽԱՎԱՅԵԼՔ, գ. **Կանխավայելելը, կանխավայելում, նախավայելք**: **Կանխավայելքի** մի քաղցր դող էր թրթռում-խաղում տղայի ջլերում …. *(ԳԹ, 03.02.2017):*

ԿԱՆՉԱԳԻՐ, գ. **Ծանուցում:** - Ի՞նչ է պատահել, Դանիել: -Շտապ **կանչագիր** *(ՌԿ, էջ 40):*

ԿԱՇՎԱԹԵՓ, գ. **Կաշվի թեփ**: …. **Կաշվաթեփով** ծածկված մորից ու անքիթ հորից ծնված սերունդ *(Պրուս, էջ 123):*

ԿԱՊԿՈՒՀԻ, գ. 1. **Էգ կապիկ:** 2. (փխբ.): **Տգեղ՝ կապկանման կին**: Փարիզից մինչև այստեղ ամբողջ ճանապարհին միայն **կապկուհիների** պատահեցի …. *(Բ7, էջ 565):*

ԿԱՊՈՒՏԿՈՂ, ած. **Կապույտ կող ունեցող:** Եկել կանգ եմ առել **այս կապուտկող** ժայռին *(ԼՄ, էջ 78):*

ԿԱՊՎԵԼԻՔ, ած. **Կապելու ենթակա՝ արժանի**: …. Հավանաբար մենք խենթեր ենք, բայց ոչ հասարակ տեսակի, **կապվելիք** գժեր *(Սար., էջ 357):*

ԿԱՊՏԱԳՈՒՆԱԿ, ած. **Կապույտ գույնի, կապտագույն**: **Կապտագունակ** երկնքին նկարվեց կնոջ կերպարանքը *(ԶԽ, 1, էջ 315):*

ԿԱՊՏԱՃԵՐՄԱԿԱՎՈՒՆ, ած. **Կապույտին տվող սպիտակ**: …. Դանիելը սրտի թրթիռով ըմբոշխնում էր առափնյա գեղեցկությունները, **կապտաճերմակավուն** ջրերի ծփանքը, Խաղաղ օվկիանոսի բուրմունքը …. *(Օպ. հայ գր., էջ 221):*

ԿԱՊՏԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Կապույտին տվող սպիտակավուն**: …. Դեմքի **կապտասպիտակավուն** ու հարթ ափսեն *(Կորպ., էջ 60):*

ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵԼ, բ. **Կառույցը կարգաբերել, համակարգի բերել**: Այսօր սփյուռքը մասնագիտորեն **կառուցակարգելու,** Սփյուռքի համայնքների ներսում միմյանց և հայրենիքի հետ կապելու հրամայական պահանջ կա *(Լրաբեր, 3, 2016, էջ 17):*

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ, ած. **Կառուցվածքային և համակարգային**: **Կառուցվածքահամակարգային** վերլուծության տեսաբաններ Թ. Պարսոնսը և Ռ. Մերտոնը գտնում են, որ սոցիալական երևույթները այնպիսի գործառութային կապի մեջ են, որ անհնար է առանձնացնել, թե հասարակական կյանքում որն է առաջնային և որը՝ երկրորդային *(Լրաբեր, 3, 2016, էջ 153):*

ԿԱՎԱԹՈՒՐԾ, ած. **Կավից թրծված, թրծակավե**: **Կավաթուրծ** ձձումները Հայկական լեռնաշխարհում հատկապես լայն տարածում են ստանում ուշ բրոնզե դարաշրջանում *(ՊԲՀ, 3, 2016, էջ 145):*

ԿԱՎՃԱՇԵՐՏ, գ. **Կավճի շերտ**: Հաջորդ օրը իրենց վրայից մաքրում են մարմինը ծածկող **կավճաշերտը** *(Ֆր., էջ 816):*

ԿԱՎՃԱՊԱՏ, ած. **Կավճով պատված, վրան կավիճ քսված**: Որոշ թղթեր՝ լրիվ նոր ու գուցե անգամ **կավճապատ** …. փռված են լինում գետնին *(Սարոյր, էջ 25):*

ԿԱՎՃԵՐԱՆԳ, ած. **Կավճագույն**: …. Մյուս մասը **կավճերանգ** լռությանը **….** *(Պաչյան, էջ 116):*

ԿԱՏԱՐԵԼԱՁԳՏՈՒՄ, գ. **Կատարյալի՝ կատարյալ դառնալու ձգտում**: …. Մարդու ինքնաճանաչման և ըստ այդմ՝ **կատարելաձգտումի** ուղին … դեռ երկար է …. *(Ֆր., էջ 297):*

ԿԱՏՎԱԹՈՒՉ, ած. (փխբ.): **Ճարպիկ:** ….**Կատվաթոիչ** խոյանք էր ամփոփված նրա հեզաճկուն մատների, մկանուտ ու ջլապինդ ոտքերի մեջ *(Հ, էջ 141):*

ԿԱՐԱԳԱԳՈՒՅՆ**,** ած. **Կարագի գույնի՝ գույն ունեցող**: [Սեղանի] …. վրա երևացին ափսեներով կարագ, լավաշ ու **կարագագույն** մոթալի պանիր *(ՍԽ, էջ 220):*

ԿԱՐԾՐԱՄԿԱՆ**,** ած. (բնստ.): **Ամուր, կարծր մկաններով**: Աստվածների պես կիսամերկ էին ու **կարծրամկան** *(ՎԴ, էջ 96):*

ԿԱՐԿԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կարկատված լինելը:** Սեղանի ձախակողմյան հատվածում տեղավորվել է Նյուտան՝…. տեղ-տեղ մաշված ու **կարկատվածությամբ** ռեկորդակիր վերնաշապիկով…. *(Անդին, թ. 3, 2016):*

ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ**,** ած. **Կարկուտից պաշտպանող**: …. Հանրապետության այգիների շուրջ 2,4 տոկոսը կպատվի **կարկտապաշտպան** ցանցաշերտով…. *(Ազգ., 08.09.2017):*

ԿԱՐՄՐԱՆԱԽՇ, ած. **Կարմիր գույնով նախշած:** Ինքն իր գրպանից մի **կարմրանախշ** հավկիթ է հանում ու մեկնում Յուրային *(ԼՄ, էջ 23):*

ԿԱՐՄՐԱՍՐՃԱԳՈՒՅՆ, ած. **Կարմրին տվող սրճագույն**: Պարտիզպանների մաքրասեր հոգին չի կարող հանդուրժել ոսկեկանաչ ու **կարմրասրճագույն** նախշերը խոտերի վրա *(Գոլս., էջ 346):*

ԿԱՐՈՏԱՁԱՅՆ, ած. **Կարոտի ձայն ունեցող:** Ռուբեն Հովսեփյանի ….հոգու արգասավոր հունձքը, նրա հողեղեն, **կարոտաձայն** …. գրքերի շարադասն էր…. *(Նորք, թ. 1, 2017):*

ԿԱՐՈՏԱՄԱԾ**,** ած. **Կարոտալի, կարոտալից**: Օրերն անցան **կարոտամած**, // բայց կարոտս տուն չի գալիս *(ԳԹ, 17.03.2017):*

ԿԱՑՆԱՀԱՐՎԱԾ, գ. **Կացնի հարված**: Նայեց գերանի ծայրին փայտահատի արած **կացնահարվածի** նշանին *(Հեմ.):*

ԿԱՓՈՒՅՐԱՓՈՂ, գ. **Կափույրի փող:** Շեփորը արծաթյա էր, չորս **կափույրափողերով.** պետք է, որ շատ թանկ լիներ *(ՍԼ, էջ 204):*

ԿԵԳԼՈՒՂԻ, գ. **Մարզախաղում տարածք, որտեղ կոնաձև փայտե ֆիգուրներով հարվածում են առավել մեծ թվով կեգելների:** Ինչպես կեգլիներն են **կեգլուղու** վրա գլորվում *(Ապրիկ, 1, էջ 116):*

ԿԵՂԾԱԺՊԻՏ, գ. **Կեղծ ժպտալը:** Այս խոսքերը թուրքն արտասանեց **կեղծաժպիտով** *(ՌԿ, էջ 110):*

ԿԵՂԾԱՆՄԱՆԱԿՈՂ, գ. **Նմանակող:** Գիրքը կոչվում էր **«Կեղծանմանակողները»** *(Անդին, թ. 2, 2016):*

ԿԵՂՏԱՃՄՈՒՌ, ած. **Կեղտոտ:** Ծուռ ոտքերից կախ էր ընկած **կեղտաճմուռ** շալվարը…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 233):*

ԿԵՂՏԱՄՈԽՐԱԳՈՒՅՆ, ած. **Կեղտոտ մոխրագույն**: **Կեղտամոխրագույն** լույս *(Սարտր, էջ 114):*

ԿԵՂՏԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Ոչ հստակ՝ պղտոր սպիտակ:** …. Արևը …. թույլ ոսկեգույն է ներկում շինարարության վրա կախված **կեղտասպիտակավուն** մառախուղը *(Սարտր, էջ 31):*

ԿԵՆՍԱԼԻՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենսալից՝ կյանքով լի՝ կենսախինդ լինելը**: …. Նամակի այս նոր ձևը վերածննդյան **կենսալիցության** խորհուրդն է բերում իր հետ *(Սաֆ., էջ 157):*

ԿԵՆՍԱՊՆԴԻՉ, ած. **Կյանքը հաստատող:** Ազգային կյանքով ապրելու գաղափարը պետք է ոչ միայն հրապուրիչ լինի, այլև **կենսապնդիչ**… *(Անդին, թ. 2, 2017):*

ԿԵՆՍԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Կյանքի ստեղծում:** ….Հոգևոր-զգացական այն բռնկումները ….եվրոպական ռոմանտիզմի գրականության մեջ ասպարեզ էին տալիս ազատ և ինքնիշխան անհատի **կենսաստեղծման** ուտոպիային…. *(ՍՍ, էջ 100):*

ԿԵՆՍԱՏԵՍԱԿ, գ. **Կենսաբանական տեսակ**: Տես ԱՍՏՂՈՐԴԻ-ի օրինակը:

ԿԵՆՑԱՂՈՐԵՆ, մկբ. **Առօրեապես, առտնին կերպով կենցաղայնորեն**: **Կենցաղորեն** «նյութականացված» տեսարան …. *(Սաֆ., էջ 95):*

ԿԵՌԱՍԱԳՈՒՅՆ, ած. **Կարմրավուն**: …. Դա մի արքայադուստր էր՝ հախճապակե մարմնով, կապույտ աչքերով, **կեռասագույն** բերանը թեթևակի բացված, մազերը՝ սև, երկար ու փայլուն *(Արտ. գրակ., 4, 2016, էջ 6):*

ԿԵՍԺԱՄԱՆՈՑ, ած. **Կես ժամ տևող, կեսժամյա**: Իմ ամենօրյա **կեսժամանոց** մենավոր դասամիջոցի ընթացքում ամեն ինչ ջնջում էի *(Վեռնոյ, էջ 140):*

ԿԵՏԱԾԱԾԿ, ած. **Կետերով ծածկված:** Տես ԲԾԱՏԱՌ-ի օրինակը:

ԿԵՑՈՒՅԹ, գ. **Ապրելակերպ, նիստուկաց:** …. Երկուսով միասին հաճոյանում էին Մարթային, իրենց **կեցույթով**, ամեն ինչով խնդրում գոնե մի պտղունց սեփական կյանքի, ցանկության իրավունք *(ԱԱ, ԸԵ, էջ 83):*

ԿԻԲԵՌԴԱՇՏ, գ. **SS գործունեության ոլորտ**: **Կիբեռդաշտում** կա երկու տեսակի գործողություն՝հարձակում և պաշտպանություն *(Իր., 24.03.2017):*

ԿԻԲԵՌԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ, գ. **SS ոլորտի ենթակառուցվածք**: … Կարևոր **կիբեռենթակառուցվածքների** նպատակաուղղված կատարելագործմամբ զարգացնել Հայաստանի կիբեռկարողությունները …. *(Ազգ, 22.09.2016):*

ԿԻԲԵՌԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ, գ. **SS ոլորտի զորամիավորում:** Հասունացել է պահը, երբ Հայաստանը պետք է ունենա իր կանոնավոր **կիբեռզորամիավորումները** *(Անդին, թ. 4, 2016):*

ԿԻԲԵՌԸՆԴՀԱՐՈՒՄ, գ. **SS ոլորտում իրականացվող ընդհարում:** Հայաստանը կիբեռհարձակումների թիրախ դարձավ դեռ 2000 թվականից, երբ արձանագրվեց առաջին միջպետական **կիբեռընդհարումներից** մեկը *(Անդին, թ. 4, 2016):*

ԿԻԲԵՌԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտի կարողություն**: Հայաստանի կիբեռկարողությունների զարգացման գործում սփյուռքահայության ակտիվ ներգրավումը և նրա մասնակցության հետագա ընդլայնումը ստեղծում են Հայաստանի **կիբեռկարողությունների** հարաճուն զարգացման հուսալի հեռանկարներ *(Ազգ, 22.09.2017):*

ԿԻԲԵՌՀԱՐԹԱԿ, գ. **ՏՏ գործունեության միջավայր**: …. **Կիբեռհարթակում** ամեն օր նոր սպառնալիքներ ու վտանգներ են ի հայտ գալիս *(ՀՀ, 04.03.2017):*

ԿԻԲԵՌՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ, ած. **Կիբեռհարձակումների համար գործադրվող**: Կիբեռանվտանգությամբ զբաղվող որևէ իրեն հարգող, լուրջ կազմակերպություն չի կարող զբաղվել կիբեռհարձակողական զենքերի մշակմամբ …. *(Իր., 24.03.2017):*

ԿԻԲԵՌ-ՀՐԱԴԱԴԱՐ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող հրադադար:** ….Հակահարվածը …. ստիպեց Ադրբեջանին խնդրել **կիբեռհրադադար** *(Անդին, թ. 4, 2016):*

ԿԻԲԵՌՄԻՋԱԴԵՊ, գ. **ՏՏ ոլորտում կանոնավոր՝ կարգաբերվող գործունեությունից դուրս դիպվածները:** Մենք ունենք նաև կորպորատիվ կազմակերպությունների համար նախատեսված **կիբեռմիջադեպերի** հետաքննման ծառայություն *(Իր., 24.03.2017):*

ԿԻԲԵՌՈԼՈՐՏ, գ. **ՏՏ ոլորտը:** …. Տեղեկատվական անվտանգություն ասելով՝ նրանք հասկանում են **կիբեռոլորտը**՝ տեխնիկական անվտանգությունը *(Իր., 26.07.2017):*

ԿԻԲԵՌՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտին վերաբերող ուղղություն:** Հիմա սպառնալիքները բոլոր **կիբեռուղղություններով** են *(ՀՀ, 04.03.2017):*

ԿԻԲԵՌՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտում գրոհներից պաշտպանվելը:** Հայաստանում ԱԱԾ-ի կողմից **կիբեռպաշտպանության** տակ են գտնվում միայն պետական կայքերը և ցանցերը…. *(Անդին, թ. 4, 2016):*

ԿԻԲԵՌՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ, ած. **Կիբեռպատերազմին հատուկ, բնորոշ**: Երկրների միջև հակամարտությունները կարող են հիմք դնել **կիբեռպատերազմական** բռնկումների *(Իր., 24.03.2017):*

ԿԻԲԵՌՍԱԴՐԱՆՔ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող սադրանք**: …. ԱՄՆ-ը կարող է անհրաժեշտ համարել արձագանքել «ռուսական ու չինական **կիբեռսադրանքներին**» …. *(Իր., 20.12.2016):*

ԿԻԲԵՌՏԱՐԱԾՔ, գ. **SS գործունեության ոլորտը՝ տարածությունը:** …. Երրորդ հավանական պատերազմը կարող է ծագել ՌԴ-ի, ԱՄՆ-ի ու Չինաստանի միջև **կիբեռտարածքում** *(Իր., 20.12.2016):*

ԿԻԲԵՌՏԻՐՈՒՅԹ, գ. **SS ոլորտ՝ տիրույթ:** Հայաստանը պետք է ունակ լինի հակահարձակ և նույնիսկ նախահարձակ լինել **կիբեռտիրույթում** *(Անդին, թ. 4, 2016):*

ԿԻԹԱՌԱՁԱՅՆ, ած. **Կիթառի հնչողության նման ձայն ունեցող:** Կինը ոսկեհեր իր ամուսնուն երեխաների հետ պառկեցնում էր **կիթառաձայն** ծաղիկների դաշտում և ձեռքը սահեցնելով ծաղկաթերթերի վրայով՝ նրանց համար նվագում էր բյուրեղյա ծածկույթով պճնված քնասեր հրեշտակների օրորոցայինը *(ԳԹ, 17.02.2017):*

ԿԻԼՈՄԵՏՐԱՑՈՒՅՑ, ած. **Տարածության հեռավորությունը ցույց տվող:** …. Կողքով անցնում էին **կիլոմետրացույց** սյուները՝ նոփնոր, դեռևս չհողմահարված *(ՌՍՊ, հ. 2, էջ 92):*

ԿԻՆՈԱՇՈՒՆ, գ. **Աշնանը անցկացվող կինոփառատոնի անվանումը**: Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ իրականացվող ավանդական «**Կինոաշուն**» ազգային կինոյի ամիս» ծրագիրն այս տարի անցկացվում է 7-րդ անգամ *(Իր., 11.11.2016):*

ԿԻՆՈԳՈՐԾԸՆԹԱՑ, գ. **Կինոասպարեզում ծավալված իրադարձություն:** ….Հայաստանը համաշխարհային կինոքարտեզի վրա դարձնել տեսանելի, միջազգային **կինոգործընթացներին** մասնակից…. *(Իր., 30.06.2017):*

ԿԻՆՈԷԼԻՏԱ, գ. **Կինոյի ասպարեզի հեղինակավոր գործիչների շրջանակը:** Շփվում էի մոսկովյան **կինոէլիտայի** հետ *(Իր., 30.06.2017):*

ԿԻՆՈՔԱՐՏԵՋ, գ. **Կինոարտադրության կենտրոնների տեղակայման քարտեզ:** Տե՛ս ԿԻՆՈԳՈՐԾԸՆԹԱՑ- օրինակը:

ԿԻՍԱԱՄՈՒՄՆԱԿԱՆ, ած. **Կիսով չափ ամուսնական:** …. **Կիսաամուսնական** բնակարանը կահավորեց տարփուհիներին վայել ճոխությամբ *(Բ5, էջ 522):*

ԿԻՍԱԲԱՐԲԱՐՈՍ, ած. **Կիսով չափ զարգացման բարբարոսական շրջանում գտնվող**: …. Նոր աշխարհի **կիսաբարբարոս**

ժողովուրդների մոտ հայտնաբերվեցին …. աստվածապետական պետություններ *(Ֆր., էջ 206):*

ԿԻՍԱԳԻՏԱԿՑՈՐԵՆ, մկբ. **Կիսագիտակից կերպով:** ….Անգամ բժիշկը, ամաչկոտ, բայց ամենևին էլ ոչ հիմար այդ անձնավորությունը, **կիսագիտակցորեն** նույնն էր զգում *(ՍՄ, էջ 229):*

ԿԻՍԱԳՈՒՅՆ, գ. **Կիսատ՝ պակաս՝ նվազ գույներով**: …. Նրա …. հագուստը, իր անորոշ **կիսագույներով**, մեծ հյուրանոցների միջանցքներն էր հիշեցնում *(Գոլս., էջ 297):*

ԿԻՍԱԼԵՀՈՒՀԻ, գ. **Մեկ ծնողի կողմից լեհուհի: Կիսալեհուհի** Լենայի ազգանունը կարող եմ ասել …. *(ԱԱ, ԸԵ, էջ 117):*

ԿԻՍԱԼԽԿԱԾ, ած. (փխբ.) **Կիսաջարդված՝ կիսափտած**: Ինչ կա, որ ինչ գողանան: Երկու **կիսալխկած** թախտ է *(Մարտ., էջ 456):*

ԿԻՍԱԽՈՒՄ, ած. **Կիսով չափ խմած:** …. **Կիսախում** բաժակն իր փրփրոտ հափրանքը չվերջակետեց …. *(ՎՓ, էջ 48):*

ԿԻՍԱԿԱԽՎԵԼ, բ. **Կիսով չափ կախվել:** Նա սողում էր ծնկների վրա, սահնակից **կիսակախված** *(ՌՄՊ, հ. 1, էջ 233):*

ԿԻՍԱԿՂՋԻԱՑԱԾ, հրկտր դրբ. **Կիսով չափ կղզիացած:** …. Գրեթե միշտ ապրելով Շվեյցարիայի այս՝ զարմանալիորեն արտառոց և **կիսակղզիացած** շրջանում …. *(Արտ. Գրակ., 4, 2016, էջ 55):*

ԿԻՍԱՀՈԼԱՆԻ, ած. **Կիսամերկ: ….** Իրեն տեսել էին **կիսահոլանի՝** ցայգազգեստով *(Բ5, էջ 90):*

ԿԻՍԱՀՐԱՄԱՅԵԼ, բ. **Հորդորելով հրամայել:** Վարդանյանը ցույց է տալիս աթոռը, ‘կնոջը **կիսահրամայում,** որ երեխաներին սենյակ չթողնեն *(ՄՄ, էջ 156):*

ԿԻՍԱՃԱՆԱՉՎԱԾ, բ. **Ամբողջական և լիակատար ճանաչման դեռևս չարժանացած:** …. Առլեն Կրտսերը խորհում է Եղեռնը վերապրածների վրա դեռևս կիսաճանաչված ցեղասպանության շարունակվող հոգեբանական ազդեցության և, հատկապես, նրանց խնդիրների շուրջ *(Սուրյան 1, էջ 139):*

ԿԻՍԱՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ած. **Կիսամասնագիտական՝ մասամբ մասնագիտական լինելը**: Այդ «մեծ» որակումը …. Սկսել էր արդարացնել իրեն **կիսամասնագիտականությամբ,** որ կամաց-կամաց փոխարինում էր նախկին սիրողականությանը *(Վեռնոյ, էջ 214):*

ԿԻՍԱՄՈԹԽԱԾ, ած. **Կիսով չափ ամոթխած:** Դիմակը դնելով սինյորինան կիսազավեշտական, **կիսամոթխած** մի շարժում արեց *(ԻԿ, էջ 156):*

ԿԻՍԱՍՈՎԱՀԱՐ, ած. **Կիսով չափ սովահար:** - Դուք **կիսասովահարի** տեսք ունեք *(ՍՄ, էջ 79):*

ԿԻՍԱՍՈՒՏ, գ. **Կիսով չափ՝ մասամբ սուտ**: …. Անխոհեմաբար ասացի մի **կիսասուտ.**- Ձկնորսանավերի տեր է *(Վեռնոյ, էջ 75):*

ԿԻՍԱՏԱԲԱՏ, գ. **Կիսավարտիք:** Այս անգամ հավաքել եմ հին ձեռագրերս, մաշված **կիսատաբատս**, մանկական լուսանկարներիցս մեկը, մի էջանշան …. *(Անդին, թ. 6, 2016):*

ԿԻՍԱՑՆԴԱԾ, ած. **Կիսով չափ ցնդած**: …. Հո իրարանցու՞մ չէր, ու բոլորն էլ **կիսացնդածի** պես էին *(Սար., էջ 46):*

ԿԻՍԱՑՆՈՐ, ած. **Կիսով չափ՝ մասամբ ցնորված**: Քրջեր հագած, տանջահար ու կնճռապատ, հաճախ **կիսացնոր՝** նա կարող էր օրեր շարունակ անշարժ նստել ճանապարհներից …. մի կողմ *(Ֆր., էջ 248):*

ԿԻՍԱՔՄԾԻԾԱՂ, գ. **Կիսով չափ քմծիծաղ:** ….Ասաց ինքն իրեն **կիսաքմծիծաղով** *(ՌՍՊ, հ. 2, էջ 381):*

ԿԼԱՆՉՅՈՒՆ, գ. **Կլանչոց:** Մսագործի շուրջը վխտացող շների հաչյունն ու **կլանչյունը** ստեղծել են խժալուր մի երաժշտություն *(ՄԽ, էջ 138):*

ԿԼՈՐԱԴՈՒՆՉ, ած. **Կլոր դնչով**: Նա մի **կլորադունչ** բոսյակ էր *(Անդր., էջ 337):*

ԿԾՎԱՎՈՒՆ, ած. **Կծու, տհաճ հոտ ունեցող:** Խրճիթում մնացած աղջկանից մի տեսակ տաք, տնական փոքր-ինչ **կծվավուն** հոտ էր գալիս *(ՌՍՊ, հ. 2, էջ 125):*

ԿՂԶԵՇՂԹԱ, գ. **Իրար կողքի շարված մեծաքանակ կղզիների ամբողջությունը, կղզեխումբ**: Կուրիլյան **կղզեշղթա** *(Ֆր., էջ 953):*

ԿՂՄԻՆԴՐԱՍԱԼԻԿ, գ. **Կղմինդրից պատրաստված սալիկ, սալիկաձև կղմինդր**: Երևում են նախ գյուղի կտուրները, ծածկված թիթեղով, սպիտակ **կղմինդրասալիկներով** *(ՄԽ, էջ 359):*

ԿՃԱԾԱՅՐ, ած. **Մարմարածայր**: …. **Կճածայր** մատներով ձեռքը երկար էր …. *(Բ7, էջ 45):*

ԿՆՔԱԿԻՐ, ած. **Կնքած՝ կնիք կրող:** Նա վերադարձավ աշխատասենյակ, բազկաթոռի վրա խնամքով մի կողմ դրած մագաղաթյա ու թղթե **կնքակիր** փաստաթղթերի տրցակը վերցրեց…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 102):*

ԿՈԲԱԼՏԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Կոբալտագույն, կոբալտի գույն ունեցող**: Փիրուզագույն և ոսկեփայլ շագանակագույն ու **կոբալտակապույտ** հախճասալերը…. *(Բոհջ., էջ 41):*

ԿՈՂԱՃԱՄՓԱ, գ.**Կոքի ճանապարհը:** Լանջամերձ այդ **կողաճամփան** տանում էր փախուցյալ Մյուրսել փաշայի ետևից *(ՌԿ, էջ 212):*

ԿՈՃԿԵԼԱՏԵՂ, գ. **Կոճակատեղ:** Կուզման ֆսֆսացրեց, շրջվեց ու սկսեց պապի շալվարի **կոճկելատեղից** ձուկը դուրս քաշել *(ՌՄՊ, հ. 1, էջ 211):*

ԿՈՉԱԶԴԱՆՇԱՆ, գ. (դիպվ.): **Ձայնային ազդանշան:** Մենք «Վոլգայի» **կոչազդանշաններ** չունենք *(ՌՄՊ, հ. 2, էջ 136):*

ԿՈՏՈՇԱՀԱՐՈՒՍՏ, ած. **Շատ կամ մեծ կոտոշներ ունեցող**: **Կոտոշահարուստ** հպարտ գլուխը հոտի կողմը թեքեց …. *(Մարպ., էջ 247):*

ԿՈՐԱՃԵՂՔ, գ. **Բաժանող կոր գիծ**: Դու կանգնում ես գլխավերևում, նայում կրծքերը բաժանող մութ **կորաճեղքին** *(Պաչյան, էջ 10):*

ԿՈՐՈՎԱԶՐԿԵԼ, նբ. **Կորովից զրկել, կորովազուրկ՝ թույլ, անզոր դարձնել**: …. Հօդս ցնդող հույսերով կատարված թափառումները …. **կորովազրկեցին** նրա հոգին *(Բ7, էջ 60):*

ԿՌԱՀՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կռահելու ունակություն, կռահունակություն, կռահողություն:** Միայն թե ինչի՞ համար է ձեր այդ տեղյակությունն ու **կռահողականությունը** *(ՌՄՊ, հ. 2, էջ 481):*

ԿՈՆՉԱԲԱՑԱԿԱՆՉԵԼ, բ. **Կոնչալ:** Երկու կամ երեք օրվա ընթացքում տեղացի բադերը եկվորներին տանում են դեպի ավելի ու ավելի նեղլիկ գետակներ՝ անընդհատ **կոնչաբացականչելով**…. *(Անդին, թ. 3, 2016):*

ԿՈՎԱԽԱՌՆ, ած. **Մտքերի բախում արտահայտող:** Դրանից բացի երկուսն էլ ահագին ուրիշ գործեր են անում…. հեռախոսային **կովախառն** խոսակցություններ են վարում շրջկենտրոնի հետ…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 500):*

ԿՈՎԱՎԵՃ, գ. **Կովի վերաճող՝ սաստիկ վեճ**: …. Նկարների գործը …. շատ տաք **կովավեճի** առարկա է դարձել …. *(Բ7, էջ 597):*

ԿՈՎԱՏԵՆՉ, գ. **Կովամոլուցք:** Թուրքը , որ քիչ առաջ այնտեղից նայում էր անհաշտ, **կովատենչով,** նոր հարվածից երկյուղած՝ ասես պապանձվեց *(ՌԿ, էջ 165):*

ԿՐԱԾԱԾԿ, ած. **Կրով ծածկված: Կրածածկ** խղճուկ պատից կախ էր արած սղոցը…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 276):*

ԿՐԱԾԱԿՈՏԿԵՆ, ած. **Ծակոտկեն կրային**: Հետո տարվեց պատերի **կրածակոտկեն** քարերը փափկացնելու մտքով *(Անդր., էջ 351):*

ԿՐԱԿԱԼՈՒՅՍ, գ. **Կրակից առաջացած լույս**: …. **Կրակալույսի** ցոլքերը խաղում էին նրա անշարժ կերպարանքի վրա *(Գոլս., էջ 432):*

ԿՐԹԱԿԱՐԳ, գ. **Կրթական համակարգը, կրթահամակարգ**: Այս **կրթակարգը** հենվում է առավելապես փորձառության վրա, դասերն անցկացվում են արվեստանոցային սկզբունքով, տեսության և գործառնական աշխատանքի մեկտեղմամբ *(Իր., 22.07.2016):*

ԿՐԹԱՁԵՎ, գ. **Կրթության տեսակ՝ կրթատեսակ**: Աշխարհում իրեն արդարացրած և ապագայի կրթություն համարվող այս **կրթաձևը** 2015-ին, հուրախություն ուսումնատենչ ուսանողության, ամրագրվեց ՀՀ կրթության մասին օրենքում *(Իր., 22.07.2016):*

ԿՐԹԱՃՅՈՒՂ, գ. **Կրթական մասնաճյուղ, բաժին, ֆակուլտետ**: …. [Մովսես Գորգիսյանը] ընդունվեց Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մշակույթի **կրթաճյուղի** բեմադրիչների բաժինը …. *(Ջան., էջ 7):*

ԿՐԹԱՏԵՍԱԿ, գ. **Կրթության իրականացման ձև, տեսակ:** …. ՀՀ կառավարությունն ընդունեց այս **կրթատեսակի** հայեցակարգը *(Իր., 22.07.2016):*

ԿՐԿՆԱՄՆՋԵԼ, բ. **Կրկնակի համրանալ:** Մեկն էլ շատ մոտիկից ուղղադիր դեմքին էր նայում ու ինքն էլ հետը **կրկնամնջում** *(Անդին, թ. 2, 2017):*

ԿՐԿՆԱՆԵՐԲԱՆ, ած. **Կրկնակի ներբան ունեցող՝ ներբաններով**: …. **Կրկնաներբան** ձիերդ պատրաստիր, այս ծրարը վերցրու ու թռիր Ինվալիդների պալատ …. *(Բ5, էջ 16):*

ԿՐՈՆԱԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրոնին և բարոյագիտությանը վերաբերող գիտելիք, աշխարհայացք**: Մարդու հիմնական հոգևոր պահանջմունքը նրա **կրոնաբարոյագիտությունն** է *(ՍՀ, էջ 31):*

ԿՐՈՆԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ, ած. **Կրոնական բնույթի գործառական արժեք ունեցող՝ գործառվող**: Այստեղ **կրոնագործառական** ժանրերը (թուղթ, ճառ … և այլն) ընդհանուր առմամբ խոսքի կանոնական ձև են …. *(Սաֆ., էջ 10):*

ԿՐՈՆԱՀԱԼԱԾ, ած. **Կրոնը հալածող:** Հակակրոն ու **կրոնահալած** ժամանակը բանաստեղծին չէր թույլ տվել հիշելու աստվածազարմ Հիսուսի անունը, բայց նա աքող հիսուսացրել էր Կոմիտասին *(ԼՄ, էջ 171):*

ԿՐՈՆԱՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ, գ. **Կրոնական հրաշապատում**: Մովսես Խորենացու մտքի համապարփակ գիտականությունը հաստատվում է նաև **կրոնահրաշապատումների,** բանահյուսական այլաբանությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքով *(Սաֆ., էջ 40):*

ԿՐՈՆԱՆԵՐԲՈՂԱՅԻՆ, ած. **Կրոնական բնույթի ներբողային**: …. **Կրոնաներբողային** երկարաշունչ ճառեր [է] ասում …. *(Սաֆ., էջ 67):*

ԿՐՈՆԱՇԵՇՏ, ած. **Կրոնը շեշտող, կրոնի հետ կապող**: …. Հրաշքը …. չունի նախնիների պարզունակ **կրոնաշեշտ** իմաստը …. *(Սաֆ., էջ 102):*

ԿՐՔԱՊԱՐ, գ. **Կրքոտ պար:** ….Անհամատեղելի են խելահեղ **կրքապարը,** ամպրոպային երաժշտությունն ու հանքային ջուրը *(Իր., 30.06.2017):*

ԿՑԱԳՈՐԾԵԼ, բ. **Գործելով կցել**: …. Մեր գործված գորգը իբր **կցագործելու** *(ԳԹ, 03.02.2017):*

ԿՈՒՌՔԻԿ, գ. **Փոքր կուռք:** Ինչպես էր այդ ծույլ, այդ օտարոտի, նենգամիտ ու չար, այդ դիվային **կուռքիկը** իրեն ծաղրուծանակի ենթարկել…. *(Հ, էջ 176):*

Հ

ՀԱԳԱԳԱՀՈՒՆՉ, ած. **Միայն շնչից բաղկացած ձայն:** …. Տարիների ընթացքում մեր կյանքից մարում-հանգչում է անհրաժեշտության զգացումը, ինչպես հայրենասիրությունն է պարպվում **հագագահունչ** ճառի մեջ *(Անդին, թ. 2, 2017):*

ՀԱՋԱՐԱՀՄԱՅՔ, ած. **Հազարավոր՝ շատ հմայքներ ունեցող, արտակարգ հմայիչ**: Տե՛ս ԽՈՐԱԽԱՐԴԱԽ-ի օրինակը:

ՀԱԿԱԻՆՉԱԿԱՆ, ած. (դիպվ.): **Անհայտ է, թե ինչի դեմ օգտագործվող**: …. Նա հանձնարարում է չգիտեմ **հակաինչական** քսուք *(Վեռնոյ, էջ 5):*

ՀԱԿԱՆԱՎԱՅԻՆ, ած. ….Կարիք կար ունենալու զանազան հեռահարության բարձր ճշգրտության **հականավային** հրթիռներ *(Անդին, թ. 5, 2016):*

ՀԱԿԱՍԱԼԻՑ, ած. **Հակասություններով լի**: Պետական գործչի ու գիտնականի նրա միակուռ ու **հակասալից** կյանքը լրջագույն ձևախեղումների ու հալածության է ենթարկվել ոչ միայն իր մարմնավոր գոյության օրոք …. *(ՊԲՀ, 3, 2016, էջ 249):*

ՀԱՂԹԱԲՈՒՅՐ, ած. (փխբ.): **Հաղթական**: Եվ լցված եմ արյամբ ինձ ու քեզ կապող եռատառ կոչումով՝ ՀԱՅ, և այս հողին արմատով ընձյուղված հայ լինելու բախտիս անպարտելի, **հաղթաբույր** հպարտությամբ *(Անդին, թ. 7, 2016):*

ՀԱՂՈՐԴԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Հաղորդակցելի լինելը**: …. Բարդ ճանապարհ պիտի անցնեն բարոյագեղագիտական **հաղորդակցելիությունը** հասցնելու համար ներդաշնակության *(Սաֆ., էջ 174):*

ՀԱՃԱԽՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին հաճախորդ**: …. Ավելի հիմար գտնվեց իր հաճախորդներից և **հաճախորդուհիներից** շատերին սպասարկելու ժամանակ *(Բ7, էջ 351):*

ՀԱՃՈՅԱԺՊՏԱԼ, բ. **Ժպտալով հաճոյանալ:** …. Կրկին **հաճոյաժպտաց** *(ԱԱ, ԸԵ, էջ 68):*

ՀԱՄԱԳԻՇԵՐԱՅԻՆ, ած. **Նույն գիշերը կատարվող**: Տե՛ս ԱՐԹՄՆԻՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՀԱՄԱԶԳԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Համազգային ձևով:** ….Համազգային միասնական մեր մարմինը այլևս չի փշաքաղվի, այդ կրակահերթերը կլինեն մեր **համազգայնորեն** մեռած մարմնին, կինչեն որպես հեռավոր մի երկրում եղած կամ չեղած քստմնելի պատահարի լուր *(ՀՄ, էջ 16):*

ՀԱՄԱԽԱՌՆՈՒՐԴ, գ. **Համախառնում՝ համախառնման դրսևորում**: …. Աղասու կերպարում մեծ է մի ուրիշ քանաքեռցու՝ Մեծ Աղասու՝ Խաչատուր Աբովյանի գաղափարների ու զգացումների **համախառնուրդը** *(Աբով., էջ 89):*

ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ, ած. **Համակարգային և կառուցվածքային**: **Համակարգակառուցվածքային** մեթոդը պահանջում է հասարակության համակարգերն ուսումնասիրել ամբողջի ու մասի, կառուցվածքի ու տարրի փոխհարաբերության մեջ *(Լրաբեր, 3, 2016, էջ 153):*

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՎՈՐՈՒՄ, գ. Սկզբում իրականացրինք դասագրքերի ծրագիրը, հետո հանրակրթության ամբողջ կառուցվածքը բարեփոխեցինք, հետո իրականացրինք **համակարգչավորումը** *(Հրապ., 09.07.2016):*

ՀԱՄԱՀԱՇՎԱՐԿԵԼ, նբ. **Համատեղ՝ մի այլ բանի հետ միասին հաշվարկել**: […. ճշգրիտ տվյալները …] **համահաշվարկվել** են ընկերության եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալներում *(Հայրունի 1, էջ 489):*

ՀԱՄԱՉԱՐԻՔ, գ. **Ընդհանուր չարիք, աղետ**: Նոր **համաչարիքի** տարիքն է 1919 *(ՌԿ, էջ 281):*

ՀԱՄԱՏԱՐԱԾԱԿԱՆ, ած. **Ամբողջ տարածությունը բռնող, համընդգրկուն**: Այս աղոթամատյանը մարդկային ապրումների ու ձգտումների **համատարածական** …. գեղարվեստական հզոր ամփոփագիր է …. *(Սաֆ., էջ 144):*

ՀԱՄԱՑԵՂԱՅԻՆ, ած. **Ամբողջ ցեղին՝ համացեղությանը հատուկ՝ վերաբերող**: Առաջնորդը պետք է …. **համացեղային** մոգարգելքները ուժի մեջ մտնելու նախօրյակին հարաբերություններ չունենա նրա հետ *(Ֆր., էջ 209):*

ՀԱՄԱՓՈԽԱՏԵՆԱՊԵՏ, գ. **Փոխատենապետներից մեկը**: …. Հակոբ Ավետիքյանը և համափոխատենապետ Կարեն Կակոյանը հանդիպում ունեցան …. Գագիկ Ծառուկյանի հետ *(Ազգ, 27.07.2017):*

ՀԱՄԵՐԳԱԹԱՏԵՐԱՍՐԱՀ, գ. **Համերգի և թատերական ներկայացումների սրահ**: …. Նման վահանակներ կկերդրվեն նաև Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի անվան թատրոններում և այլ **համերգաթատերասրահներում** …. *(Իր., 17.02.2017):*

ՀԱՄԸՆԴԳՐԿԵԼ, բ. **Ամեն ինչ ընդգրկել:** Սայաթ -Նովայի բանաստեղծական աշխարհը անսահմանորեն մեծ է, **համընդգրկող** *(ԼՄՅ, էջ 31):*

ՀԱՄԸՆԿԱԼՈՒՄ, բ. **Միատեղ ընկալել**: Ուրեմն՝ մեր էպոսը **համընկալում**, միատեղ է ընկալում ձայնը, բանը, տեքստը (խոսքը) և արյունը *(Տոն., էջ 271):*

ՀԱՄՈԶՉՈՐԵՆ, մկբ. **Համոզիչ կերպով**: Տես ԴՐՎԱԳԱԲԱՐ-ի օրինակը:

ՀԱՅԱՊԱՏԿԵՐ, ած. (փխբ.): **Հայի պատկեր ունեցող, հայի ստեղծած, հայածնունդ**: Խարբերդ քաղաքը Ծոփքի հայ նախարարների շինածն էր՝ …. **հայապատկեր** ու հայաշունչ *(ՍԽ, էջ 22):*

ՀԱՅԱՋԱՐԴ, ած. **Հայերին ջարդող, հայասպան:** Միայն **հայաջարդ** այդ հրեշները չխանգարեն ինձ ուսանող դառնալ մեծարգո պրոֆեսորի փափագաշատ լսարանում *(ՌԿ, էջ 415):*

ՀԱՅԱՎԵՐ, ած. **Հայաստանը ավերող**: Սրա **հայավեր** գործը շարունակեց Պետրոս Արագոնացին (Սպանիա) *(ՍԽ, էջ 194):*

ՀԱՅԱՎՏԱՆԳ, գ. **Հայերի համար վտանգավոր, հայերին վտանգող՝ վնասող, հայավնաս**: …. Տեսանելի է դարձնում հույների և արաբների **հայավտանգ** ծրագիրը …. *(Սաֆ., էջ 85):*

ՀԱՅԵԼԱՆՔ, գ. **Արտապատկերում**: Ցեղասպանությունը՝ գեղանկարիչ-պոետ բախտակցության **հայելանքում** *(Իր., 07.02.2017):*

ՀԱՅԵԼԱՊԱԿՅԱ, ած. **Հայելապակուց պատրաստված, հայելապակե**: …. Խանութներ՝ **հայելապակյա** հսկայական ցուցափեղկերով *(Անդր., էջ 318):*

ՀԱՅԵԼԱՏԻՊ, ած. **Հայելու ձև ունեցող:** Տես ԱՂՄԿԱՀՈՐԴ-ի օրինակը:

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱՐԱՆ, գ. **Հայրենի տարածքին վերաբերող հանրագիտարանային աշխատություն:** Այդ մասին են վկայում նաև գիտական աշխատանքների ու մենագրությունների վերնագրերը՝ «Օձունի եկեղեցին», «Կայծոն Շնող **հայրենագիտարան»** …. *(ԳԹ, 28.04.2017):*

ՀԱՅՐԵՆԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Հայրենիքը որպես կենտրոն ունեցող**: Երկու արվեստագետները **հայրենակենտրոն** զգացողություններով լեցուն, երկուստեք հրաշալի գործերով խորապես նպաստում են հայ մարդու հոգում ցեղասպանության զոհի բարդույթի վերացմանը *(Իր., 02.03.2017):*

ՀԱՅՐԵՆԱՀԱՐ, ած. (փխբ.): **Հայրենիքը հիշեցնող, հայրենաբույր**: **Հայրենահար** աղջկան (բանաստեղծության վերնագիր) *(Իր., 21.02.2017):*

ՀԱՅՐԵՆԱՁԱՅՆ, գ. **Հայրենիքի ձայնը**:…. Ռուբենի հերոսները…. ձգտել են բարձրանալ կյանքի հատակից, որոնել ու գտնել ապրելու ազնիվն ու պաշտելու՝ **հայրենաձայնը** *(Նորք, թ.1,2017):*

ՀԱՅՕԳՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Օգնություն հայերին**: …. Փորձում էր կասեցնել …. **հայօգնության** աշխատանքները *(Հայրունի 1, էջ 21):*

ՀԱՆԳԱՆԱԳԻՐ, գ. **Հանգանակության ցուցակ:** Այդուհանդերձ **հանգանագիրը** նրանից վերցրեցի *(ՌՍՊ, հ. 2, էջ 278):*

ՀԱՆԳՐՎԱՆԱՎԱՅՐ, գ. **Հանգրվանելու վայր, հանգրվանատեղ**: …. Մեկնեց Բուլղարիա՝ փախստականների հիմնական **հանգրվանավայրը** *(Հայրունի 1, էջ 161):*

ՀԱՆԴԳՆԱԹԵՎ, ած. (բնստ.): **Հանդուգն:** Քանի՞ անգամ օրերն իմ բորբ, **հանդգնաթև** // Զքվեցին լուռ իմ մանկասուգ սևագրից *(ԲԱ, էջ 15):*

ՀԱՆԴԻՍԱԵՐԹ, գ. **Հանդիսավոր երթ**: Այդ արարողությունները դեռևս …. չէին վերածվել սովորական տեսարանների ու դիմակավորված **հանդիսաերթերի** *(Ֆր., էջ 171):*

ՀԱՆԴԻՍԱՍԵՆՅԱԿ, գ.. **Սենյակ, որտեղ կատարվում է հանդեսը**: Իրեն շրջապատում են հսկայական **հանդիսասենյակներ** *(Պրուս, էջ 173):*

ՀԱՆԵԼՈՒԿԱԳԻՐ, գ. **Հանելուկներ գրող, հանելուկների հեղինակ**: …. Անանուն **հանելուկագիրներից** մեկը …. *(Սաֆ., էջ 177):*

ՀԱՆԿԱՐԾԱԱՃ, ած. (փխբ.): **Հանկարծակի ի հայտ եկող, աճող, հանկարծածագ**: …. Հոգուս խորքում անսպասելիորեն նույն կասկածների հանկարծաաճ ծիլեր հայտնաբերեցի *(Սուրյան1, էջ 62):*

ՀԱՆՐԱՀԱՄԲԱՎ, ած. **Հանրային՝ հասարակական համբավ ունեցող**: …. Իր խելքով չի զիջում քաղաքի **հանրահամբավ** խելոքներին *(Սար., էջ 374):*

ՀԱՆՐԱՃԱՆԱՉՈՒՄ, գ. **Հանրաճանաչ դարձնելը, հանրաճանաչ դառնալը**: Հանգանականությունից գոյացած միջոցները կտրամադրվեն ՀԳՄ հրատարակչության գործունեության, այլ երկրների հետ գրական կապերի, հայ գրականության **հանրաճանաչման** գործընթացի աշխուժացմանը *(ԳԹ, 03.03.2017):*

ՀԱՆՔԱԿԻՑ, ած. **Հանքերին մոտ գտնվող**: …. Բյուրականի **հանքակից** ծառերի հրդեհի մասին ահազանգ է եղել …. *(Ազգ, 08.08.2017):*

ՀԱՆՔԱՊԱՇԱՐ, գ. **Հանքի՝ բնական հանքային նյութի պաշար**: Այստեղ հայտնաբերվել են մանգանի հարուստ **հանքապաշարներ** …. *(ՍԽ, էջ 317):*

ՀԱՇՄՈՒՂԵՂ, ած. **Հաշմված՝ վնասված, խեղված ուղեղ ունեցող**: …. Դուք տիրուհի կդառնաք իմ **հաշմուղեղ** քեռու տանը *(Բ7, էջ 648):*

ՀԱՇՎԵԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Հաշիվները գրելը՝ գրանցելը՝ հաշվեգրում:** Նա իր **հաշվեգրությունները** կատարում էր վաճառականական կանոնավորությամբ *(Բ5, էջ 270):*

ՀԱՉՈՑԱԿԵՐՊ, ած. **Հաչոցի նմանվող:** Ու կրկին, հպատակվելով ագահության հակիրճ, **հաչոցակերպ** հրամաններին, շոգենավերի մեքենաները լարում են պողպատյա մկանները, ծռում լծակների՝ մեքենայուղով պատված ծնկներն ու արմունկները…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 179):*

ՀԱՍՄԻԿԱԲՈՒՅՐ, ած. **Հասմիկի բույր ունեցող՝ տարածող**: …. Դրա մեջ մոր օծանելիքներից է՝ **հասմիկաբույրը** *(Բոհջ., էջ 257):*

ՀԱՎԱՏԱՐՄՈՒՀԻ, գ. **Հավատարիմ կին**: Ամուսնացած **հավատարմուհու** վսեմ խցիկն էր դա …. *(Բ7, էջ 142):*

ՀԱՎԵԼԱՃ, գ. **Լրացուցիչ, հավելյալ աճ:** Դա **ներուժի հավելաճն է**, որն իր շարունակական ընթացքի մեջ բերում է անզորություն **հավելաճին,** և դրանից հնարավոր չէ ձերբազատվել *(Անդին, թ. 2, 2017):*

ՀԱՎԵՐԺԱԸՆԹԵՐՑ, ած. **Հավերժ ընթերցվող**: Պաղ, արևոտ, անհաղորդ մի օր, որ արդեն իսկ դառնում էր պատմագրքի մի էջը, սակայն ոչ թե քարե էջ, այլ՝ ետ եկող, ետ թերթվող ու **հավերժաընթերց** մի էջ …. *(ԳԹ, 03.02.2017):*

ՀԱՎԵՐԺԱԹԱԽԻԾ, ած. (բնստ.): **Հավերժ թախծոտ:** Եվ մութը եռա աստղակուտակմամբ **հավերժաթախիծ** *(ԲԱ, էջ 9):*

ՀԱՐԱԴՂԻՐԴ, ած. (բնստ.): **Միշտ՝ անընդհատ՝ երկարատև դղրդացող**: Այս ցնցումնաշատ ու **հարադղիրդ**// Իմ ճանապարհին …. // Կան ու կանգուն են ուրանալեռներն իմ տոկունության *(Մարտ., էջ 272):*

ՀԱՐԱԼՈՒՅՍ, ած. (բնստ.): **Հավերժ լուսավոր**: Անանուն անհունից ճառագած //**Հարալույս** Այբուբենն է հառնում *(ԲԱ, էջ18):*

ՀԱՐԱՀՈՐԴՈՒՆ, ած. **Մշտապես հորդուն, առատահորդ**: …. Արյունն իմ իր **հարահորդուն** և իր հորձանուտ ալեբախումով չի՞ ձանձրացրել, ուժատել նրան *(Մարտ., էջ 272):*

ՀԱՐԴԱԽՈՒՐՁ, գ. **Հարդի խուրձ՝ կապոց**: …. Կրակարանի մեջ ծծմբած երեք **հարդախուրձ** ճխտեցին *(Բ7, էջ 486):*

ՀԱՐԹԱՇՈՒՐԹ, ած. **Հարթ շուրթ ունեցող:** Այդժամ Կաղլենի **հարթաշուրթ** բերանը բացուխուփ է լինում այդ կապակցությամբ…. *(Անդին, թ. 3, 2016):*

ՀԱՐԹԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ, ած. **Հարթապատկերին բնորոշ:** [Դա]-**հարթապատկերային** ողջ կառուցվածքն ավելի ընթեռնելի դարձնելով, նպաստում է կոմպոզիցիայի ամբողջական ընկալմանը *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՀԱՐՊՈՒՆԱՀԱՐ, գ. **Հարպունով խոցված:** Ինչքա՜ն ծովեր ակոսեցի այսօր ըղձանքիս Մոբի Դիկի հետևից, որ **հարպունահար**՝ հզոր շատրվանում էր ինձանից փախչելիս *(ՍՀ , էջ 19):*

ՀԱՐՄՆԱԿՈՒԾՔ, գ. **Հարսի կուրծք, հարսին հատուկ ստինք**: …. Թափանցիկ շորի տակից թրթռում էին …. կոկոն ու պիրկ **հարսնակրծքերն** ու սլացիկ թարմաբույր պարանոցը *(Մարտ., էջ 264):*

ՀԱՐՑԱՀԱՐՈՒՅՑ, գ. **Հարցեր առաջացնող:** Բայց **հարցահարույց** է Ռ. Վարդանյանի հետևյալ միտքը…. *(Իր., 30.06.2017):*

ՀԱՑԱԹԽԱՐԱՆ, գ. **Հաց թխելու արտադրամաս**: …. Ի հայտ եկան հնարավորություններ նաև այնպիսի կարևոր արտադրամասերի ստեղծման համար, ինչպիսիք էին, օրինակ …. լցակարման արհեստանոցը …., **հացաթխարանը** և այլն *(Հայրունի 1, էջ 97):*

ՀԱՑԱԹՈՆԻՐ, գ. **Հաց թխելու թոնիր, թոնիր, որի մեջ հաց են թխում**: Ես հիմա [նկարը] կհանեմ ու **հացաթոնիրը** կնետեմ *(Մարտ., էջ 214):*

ՀԱՑԱԿԱՊՈՑ, գ. **Հացի կապոց:** Նրանք ճախրում էին խուռներամ՝ իրենց թևերին տանելով կժերով սառնորակ ջուր, **հացակապոցներ** *(ՌԿ, էջ 171):*

ՀԱՑԱԿՈՐՈՒՍՏ, ած. **Պարենը սպառված, հացապակաս:** Վարդան պատմագիրը սարսափով նկարագրեց Անիի հետ պատահած **հացակորուստ** դառը ժամանակը *(ՌԿ, էջ 280):*

ՀԱՑԱՎԱՃԱՌՈՒՀԻ, գ. **Կին հացավաճառ:** Հանկարծ ես հիշեցի, որ դիմանկարի պատվերը նա **հացավաճառուհու** միջոցով էր ստացել *(ՍՄ, էջ 93):*

ՀԱՑԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Հացի փառաբանություն՝ ձոներգություն**: …. Չենք կարող խուսափել հայ բանաստեղծության մեջ **հացերգության** գագաթ համարվող «Հացին երգը» (Դանիել Վարուժան) ժողովածուի քննադատությունից *(Տոն., էջ 378):*

ՀԵԼԻՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Արևի էներգիայի օգտագործմանը ծառայող համակարգ:** Կարևորվում է մինչև 20կվտ ջերմային հզորությամբ **հելիոհամակարգերի** կիրառմամբ առաջին հելիոֆիկացված գյուղի …. կազմակերպումը .... *(Իր., 09.12.2016):*

ՀԵԼԻՈՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Արևի էներգիայի կիրառելուն ծառայող սարքավորում:** Լուրջ հաջողությունների հասնելու համար մեր մասնագետները ստիպված են եղել …. մշակել …. հելիոտեխնոլոգիաների տարածման ու զարգացման և **հելիոսարքավորումների** փորձարկման հատուկ մարզային կենտրոններ (հելիոպոլիգոններ) …. *(Իր., 09.12.2016):*

ՀԵԾԱՆՎԱԿԱՆԳԱՌ, գ. **Կանգառ հեծանիվների համար, հեծանիվների կայանատեղ**: Տես ԿԱՆԳԱՌԱՍՐԱՀ-ի օրինակը*:*

ՀԵԾԿԼՏԱԽԱՌՆ, ած., մկբ. **Լացախառն: Հեծկլտախառն** արտասանեցի բանաստեղծությունները…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 203):*

ՀԵՂԱՇՐՋԻՉ, ած. **Հեղաշրջող, հեղաշրջություն կատարող**: **Հեղաշրջիչ** նորություն *(Հայրունի, էջ 25):*

ՀԵՂԵՂԱԹԱՓ, ած. (փխբ.) **Ուժգին, հեղեղի թափ ունեցող**: … Ձնհալի ջրերը **հեղեղաթափ** շառաչով նոր դուռ էին բացում Խորհրդային երկրի հարավային դարպասի վրա …. *(ԳԹ, 03.03.2017):*

ՀԵՇՏԱԳԻՐ, գ. **Դյուրությամբ ստեղծագործող:** Սփյուռքահայ գրագետները՝ բանաստեղծ, արձակագիր, թե քննադատ՝ **հեշտագիր են** *(ՍՍ, էջ 548):*

ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵԼ, չբ. **Հեռախոսով զանգել՝ մի բան հաղորդել**: …. – Ուղարկենք ուսումը շարունակելու, - **հեռախոսազանգեց** թիկունքը *(Մարտ., էջ 282):*

ՀԵՌԱՀԱՇՎԱՐԿ, գ. **Հեռու գնացող՝ ապագան հաշվի առնող հաշվարկ**: …. Պետական շրջաններն առաջնորդվում էին այդ **հեռահաշվարկով** ….*(Հայրունի 2, էջ 36):*

ՀԵՌԱՄՆԱ, գ. **Հեռվում մնացած:** Տես ԹԱԽԾԱՄՐՄՈՒՆՁ-ի օրինակը:

ՀԵՌՈՒՍՏԱՀՅՈՒՐ, գ. **Հեռուստատեսային հաղորդման հյուր**: Վերադառնալով **հեռուստահյուրի** մտքին՝ նկատենք, որ …. *(Իր., 10.01.2017):*

ՀԵՌՈՒՍՏԱՂԵԿԱՎԱՐ, գ. **Հեռուստատեսային ոլորտի ղեկավար**: Մեր **հեռուստաղեկավարներից** շատերի կարծիքով հեռատեսիլը չունի պարտականություն հասարակության կրթության մեջ իր բաժինը վերցնելու …. *(Ազգ, 03.02.2017):*

ՀԵՎԱՏՐՈՓ, ած. **Արագ, շնչակտուր**: Ընթացքը …. **հևատրոփ** արագություն ստացավ…. *(Անդին, թ. 2, 2017):*

ՀԵՏԱԽՈՒԶԱՎԱՇՏ, գ. **Հետախուզական վաշտ:** Նա մենակ ավելի շատ բան է տալիս, քան, քան ձեր **հետախուզավաշտը** *(ՌՄՊ, հ. 2, էջ 163):*

ՀԵՏԱՔՐՔՐԱԽԱՌՆ, ած. **Հետաքրքրությամբ խառն:** Նա կարծես **հետաքրքրախառն** մի զարմանք նշմարեց նրանց դեմքերի վրա …. *(Բ5, էջ 530):*

ՀԵՏԶԻՆԱԴԱԴԱՐՅԱՆ, ած. **Զինադադարին հաջորդող**: **Հետզինադադարյան** առաջին ամիսներին *(Հայրունի, էջ 79):*

ՀԵՏՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ, ած. **Վիրահատությանը հաջորդող**: Հայ ընտանիքների մեծ մասը զուրկ էր **հետվիրահատական** շրջանում հիվանդին խնամելու հնարավորությունից *(Հայրունի 1, էջ 106):*

ՀԻՄՆԱԵԶՐ, գ. **Հիմքի եզր**: …. Կենդանի բնության **հիմնաեզր** …. *(Սաֆ., էջ 277):*

ՀԻՆԱՅԱԳՈՒՅՆ, ած. **Հինայի գույն ունեցող:** Նրա բուդուարը …. **հինայագույն** թավշից էր *(Բ5, էջ 298):*

ՀԻՍՈՒՍԱՑՆԵԼ, բ. **Աստվածացնել:** Տե՛ս ԿՐՈՆԱՀԱԼԱԾ-ի օրինակը:

ՀՅՈՒՍԱՔԱՐԴ, գ. **Հյուսված զարդ, հյուսելու միջոցով ստացված զարդ**: …. Նրա **հյուսազարդերը** նման էին ծվենների …. *(Բ7, էջ 582):*

ՀՅՈՒՍԱՇՂԹԱ, գ. **Հյուսելու միջոցով կազմված շղթա՝ շղթայաձև իր**: [Պատգարակը] …. լցված էր տարբեր սերմերով և զարդարված էր եգիպտացորենի կողրերի և պղպեղի **հյուսաշղթաներով** *(Ֆր., էջ 694):*

ՀՅՈՒՐԱՆՈՑԱԳՐՔՈՒՅԿ, գ. **Հյուրանոցում առկա գրքույկ:** Նա դրա մասին տեղեկացել էր **հյուրանոցագրքույկներից** *(Հ, էջ 46):*

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՏԻՐԱՅԻՆ, ած. **Հյուրանոցատիրոջը հատուկ**: Նրան դուր էր գալիս վերջինիս **հյուրանոցատիրային** պահվածքը *(Հեմ., էջ 13):*

ՀՆԱԶԳԵՍՏ, ած. **Հին զգեստ հագած:** Նա հրահանգավորեց **հնազգեստ** նվագախմբին տեղ զբաղեցնել ճակատային մասում *(ՌԿ, էջ 256):*

ՀՆԴԿԱՄԱՆԻԱ, գ. **Հնդկական ֆիլմերի նկատմամբ չափազանց մեծ սեր տածելը**: **Հնդկամանիայի** պատճառների մասին կարծիք են հայտնում մեր մտավորականներն ու արվեստագետները *(Ազգ, 03.02.2017):*

ՀՆՈՑԵՐԱԽ, գ. **Հնոցաբերան**: Կարմրավարս և դեղնամորուս Ֆաբրիցիուսը հուրհրատում էր ինչպես **հնոցերախից** դուրս ելնող բոցի լեզու *(ԱԱ, ԸԵ, էջ 306):*

ՀՆՉՅՈՒՆԱՐՁԱԿԻՉ, գ. **Բարձր ձայն արձակող սարք:** ….Մի միտք է մտել ուղեղը. թշնամական սուզանավերի անձնակազմերը խելագարացնել առափնյա զորեղ **հնչյունարձակիչի** օգնությամբ *(ՌՍՊ, հ. 2, էջ 514):*

ՀՈԳԵԽՈՑՈՒՄ, գ. **Հոգեպես խոցվելը, հոգեկան հարված: Հոգեխոցումն** ավելի խորն է ու ցավագին, որովհետև ոչ վաղ անցյալում տեղի է ունեցել սպանդ ու վտարում …. *(ՀՀ, 14.03.2017):*

ՀՈԳԵԾԱՐԱՎ, գ. **Հոգեղեն ծարավ**: Հորդացող ինչպիսի՜ ջերմությամբ էր վայելում հոր ներկայությունը, որդիական սիրո գերազնիվ հարգանք և **հոգեծարավ** ուներ տոհմական մեծի.... հանդեպ *(Նորք, թ.1, 2017):*

ՀՈԳԵԿԵՆՏՐՈՆ, գ. Այստեղ՝ **հոգեկան գործունեությունը ղեկավարող կենտրոն:** Կասկած չունեմ, որ երկրաբնակներիցս ամեն մեկը իր անուն ազգանունից բացի, իր տիեզերական տարբերանշանն ունի, իր մեջ դրված հոգեկոդը, որը նրա բոլոր արարքները, մտածումներն անգամ հեռարձակում է գերագույն **հոգեկենտրոնին** *(Իր., 10.03.2017):*

ՀՈԳԵԿՈԴ, գ. **Հոգևոր նշակարգ**: Տե՛ս ՀՈԳԵԿԵՆՏՐՈՆ-ի օրինակը*:*

ՀՈԳՆԱՀԱԼԱԾ, ած. **Հոգնությունից հալածված**: **Հոգնահալած** անուրջներ (վերնագիր) *(Ապտղիկ, 2-3, 1990, էջ 92):*

ՀՈԳՍԱԽԱՌՆ, ած. **Հոգսի հետ խառն, միաժամանակ հոգս արտահայտող**: …. Մի մեղմ, **հոգսախառն** ժպիտ կա դեմքին *(ՍԽ, էջ 376):*

ՀՈԼՈՎԱՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.) **Հոլովների քանակը**: Բավական է հիշել 1967թ. աշնանը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված բանավեճը հայերենի հոլովաքանակության շուրջ …. *(ՊԲՀ, 3, 2016):*

ՀՈՂԱԿԻՑ, ած. **Նույն հողում՝ վայրում՝ տարածքում ապրող**: Խ. Աբովյանի **հողակիցն** ու ազգակիցը …. ջերմությամբ է անդրադառնում հարազատ ծննդավայրին *(Աբով., էջ 9):*

ՀՈՂԱԿՈԼՈԼ, ած. **Հողի մեջ կոլոլված՝ հողով շաղախված՝ թաթախված**: …. Աչքերը բաց են, բայց սառած, մազերը՝ **հողակոլոլ** ու խռիվ …. *(Բոհջ., էջ 210):*

ՀՈՂԱՊԱՇՏԱՄՈՒՆՔ, գ. **Հողի պաշտամունք, հողը պաշտելը՝ սիրելը՝ արժևորելը**: Ես օրհնում եմ նրա **հողապաշտամունքը** *(ՍԽ, էջ 561):*

ՀՈՂԵՐԵՎՈՒՅԹ, գ. **Հողի մակերևույթին կատարվող երևույթ:** Տե՛ս ԵՐԿՆՈԼՈՐՏԱՅԻՆ-ի օրինակը:

ՀՈՂՄԱՀԱՅԱՑ, ած. **Դեպի այն կողմը նայող, որտեղից գալիս են հողմերը՝ ուժեղ քամիները**: Ջուլուսները այգիների **հողմահայաց** կողմի խարույկների վրա այրում են մոգական խոտաբույսեր *(Ֆր., էջ 757):*

ՀՈՎԱՆԱՎՈՐՅԱԼՈՒՀԻ, գ. **Հովանավորյալ կին** : …. Սպասուհիներից մեկը մի կույտ խոտ է դիզում իր **հովանավորյալուհու** համար *(Ֆր., էջ 703):*

ՀՈՎԵԿՈՒՀԻ**,** գ. **Հովեկ կին՝ աղջիկ**: Ժպիտը կիսաբաց շրթունքների ծայրերում՝ **հովեկուհին** թաթերի վրա մոտենում էր …. *(ԳԹ, 03.02.2017):*

ՀՈՐԻՆԱՍՏԵՂԾ, ած. **Հնարովի ստեղծված:** ….Գիտնականները ևս հակված են առասպելականացնելու պատմական որոշակի, հաճախ անանուն իրադարձությունները՝ հենց միայն պատմական օրինաչափությունների ճանաչման կեղծ ու **հորինաստեղծ** առասպելը հյուսելու նպատակով *(Անդին, թ. 2, 2017):*

ՀՈՐՁԱՆՔԱՆՄԱՆ**,** ած. **Հորձանքի նմանվող**: Գորկին մոր ձեռքերը չի նկարել, թաքցրել է ձվակճեպագույն յուղաներկի երկու հարթ, կլոր, հորձանքանման գնդերով *(Բոհջ., էջ 156):*

ՀՍԿԱՅԱՆԻՍՏ, ած. Սակայն մենք թողնենք ծովափնյա քաղաքն այդ հինավուրց, իր հնամենի բերդով, **հսկայանիստ** …պարիսպներով *(ՄԽ, էջ120):*

ՀՍԿՈՒՄՆԱՋԵՐԾ, ած. **Հսկումից ազատ**: Տեսնում էի խճճված լարերի հանգույցներ՝ հողմակործան և իրենց քառսի մեջ **հսկումնազերծ** կետերում միացումներ տվող…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 66):*

ՀՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**,** գ. (դիպվ.): **Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության վերլուծությունը, մաթևոսյանագիտություն**: **Հրանտագիտությունը** դեռ պիտի նորանոր գիտական գրքերով բացահայտի և արժևորի մեծ գրողին …. *(ԳԹ, 17.02.2017):*

ՀՐԱՆՏԱԿԱՆ**,** ած. (դիպվ.): **Հրանտ Մաթևոսյանին բնորոշ**: Այստեղ հավաքված երիտասարդությանը խորհուրդ եմ տալիս ամեն օր

նրանից ինչ-որ ստեղծագործություն կարդալ՝ դրանով իսկ աշխարհին որոշ չափով նայելով **հրանտական** գույներով …. *(ԳԹ, 17.02.2017):*

ՀՐԱՇԱԳԵՂՈՐԵՆ, մկբ. **Հրաշագեղ կերպով**: …. **Հրաշագեղորեն** գունագեղ ու փայլփլուն տերևներով կաղնիներ …. *(Բ7, էջ 120):*

ՀՐԱՇԱԿԵԶ, ած. **Հրաշավառ, հրաշափայլ**: …. Հաճույք էր զգում …. ինձ ցույց տալով իր **հրաշակեզ** թագավորության ամենահարուստ երկրները *(Բ7, էջ 233):*

ՀՐԱՇԱՍՈՒՐԲ, գ. **Հրաշքով սուրբ:** Տես ԲԱՐՁՐԱԽՈՍԵԼ-ի օրինակը:

ՀՐԱՑԱՆԱՎՈՐՈՒՀԻ, գ. **Կին հրացանավոր:** Պառկելով նորելուկ **հրացանավորուհու** կողքին, սովորեցնելու փոխարեն, կրակում էր նրա զենքից *(ՌԿ, էջ 188):*

ՀՐԱՑՈԼԻՉ, ած. **Բոցավառ: Հրացոլիչ** հորիզոնի հանդիպման այդ ժամին արագորեն գլորվում էր մի ծածկակառք *(ՌԿ, էջ 140):*

ՀՈՒԴԱՅԱԿԵՐՊ, ած. **Հուդայի տեսք ունեցող, հուդայանման**: Զավթիչը, **հուդայակերպ** վաճառողը, իր գործն արեց *(ՍԽ, էջ 10):*

ՀՈՒԶԱԳՐԳԻՌ, ած. **Հուզմունքից գրգռված: Հուզագրգիռ** դող անցավ մարմնով… *(ԻԿ, էջ 9):*

ՀՈՒԶԱԴՈՂԴՈՋ, ած. **Հուզմունքից դողդոջող**: Նա **հուզադողդոջ** ջերմությամբ համբուրեց աղջկա այտը *(Գոլս., էջ 28):*

ՀՈՒԶԱՀԱՌԱՉ, ած. **Հուզմունքից հառաչող:** Սա իրեն նետեց ամուսնու գիրկը և մի **հուզահառաչ** խոպոտ ճիչ արձակեց…. *(ՍՄ, էջ 481):*

ՀՈՒԶԱՇԵՐՏ, գ. **Հուզական աշխարհի շերտերը:** …. Մենք համարյա անգիր էինք արել մեր խոսքերը, մեր կեցվածքը, մեր **հուզաշերտերը**, մեր տառապանքի և ջղայնության տեղումներն ու չափերը *(ԱԱ, ԸԵ, էջ 74):*

ՀՈՒՇԱԴՐՈՇՄԱՆԻՇ, գ. **Նշանավոր անձի կամ իրադարձության նվիրված դրոշմանիշ**: …. «Հայփոստ» ՓԲԸ-ն շրջանառության մեջ դրեց 38077 դրամ արժեքով **հուշադրոշմանիշ**՝ նվիրված նշանավոր

գործարար, բարերար, 20-րդ դարի խոշոր նավթարդյունաբերող Ալեքսանդր Մանթաշյանցի ծննդյան 175-ամյակին *(ՀՀ, 04.03.2017):*

ՀՈՒՇԱՍՏՂ, գ. **Կինոյի բնագավառի հայտնի արվեստագետների պատվին կառուցված՝ աստղի ձև ունեցող հուշասալ**: Ազնավուրի անվան հրապարակում տեղադրվել են կինոյի ամենահայտնի հայերի **հուշաստղերը** *(Հեռ., Հ1, 21.09.2017):*

ՀՈՒՇԱՎԻՊԱԿ, գ. **Հուշագրական վիպակ:** «Ոսկե ամպ» **հուշավիպակի** ժամանակը 30-ական թվականներն են *(ՍՍ, էջ 557):*

ՀՈՒՇԱՏԱՂԱՎԱՐ, գ. **Որպես հուշարձան կառուցվող՝ ծառայող տաղավար**: Ծերուկը նստել էր նրա դեմ, ուտելիքը դրել **հուշատաղավարի** մետաղե սեղանին …. *(ՋԽ, էջ 381):*

Ձ

ՁԱԽԱՎԵՐՈՐԵՆ, մկբ. **Ձախավեր կերպով՝ անշնորհքաբար**: Տիրեց խոր լռություն, որ պարոն դը Մորսոֆը **ձախավերորեն** եկավ – խզեց *(Բ7, էջ 196):*

ՁԱՅՆԱՇԵՇՏ, գ. **Ձայնի՝ խոսքի շեշտադրությունը՝ ելևէջը:** …. Փոխանցվում է հայացքի, **ձայնաշերշի,** ժեստի միջոցով …. *(Բ5, էջ 64):*

ՁԱՅՆԱՏԱՐԱԾ, ած. (բնստ.): **Ձայնով տարածվող**: Այնժամ լսիր անտառից // **Ձայնատարած** մի թախիծ …. *(Ասպղիկ, 1, էջ 25):*

ՁԳԱԿԱՊԵԼ, բ. **Ձգելով կապել:** ….Մերկ ձեռքն էր **ձգակապում**, իսկ գոտու տակից արյուն էր հոսում *(ՌՍՊ, հ. 1, էջ 528):*

ՁԵՂՆԱՋԱՐԴ, գ. **Ձեղունի՝ տանիքի զարդ:** …. Մարմարիոնե **ձեղնազարդերի** տակ, թուրքական թանկագին գորգերի վրա …. յոթ կին էին նստած *(Բ5, էջ 660):*

ՁԵՂՆԱԽՈՐՇ, գ. **Ձեղունի՝ տանիքի խորշ՝ ճեղք, բացվածք:** …. Մի քանի ուժեղ խռմփոցներ, որոնք առավել ևս հնչեղանում էին **ձեղնախորշի** սնամեջ տախտակների միջով, ժպիտներ հարուցեցին …. *(Բ5, էջ 578):*

ՁԵՂՆՕԴԱՆՑՔ, գ. **Ձեղնահարկի օդանցք, ձեղնանցք:** ….Ես էլ էի գնում …. լսելով, թե ինչպես է վայում քամին խողովակների մեջ, ջարդված **ձեղնօդանցքից** տեսնելով աղբի վրա փաթիլներ սփռող երկնքի դալուկ պատառիկը *(ՌՍՊ, հ. 1, էջ 52):*

ՁԵՌՆԱԲԱԺԱԿ, գ. **Ձեռքի բաժակը:** -Հայկական խնդրի հզոր բարեկամները,- ազդարարեց հռետորը, երկար աչք պահած **ձեռնաբաժակի** վրա,- խիստ հոգսաշատ են այսօր *(ՌԿ, էջ 261):*

ՁԵՌՆԱԲՌՆՈՒՄ, գ. **Ձեռքով բռնելը, կառչելը:**…. Երբ հանում էիր կոշիկներդ ու գուլպաներդ և,…. ներբաններդ ամուր կպցնում ոստի բոլորաձև կտրվածքին ու մեկը մյուսից առաջ ընկնող **ձեռնաբռնումներով** նույնպես ամուր կառչում, պետք է որ…. *(Գարուն, թ. 5, 1999):*

ՁԵՌՆԱՃԱՐՊԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ձեռքերի ճարպիկ արարք՝ խաղ:** -Խաղաթղթի **ձեռնաճարպկություն** սիրո՞ւմ եք, - ասաց նա՝ վերցնելով խաղաթղթերը *(ՍՍ, էջ 485):*

ՁԵՌՆԱՄԵՋ, գ. **Ձեռքի մեջ:** Տե՛ս ԺԱՅՌԱԿՈՂ- ի օրինակը:

ՁԵՎԱԲԱՆԵԼ, բ. **Ձևավորել, ձևակերպել:** Մենք ստեղծել ենք մեր պատմությունը, գիտակցել նրա փիլիսոփայությունը և ըստ մեր էթնիկական կերտվածքի **ձևաբանել** մեր գեղարվեստական ոճը *(ՍՍ, էջ 482):*

ՁԵՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Մտածողության ձև՝ տեսակ:** Երվանդ Գոջաբաշյանի արվեստն այդ շրջանում բնորոշվում է ազգային **ձևամտածողության** ու ոճական առանձնահատկությունների նորովի փնտրումով *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՁԻԱԿԱՆՉ, գ. **Ձիու կանչը:** Հորիզոնի խորությամբ արձանագրվեց տապալվող Սևաթույրի որոտալի **ձիականչը** *(ՌԿ, էջ 212):*

ՁԻԱՇԱՐՔ, գ. **Ձիերի շարքը**: Ճարճատող հայոց գնդացիրների հեղեղը և հայոց մարտագնդերի ավերիչ հրացանազարկը չհասցրին շուտափույթ քանդել, մերկացնել հանդիպակաց միաձույլ **ձիաշարքերը** *(ՌԿ, էջ 163):*

ՁԻԱՎԱՐԺԻԿ, գ. **Ձի վարժեցնող, ձիավարժ**: …. Ծերունի **ձիավարժիկ** *(ԲՇ, էջ 136):*

ՁԻԱՎԱՐՈՒՀԻ, գ. **Ձի վարող կին**: …. **Ձիավարուհին** ավելի շնորհք չէր ցուցաբերում *(ԲՇ, էջ 339):*

ՁԿՆԱՃԱՐՊ, գ. **Ձկան ճարպ:** Նրանք գտնում էին, որ **ձկնաճարպը** պաշտպանում է ցրտից…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 21):*

ՁԿՆԱՇՈՒԿԱ, գ. **Ձկան վաճառքի շուկա**: Հեղինակը նկատի ունի Բիլինգսգեյթ **ձկնաշուկայի** բանվորներին *(Ասպղիկ, 2-3, 1990, էջ 65):*

ՁՅՈՒՆԱՁԵՐԾՎԵԼ, բ. **Ձյունից մաքրվել:** Ձյան բարակ շերտը բոցավառվող խարույկի տակ հալվում էր, դառնում էր ջուր, ու շրջապատը **ձյունազերծվում էր** *(ՄԽ, էջ 40):*

ՁՅՈՒՆԱՄԱԾ, ած. **Ձյունով ծածկված՝ պատված, ձյունապատ, ձյունոտ**: Անցնում եմ **ձյունամած** ճանապարհով *(ՄԽ, էջ 466):*

ՁՅՈՒՆԱՊԱՏԿԵՐ, գ. **Ձյունով ծածկված սարը պատկերող նկար**: Արագածի **ձյունապատկերի** վրա փայլում էր կարմիր դրոշ …. *(ՄԽ, էջ 54):*

ՁՅՈՒՆԱՍԵՐ, ած. **Ձյուն սիրող**: **Ձյունասեր** մանկան խանդավառության …. *(ԳԹ, 17.03.2017):*

ՁՅՈՒՆԱՑՈԼՔ, գ. **Ձյան ցոլքը: Ձյունացոլքն** աչքիդ իմ մեջ սևեռվեց *(ԲԱ, էջ 11):*

ՁՆԱԼԱՎԱ, գ. (փխբ.): **Ձնհալից առաջացած լավա:** ….**Ձնալավայի** պես մարդկությունը փնտրում է այն առասպելական անդունդը՝ որտեղ հոգիները հեշտությամբ կլքեն մարմինների ծանրությունը…. *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՁՆԱՀԵՌԱՑՈՒՄ, գ. **Ձյունը փողոցներից հավաքելը, ձնամաքրում**: Անդրադառնալով մայրաքաղաքում շարունակվող ձնամաքրման և **ձնահեռացման** աշխատանքներին՝ քաղաքապետ Տ. Մարգարյանը …. *(ՀՀ, 07.02.2017):*

ՁՆԱՓԱԹԻԼ, գ. **Ձյան փաթիլ**: Օդում պտտվող **ձնափաթիլները** հալչում էին՝ դիպչելով դեմքին …. *(Օտ. հայ գր., էջ 202):*

ՁՈՐԱԽՈՌՈՉ, գ. **Ձորամիջի խոռոչ՝ խորշ**: …. Կիրճերում ու **ձորախոռոչներում** է ստեղծվել մեր այս քաղաքը *(ՄԽ, էջ 556):*

ՁՈՐԱԾՄԱԿ, գ. **Ձորի ստվերոտ մասը:** Այգեստաններում և **ձորածմակների** մեջ, դարավանդներին ու դաշտերի վրա իջել էր թալանչի քամին *(ՌԿ, էջ 227):*

ՁՎԱԿԱՐԿԱՆԴԱԿ, գ. **Ձվով պատրաստված կարկանդակ:** Բայց Բեաթրիսը հանկարծ մտածեց, որ կուզեր **ձվակարկանդակ** ուտել *(ՍՍ, էջ 403):*

ՁՎԱԿՃԵՊԱԳՈՒՅՆ, ած. **Ձվի կճեպի գույն ունեցող**: Տե՛ս ՀՈՐՁԱՆՔԱՆՄԱՆ-ի օրինակը**:**

Ղ

ՂՈՂԱՆՁԱՀԱՐ, ած. **Ղողանջաձայն, ղողանջուն**: **Ղողանջահար** զանգերն ավետում են մայիսի քսաներկուսի առավոտը *(ՌԿ, էջ 157):*

ՂՐՂԶԱՀԱՅ, գ. **Ղրղզստանում ապրող՝ ապրած հայ**: Ղրղզստանի կառավարությունն ըստ արժանվույն է գնահատել ամենահայտնի **ղրղզահայերի՝** քույր և եղբայր Զարիֆյանների գործունեությունը …. *(Ազգ, 27.02.2017):*

Ճ

ՃԱԿՆԴԵՂԱՎԱՃԱՌ, գ. **Ճակնդեղ վաճառող:** Վերջին պահին լողլող **ճակնդեղավաճառը** կաթվածահար ոտքի ելավ, ուժգին հարվածեց սովալլուկին *(ՌԿ, էջ 239):*

ՃԱՀՃԱՀՈՂ, գ. **Ճահճացած՝ ճահճի վերածված հող, ճահճաշատ, ճահճապատ հող**: …. Քսանհինգ տուն մտնում են **ճահճահողերի** մեջ, եղեգներից քողտիկներ շինում …. *(ՍԽ, էջ 153):*

ՃԱՀՃԱՑԵԽ, գ. **Ճահճի ցեխ**: Ոտքերը թաց էին **ճահճացեխից** *(Հեմ., էջ 30):*

ՃԱՂԱԼԱՐ, գ. **Ճաղերից հյուսված լար:** Նա նստեց **ճաղալարի վրա,** մինչև Ձանը փորձում էր տաքսի կանգնեցնել *(ՍԼ, էջ 178):*

ՃԱՄՓԱՀԱԼԱԾ,ած. **Շատ ճանապարհ անցած:** Հայաստանի խորքերից եկած լուրը, որ տեղ հասցրին **ճամփահալած** սուրհանդակները, շանթեց նրան *(ՌԿ, էջ 227):*

ՃԱՄՓՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին ճամփորդ**: Գիշերվա **ճամփորդուհին** այս մեկը չէ՞, որ տեսնում եք դիմացից …. *(Արտ. գրակ., 4, 2016, էջ 18):*

ՃԱՆԱՊԱՐՀԱԴԱՐՁ, գ. **Ճանապարհի ոլորան**: Հանկարծ **ճանապարհադարձին** խավարի միջից մի մեքենա երևաց …. *(Օտ. հայ գր., էջ 324):*

ՃԱՆՃԱՑՆԵԼ, նբ. (փխբ.): **Ճանճ դարձնել՝ նվաստացնել, ստորացնել**: Չնայած նա երկրի համար մեկ կաշառակերն էր, բայց նրան լճացրեց, **ճանճացրեց** …. ոչ թե կաշառքը, այլ քծնանքը *(Մարտ., էջ 227):*

ՃԱՇԱՆՄՈՒՇ, գ. **Ճաշի նմուշ**: …. Որտեղ պետք է կատարենք **ճաշանմուշների** լաբորատոր ստուգում *(Մարտ., էջ 314):*

ՃԱՇԱՎԵՐՋ, գ. 1. **Ճաշի՝ ճաշելու գործընթացի վերջը**: 2. ած. **Ճաշը ավարտելուց հետո ասվող;** …. Եղբայրս **ճաշավերջի** աղոթք ասաց *(Հյուգո, էջ 89):*

ՃԱՌԱՄԲԻՈՆ, գ. **Ճառելու ամբիոնը:** -Ինչո՞ւ **ճառամբիոնը** զարդարված չէ,- նախատինքով նայեց պարոն Խատիայանը *(ՌԿ, էջ 256):*

ՃԱՐՄԱՆԴԱՇՂԹԱ, գ. **Շղթայաձև ճարմանդ:** Կրոպոտկինը խմանքով բարձրացրեց **ճարմանդաշղթան** *(ՌՍՊ, հ. 2, էջ 382):*

ՃԱՐՊԱՊՈՒԽՏ, գ. **Մնամթերք: Ճարպապուխտ** տնական *(Երևան City սուպերմարկետների ցանցի Promo-ից, 16.11.2016):*

ՃԵՂՔԱՌԱՏ, ած. **Անցքերով՝ ճեղքերով շատ**: Օլգա Վյաչեսլավովնան **ճեղքառատ** տախտակների վրայով սլանում էր գլխապտույտ բարձրության վրա *(ՌՍՊ, հ. 1, էջ 256):*

ՃԵՄԵԼԱՎԱՅՐ, գ. **Ճեմավայր:** …. Այգիների երկար **ճեմելավայրի** պատվարին հենված՝ …. թաղվել էր ,,,, մտախոհության մեջ *(Բ5, էջ 689):*

ՃԵՆՃԱԲԻԾ, գ. **Կեղտաբիծ: Ճենճաբիծն** ասես ցատկոտում էր նրա մաշկին …. *(ԱԱ, ԸԵ, էջ 56):*

ՃԵՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Արագագրություն, սղագրություն:** ….Համարձակվում եմ ներկայացնել սոնատները…. լսելու ընթացքում կատարած որոշ **ճեպագրություններս**…. *(ԴԵ, էջ 75):*

ՃԵՐՄԱԿԱԲԱՃԿՈՆ, ած. **Ճերմակ բաճկոնով**:….Լողում էին միայն վերնաշապիկ հագած թիավարներով ու **ճերմակաբաճկոն** աղջնակներով բեռնավորված նավակները *(Հ, էջ 67):*

ՃԵՐՄԱԿԱԶՕԾ, ած. **Սպիտակ:** Նրան պարծանքով՝ մոտիկ կանգնել է Էրզրումա Ջավեն Առաջնորդը՝**ճերմակազօծ** զգեստով *(ՌԿ, էջ 141):*

ՃԵՐՄԱԿԱՇԱԼՎԱՐ, ած. **Ճերմակ տաբատով:** ….Առաջին սիրուն նրան արժանացրել էր …. **ճերմակաշալվար** նույն այն գեներալը, որի դիմանկարը կախված էր աշխատասենյակում *(ՌՍՊ, հ. 1, էջ 91):*

ՃԻԼՈՊԱԳՈՒՅՆ, ած. **Ճիլոպի գույն ունեցող: Ճիլոպագույն** չոր մազերը տնկված էին գանգին…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 104):*

ՃԻԼՈՊԱԿԵՐՊ, ած. **Ծառի կամ թփի տերևաթելերի խրձի՝ ճիլոպի նման:** Վաղ արթնանալով, Էլզան թեթևակի զարմացավ. վուշե **ճիլոպակերպ** մորուքի փոխարեն այտը խտղտացնում էին ճերմակավոր չոր բեղեր *(ՌՍՊ, հ. 1, էջ 35):*

ՃԻՄԵ, ած. **Ճիմապատ, ճիմով ծածկված**: Մայրամուտին վերջապես տեսավ ձկնորսարանի **ճիմե** կտուրը *(Անդր., էջ 341):*

ՃԿՆԱՊՏՈՒՅՏ, ած. **Ճկուն պտտվող:** Տես ԳՐԱԽԱՋ-ի օրինակը:

ՃՈՃԱՁԻ, գ. Այստեղ՝ **մանկան խաղալիքի անվանում**: Շշուկը գալիս էր հանդարտ օրորվող **ճոճաձիու** զսպանակներից …. *(Ապրդիկ, 1, էջ 30):*

ՃՏՔԱԾԱԼ,ած. **Կոշիկի ճտքերը ծալած: Ճտքածալ** սապոգներով երիտասարդը Վասյայի համար գյուտ եղավ *(ՌՍՊ, հ. 2, էջ 92):*

Մ

ՄԱԶԱԹՆՁՈՒԿ, գ. **Մազերի թնչուկ**: Ետևի թաթով քորում էր իր թավ **մազաթնչուկները** *(Պրուս, էջ 11):*

ՄԱՁԱԿԱՊ, գ. **Մազերի կապ՝ փունջ, մազափունջ: ….** Նրա սև վարսերը հանկարծ բաժանվեցին երկու լայն **մազակապերի** …. *(Բ5, էջ 619):*

ՄԱԿԱՀՅՈՒՍ, ած. **Վրան հյուսվածք կրող**: …. Դրված էին դույլի մեջ աճեցրած մայրի, շաքարաման, գդալ, բաժակ, վիսկիի մի մեծ **մակահյուս** շիշ …. *(Ապդիկ, 2-3, 1990, էջ 129):*

ՄԱԿԱՆՎԱՆԱԿԻՑ, գ. **Նույն մականունն ունեցող**: Այսպիսով, ես ու բանաստեղծական տրտում շունչը **մականվանակիցներ** էինք *(ՌՍՊ, հ. 2, էջ 517):*

ՄԱԿԴԻՐԱՀԵՂՁ, ած. (դիպվ.): **Մակդիրի առատությամբ հեղձող՝ ճնշող: Մակդիրահեղձ** եսասիրության դժգունած այսպես կոչված ստվերը ամուր կառչած է մնում մեր յուրաքանչյուր գործողությանը, քանի դեռ գոյություն չունեն ստորոգյալներ առանց ենթակայի *(Անդին, թ. 2, 2017):*

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԽՈՐ, ած. **Մակերևույթից խորը:** Քաղաքականությունը դառնում է անարհեստավարժ առտնին զբաղմունք, երբ ….մեծահարուստ համբակներն անգամ մտահասու են դառնում նրա **մակերևութախոր** հոգեզեղումին… *(Անդին, թ. 2, 2017):*

ՄԱԿՐՈԵՍ, գ. **Անհատականության՝ սուբյեկտի վերանձնային ընդհանրական դրսևորում**: Այսպես ապրելով ու գործելով մենք կգտնվենք տիեզերական առաջընթացի բնականոն ընթացքում, կգնանք մեր **մակրոեսերը** բարեշրջելու, նոր որակական, երազելի, տիեզերական **մակրոեսը** աստվածային կատարելության հասցնելու ճանապարհով *(ԳԹ, 10.03.2017):*

ՄԱՄԽԱԳՈՒՅՆ, ած. **Մամուխի գույն ունեցող:** …. Ժրաջան տանտիկինը՝ շարժման մեջ, **մամխագույն** աչքերով, քացախաթթվի պնակը ձեռքին …. *(Ապդիկ, 1, էջ 42):*

ՄԱՄՌԱԳՈՒՅՆ, ած. **Մամուռի գույնի:** Խախաբո գյուղն է **մամռագույն** փռվել // Կիրճին, անտառին, բարձունքներին վեր …. *(ԳԹ, 17.02.2017):*

ՄԱՅԹԱՍՅՈՒՆ, գ. **Մայթին զուգահեռ այուն:** Նա գրքերը դրեց **մայթասյունին,** …. շապիկի եզրերը վերարկուի հետ պինդ ամրացրեց անգլիական սպիտակ քորոցով *(ՌՄՊ, հ. 1, էջ 51):*

ՄԱՆԿԱՍՈՒԳ, ած. **Մանկան նման սգացող**: Տես ՀԱՆԴԳՆԱԹԵՎ-ի օրինակը:

ՄԱՆԿԱՎԱՐԻ, մկբ. **Մանուկի՝ երեխայի նման:** ….**Մանկավարի** տնքում էր նա, ոտքերը հատակին խփելով…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 277):*

ՄԱՆՐԱԲԵԿՈՐ, գ. **Մանր բեկոր:** Նա հրաժարվեց **մանրաբեկորները** իրար կցմցելու մտքից *(Հ, էջ 43):*

ՄԱՆՐԱԽԱՆՈՒԹ, գ. 1. **Մանր իրերի վաճառքի խանութ**: …. Մի ծեր կին դուրս է գալիս «Ռաբաշ» մանրախանութից *(Սարտր, էջ 46):* 2. **Փոքր խանութ, կրպակ**:

ՄԱՆՐԱԿՆՃԻՌ, ած. **Մանր կնճիռներով**: …. **Մանրակնճիռ** մի դժգոհություն էր դրոշմվել այդ դեմքի վրա …. *(Գոլս., էջ 61):*

ՄԱՆՐԱՀԱՐՎԱԾ, գ. **Մանր՝ կարճ՝ թույլ հարված**: Օկտավային **մանրահարվածների** մեջ են սեպվում տագնապալի պատկերավորման և արտահայտչական հնարները *(Մարտ., էջ 291):*

ՄԱՆՐԱՄԱՐՄԻՆ, ած. **Փոքրամարմին: Մանրամարմին** ու ժրաջան Սակեյարին նշանավոր իր մարտկոցը քողարկել է ծիրանուտների մեջ, սպասում է *(ՌԿ, էջ 163):*

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒՀԻ, գ. **Կին մանրանկարիչ:** …. **Մանրանկարչուհի** Սուսաննայի սեղանին մի խոշոր մատյան էր դրված *(ՄՂ, էջ 41):*

ՄԱՌԱՆԱՏԻՊ, ած. **Մառանի նման, մառանի տիպի:** Դա հարավային ծովերի **մառանատիպ** շինություն էր, քարանձավի նման կիսախավար, այցելուներով լեփ-լեցուն *(Օտ. հայ գր., էջ 324):*

ՄԱՏՆԱՉԱՓԵ, ած. **Մատնաչափի մեծություն՝ երկարություն ունեցող**: …. Ինչպես է …. կում-կում խմում **մատնաչափե** մանուշակագույն գավաթի …. պարունակությունը *(Կորտ., էջ 34):*

ՄԱՐԳԱՐՏԱԳՈՐԾ, ած. **Մարգարտի գույնի գորշ**: …. Կանգնած էր …. ձեռքին՝ **մարգարտագորշ** տաբատին սեղմած, բռնած պահում էր …. ձեռնոցները *(Սարգր, էջ 130):*

ՄԱՐԴԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Մարդաճանաչողություն, մարդու էության ճանաչումը, իմացությունը:** Մտերիմներ էինք, կյանքի, մարդաճանաչության ու գրականության շատ հարցերում՝ համախոհներ *(ԳԹ, 02.03.2017):*

ՄԱՐԿԱՎՃԱՐ, գ. **Մարկով կատարվող վճար:** Այսքան **մարկավճարը** բավական է՝ձեզանից շնորհակալ բաժանվելու համար *(ՌԿ, էջ 415):*

ՄԱՐՄՆԱԹԱՓՈՒՐ, ած. (բնստ.): **Անմարմին, աննյութական:** …. Որի քնքշանքն համբառնում է // **Մարմնաթափուր** հրեշի պես …. *(Ասպղիկ, 1, էջ 26):*

ՄԱՐՄՆԱՄԵՐԺՈՒՄ, գ. **Մարմնականը մերժելը**: Մարմնի մերժման այս դաժան պատկերավորությունը, եթե համեմատելու լինենք …. Գրիգոր Լուսավորչի կտտանքի – **մարմնամերժման** հետ …. *(Սաֆ., էջ 65):*

ՄԱՐՏԱՆՈՒՆ, գ. **Մարտական մականուն:** Ինչո՞ւ ազատամարտն սկսվելուն պես **մարտանունը** Չաուշ կնքեցին *(Ջան., էջ 14):*

ՄԱՐՏԱՐՇԱՎ, գ. **Մարտական արշավ**: **Մարտարշավի** մասնակիցներին իրավունք չէր տրվում շենքել գետնին պառկած կամ նստած ընկերոջ ոտքերի …. վրայով *(Ֆր., էջ 254):*

ՄԱՐՏԱՔԱՂԱՂ, գ. **Կռվող աքաղաղ**:….Եվ որպեսզի հանուն արդարության հաղթի միայն ու միայն անարգվածը, ցեղապետը անարգոդի **մարտաքաղաղի** դեմ հանել է տալիս իր **մարտաքաղաղը** *(ՀՄ, էջ 14):*

ՄԱՐՏԸՆԿԵՐ, գ. **Մարտական ընկեր, ռազմընկեր:** Մովսես Գորգիսյանը **մարտընկերոջ** հետ Ծիծեռնակաբերդ …. վերադարձավ *(Ջան., էջ 10):*

ՄԱՔՐԱԹԵՎԻԿ, ած. (բնստ.): **Մաքուր թևեր ունեցող:** Քարի **մաքրաթևիկ** …. *(Անդին, թ. 7, 2016):*

ՄԱՔՐԱՎՈՒՆ, ած. **Փոքր-ինչ՝ թեթևակիորեն մաքուր**: …. Դեռ կարելի է վերծանել սպիտակ տառերով գրված **մաքրավուն** բառը *(Սարգր, էջ 47):*

ՄԳԱՀԵՐ, ած. **Մուգ մազերով**: …. Միակ որդին …. **մգահեր,** …. կանգնել էր սրճագույն հագնված մի կնոջ մոտ *(Գոլս., էջ 16):*

ՄԳԱՎԱՐՍ, գ. **Մուգ մազեր ունեցող:** Սիրունիկ էր, **մգավարս,** կենդանի ու խելացի աչքերով *(ՌՄՊ, հ. 2, էջ 524):*

ՄԵԴԱԼԱԳԵՐԻ, ած. (դիպվ.): **Մոլի մեդալատենչ**: …. Վայ համար առաջին **մեդալագերի** պաշտոնյա *(Մարտ., էջ 471):*

ՄԵԴԻԱԱՇԽԱՐՀ, գ. **Լրատվամիջոցների ամբողջությունը, լրատվաշխարհ:** Եթերում էր «**Մեդիաաշխարհ**» հաղորդումը *(Ռադիո, 11.01.2017):*

ՄԵԴԻԱԳՈՐԾԸՆԹԱՑ, գ. **Լրատվաշխարհին հատուկ գործընթաց: Մեդիագործընթացները** շատ բարդ են *(Ռադիո, «Մեդիաաշխարհ» հաղորդում,18.01.2017):*

ՄԵԴԻԱՀԱՐԹԱԿ, գ. **Լրատվության տրամադրմանը և տարածմանը ծառայող մարմին՝ հաստատություն՝ կենտրոն:** ՀՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը 2017թ. ընթացքում տարբեր, այդ թվում՝ միջազգային **մեդիահարթակներում** կանցկացնի միջոցառումներ …. *(ՀՀ, 21.01.2017):*

ՄԵԼԻՔԱՆԻՍՏ, գ. **Որտեղ նստում է մելիքը**: Նշանակում է **մելիքանիստ** է եղել *(ՍԽ, էջ 33):*

ՄԵԾԱԳՐՄՈՒՆՉ, ած. **Մեծ գրմունչ՝ կանաչ ունեցող**: …. Պճնազարդ կուրծքը **մեծագրմունչ** աղավնու նման դուրս ցցած մոտեցավ իր սիգապանծ քայլերով *(Գոլս., էջ 26):*

ՄԵԾԱԼԱՆՋ, ած.**Թիկնեղ, ամրակազմ:** Թովայ Հակոբը **մեծալանջ** և մոլեգին մի համարձակ, ճարճատեց առավել անզուսպ եղանակով *(ՌԿ, էջ 215):*

ՄԵԿԴԱՐՅԱ, ած. 1. **Մեկ դար տևող՝ շարունակվող: 2. Մեկ դարի վերաբերող, մեկ դար ընդգրկող**: Սիրո, անձնվիրության, քնքշության

համարյա **մեկդարյա** բարձունքում …. այստեղ իմ դիմաց մեծ մայրիկս է …. *(Վեռնոյ, էջ 4):*

ՄԵՂԱՎՈՐՈՒՀԻ, գ. **Մեղավոր կին:** Այս առավոտ ձեր գեղեցիկ **մեղավորուհուն** տեսնելով …. *(Բ5, էջ 483):*

ՄԵՂԵԴԻԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Մեղեդի ստեղծելը, մեղեդիակերտում: Մեղեդիաստեղծման** առումով սրանց հակապատկերն է, օրինակ, Ռախմանինովի դաշնամուրային 3-րդ կոնցերտի գլխավոր թեման…. *(Դե, էջ 156):*

ՄԵՂԵՍԻԿԵ**,** ած. **Մեղեսիկից պատրաստված**: Գրիմարդը ընտրեց **մեղեսիկե** մի ապարանջան…. *(Օպ. հայ գր., էջ 230):*

ՄԵՂՍԱԿԱԶՄ, գ. **Մեղքերի փոխադարձ դասավորություն:** Ճիշտ է, սա չի տեղավորվում իմանալ-չհայտնել **մեղսակազմի** մեջ…. *(Անդին, թ. 2, 2017):*

ՄԵՂՎԱՀՈՏ, գ. **Մեղուների հոտ, բույր:** Օդում **մեղվահոտ** կար *(ՍՀ, էջ 10):*

ՄԵՂՐԱԲԱԺԱԿ, գ. **Մեղրով լեցուն բաժակ:** Մեղր սիրող ամերիկացիները այլ կերպ վարվելու դեպքում՝ անգլո- ֆրանկ կամ այլտեղացի կնճիթավորները պիտի շտապեին հայոց **մեղրաբաժակի** վրա *(ՌԿ, էջ 242):*

ՄԵՅՆՍՏՐԻՄԱԽԱՌՆԱՇՓՈԹ, գ. (դիպվ.)՝ **Հիմնական ուղղություն որոշակի ժամանակի մեջ**: **Մեյնստրիմախառնաշփոթի** մեջ առանձնանում են մենստրիմայուներ *(Իր., 10.02.2017):*

ՄԵՆԱՊԱՅՔԱՐԱՅԻՆ, ած. **Մենապայքար ընդգրկող՝ պարունակող՝ ներկայացնող:** ….Պեղումների միջոցով հայտնաբերված զարդապատկերներն անվերապահորեն ապացուցում են, որ **մենապայքարային** մարզաձևերը …. եղել են և՛ գոյատևման միջոց, և՛ արվեստին հավասար սիրված զբաղմունք *(Անդին, թ. 2, 2016):*

ՄԵՆԱՓԱԿՎԵԼ, բ. **Միայնակ փակվել:** Նա թողեց, որ **մենափակվածը** մնա երիտասարդ աղջկա մոտ …. *(Բ5, էջ 405):*

ՄԵՋՔԱԲԵՐԴ ԼԻՆԵԼ, բ. **Բերդի նման մեջքին լինել:** Նրա հետ ուրախացան բեմահարթակի ընկերները, ովքեր ծեծվելու պայմանով՝ **մեջքաբերդ եղան**, փրկեցին գերմանացի բարեկամ Վեգների կյանքը *(ՌԿ, էջ 421):*

ՄԵՌԵԼԱՄԱՀԻՃ, գ. **Հանգուցյալի անկողին**: …. Երկու աբբանեբի ու երեցի հետ մնացինք **մեռելամահճի** մոտ *(Բ7, էջ 318):*

ՄԵՏԱՔՍԱԳՈՒԼՊԱ, գ. **Մետաքսե գուլպա:** ….Նրբագույն **մետաքսագուլպաներ** հագած ձիգ սրունքների հերթափոխը մի պահ իրեն շլացրել ու երջանկություն էր պատճառել *(Հ, էջ 60):*

ՄԵՏԱՔՍԱՓԱՌ**,** ած. (փխբ.): **Շքեղ**: …. Հավանականորեն եկել էր ժամանակը արթնանալու, դուրս գալու Սաբահատինի կյանքի **մետաքսափառ** սարդոստայնից, որի մեջ նա ինքն էր իրեն խճճել *(Օրդ. հայ գր., էջ 410):*

ՄԵՐՁԱՄԱՏՈՒՅՑ, ած. **Մոտիկ տարածքում գտնվող:** Քլայնն էլ իր հերթին …. ժպտաց նրան՝ երջանկության այդ **մերձամատույց** փայլփլացող արեգակին *(Հ, էջ 76):*

ՄԵՐՁԱՐԱՔՍՅԱՆ**,** ած. **Արաքս գետի մոտ գտնվող**: **Մերձարաքսյան** նեղ ավազուտը ձագարաձև է՝ եզրերը անմատչելի, լերկ քարահերձերի ուղղահայաց կտրվածքով *(ՍԽ, էջ 441):*

ՄԵՔԵՆԱՅՈՒՂ, գ. **Մեքենայի հատուկ յուղ:** Տես ՀԱՁՈՑԱԿԵՐՊ-ի օրինակը:

ՄԻԱԲՆՈՒՅԹ, ած**. Բնույթով իրար նման:** Անթիվ-անհամար օրերն ինչպես կարող են միօրինակ, միապաղաղ, միանման, **միաբնույթ** լինել *(ԼՄ1, էջ 15):*

ՄԻԱՃԱԿԱՏ, մկբ. **Մեկ ճակատով:** Նրան հուսադրեցին ոչ միայն քայլ առ քայլ առաջանալ, այլև **միաճակատ** գրոհել, մինչև ախոյանի առաջադիրքերը *(ՌԿ, էջ 165):*

ՄԻԱՖԻԳՈՒՐ, ած. **Մեկ քանդակ, պատկեր ունեցող:** Երվանդ Գոջաբաշյանի մոնումենտալ- դեկորատիվ կերտվածքներից է նաև «Հայաստանի ծնունդը» հարթաքանդակային **միաֆիգուր** կոմպոզիցիան (1977)…. *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՄԻԿՐՈԵՍ, գ. Այստեղ՝ **տիեզերական՝ ընդհանուր անհատականության մասնավոր՝ եզակի դրսևորում**: Մարդկային եսը ինչքան էլ փորձի իրեն առանձնացնել, մեկուսացնել աշխարհից, մնում է տիեզերական Մեծ Ես-ի անբաժանելի միկրոմասը, ավելի ճիշտ՝ **Միկրոեսը** *(ԳԹ, 10.03.2017):*

ՄԻԿՐՈՄԱՍ, գ. **Փոքր մաս, մասնիկ**: Տես ՄԻԿՐՈԵՍ-ի օրինակը:

ՄԻԿՐՈՎՆԱՍՎԱԾՔ, գ. **Փոքր վնասվածք:** Հիվանդության առաջացմանը նպաստում են մաշկի **միկրովնասվածքները** *(TV ալիք, 24.04.2017):*

ՄԻՋԷԹՆԻԿԱԿԱՆ, ած. **Ազգերի՝ էթնոսների միջև առկա**: **Միջէթնիկական** ներդաշնակ հարաբերությունների և համերաշխ համագոյակցության տեսակետից ամենաընդունելին էթնոկենտրոնության միջին արժեքներն են …. *(ՀՀ, 14.03.2017):*

ՄԻՋԼԵԶՎԱԿԱՆ, ած. **Լեզուների միջև ընկած, միջլեզվային**: Տաղանդի ուժն ի զորու է փշրելու **միջլեզվական** ապակին *(Հեմ., էջ 5):*

ՄԻՋՆԱԲԱԿ, գ. **Տների միջև գտնվող բակ:** Սոլեր փողոցի մի **միջնաբակում** տեսա այն նույն **սալաքարերը**…. *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՄԻՋՆԱԴԱՐԱԿ, գ. **Իրար հաջորդող դարակներից միջինը**: [Պահարանի]…. յուրաքանչյուր **միջնադարակը** խճողված էր թղթի կապոցներով *(Բ5, էջ 7):*

ՄԻՋՆԱԿԱՊ, գ. Այստեղ՝ **խողովակի ամրացնող կապերը:** Կես բարձրության վրա ջրհորդանի սառը երկաթը ցողապատ էր, և ես ջղաձգորեն ցած սահեցի՝ հազիվ բռնելով **միջնակապերից** *(ՌՍՊ, հ. 1, էջ 79):*

ՄԻՋՆԱՇԱՐ, գ. **Միջին շարք:** Նրան իսկույն չնկատեցին, բայց հենց նկատեցին, նորից սկսեցին ծափահարել ու խոնվել **միջնաշարում,** որով համարյա վազում էր նա *(ՌՍՊ, հ. 1, էջ 496):*

ՄԻՋՆԱՏԱՐԱԾՔ, գ. Այստեղ՝ **միջակայք:** Ծանր աշխատանքային օրվա և դրան հաջորդող կարմիր գինու առատությամբ ծավալվող երեկոյի **միջնատարածքում** Քլինգզորի պարգևած սերը քեզ չի բավարարի *(Հ, էջ 137):*

ՄԻՋՆԱՐԿ, գ. Աշխարհազորայինների նորակազմ վաշտերը սուրացին հանդիպակաց բլրակների **միջնարկներից** *(ՌԿ, էջ 187):*

ՄԻՋՆՈՐՄԱՀԱՏՎԱԾ, գ. **Միջնորմով առանձնացրած մաս՝ հատված:** Դիմակավոր մարդիկ իջնում են թաց **միջնորմահատվածները**…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 515):*

ՄԻՖԱԿԱՆԱՑՆԵԼ, բ. **Առասպելական դարձնել:** Արևելքն ու Արևմուտքը նույնպես մրցում են նավելով. նրանց աշխարհայացքների տարբերությունը կարելի է տեսնել նրանց **միֆականացրած** նավերում *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՄԿԱՆԱԿԾԿՈՒՄ, գ. **Մկանների կծկում, մկանակծկանք**: …. Դեմքի **մկանակծկում** ուներ *(Վեռնոյ, էջ 22):*

ՄԿՐԱՏԱԿԻՐ, ած., գ. **Մկրատ կրող՝ տանող**: …. Նրա անելիքը մկրատը հետը ման տալն էր: …. Քծնունին Զարզանդ Զարզանդյանի **մկրատակիրն** էր *(Մարտ., էջ 208):*

ՄՂՁԱՎԱՆՁԱԾԻՆ, ած. **Մղձավանջ ծնող՝ առաջացնող:** Սրտի տրոփյունով նա զգաց, թե ինչպես են գլուխ բարձրացնում իր թշնամիները՝ անքնությունը, ճնշվածության զգացումն ու **մղջավանջածին** խեղդուկը *(Հ, էջ 91):*

ՄՇԱԿՈՒԹԱԽԵՂՎԱԾ, ած. **Հակամշակութային**: …. Չափից ավելի եմ անդրադարձել մայրաքաղաքի արձանների և քանդակների տեղադրման **մշակութախեղված** խնդիրներին *(Իր., 07.10.2016):*

ՄՇՏԱԿՈՐՈՒՅՍ, ած. **Առմիշտ կորսվող**: Սա գրելու **մշտակորույս** խաղն է *(Արտ. գրակ., 4, 2016, էջ 57):*

ՄՇՏԱՆԵՐԿԱ, ած. **Մշտապես ներկա**: Այն մեկը չէ որ կարծում եք // հավերժորեն բացակա // **մշտաներկա** …. *(Արտ. գրակ., 4, 2016, էջ 18):*

ՄՇՏԱՍՏԵՂԾ, ած. **Մշտապես ստեղծող՝ արարող՝ ստեղծագործող:** Հայոց **մշտաստեղծ** բեղուն արգանդն իր ողջ կենսագրության ընթացքում երկնել է երևելի անհատականությունների համաստեղություն …. *(Իր., 14.03.2017):*

ՄՇՏԱՐԴԻԱԿԱՆ, ած. **Միշտ արդիական, բոլոր ժամանակներում գործող**: Խորենացու կողմից իրավիճակի գնահատականը պարզ է և **մշտարդիական** …. *(Սաֆ., էջ 47):*

ՄՈԽՐԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույնին տվող դարչնագույն**: Խիտ հոնքերի տակից նայում էին **մոխրադարչնագույն** աչքերը *(ՋԽ, էջ 365):*

ՄՈԽՐԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Կանաչին տվող մոխրագույն**: **Մոխրականաչավուն** ձեռնոցներ *(Գոլս., էջ 21):*

ՄՈԾԱԿԱՑԱՆՑ, գ. **Մոծակներից պաշտպանող ցանց**: Գիշերային օդը փոքր-ինչ խոնավ է, և նուրբ **մոծակացանցը** չի խանգարում, որ Նվարդը մահճակալի վրայից տեսնի երկնքի աստղերը *(Բոհջ., էջ 152):*

ՄՈՄԱՇԱՐՔ, գ. **Մոմերի շարք:** Սողոմոնը համրացել է այրվող **մոմաշարքի** ցոլանքի տակ *(ՌԿ, էջ 437):*

ՄՈՄԼԱԹԱԾԱԾԿ, ած. **Մոմլաթով ծածկված՝ պատված, մոմլաթապատ**: **Մոմլաթածածկ** սեղան *(Հեմ., էջ 31):*

ՄՈՐԹԵԲՈԼՈՐ, ած. **Մորթե երիզ ունեցող: Մորթեբոլոր** երկարաճիտք կոշիկների կրունկները կտկտացնելով՝ նա միջանցքից դուրս նայեց *(ՌՍՊ, հ. 2, էջ 525):*

ՄՈՐԹԵԾԱԾԿ, ած. **Մորթիով ծածկված:** Քանի-քանի անգամ եմ հիացմունքով նայել, թե…. ինչպես են նրան բերում …. **մորթեծածկ** բարձրակող սահնակով…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 270):*

ՄՈՐԹՎԱԾՔ, գ. **Մորթված անասուն**: …. Մոլեգնորեն հարձակվում է նոր մորթած խոզի վրա …. : Նրան ուժով հեռացնում են **մորթվածքից** *(Ֆր., էջ 114):*

ՄՌԱՅԼԱՀՈՆ, ած. **Մռայլադեմ, մռայլատես:** Հայոց աշխարհի որ ծեգերից էին նրանք՝ տեղահան ու գժված, **մռայլահոն** ու դիպած մեջք մեջքի *(ՌԿ, էջ 241):*

ՄՌԱՅԼԱՁԱՅՆ, մկբ.**Մռայլ ձայնով:** Աստիճանաբար սողոսկող ցավից նա ամուր բռնեց կողքից կախ ընկած հսկա թուրը, մտածեց **մռայլաձայն.** «Այո, այսօր զատկի տոն է» *(ՌԿ, էջ 105):*

ՄՈԱՅԼԱՆՔ, գ.**Մոայլություն: Մոայլանքի** սև բեռը սրտում, նրանք շարունակեցին ճանապարհը *(ՌԿ, էջ 241):*

ՄՏԱԾԵԼԱԿԱՐԳ, գ. **Մտածելակերպ:** ….Դա դպրոց է ու որևէ գրականություն բնորոշելու չափ խորունկ **մտածելակարգ** *(Գարուն, թ. 5, 1999):*

ՄՏԱՍՈՒԶՈՒՄ, գ. **Մտասուզվելը:** Մահկանացուի ծննդյան և մահվան տարեթվերն իրար միացնող գծիկը այս անսպասելի **մտասուզումների** հեղինակ Սերգեյ Հովհաննիսյանի պարագային ավելի քան իմաստավոր խորհուրդ ունի *(ՍՀ, էջ 112):*

ՄՐԱՉ**,** ած. **Սևաչյա**: …. Երբ հայացքը **մրաչ** սարն ի վեր է վազում …. *(Անդին, թ. 7, 2016):*

ՄՐԳԱԳՈՒՅՆ, ած. **Մրգի գույն ունեցող:** ….**Մրգագույն** մազերը նույնպես փարթամ էին *(ՌՍՊ, հ. 2, էջ 55):*

ՄՐԳԱՀՈՏ**,** գ. **Մրգի բույր, մրգաբուրմունք**: Արարատյան դաշտը շաքար և **մրգահոտ** է բուրում *(ՋԽ, էջ 472):*

ՄՐԳԱՂԱՑ**,** գ. **Միրգ աղացող մեքենա**: …. Ուղարկում էր …. ծղոտահար, մամլիչ, **մրգաղաց** …. և այլ տիպի մեքենաներ *(Հայրունի 1, էջ 490):*

ՄՐԳԱՄՆԴՈՒԿ**,** գ. **Արկղ՝ տարողություն մրգի համար**: Շուկա հասնելուն պես Խաթունն արագ վազում է վաճառասեղանների ու կրպակների և կիսադատարկ **մրգասնդուկների** ու սայլերի արանքում թափառող կանանց միջով *(Բոհջ., էջ 163):*

ՄՐԳԱՎԱՃԱՌՈՒՀԻ, գ. **Կին մրգավաճառ:** …. Ես շրջիկ **մրգավաճառուհի** եմ *(Բ5, էջ 375):*

ՄՐՋՆԱՍՊԱՆ, ած. **Մրջյուններին սպանելու համար ծառայող, մրջյուններին սպանող**: …. Հորեղբայրը …. բերեց **մրջնասպան** մեքենան *(Կորպ., էջ 81):*

ՄՐՐԿԱԴՈՂ, գ. (բնստ.): **Սաստիկ հուզում, դող:** Ծանրաձրար **մրրկադող** է իջնում վրաս *(ԲԱ, էջ 12):*

ՄՐՐԿԱՑՆՑՈՒՄ, գ. **Օդի մրրկային վիճակից առաջացող ցնցում, տուրբուլենտություն**: …. Ասես օդանավում էի, որ հենց նոր կես մղոն շարունակ **մրրկացնցումների** մեջ էր եղել *(Բոհջ., էջ 214):*

ՄՈՒՇՏԱԿԱՊԱՏ, ած. **Մուշտակով՝ կենդանիների մազակալած մորթով, պատված**: …. Ոտքերը **մուշտակապատ** հողաթափերի մեջ …. բաց արեց Մաքսի ննջասենյակի դուռը …. *(Բ7, էջ 531):*

ՄՈՒՏՔԱՆՈՒՆ, գ. **Համակարգչի կայքի լոգին**: …. Ցանկացած կիբեռսպառնալիք առաջացնում է կարևոր տեղեկատվության, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի և սոցիալական ցանցի հաշիվների **մուտքանունների** և գաղտնաբառերի, …. ընտանեկան ֆոտոպահոցի և այլ կարևոր տվյալների ու ֆինանսական միջոցների կորստի ռիսկ *(ՀՀ, 03.03.2017):*

ՄՈՒՏՔԱՐԿՂ, գ. **Մուտքարկղիս** էլեկտրոնային նամակների մեջ մի քանի անվնաս ու անկոչ ուղերձ կար …. *(Բոհջ., էջ 214):*

Յ

ՅՈԴԱՇՈՒՆՉ, ած. **Յոդի հոտ ունեցող:** ….Սենյակում մերձակա ծովի **յոդաշունչ** հոտը խեղած՝ տնեցիների համար գնված մրգերի բույրն էր իշխում…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 45):*

ՅՈՒՂԱՃՐԱԳ, գ. **Յուղով՝ յուղ վառելով աշխատող ճրագ**: …. Հազիվ լուսավորված էր **յուղաճրագով** *(Պրուս, էջ 184):*

ՅՈՒՐԱՁԵՎ, ած. **Յուրատեսակ, յուրակերպ:** Տե՛ս ԳՅՈՒՂԱԴԱՇՏ -ի օրինակը:

Ն

ՆԱԶԱՐԱՎԱՐԻ, մկը. **Քաջ Նազարի նման**: - Քարվան կտրելու, - **նազարավարի** ասաց Լևոն պապը *(Ռ., Հովս., էջ 5):*

ՆԱԽԱՏԱՐԵՐՔ, գ. **Նախնական, սկզբնական հիմունքները, հիմնական գիտելիքները**: …. Ուշահաս միտքը չէր ընկալում ուսման **նախատարերքը** *(Բ7, էջ 16):*

ՆԱԽՇԱԴՐՎԱԳ, ած. **Նախշերով դրվագված**: …. Դիտում էր … **նախշադրվագ** սափորը …. *(Գոլս., էջ 311):*

ՆԱՎԱԿԱՏԵՐ, գ. **Նավակի տեր:** ….Քանի՞ **նավակատիրոջ** ես ընչազուրկ դարձրել… *(ՌՄՊ, հ. 2, էջ 165):*

ՆԱՎԱՆՈՐՈԳԱՆՈՑ, գ. **Նավանորոգարան**: Երկար, որքան աչքդ կտրում էր, ձգվել էին սև պուտերով **նավանորոգանոցները** *(Վեռնոյ, էջ 13):*

ՆԱՎԹԱԲՈՒՐԳ, գ. **Նավթի բուրգ:** ....Բաքվին տիրանալու համար բոլորին առնետների նման պիտի **կործանեք նավթաբուրգերի մեջ** *(ՌԿ, էջ 212):*

ՆԱՎԹԱԽԱՆՈՒԹ, գ. **Խանութ, որտեղ նավթ են վաճառում, նավթի խանութ**: **Նավթախանութի** հոտը *(Ամդր., էջ 338):*

ՆԱՐԴԱՏԱԽՏԱԿ, գ. **Նարդախաղի տախտակ**: …. **Նարդատախտակին** նետեց զառերը *(Մարտ., էջ 85):*

ՆԵՂԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Նեղացած լինելը**: …. Ըմբոստ կռվի մեջ նկատելի է դառնում անմեղ **նեղացածության** երանգը *(Սաֆ., էջ 236):*

ՆԵՆԳԱԽԱՌՆ, ած. **Նենգոտ, նենգություն արտահայտող: Նենգախառն** ժպիտով փակում է աչքերն ու …. *(ԱԱ, ԸԵ, էջ 154):*

ՆԵՏԱԿԱՄԱՐ, ած. **Նետի նման կամար ունեցող:** Ցույց տալով **նետակամար** լուսամուտները …. Բարանովան ասում էր…. *(ՌՄՊ, հ. 1, էջ 352):*

ՆԵՐԱՆՁՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Ներանձնական դառնալը՝ դարձնելը՝ լինելը**: …. Նրան առանձնապես բնորոշ չեն **ներանձնականացումը,** տառապանքն ու երկվությունները …. *(Սաֆ., էջ 8):*

ՆԵՐԹԱՔՈՒՅՑ, ած.**Ներթաքուն, գաղտնի:** Բանաստեղծության տողերի տակ աշխատասիրության **ներթաքույց** խոհն է տիրապետում *(ԼՄ, էջ 265):*

ՆԵՐԺԱՅՌԱՅԻՆ, ած. **Ժայռերի ներսում գտնվող**: …. Գյուղի բնակարան-քարայրները …. մի համալիր են …. **ներժայռային** կապանցքերով *(ՍԽ, էջ 255):*

ՆԵՐԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ, ած. (փխբ.): **Հասարակությանը անհայտ, ծածուկ, ոչ հանրահայտ**: Ժողովածուն …. մեզ համար դարձավ ուշագրավ կարևոր աղբյուր …. **ներխոհանոցային** որոշ ուշագրավ զարգացումների …. պարզաբանման *(Հայրունի 1, էջ 30):*

ՆԵՐԾՎԱՏԵԼ, նբ. **Ներսից ծվատել՝ քայքայել**: Ներկայացվում են …. Գագիկ Բ վերջին արքայի շատ ավելի ողբերգական .... **ներծվատող** ժամանակները …. *(Սաֆ., էջ 130):*

ՆԵՐԿՈՒՀՈՒՄ, գ. **Ներքուստ՝ ինքնիրեն կոահում**: Բնորոշ մի **ներկոահումով** ինքը հասկացել էր, որ պետք է բաժանվի …. որդուց …. *(Գոլս., էջ 46):*

ՆԵՐՀԱԿԱԴԻՐ, ած. **Հակընդդեմ, հակառակ**: …. Հիմա նա …. հեռացնում է **ներհակադիր** ծայրաբևեռները …. *(Սաֆ., էջ 149):*

ՆԵՐՈՂԱՄՏԱԽԱՌՆ, ած. **Նաև ներողամտություն արտահայտող:** …. Միայն Համսունի սևեռվածությունը որսաց նրա դեմքին հազիվ նշմարելի **ներողամտախառն** գոհունակություն *(ԱԱ, ԸԵ, էջ 160):*

ՆԵՐՔՆԱՇՐՋԱՋԳԵՍՏ, գ. **Շրջազգեստի տակից հագնելու համար նախատեսված ներքնաշոր:** Ձեյնը չէր կարող դրանք հագնել իր սովորական բազմահատոր **ներքնաշրջազգեստների** հետ …. *(ՍՄ, էջ 422):*

ՆԵՐՔՆԱՎԱՐՏԻՔ, գ. **Ներքնահագուստ, վարտիք**: Մինչ այդ Գևորգին հաջողվել էր հորը նստեցնել և հանել գուլպաներն ու անդրավարտիքը, որը նա կրում էր վուշե **ներքնավարտիքի** վրայից *(Ապտղիկ, 1, էջ 108):*

ՆԻԳԵԼ, նբ. **Նիգով ամրացնել**: …. Ինչպես հարկն է տները փակեն, **նիգեն,** պատնեշեն և դռները պինդ փակեն *(Հյուգո, էջ 80):*

ՆԿԱՐԱՀՅՈՒՍ, ած. **Հյուսածո նկարներով**: Երևակայության ուժով Էլիզաբեթը տեսնում է շռայլ, **նկարահյուս** որմագորգերն (ճիշտ է՝

որմնագորգ) ու լաքապատ, գոհարեղենով բևեռազարդված առաստաղները …. *(Բոհջ., էջ 41):*

ՆԿԱՐԱՎԱՃԱՌ, գ. **Նկարներ վաճառող:** Մի անգամ գնացինք **նկարավաճառի** խանութ…. *(ՍՄ, էջ 86):*

ՆԿԱՐԱՏԱՌ, գ. **Նկարազարդված տառ**: Մատյանի առաջին էջում գեղեցիկ **նկարատառերով** գրված էր *(Մարտ., էջ 388):*

ՆԿՈՒՂԱՁԵՎ**,** ած. **Նկուղի ձև ունեցող**: Հուշարձանը **նկուղաձև** երեք մաս ունի …. *(ՍԽ, էջ 60):*

ՆՅՈՒԹԱՇԱՐ**,** գ. **Նյութերի՝ հոդվածների շարք**: …. Վահան Համազասպյանի, Գեղամ Քյուրումյանի և այլ հեղինակների **նյութաշարերում** ներկայացվում են ազգային տնտեսության կազմավորման և զարգացման բոլոր հիմնարար նախադրյալները *(Իր., 11.10.2016):*

ՆՅՈՒԹԱՇԽԱՐՀ**,** գ. **Նյութական աշխարհ**: Բայց նա, լավ կամ վատ, սևամորթ կամ սպիտակամորթ լինելով, **նյութաշխարհի** մարմնավորումն է և ոգեղենության թույլ կամ ուժեղ դրսևորումը …. *(ԳԹ, 10.03.2017):*

ՆՆՋԱՍՐԱՀԱՅԻՆ, ած. **Ննջասրահին վերաբերող:** Նիկոլայ եղբայրը գրում էր իր …. **ննջասրահային** առօրյայի մասին *(ՌՄՊ, հ. 1, էջ 225):*

ՆՇԱԿԱՐԳ**,** գ. **Կոդ**: …. Թարգմանությունը լեզվական **նշակարգի** (կոդի) պարզ փոխարինում չէ, այլ միաժամանակ տեքստի հարմարեցում, որպեսզի այն ընկալելի լինի այլ ժողովրդի մշակույթի տեսանկյունից *(Ապտեկ, 4, էջ 201):*

ՆՇԱՀՈՏ, գ. **Նուշի հոտ**: …. Աղջիկը քիչ էր մնում դուրս թռչեր իր շոգ, դառը **նշահոտ** …. արձակող անկողնուց *(Հունգ., էջ 145):*

ՆՇԱՆԱՀԻՇԱՏԱԿ, ած. **Նշանալի:** Հայոց անկախության **նշանահիշատակ** այս օրը մենք հեռագիր ստացանք Լոնդոնից *(ՌԿ, էջ 151):*

ՆՇԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Նշանված լինելը**: …. Մտքում անընդհատ շուռումուռ է տալիս այս **նշանվածության** խնդիրը …. *(Գոլս., էջ 274):*

ՆՇԽԱՐԱՆՄԱՆ, ած. **Նշխարի նման**: [Քահանան]…. **նշխարանման** հացեր էր թխում, որոնք պիտի առավոտյան բաժաներ հաղորդվողներին *(Վեռնոյ, էջ 83):*

ՆՈՏԱՇԱՐ, գ. **Նոտաների շար՝ մեղեդի:** Նա հասկացավ, որ իր ներսում ելևէջող **նոտաշարը** ինքնագլուխ փոխարկվել էր ձայնի…. *(Անդին, թ. 5, 2016):*

ՆՈՐԱԽՈՒՄԲ, գ. **Նոր խմբավորում:** Մոտիկ և հեռու ճեղքերից հայտնված **նորախմբերն** առավել բազմապատկում էին տխրալի երևույթը *(ՌԿ, էջ 136):*

ՆՈՐԱԿԱՐ, ած. **Նոր կարված:** Երկու մալայացի բոյ, հագներին սապոգներ և պղնձե կոճակներով **նորակար** պիջակներ, ներս եկան *(ՍՄ, էջ 324):*

ՆՈՐԱՔԱՅԼ, ած. **Նոր քայլել սկսած՝ սկսող**: …. **Նորաքայլ** մի երեխա՝ հազիվ երկու-երկուսուկես տարեկան, այս շաբաթ ժամանեց քարավանի հետ …. *(Բոհջ., էջ 197):*

ՆՈՐՈԳԱՐԱՆ, գ. **Նորոգելու վայր:** Ես տեսել եմ, թե …. ջուրն ինչպես է դատարկվում **նորոգարանից** *(ՌՍՊ, հ. 2, էջ 515):*

ՆՊԱՏԱԿԱՇԵՂ, ած. **Նպատակից շեղող**: …. Վարչապետի ելույթը …. հերքում է ակադեմիայի լինելիության վերաբերյալ նիհիլիստական **նպատակաշեղ** խծբծանքները *(Իր., 20.01.2017):*

ՆՍԵՄԱՓԱԿ, ած. **Նսեմորեն փակված**: Շագանակենիները իրենց լայնատերև ճյուղերը կախել, **նսեմափակ** թաքստոցներ էին ստեղծել …. *(Գոլս., էջ 343):*

ՆՍՏԱՏԱՇ, ած. **Նիստերով տաշված:** Լամպը, **նստատաշ** սրվակները, բացգույն շրջանակով քարտերը, նետված բարձը կենդանի էին թվում… *(ՌՍՊ, հ. 1, էջ 93):*

ՆՎԱԳԵԼԱՌՃ, գ. **Նվագելու ոճը**: Գրինդենկոն պնդում էր, որ իրենց **նվագելաոճը,** մաներան ճիշտ են, քանի որ համապատասխանում են բարոկկո դարաշրջանի տառին և ոգուն *(Իր., 03.02.2017):*

ՆՐԲԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Նրբազգացություն**: Կնոջ մարմնի ինչպիսի **նրբազգացողություն** *(Իր., 20.12.2016):*

ՆՐԲԱԹԱՎՇՅԱ, ած. **Նրբաթավշից կարված:** Հագին սև **նրբաթավշյա** զգեստ էր …. *(ԱԱ, ԸԵ, էջ 117):*

ՆՐԲԱՈՐԿՈՐ, ած. **Նրբահամ, նրբաճաշակ**: …. **Նրբաորկոր** մի նախաճաշ պատվիրեցի մոտեցող ֆելլահին …. *(ՎՓ, էջ 88):*

ՆՐԲԻԿ, ած. **Նուրբ, գողտրիկ**: Մեղմ, **նրբիկ** ժպիտ պարգևեց նրան *(Սուրյան 1, էջ 155):*

Շ

ՇԱՄԱՆԴԱՂԵ, ած. (բնստ.): **Մշուշե, երազային**: Ծավալվում է, ծփուն, **շամանդաղե** մի շուք …. *(ՎԴ, էջ 95):*

ՇԱՊԿԱԳՈՐԾ, գ. **Շապիկ կարող՝ պատրաստող արհեստավոր**: …. Կատարյալ մաքրությունը …. այսօր վերացել է նույնիսկ մեծ **շապկագործների** մոտ *(Վեռնոյ, էջ 135):*

ՇԱՐԱԿԱՆԱՀՈՒՆՉ, ած. **Շարականի հնչողությամբ:** Նվագախմբի ակորդային վիթխարի քայլերից հետո…. ազդարարում են երկնասլաց, **շարականահունչ** մի մեղեդի *(ԴԵ, էջ 233):*

ՇԱՐԺԱԹՈՌ, գ. **Հաշմանդամին տեղաշարժելու հնարավորություն տվող աթոռ**: Ֆիլմում երևում է **շարժաթոռին** գամված Միա Սլավենսկան …. *(Ազգ, 29.09.2017):*

ՇԵՂԱԾԱՅՐ, ած. **Շեղ ծայրերով:** Նրանց տունն էլ է երկհարկ, ընդարձակ պարտեզով, որը երիզված է **շեղածայր** կանաչ տախտակներով *(ԼՄ1, էջ 9):*

ՇԵՂԸՆԹԱՑ, ած. **Շեղ ընթացող, ուղիղ ճանապարհից շեղված**: …. **Շեղընթաց** անձը նման չէ մաճկալին …. *(Սաֆ., էջ 180):*

ՇԵՆԱՎԱՅՐ, գ. **Գյուղատեղ**: Կա Գավուրի տներ հին **շենավայր** *(ՍԽ, էջ 181):*

ՇԵՓՈՐԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Շեփորի հնչյունների նմանվող**: Սև կարապը թռիչքի ժամանակ հուսահատ **շեփորահնչյուն** երաժշտական ձայներ էր արձակում …. *(ԳԹ, 17.02.2017):*

ՇԻԹԱԿԵՐՊ, ած. մկբ. **Շիթի պես տարածվող:** ….Նիկիտան շտապ-շտապ հագնվում էր, հրապուրված լուսամուտի **շիթակերպ** լույսով *(ՌՍՊ, հ. 1, էջ 275):*

ՇԻԿԱԲԱՇ, ած. **Կարմրավուն բաշ ունեցող:** Հանկարծ մի մեծ ու սև շուն դուրս նետվեց տնից, նրա հետևից մի փոքրիկ, **շիկաբաշ** առյուծ հայտնվեց *(Հ, էջ 136):*

ՇԻՃՈՒԿԱԳՈՒՅՆ, գ. **Շիճուկի գույնի**: …. Գորշ **շիճուկագույն** ստվերներ ծնոտոսկրերի տակ …. *(Ասպղիկ, 1, էջ 40):*

ՇԻՐՄԱԼՈՒՅՍ, գ. Տես ԱՍՏՂԱԹԱՓՈՆ –ի օրինակը:

ՇՂԱՐՇԱՎՈՐՎԵԼ, կր.չբ. **Շղարշով ծածկվել, թաքցվել, քողարկվել**: …. Այս բեկումը դեռ պետք է **շղարշավորվի** նաև կրոնական տվայտանքներով …. *(Սաֆ., էջ 169):*

ՇՆԱՆՄԱՆ, ած. **Շան նման, ինչպես շունը**: …. Նայեց նրան՝ հակակրանքի մի տեսակ **շնանման** արտահայտությամբ …. *(Գոլս., էջ 155):*

ՇՆԱՇԱՏ, ած. **Որտեղ շատ շուն կա, շները շատ**: Լուսադեմին կրկին մտա մեր խուլ ու **շնաշատ** թաղը *(Գյուլ., էջ 257):*

ՇՆՉԱԲՈՒՅՐ, գ. **Շնչառության բույրը**: …. Փորձում է մտաբերել …. մանկահասակ դստեր **շնչաբույրը** *(Բոհջ., էջ 49):*

ՇՈՐԱՏԻԿՆԻԿ, գ. **Շորերից՝ կտորներից պատրաստված տիկնիկ**: Թաղարներից յուրաքանչյուրի վրա …. կանացի հագուստով **շորատիկնիկ** կամ Պրիապին նմանվող կաթնահունց մարդապատկեր էին դնում *(Ֆր., էջ 42):*

ՇՈՐՈՐԸՆԹԱՑ ԼԻՆԵԼ, բ. **Շորորալով ընթանալ:** Ձիու փայծաղը ղռղռում էր՝ ասես **շորորընթաց լինելով,** թեև փափուկ վարգով էր գնում *(ՌՍՊ, հ. 1, էջ 249):*

ՇՉԱՐՁԱԿ, ած. **Ուժգին ձայն արձակող:** ….Իր միջից այդ ընթացքում **շչարձակ** պարսով շպրտվում են կապտավուն ու փայլուն սկավառակներ *(ՌՍՊ, հ. 2, էջ 369):*

ՇՐԹՆԱԳԻԾ, գ. **Շրթունքների օղակող՝ եզերող գիծ**: Տե՛ս ԵՐԿՆԵՐԱՆԳ-ի օրինակը:

ՇՐԹՈՒՆՔԵ, ած., (դիպվ.): **Շրթունքի**: Ամեն օր լուսաբացին արթնանում էր, երբ արևի բարակ շողը ծառաբնին քսվելով պատուհանից ներս էր թափանցում՝ այրելով այտն ու **շրթունքե** մի բեկոր *(Պապյան, էջ 150):*

ՇՐՋՎԱՐՉԱԿԱԶՄ, գ. (հպվ.): **Շրջանային, շրջանի վարչակազմ**: **Շրջվարչակազմի** աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը ներկայացրեց Արցախ Բունիաթյան մարդուն, բանաստեղծին ու բժշկին, Քաշաթաղի շրջանային բուժմիավորման հիմնադրին, Բերձորի պատվավոր քաղաքացուն *(ՀՀ, 04.03.2017):*

ՇՐՋՕՂԱԿ, գ. **Ձայնապնակի մակերեսի օղակաձև գիծ:** Դուք պարզապես անակնկալի եք եկել, որ ես չեմ կրկնել **շրջօղակը** խաթարված ձայնապնակի «հավիտենական ճշմարտության» միալար երգը *(ՍՍ, էջ 586):*

ՇՈՒՇԱՆԱՃԵՐՄԱԿ, ած. **Շուշանի պես սպիտակ**: **Շուշանաճերմակ** դեմք *(Սենկ., էջ 84):*

ՇՈՒՏԱՓՈՒԹԵԼ, բ. **Շտապել**: Ու ես և քույրս տագնապելով, **շուտափութելով,** պահանջկոտ ու խնդրային, լացաձայն հանդիմանանքով քաշքշեցինք նրան կինոթատրոնի կողմը *(ԱԱ, ԸԵ, էջ 70):*

ՇՔԱԿԱՀ, գ. **Շքեղ կահույք**: …. Կար …. հարուստ մի **շքակահ** …. *(ԲՇ, էջ 505):*

Ո

ՈԳԵՊԱՏՈՒՄ, գ. **Ոգու ու ոգեղեն ընթացքի պատմություն:** Դա ոչ ...միայն արժեքների փոխանցման իրական ու եզակի հայտնություն է, այլև հողի վրա մարդկային կյանքի, նրա մտածողության և **ոգեպատումի** անփոխարինելի ժառանգություն *(Նորք, թ. 1, 2017):*

ՈԽԱՄԻՏ, ած.**Ոխակալ:….** Բարձրաստիճան սպաները տեղեկացան **ոխամիտ** թշնամու հուսահատ վերջին ջանքերին *(ՌԿ, էջ 185):*

ՈՂԲԱԳԻՆՈՐԵՆ, մկբ. **Ողբագին կերպով**: …. **Ողբագինորեն** դանդաղ մի շարժումով գետնին հառեց նայվածքը *(Բ7, էջ 190):*

ՈՍԿԵՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Ոսկե և շագանակագույն:** …. Նա տեսավ …. կիսախարխուլ **ոսկեշագանակագույն** քարե պարիսպները …. *(Հ, էջ 45):*

ՈՍԿԵՇԵԿ, ած. **Ոսկեգույնին տվող շեկ**: Նրա …. դեմքը, **ոսկեշեկ** մազակույտի տակ, կասկածելիորեն անհամբեր էր …. *(Գոլս., էջ 70):*

ՈՍԿԵՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Ոսկու գույնին մոտ վարդագույն**: …. Դեմքերը **ոսկեվարդագույն** ծաղիկների մեջ թաղած կանգնել էին …. *(Գոլս., էջ 156):*

ՈՍԿԵՐՉԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. 1. **Ոսկերչագործությանը հատուկ՝ վերաբերող: 2. Ոսկերչագործությամբ ստեղծված:** Աստվածամոր **ոսկերչագործական** պատկերները իրոք որ շատ բանով հիշեցնում են կաթոլիկական ճոխ ծիսայնությունը *(Ֆր., էջ 451):*

ՈՍԿԵՓԵՂԿ, ած. **Ոսկեգույն:** ….Ցուցադրվում են Մատիսի նկարները **ոսկեփեղկ** շրջանակի մեջ *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՈՍԿՈՐԱԿՏՈՐ, գ. **Ոսկրի կտոր**: Կճուճի տակ տժտժում էին սևացած **ոսկորակտորները** *(Մարտ., էջ 394):*

ՈՏՆԱԳՆԱ, ած. **Ոտքով գնալու**: Մայրաքաղաքից մեկօրյա **ոտնագնա** հեռավորության վրա *(Ֆր., էջ 388):*

ՈՏՆԱԺԱՊԱՎԵՆ, գ. **Ոտքի ժապավեն:** Անսպասելի էր նրան տեսնել զինվորի հասարակ բլուզի մեջ, ճտքավոր կոշիկներից վեր **ոտնաժապավեն** կապած *(ՌԿ, էջ 166):*

ՈՏՆԱՄՈՒՇՏԱԿ, գ. **Կենդանիների մազածածկ մորթուց ոտքերի տակ գցելու մորթի:** …. Ոտքերը պահում էր ավելի շուտ բուխարու երկաթների, քան **ոտնամուշտակի** վրա *(Բ5, էջ 461):*

ՈՐԲԱՆՈՑԱՊԱՏԿԱՆ, ած. **Որբանոցին պատկանող, որբանոցի սեփականություն եղող**: …. Կարգադրել էր …. **որբանոցապատկան** գույքը վաճառել *(Հայրունի 1, էջ 494):*

ՈՐԲԱՎԱՐԻ, մկբ. **Որբին հատուկ՝ վայել:** Երկարեցին **որբավարի** տրտում երեկոները, գյուղը սևացավ սառն անձրևներից *(ՌՍՊ, հ. 2, էջ 556):*

ՈՐԾԿՈՑԱԲԵՐ, ած. **Սրտխառնոց առաջացնող:** ….Սկսեց ջուր խմել, զգալով հալված ձյան **ործկոցաբեր,** անհամ սառնությունը *(ՌՍՊ, հ. 1, էջ 513):*

ՈՐՄՆԱՀԻՄՆ, գ. **Պատի հիմք**: …. Գետի վրա հին կամրջի **որմնահիմներ** եմ նկատում *(ՍԽ, էջ 87):*

ՈՐՄՆԱՊԱՏԿԵՐ, գ. **Քարակերտ՝ քարի վրա կատարված պատկեր**: Մի քառակուսի խորշում քանդակված են Իվանե և Զաքարե եղբայրների **որմնապատկերները** …. *(ՍԽ, էջ 225):*

ՈՐՈՎԱՅՆԱՀԱՃՈ, ած. **Որովայնին հաճելի, ախորժելի:** …. **Որովայնահաճո** աղանդերի պատճառած զվարթությունների պահին սկսվեց մի մտերիմ խոսակցություն …. *(Բ5, էջ 705):*

ՈՐՋԱԿՈՒՄԲ, գ. **Հիմնականում կասկածելի զբաղմումքի անձանց հավաքատեղի:** Բայց միգուցե **որջակումբների** այցելուներն ուղղակի երկկողմանի ծնողազուրկ որբուկներն են…. *(Իր., 30.06.2017):*

ՈՐՍԱՄԱԿՈՒՅԿ, գ. **Որսի համար նախատեսված փոքրիկ նավակ:** Նույնիսկ **որսամակույկն** առանձնապես հուսալի փոխադրամիջոց չէ Խաղաղ օվկիանոսում անձրևային սեզոնին *(ՍՍ, էջ 240):*

ՈՐՍԱՇՈՒԿԱ, գ. **Որսի վաճառատեղ:** Դրանք էլ դրեց տոպրակն ու սկսեց նայել, թե մարդիկ ինչպես են փախչում **որսաշուկայից** *(ՌՍՊ, հ. 1, էջ 208):*

ՈՐՍԵՐԳ, գ. **Որսի՝ որսի մասին՝ որսորդության ժամանակ երգվող երգ**: Նրանք երգում են իռլանդական **որսերգեր** *(Ֆր., էջ 631):*

Չ

ՉԱՐԱԳԱՋԱՆ, ած. **Գազանաբարո:** Թուրքերի բանակն անմատչելի թվաց Դանիել բեգին, հայոց նոր ուժերի հանդեպ դարձավ առավել **չարագազան** *(ՌԿ, էջ 166):*

ՉԱՐԱՇԵՇՏ, ած. **Չար շեշտ ունեցող:** - Վերջապես կլոեք, շուն,- ամբողջ դահլիճով տարածվեց պրոֆեսորի **չարաշեշտ** ձայնը *(ՌԿ, էջ 420):*

ՉԱՐԵՆՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Չարենցականի կերպը, ընկալումը, չարենցյան շունչը**: …. Ի հայտ է գալիս բանաստեղծի հոգևոր ներքին մտահոգությունների գեղագիտությունը՝ կյանքի ընկալման, կյանքի նկատմամբ վերաբերմունքի, կյանքի գնահատման և կյանքը ըմբռշխնելով ապրելու **չարենցականությունը** *(ԲԱ1, էջ 232):*

ՉԱՐԵՆՑԱՊԱՇՏ, ած., գ. **Չարենցի ստեղծագործությունը պաշտող**: Հավաքվել էին մտավորականներ, գրողներ, **չարենցապաշտներ՝** վերստին արժևորելու նրա ստեղծագործությունները *(ԳԹ, 17.03.2017):*

ՉԱՐՎԵՍՏ, գ. Այսօր մարդկությունը պաշարված է **«չարվեստով».** այս բառը գործածում են երկու իմաստով՝ ոչ արվեստ և չարի արվեստ *(ԴԵ, էջ 39):*

ՉԱՓԱԾՈՅԱՍՏԵՂԾ, ած. **Չափածո ստեղծող**: Բայց ազատ ոտանավորը չունի էական **չափածոյաստեղծ** հատկանիշներ …. *(ԲԱ1, էջ 138):*

ՉԱՓԱԾՈՅԱՑՈՒՄ, գ. **Չափածո դարձնելը՝ դառնալը**: …. Կա **չափածոյացման** միտումը …. *(Սաֆ., էջ 161):*

ՉԱՓԱՓՈՐՁԱՐԿՈՒՄ, գ. **Չափափորձում:** Ալիսը չկարողացավ երկար դիմադրել անակնկալ մատուցված գայթակղությանը՝ սկսեց զգեստի **չափափորձարկումը** *(ՄԼ, էջ 182):*

Պ

ՊԱՂԱԽՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Պաղ՝ սառը շաղախ:** ….Կրակը չորացնում էր դրանք ներսից, մեջներից գոլորշիացնում **պաղախյուսությունը,** լորձնոտությունը, որն էլ հենց կյանքն է *(ՌՍՊ, հ. 2, էջ 501):*

ՊԱՅԾԱՌԱԺՊԻՏ, ած. **Պայծառ ժպիտ ունեցող:** ….Այդ **պայծառաժպիտ** բարի երիտասարդը….*(ԼՄ1, էջ 18):*

ՊԱՅԾԱՌԱՑՈՒՆՑ, ած. **Պայծառ և ցնցող, պայծառությամբ ցնցող:** Ազատ ու անկաշկանդ երևակայական ճախր էր այն …., որը սակայն միայն մի քանի **պայծառացունց** բարձրակետերում …. փոխակերպվում էր զուգապարի *(Հ, էջ 75):*

ՊԱՆԴԽՏԱՍԵՐ, ած. **Պանդխտություն սիրող**: …. Ձեռք ենք բերել թույլ ու **պանդխտասեր** ազգի որակ …. *(ԳԹ, 10.02.2017):*

ՊԱՆԴՈԿԱՏԻՐՈՒՀԻ, գ. **Պանդոկապանուհի, կին պանդոկատեր:** ….Նա սենյակից դուրս չէր գալիս, սնվում էր լոկ հացով ու մրգով, որ **պանդոկատիրուհին** էր բերում իրեն …. *(Հ, էջ 163):*

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱԽԱՌՆ, ած. **Պաշտամունքի աստիճանի հասնող**: Ժողովուրդը նրա նկատմամբ **պաշտամունքախառն** հոգածություն է ցուցաբերում *(Ֆր., էջ 628):*

ՊԱՇՏՊԱՆԱԳԻՐ, գ. **Պաշտպանություն արտահայտող գիր՝ փաստաթուղթ**: …. Փութաջանորեն շարունակում էր գրել **պաշտպանագիրը** …. *(Գոլս., էջ 203):*

ՊԱՏԱԲԵԿՈՐ, գ. **Պատի բեկոր՝ կտոր**: Ներքևում մնում է կայծակի գցած **պատաբեկորը** *(ՍԽ, էջ 149):*

ՊԱՏԵՆԱՊԱՏ, ած. **Պատյանի նման պատված:** Այս **պատենապատ** կացարանում ես ինձ զգում էի լուսավոր, լայնարձակ աշխարհի դեսպանորդ…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 273):*

ՊԱՏԵՐԱԶՄԱԳՈՒՅՆ, ած. (փխբ., դիպվ.): **Պատերազմի գույն ունեցող**: …. Օրերից մի օր գրիչս կճչա // Երազանքի մասին իր **պատերազմագույն**…. *(ԳԹ, 03.02.2017):*

ՊԱՏԵՐԱԶՄԱՊԱՏ, ած. **Պատերազմով պատված**: Տե՛ս ՊԱՏԵՐԱԶՄԱԶԵՐԾՈՒՄ-ի օրինակը:

ՊԱՏԺԱԳՈՐԾԻՔ, գ. **Պատժելու համար նախատեսված՝ օգտագործվող գործիք**: …. Մեղադրում էիք **պատժագործիքները** դահիճներին հանձնած մարդկանց *(Ֆր., էջ 547):*

ՊԱՏՄԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած. **Պատմական, բայց և առասպելական՝ առասպել դարձած:** Նրա անունը Խաչատուր էր. …. վիպական, **պատմաառասպելական,** պատմաարդիական հարաբերությունների կերտվածքի մի գործիչ *(Աբով., էջ 10):*

ՊԱՏՄԱԱՐԴԻԱԿԱՆ, ած. **Պատմական, բայց և արդիական**: Տե՛ս ՊԱՏՄԱԱՏԱՍՊԵԼԱԿԱՆ-ի օրինակը:

ՊԱՏՄԱԳՐԱԲԱՐ, մկբ. **Պատմագրի նման, պատմագրորեն, պատմագիր լինելով, որպես պատմաբան**: [Անգղի] …. կարևորությունը **պատմագրաբար** ներկայացնելիս Եղիշեն օգտագործում է հոմանշային պեսպիսության հնարանքը …. *(Սաֆ., էջ 58):*

ՊԱՏՄԱԻՐԱԿԱՆ, ած. **Պատմական և իրական:** …. **Պատմաիրական** արտացոլումների …. ծանրույթը իր վրա վերցրած պատմագրությունը …. հանդես է բերում գիտա-գեղարվեստական մեթոդների տարածականություն …. *(Սաֆ., էջ 10):*

ՊԱՏՄԱԽՈՒՅԶ, գ. **Պատմությունը հետաքննող**: Մեր մեծ բնախույզ, հետախույզ, **պատմախույզ** հանճարի զմայլիչ բնապատկերներն իրենց անխախտ կիրառական տեղն ունեն մեր բոլոր ժամանակների դասագրքերում, թելադրության և փոխադրության ձեռնարկներում *(ԳԹ, 17.02.2017):*

ՊԱՏՇԱՃԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատշաճությունը սիրելը**: …. Յուֆիմայի բնազդական **պատշաճասիրությունը** անմիջապես վիրավորվեց *(Գոլս., էջ 198):*

ՊԱՏՈՒՀԱՆԱՑԱՆՑ, գ. **Պատուհանը ծածկող ցանց**: Տանը լռություն էր տիրում, բայց **պատուհանացանցի** միջոցով զգում էի, նույնիսկ լսում էի՝ դրսում գարնանային զեփյուռ էր խաղում *(Բոհջ., էջ 214):*

ՊԱՐԵՆԱՍԱՅԼ, գ. **Պարեն տեղափոխող՝ տեղափոխելու համար նախատեսված սայլ:** Դժբախտաբար այդտեղ գտնվում էին մեծ քանակությամբ կառքեր, **պարենասայլեր** …. *(Բ5, էջ 624):*

ՊԱՐԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Պարեղանակ:** Մահը, հսկայական ու մեծ, ցցվեց սրահի բաց դռների առաջ, որ լեփ-լեցուն էին գինուց ու **պարերաժշտությունից** հարբած մարդկանցով *(Հ, էջ 152):*

ՊԱՐԶԱՋՐՎԱԾՔ, գ. (փխբ.): **Պարզաբանում:** Ինչպես որ միակ ճշմարտությունը ծնունդ է առնում բազմակարծության խառնաշփոթում, այնպես էլ միակարծության **պարզաջրվածքում** թաղված է մնում բազմակի ճշմարտությունների արտավիժվածքը *(Անդին, թ. 2, 2017):*

ՊԱՐՍՊԱԾԵՐՊ, գ. **Պարսպի ծերպ՝ գագաթնամաս**: Բարձր **պարսպածերպերում** …. Իրենց բույնն էին հյուսում …. արագիլները *(ՋԽ, էջ 233):*

ՊԵՂՈՒՄՆԱՌԱՏ, ած. **Պեղումներով լի՝ շատ:** Տես ԵՐԿՆՈԼՈՐՏԱՅԻՆ-ի օրինակը:

ՊԵՐՃԱՄԻՏ, ա. **Շքեղ միտք ունեցող:** Նա պահ հետո դեպի վեր տարավ ազդու ձեռքը, որը նաև **պերճամիտ** սրբազանին պատասխանելու նշան էր *(ՌԿ, էջ 160):*

ՊԻՏՈՒՅՔԱՏՈՒՓ, գ. **Պիտույքների տուփ, պիտոյատուփ**: Նրա առջև թափված էր ճանապարհի **պիտույքատուփերի** մի ամբողջ կույտ …. *(Պրուս, էջ 129):*

ՊՂՆՁԱԲԱՌ, ած. (բնստ.): **Թանկագին, ոսկեղենիկ**: Եվ գնում է շուրթերիս **պղնձաբառ** իր լեզուն *(ՎԴ, էջ 116):*

ՊՂՆՁԱԿԱՆՉ, գ. **Պղնձյա ձայնով:** Դաշտի հարավակողմից, **պղնձականչեր** հնչեցներով, բանակատեղ էր շտապում վարչապետական «Մերսեդեսը» *(ՌԿ, էջ 196):*

ՊՂՆՁԱՄԱՆ , գ. **Պղնձե աման:** Ձանգակատուն շտապելուց առաջ նա սրտահույզ այդ մասունքը իջեցրեց **պղնձամանի** մեջ *(ՌԿ, էջ 218):*

ՊՃՆԱԳԵՂՈՐԵՆ, մկբ. **Պճնագեղ կերպով:** Մազերը նա սանրել էր **պճնագեղորեն** …. *(ՍՄ, էջ 222):*

ՊՆԴԱԿԱՐԳ, ած. Այստեղ՝ **ավանդապահ**: …. Հայրը …. ֆիդայի էր, …. Սրտի մեջ՝ հայ մարդու դարեր պահպանվող **պնդակարգ** կանոնագիրքը …. *(ԱԱ, ԸԵ, էջ 106):*

ՊՈԿՈՎԻ, ած. **Պոկելու միջոցով հիմնական մասին անջատվող՝ հեռացվող**: [Օրացույցի] **պոկովի** հաստափոր զանգվածի վերևում մի աղջնակ …. կրծքին էր սեղմել …. ծաղիկների փունջը *(Վեռնոյ, էջ 204):*

ՊՈՂՊԱՏԱՇՐՋԱՆԱԿ, ած. **Պողպատե շրջանակ ունեցող**: **Պողպատաշրջանակ** ակնոց *(Հեմ., էջ 101):*

ՊՈՉԱԼՈՂ, գ. **Պոչը շարժելով լողալը**: Լճում թևալող ու **պոչալող** էին տալիս պնդաճակատ ձկները *(Մարտ., էջ 303):*

ՊՈՉԱԿԻՐ, ած. **Պոչից՝ վերջից գնացող**: Առաջինին անվանում են առաջավոր հնձվոր, իսկ վերջինին՝ **պոչակիր** *(Ֆր., էջ 534):*

ՊՈՒՆԿԱՁԵՎ, ած. **Պոունկի՝ լեռան կողի սուր ցցվածքի ձև ունեցող**: **Պոնկաձև** բլուրի քարայրները եղել են Գորիսի ձմեռային գոմերը *(ՍԽ, էջ 221):*

ՊՍԱԿԱՎԱՃԱՌ, գ. **Պսակ վաճառող**: Ասում եմ, գուցե ինքն էլ պսակավաճառ էր, խանութի համար ապրանք էր տանում … *(Օտ. հայ գր., էջ 280):*

ՊՏՂԱԲԵՌ, գ. (փխբ.): **Գրականության նվաճումների՝ պտուղների բեռը**: Ենթադրվում էր, թե անգլերենը, որ ծանրաբեռնված էր սեփական հրաշալի գրականության վիթխարի **պտղաբեռով** …., այդ ժամանակ արդեն բավականաչափ ամուր բույս էր դարձել …. *(Սուրյան 1, էջ 75):*

ՊՏՏԱԲԱԶԿԱԹՈՌ, գ. **Պտտվող բազկաթոռ**: …. **Պտտաբազկաթոռի** ծածկեց վրա պտտվելով …. շարունակեց …. *(Մարտ., էջ 191):*

Ջ

ՋԱՅԼԱՄԱՆՄԱՆ, ած. **Ջայլամի նման, ջայլամի տեսք ունեցող**: Կազուստ՝ **ջայլամանման** վազող թռչուն *(Ֆր., էջ 809):*

ՋԱՐԴԱՍՏԱՆ, գ. (դիպվ.): **Կոտորածի՝ ջարդի վայր:** Շնքի զորականի կողերի ջարդը դիտել էր Արաքսաափից և այժմ գլուխն առավ, քաշվեց՝ այլ **ջարդաստան** փնտրելու *(ՌԿ, էջ 212):*

ՋԱՐԴԱՎԱՅՐ, գ. **Կոտորածի վայրերը: Ջարդավայրերից** անվերջ Պոլիս էին թռչում հեռագրեր *(ՌԿ, էջ 420):*

ՋՐԱՊԱՀԱՆՋ, գ. **Ջրի պահանջ**: …. [Դա] թույլ կտա …. առավել հստակ պատկերացում կազմել **ջրապահանջի** վերաբերյալ ….. *(ՀՀ, 24.01.2017):*

ՋՐԱՊԱՀԱՆՋԱՐԿ, գ. **Ջրի պահանջարկ, ջրապահանջմունք**: …. Սևանա լճից ոռոգման նպատակով **ջրապահանջարկը** կնվազի շուրջ 18 մլն/մա-ով …. *(ՀՀ, 24.01.2017):*

ՋՐԱՍՈՒՐՃ, գ. (դիպվ.): **Ջրալի սուրճ**: Տես ԹԱՆՁՐԱՍՈՒՐՃ-ի օրինակը:

ՋՐԻՄՈՒՌԵ, ած. **Ջրիմուռներից բաղկացած:** Դրանց մի մասը լերկ էր ու քայքայված, մյուսները մորուքաձև էին՝ պատված մուգ դարչնագույն **ջրիմուռե** ծածկույթով *(ԻԿ, էջ 153):*

Ռ

ՌԱԴԻՈՇԱՐՔ, գ. **Ռադիոհաղորդումների շարք**: Մինչ «Ապրելու բանաձև» **ռադիոշարքը** սկսելը ևս առանձնակի նվիրումով էի գրում հայ հերոսների մասին *(Իր., 27.01.2017):*

ՌԱԶՄԱԲԱԽՈՒՄ, գ. **Ռազմական բախում:** Մերձավոր արևելքի պատերազմներում և **ռազմաբախումներում** նորահայտ գիտնականների թիվը դարձավ շուրջ երեսուն…. *(Անդին, թ. 5, 2016):*

ՌԱԶՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ած. **Ռազմական շինարարությանը վերաբերող:** ….Նրան անհրաժեշտ էին **ռազմաշինարարական** գործի գիտակ մարդու հիմնավորումներ *(Անդին, թ. 2, 2017):*

ՌԻԹՄԱԿԱԶՄԻՉ, ած. **Ռիթմաստեղծ, ռիթմ կազմող**: …. Բացակայում է չափածոյի **ռիթմակազմիչ** ողջ համակարգը *(ԲԱI, էջ 142):*

Ս

ՍԱԼԱԹԱՆՄԱՆ, ած. **Սալաթի նման, սալաթի տեսք ունեցող**: Ծննդաբերությունից հետո մորը և երեխային երեք օր կերակրում էին **սալաթանման** ուտեստով *(Ֆր., էջ 489):*

ՍԱԼՈՐԱՉ, ած. **Սալորի նման աչքեր ունեցող:** ….Ա՛յ **սալորաչ** ու վախվորած աղջիկ…. *(Անդին, թ. 3, 2016):*

ՍԱՀԱՆՔՈՏ, ած. **Սահանքներով առատ, սահանքավոր:** Գետը **սահանքոտ** է, երգեցիկ *(ՄՄ, էջ 92):*

ՍԱՂԱՎԱՐՏԱՆՄԱՆ, ած. **Սաղավարտի նմանություն՝ տեսք ունեցող, սաղավարտաձև**: **Սաղավարտանման** գլխարկի տակ ամփոփված կարճ ու հարթ մազերով…. տիկինը … առաջանում էր …. *(Վեռնոյ, էջ 92):*

ՍԱՂԱՎԱՐՏԱՉԱՓ, ած. **Սաղավարտի չափսեր ունեցող**: Հատակի **սաղավարտաչափ** քարերը ծածկված են տիղմով …. *(Բոհջ, էջ 160):*

ՍԱՆԴՂԱՋՐՎԵԺ, գ. **Սանդղաձև գահավիժող ջրվեժ**: Տերը …. իրեն ստիպեց գետամիջի քարշակարթով կանսեն բարձրացնել սրընթաց **սանդղաջրվեժով** *(Ֆր., էջ 290):*

ՍԱՆԴՂԻԿ, գ. **Սանդղակ, փոքրիկ սանդուղք**: Բարձրանում էր **սանդղիկին,** նորից ցած իջնում *(Պրուս, էջ 32):*

ՍԱՆՁԱՏԱԿ, գ. **Սանձի տակը՝ ծայրը**: …. Ձիապանը բռնել էր ձիերի **սանձատակից** …. *(Գոլս., էջ 170):*

ՍԱՌՆԱԲՈՒՅՐ, գ. **Սառը բույր:** Նրանք …. հայտնվել էին անապատանման …. մութ հանդարտության մեջ, ….գիշերային քնի մերձեցման ու մենակության վախի **սառնաբույրով** պարուրված *(Հ, էջ 104):*

ՍԱՌՆԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Սառը և կապույտ**: Նրա **սառնակապույտ** աչքերը դիտում էին …. Ֆորսայթներին *(Գոլս., էջ 423):*

ՍԱՌՆԱՀԱՅԱՑ, ած. **Սառը հայացք ունեցող:** Ֆեդերիկոյի համար ծերուկը հյուսիսի բնակչի զուսպ, **սառնահայաց** մարդու վերջին մարմնավորումն էր…. *(ԻԿ, էջ 30):*

ՍԱՌՑԱԴՈՒՅԼ, գ. **Սառույցի դույլ. դույլ, որի մեջ սառույց է լցված**: …. Շամպայնի երեք շշերն ավելի խոր մխրճում էր **սառցադույլի** մեջ *(Գոլս., էջ 59):*

ՍԱՌՑԱՁՈՂ, գ. **Ձողանման սառցակտոր**: Փայլարձակում են կախկախ **սառցաձողերը** *(ՁԽ, էջ 190):*

ՍԱՌՑԱՏՈՒՓ, գ. **Սառույց պահելու տուփ, սառցարկղ**: …. Բարձրացրեց **սառցատուփի** կափարիչը *(Հեմ., էջ 31):*

ՍԱՏԱՆԱՅԱՃՈՒՏ, 1. գ. **Սատանայի ճուտ:** 2. ած. (փխբ.): **Ձափազանց խորամանկ**: Այս երկու **սատանայաճուտ** աղջիկները քեզ համար ճարել են աշխարհի ամենաքնքուշ էակը …. *(Բ7, էջ 672):*

ՍԱՐԱԿՈՂՄ, գ.**Սարի կողմը:** Ձիավորներից մի քանիսը ձեռքերի վրա առան զորականի ուշաթափ մարմինը և փախցրին դեպի հեռու **սարակողմ** *(ՌԿ, էջ 212):*

ՍԱՐԴԱԹԵԼ, գ. **Սարդոստայնի թելերը**: Տանը մի ձմեռվա կյանք էր ապրել, ձնհալոցքից թաց պատեր ուներ, հողի նման շնչող կտուր, …. Փոշոտ, սև **սարդաթելերով** ցանցավորված լուսամուտներ …. *(ՌՀ, էջ 82):*

ՍԱՐԴԱՑԱՆՑ, ած. **Սարդոստայնի նմանվող:** Տես ԳՐԱԽԱՋ-ի օրինակը:

ՍԱՐՍԱՓԱԶԵՐԾ, ած. **Սարսափից անմասն՝ հեռու:** Իսկ այսպես, …. **սարսափազերծ** ու ուղեղն անջատած՝ իրեն իրեն հաջողվում էր առժամանակ ընդարմանալ…. *(Հ, էջ 58):*

ՍԱՐՍՈՒԾԱՂԻԿ, գ. (բնստ.): **Սարսուռից ծնված ծաղիկ: Սարսռածաղիկն** իմ շունչը փնջել // Ու քո սրտից է շնորհաբուրում *(ԲԱ, էջ 11):*

ՍԱՐՍՈՒԱՁԱՅՆ, ած. **Սարսռալի:** Տես ԱՀԵՂԱԳՈՉԵԼ-ի օրինակը:

ՍԳԱՆՇԱՆ, գ. **Սուգի նշան:** Ծերունի Արբակի սարքած խաչը շուտով բարձրացավ քաղաքի ամենավերին բարձունքին է որպես մռայլ և ապիկար իրականության **սգանշան** *(ՌԿ, էջ 253):*

ՍԳԱՏԵՂԻ, գ.**Սգավայր**: Նրանք գլխահակ ոտքի ելան, մեկնեցին **սգատեղի** *(ՌԿ, էջ 253):*

ՍԳԵՐԳԱՅԻՆ, ած. **Տխուր՝ ողբերգական:** Քանդակաձևերի համադրության և փոխակերպման …. դրսևորումներն արտացոլվել են հատկապես նրա կանացի դիմաքանդակներում, որոնց Գոջաբաշյանը հաճախ օժտում է **սգերգային** տրամադրությամբ *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՍԳՎՈՐՈՒՀԻ, գ. **Սգավոր կին:** …. Ձարդուհին էր՝ տառապյալ ճանապարհի **սգվորուհին** *(ՌԿ, էջ 163):*

ՍԵՂԱՆԱԽՈՒՄԲ, գ. (փխբ.): **Սեղանների մոտ նստած մարդկանց խումբ**: Բազմամարդ **սեղանախումբը** …. ողջունում է պաղլամենտի իր դեպուտատին *(Հունգ., էջ 18):*

ՍԵՂԱՆԱՇԱՐ, գ. **Կողք կողքի շարած սեղանների շարք:** Սյուներին կից, արենայի պես բացվում էր համատարած **սեղանաշարի** պատնեշը՝ փայլատ ապակու ծածկով…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 58):*

ՍԵՂԱՆԱՔԱՐ**,** գ. **Սեղանի երեսի նման հարթ քար**: - Էս վանքի ավերակում լավ **սեղանաքարեր** կան. մեկը բերեք դնենք վրան *(ՍԽ, էջ 465):*

ՍԵՆՅԱԿԱԿՑՈՒՀԻ**,** գ. **Սենեկակից կին**: Կան նամակներ՝ հասցեագրված Մաունթ Հոլյոքի **սենյակակցուհուն** *(Բոհջ., էջ 231):*

ՍԵՌԱԳՐԳԻՌ**,** ած. **Սեռական գրգիռներ առաջացրած**: Ամրակազմ տղամարդիկ **սեռագրգիռ** դողէրոցքով մոտենում էին կնոջը *(ԳԹ, 17.02.2017):*

ՍԵՎԱԿԱՆԱՁԱՎՈՒՆ, ած. **Սևին տվող՝ մուգ կանաչ:** Ծեր ու հսկայաշուք ծառերը կախված էին **սևականաչավուն** ջրերի վրա…. *(Հ, էջ 59):*

ՍԵՎԱԿԱՐՄՐԵԼ, բ. **Սևակարմիր դառնալ:** ….Ձեռքն ասես խոփ է ու սևահողի տակ է շարժվում, լարված **սևակարմրելուց** ու հոգնած հոգոցից ոչինչ չի կորչում, ամբողջը լցվում է տղայի մեջ…. *(ՀՄ, էջ 21):*

ՍԵՎԱՊՏՈՒՂ, ած. **Սև պտուղ ունեցող:** Տան առաջ **սևապտուղ** արոսենու ծառ կար *(ՌՍՊ, հ. 2, էջ 545):*

ՍԵՎԵՂՋՅՈՒՐ, ած. **Սև եղջյուրից սարքված՝ պատրաստված:** Հաճախ եմ նայում դրան, սակայն **սևեղջյուր** ծխափողը երբեք չեմ մոտեցրել շրթունքներիս *(ՌՄՊ, հ. 1, էջ 32):*

ՍԵՐՈՒՑՔԱԳՈՒՅՆ**,** ած. **Սերուցքի գույն ունեցող**: …. Կոշիկի ու հագուստի բուտիկներից փողոցին նայող **սերուցքագույն**, ճաղատ մեներկենների հայացքի հրճվանքը …. *(Պաչյան, էջ 90):*

ՍԵՐՈՒՑՔԱՆՄԱՆ, ած. **Սերուցքի նման՝ նմանվող**: Վերջինս տեղնուտեղը իր **սերուցքանման** դեմքից խնամքով սրբում է բոլոր արտահայտությունները *(Սարգր, էջ 76):*

ՍԻԳԱՏԵՍԻԼ, **Սեգ տեսքով: Սիգատեսիլ** կարապի պես, թևերը կախ կարապի պես…. *(ԼՄ4, էջ 72):*

ՍԻՐԱՀԱԼԱԾ**,** ած. **Սիրուց հալածված**: …. Վազում էր ինձ մոտ **սիրահալած** Ռոմեոյի պես …. *(ՎՓ, էջ 38):*

ՍԻՐԱՄԱՐՏ, գ. (փխբ.): **Սիրով զբաղվելը:** Ծանր ու անզիջում **սիրամարտից** հոգնած՝ նրանց վրա շուտով քաղցր նիրհ իջավ *(Հ, էջ 107):*

ՍԻՐԱՑՆՑՈՒՂ**,** ած. (բնստ.): **Սեր սփռող, տարածող, ցնցղող**: Ինձ էր ժպտում // **Սիրացնցուղ** լուսնի տակ // Աղջիկը …. *(ԳԹ, 03.03.2017):*

ՍԻՐԱՓՈՒՆՋ, գ. **Սիրո՝ սիրային փնջեր՝ զեղումներ**: Մինչև ես ճաշակում էի այն վայելքները, որ ես երազել էի առանց ճանաչելու և արտահայտել իմ **սիրափնջերով** …. *(ԲՇ, էջ 238):*

ՍԻՐԱՔԱՂՑ, ած. **Սիրելու քաղց ունեցող:** Ռուս բժիշկ Սոլովյովը իր կնոջ....հետ սառն աղբյուրի ավազանում լոգանք են ընդունում՝ բնավ չկասկածելով, որ քաղաքի **սիրաքաղց** ջահելները դիրքավորված դիտում են այդ ոչ թատերական ներկայացումները *(ՄՄ, էջ 7):*

ՍԻՐԵԼԻՈՐԵՆ, մկբ. **Սիրված:** Եվ այդ ամբողջ ժամանակ իմ հին օրերից մի պատկեր զարմանալիորեն թարմ, գույներն ու ձայները **սիրելիորեն** զնգուն ….կանգնած էր իմ դեմ…. *(ՀՄ, էջ 18):*

ՍԻՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**,** գ. **Սիրողական լինելը**: Տե՛ս ԿԻՍԱՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԱՅԻՆ, ած. 1. **Սկզբնաղբյուրին հատուկ՝ վերաբերող**: 2. **Սկզբնաղբյուրից եկող, սկզբնաղբյուրի հիման վրա բերվող**: …. Պատմական **սկզբնաղբյուրային** փաստերը …. *(Սաֆ., էջ 100):*

ՍԿԶԲՆԱՎԻՃԱԿԱՅԻՆ, ած. **Սկզբնավիճակին հատուկ՝ վերաբերող, սկզբնավիճակի**: Դավթակի «Ողբը» այս հարաբերությունների **սկզբնավիճակային** արժեք ունի *(Սաֆ., էջ 109):*

ՍԿՅՈՒՌԱԿԱՆ, ած. (փխբ.): **Սկյուռին հատուկ:** Իմ՝ **սկյուռական** մտածողությունն է, որ ձգտում է անվերջանալիության երկու ծայրերը միացնել և նրանցով առաջացած շրջանակի մեջ պտտվել *(Գարուն, թ. 5, 1999):*

ՍՂՈՑԱՓՈՇԻ, գ. **Սղոցի աշխատելու ժամանակ առաջացող փոշի**: **Սղոցափոշով** պատված ճահճուտ մարգագետին *(Հեմ., էջ 56):*

ՍՅՈՒԺԵԱՍՏԵՂԾ, ած. **Սյուժե ստեղծելու հիմք ծառայող՝ ծառայած**: …. Հրատարակիչը ընտրում է …. քաղաքի պատումը՝ որպես **սյուժեաստեղծ** միջավայր *(Սարգր, էջ 5):*

ՍՅՈՒՆԱՊԱՏՇԳԱՄԲ, գ. **Սյուների վրա կառուցված պատշգամբ:** Տատիս խանութի փոքրիկ **սյունապատշգամբը** հենվում էր կրպակի խուլ պատին *(Անդին, թ. 2, 2016):*

ՄՆԿԱԳԼՈՒԽ, ած. **Սունկի գլխի նմանվող**: …. Պահարանը հավակնում է **սնկագլուխ** լուսամփոփով գրասեղանի տեղը …. *(Ռ. Հովս., էջ 260):*

ՄՆՆԴԱՎՃԱՐ, գ. **Վճար սնունդի համար:** …. Գործակատարներից յուրաքանչյուրը …. բարձր **սննդավճար** էր տալիս *(Բ5, էջ 94):*

ՍՈՒԽԱԳՈՒՅՆ, ած. **Սոխի գույն ունեցող:** Ֆելիչին խուսանավեց. ….բլիթներով սկուտեղը փոխանցելով սղալած մազերով, **սոխագույն** դեմքով տղային *(ԻԿ, էջ 58):*

ՍՈՂԱՆՑՔԵԼ, չբ. **Ներթափանցել**: Համատեքստում երբեմն **սողանցքում** է սոցիալական դիտարկում …. *(Սաֆ., էջ 248):*

ՍՈՃԵՓԱՅՏ, գ. **Սոճու փայտ**: Բուխարու մեջ պայծառ վառվում էր **սոճեփայտը** *(Գոլս., էջ 431):*

ՍՈՄՆՁԵ, ած. **Սոսնձից պատրաստված: Սոսնձե** խյուսի մեջ գերվել էր մի խեղճ աղավնի…. *(ԻԿ, էջ 119):*

ՍՊԱՅԱԸՆԿԵՐ, գ. **Սպայի ընկերը:** Նա հայտնվեց ձյունակոծ կերպարանքով, թամբի վրա, ետևից քարշ տալով հանգուցյալ **սպայաընկերոջ** անտեր նժույգը *(ՌԿ, էջ 252):*

ՍՊԱՌՆԱՏԵՍՔ,ած. **Սպառնալի տեսք ունեցող:**. Սակայն մի՞թե այդ մեկը **սպառնատեսք** Արբակն էր, որի առաջ հանկարծ երկփեղկվեց հայահոծ ամբոխը *(ՌԿ, էջ 137):*

ՍՊԻՏԱԿԱԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Սպիտակին տվող դեղնավուն**: Նուշի **սպիտակադեղնավուն** պտուղները …. *(Ֆր., էջ 827):*

ՍՊԻՏԱԿԱԾԻՐ, ած. **Սպիտակ ծիր՝ շրջագիծ ունեցող՝ շրջագծով:** Նա ուներ **սպիտակածիր,** աղոտ աչքեր *(Բ5, էջ 264):*

ՍՏԱՑԱԳՐՈՒՄ, գ. **Որևէ բանի ստանալը հավաստող փաստաթուղթ, ստացագիր, ընկալագիր, ստացական**: …. Անհրաժեշտ դարձավ **ստացագրումները** նվիրատուներին ուղարկել սովորական փոստային բացիկների միջոցով *(Հայրունի 1, էջ 339):*

ՍՏՎԵՐԱԳՈՒՅՆ, ած. **Ստվերի գույն ունեցող, աղոտ սևավուն, ստվերաթույր**: …. Շոյում ես թիակներին թափված **ստվերագույն** մազերը …. *(Պաչյան, էջ 11):*

ՍՐԱՀԱԿԱՊԱՏ, ած. **Վարագուրապատ, առագաստապատ**: …. Այնտեղ թողել էր …. **սրահակապատ** մի բազկաթոռ …. *(Բ7, էջ 546):*

ՍՐԱՀԱՊԵՏ, գ. **Սրահը հսկող՝ աշխատանքները կարգավորող անձ: Սրահապետը** նրան հանձնեց ճաշացուցակը, որտեղ կային կտցար և Բոսֆորի բազմաթիվ ձկնատեսակներ *(ՄԼ, էջ 141):*

ՍՐԲԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սրբի ուժը, զորությունը:** Նա իր **սրբազորությունը** ....վախճանեց ցնորումի խաչելությամբ *(ԼՄ2, էջ167):*

ՍՐՃԱՐԺԵՔ, գ. **Սրճի արժեքը՝ վաճառքի գինը**: - Չորս բաժակ **սրճարժեքը** էն պառավ հավաքարարին վճարեք *(Մարտ., էջ 317):*

ՍՐՆԳԱՀՆՉՅՈՒՆ, գ. **Սրնգանվագ՝ սրնգի հնչյուն:** ….Խոսակցությունների ու **սրնգահնչյունների** մեջ անգամ նա մշտապես լսում էր օտարականի խորհրդավոր ձայնը, և իր հոգին ասես անհետացած-հեռացած լիներ նրա հետ *(Հ, էջ 186):*

ՍՐՏԱԹՈՎ, ած. **Սիրտ թովող, սրտապարար:** Նայում է լուռ՝ փոքրիկ տղան, որոնում է անվրդով // ու չի գտնում իր լեռների պատկերները **սրտաթով** *(ԼՄ, էջ 141):*

ՍՐՏԱԺԱՅԹՔ, ած. **Սրտից ժայթող:** Այդ երկու **սրտաժայթք** գործերից հետո,իհարկե տարակուսելու և անհանգստանալու իրավունք ունեի *(ԼՄ, էջ 166):*

ՍՐՏԱԾԵԾ,ած. **Սիրտը հուզող:** Փողային **սրտածեծ** եղանակը բազմապատկեց ձյունաշատ քաղաքի....խռովահույզ մթնոլորտը *(ՌԿ, էջ 250):*

ՍՔԵՄԱՄԵՐԺ, ած. (փխբ.): **Կրոնամերժ:** …. **Սքեմամերժ**, բայց և այնպես միշտ սքեմավոր մեծ Վանավանը …. *(ՎՓ, էջ 63):*

Վ

ՎԱԽՃԱՆԱՏԵՂԻ, գ. **Վախճանակետ:** Թափորի գլխամասում հայտնված դագաղը....մի քանի պտույտ կատարեց բազմության գլխավերևում և այնտեղից ասես թափ առավ, շտապեց դեպի իր **վախճանատեղին** *(ՌԿ, էջ 251):*

ՎԱՂԱԺԱՄՈՐԵՆ, մկբ. **Վաղաժամ կերպով, ժամանակից շուտ**: …. Ժառանգորդը **վաղաժամորեն** ամուսնացել էր …. *(Բ7, էջ 546):*

ՎԱՂԱՀԱՄՆԵԼ, չբ. **Շուտ՝ սպասվածից արագ հասունանալ**: Հացը **վաղահասնում** է, կծղում, թափվում *(ՍԽ, էջ 432):*

ՎԱՂՆՋԱՀԱՅ, գ. **Վաղնջական ժամանակներում ապրած հայ:** Անիվը հորինել են **վաղնջահայերը**…. *(Անդին, թ. 2, 2017):*

ՎԱՃԱՌԱԿԱՏԱՐՈՒՄ, գ. **Վաճառքի կատարում**: Վճարեց փողը, պահելով մոտ հարյուր հիսուն ռուբլի որպես տոկոս **վաճառակատարման** *(Պրուս, էջ 98):*

ՎԱՅՐԱՆՈՒՆ, գ. **Վայրի անուն, տեղանուն**: …. Սուրբ Թաթուլի պատմության մեջ հանդիպում ենք «Կաղազուան» **վայրանունին,** իբրև քաղաքագյուղ *(ՄԽ, էջ 355):*

ՎԱՆԱԿԱՆՈՐԵՆ, մկբ. **Վանականի նման՝ պես, ինչպես վանականը**: Ճաղատ գլխի ետևը **վանականորեն** պարուրող կիսապսակը գալիս հանգչում էր ականջների մոտ …. *(Բ7, էջ 51):*

ՎԱՎԵՐԱԳԻՐՔ, գ. **Փաստագրական նյութի վրա հիմնված գիրք**: Լույս է տեսել արձակագիր Լարիսա Գևորգյանի տասներորդ երկը՝ գյուղի հայապատումը համալրող «Աստված հարստացրեց իմ կյանքը» **վավերագիրքը** *(ԳԹ, 03.03.2017):*

ՎԱՐԱԳԱՄԵՐՁ, գ.**Վարագա սարին մոտակա**: Բլուրից բլուր և ձորից ձոր կտրելով ճամփան, խումբը հասավ **վարագամերձ** Չոիկ աղբյուրին *(ՄԽ, էջ 144):*

ՎԱՐԴԱԳԼԽԻԿ, գ. **Վարդի գլխիկ: Վարդագլխիկները** հեզանազ տարուբերվում էին գիշերային քամուց…. *(Հ, էջ 77):*

ՎԱՐԴԱԳՈՒՆԱՏ, ած. **Վարդագույնը խամրած**: …. Ինձ կթվար սքանչելի ծաղիկ եմ տեսնում՝ **վարդագունատ** թերթիկներով …. *(Պաչյան, էջ 75):*

ՎԱՐԴԱԵՐԿՆԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնին տվող երկնագույն**: Սարերը վարդաերկնագույն հագան, հետո մուգ ծիրանագույն…. *(Օտ., հայ գր., էջ 214):*

ՎԱՐԴԱԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ, ած. **Կարմիր, վարդի գույն ունեցող:** ….Մուգ ծովորի վրա նկարված էին դելֆիններ, ճերմակ նժույգներ և **վարդակարմրագույն** Ամուրներ, որ լողում էին խիտ բնակեցված առասպելական ծովում *(Հ, էջ 137):*

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ած. **Վարչական և տարածքային:** Հայաստանը …. բազմիցս ենթարկվել է հարձակումների, որի հետևանքով անընդհատ փոխվել է նրա վարչաքաղաքական և **վարչատարածքային** բաժանումը *(Անդին, թ. 3, 2016):*

ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ած. **Վարչական և քաղաքական:** Տե՛ս ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ի օրինակը:

ՎԱՐՍԱԲԱԺԱՆ, գ. **Վարսերը կիսող գիծ, բաժուկ:** ….Չնայած հիսունն անց տարիքին, մազերը խիտ են ու **վարսաբաժանը՝** ցայտուն… *(ՌՍՊ, հ. 2, էջ 461):*

ՎԱՐՍԱԿԵ, ած. **Վարսակից պատրաստված՝ թխված**: Գնում էր **վարսակե** փափուկ հացիկներ *(Անդր., էջ 316):*

ՎԵՀԱՍՊԻՏԱԿ, ած. **Վեհ և սպիտակ**: …. Ուղղամեջք ծերունի, **վեհասպիտակ** գլխով …. *(Գոլս., էջ 162):*

ՎԵՂԱՐԱՁՈՒՐԿ, ած. **Վեղար չունեցող, վեղարից զրկված**: Տես ԽՈԺՈՌԱՀՈՆ-ի օրինակը:

ՎԵՐԱԾՆՆԴՅԱՆ, ած. **Վերածննդին հատուկ՝ վերաբերող, վերածննդի**: …. Աշխարհայացքի հիմքում միշտ մնում է **վերածննդյան** մարդասիրությունը *(Սաֆ., էջ 188):*

ՎԵՐԱԿԱՀԱՎՈՐԵԼ, նբ. **Կրկին կամ նոր ձևով կահավորել:** Դա նոր **վերակահավորված** մի սքանչելի սենյակ էր *(Բ5, էջ 298):*

ՎԵՐԱՀԱՆԴԵՐՁԱՎՈՐԵԼ, նբ. **Նորից՝ նոր ձևով հանդերձավորել, վերահանդերձել**: Նրան **վերահանդերձավորում** են մահապարտի հագուստով *(Սաֆ., էջ 64):*

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼ, բ. **Կրկին հասցեավորել, վերահասցեագրել**: ….Տեսանք ամբողջ պատասխանատվությունը ժողովրդին վերահասցեավորելը *(Իրավունք, 20.07.2016):*

ՎԵՐԱՀԱՐՄԱՐՎԵԼ, բ, **Կրկին հարմարվել:** Կատուն, բոլորովին անտարբեր և անուշադիր տանտիկնոջ քրթմնջոցին, **վերահարմարվելով** իր տեղում, շարունակեց դարձյալ խոմփացնել *(ՄԽ, էջ131):*

ՎԵՐԱՁԵՎԱՉԱՓԵԼ, բ. **Վերակառուցել, բաժանումը վերափոխել**: Մինչև 2025թ. երկիրը ծրագրում է …. **վերաձևաչափել** ագրարային սեկտորը *(Ազգ, 10.02.2017):*

ՎԵՐԱՁԵՎԱՉԱՓՈՒՄ, գ. **Վերաձևաչափելը**: Հենց այդ պատճառով էլ արդիականացման ծրագրում շեշտը դրված է ոչ այնքան հանույթի սեկտորի վրա, որքան նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հենքային ճյուղերի **վերաձևաչափման** *(Ազգ, 10.02.2017):*

ՎԵՐԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Վերամարդկայնանալը, վերամարդկայնացնելը, կրկին մարդկային դառնալը՝ դարձնելը**: …. Անգամ **վերամարդկայնացման** պահին տպավորիչ պատկերային մանրամասները ավելի են ընդգծում նոր կրոնի գաղափարաբանությունը …. *(Սաֆ., էջ 21):*

ՎԵՐԱՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԵԼ, բ. **Վերստին նպատակաուղղվել:** Ցամաքային զորքերը …. **կվերանպատակաուղղվեն** հիմնականում սահմանների պահպանման խնդիրների լուծմանը …. *(Անդին, թ. 6, 2016):*

ՎԵՐԱՏԻՊ, գ. **Վերստին տպված կրկնօրինակ, վերարտադրանկար**: Այս կնոջ դեմքը …. հիշեցնում էր Տիցիանի «Երկնային սեր»-ը, որի **վերատիպը** կախված էր …. ճաշասենյակում *(Գոլս., էջ 348):*

ՎԵՐԵԼԱԿԱՎԱՐՈՒՀԻ, գ. **Կին վերելակավար:** Պառավ **վերելակավարուհին** ինձ նայեց պահանջկոտ ու կասկածելի հայացքով *(ՌՍՊ, հ. 2, էջ 476):*

ՎԵՐԵՐԿՐԱՅԻՆ, ած. **Երկրից վերև ընկած, երկրից՝ երկրայինից կտրված**: …. Այլաբանական կերպավորումը օգնում է, որ տաղը երկնային, բայց ոչ **վերերկրային** պայծառ տրամադրությամբ օժտի ընթերցողին …. *(Սաֆ., էջ 143):*

ՎԵՐՄԱԿԱԾԱԾԿ, ած. (դիպվ.): **Վերմակով փաթաթված՝ ծածկված**: …. Անգույն մի վերմակի մեջ փաթաթված՝ շտապ ու հոգնած քայլերով գնում էր կողքիցս նույն ճանապարհով …. Երբ հասա Սիպիլի տանը, **վերմակածածկ** ծերունին հետևել էր ինձ առանց ետ մնալու …. *(ՎՓ, էջ 58):*

ՎԵՐՆԱՀՈՆՔԱՅԻՆ, ած. **Հոնքերից վերև ձգվող:** Նրա …. ուռուցիկ ճակատը, **վերնահոնքային** կտրուկ կամարները …. ցույց էին տալիս ուղղամտություն *(Բ5, էջ 325):*

ՎԵՐՆԱՏՈՒՐ, ած. **Վերևից՝ աստծուց տրված**: **Վերնատուր** շնորհ *(Հեմ., էջ 5):*

ՎԵՐՋՆԱՀԱՆԳՐՎԱՆ, գ. **Վերջին հանգրվան**: Տե՛ս ԱՅՍԿՅԱՆՔԱՅԻՆ-ի օրինակը:

ՎԵՐՋՆԱՊԱՏՃԱՌ, գ. **Վերջնական, ավարտման հիմք հանդիսացող պատճառ**: Մտածողության զարգացման այս աստիճանում իրերի **վերջնապատճառը** համարվում է բարձրագույն էակների անձը *(Ֆր., էջ 197):*

ՎԵՐՋՆԱՐԴԱՐ, ած. **Արդարությամբ վերջացած. վերջը արդար**: Շեշտվում է …. մահվան **վերջնարդար** դատավարությամբ կյանքի ունայնության գիտակցման …. բնական պահանջը *(Սաֆ., էջ 201):*

ՎԹԱՐԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Վթար առաջացնող**: Ստացվում է, որ բնավ էլ ոչ **վթարահարույց** մի խախտման «շնորհիվ» պետությունը ինձնից վերցրեց կենսաթոշակիս գրեթե կեսը *(Իր., 11.11.2016):*

ՎԹԱՐՊԱՇԱՐ, գ. **Պարենի՝ հատուկ իրավիճակների համար նախատեսված պահուստային պաշար:** Ու լավ էի հիշում ներքին ճնշումից պատառոտվող՝ **վթարապաշարի** պահածոյի տուփերի մեռյալ խշրտոցը …. *(ՌՍՊ, հ. 2, էջ 515):*

ՎԻԵՆՆԱՀԱՅ, գ. **Վիեննայում բնակվող հայ:**Ի վերջո, 1912 թ. դեկտեմբերին **վիեննահայ** միությունը բացվեց և իրավունք ստացավ կառուցելու մի փոքրիկ մատուռ *(Գարուն, թ. 5, 1999):*

ՎԻԹԽԱՐԱՄԵԾ, գ. **Հսկա:** Կանգնած էր նա **վիթխարամեծ** հրաշքի պես ձյունեղեն *(ԼՄ4, էջ 14 2):*

ՎԻԹԽԱՐԱՉԱՓ, ած. **Շատ մեծ չափ ունեցող:** Նրա գլուխը տձև էր, այլանդակ ու **վիթխարաչափ**…. *(Հ, էջ 95):*

ՎԻՃԱՀԱՐՑ, գ. **Վիճարկելի հարց**: …. Նրա իսկ գոյությունը ակամա պատասխան է այն **վիճահարցին**, թե հայրենիներն անհատական, թե ժողովրդական ծագում ունեն *(Ապրիկ, 1, էջ 181):*

ՎԻՊԱՆՅՈՒԹ, գ. **Վեպի նյութ, գրելու՝ նկարագրելու՝ պատկերելու առարկա**: Որպես **վիպանյութ** …. պահանջված պիտի լիներ …. ճամփորդությունների օրագիրը *(Սարգր, էջ 5):*

ՎԻՐԱՀԵՏՔ, գ. **Վերքի հետք, վիրանշան**: …. Սպին …. գալիս էր անհետանալու աջ աչքի մոտ՝ կազմելով ամենուրեք մի խոշոր ու ցայտուն **վիրահետք** *(Բ5, էջ 19):*

ՎԻՔԻԱԿՈՒՄԲ, գ. **Վիքիի օգտատերերի ակումբ:** …. Մայրաքաղաքի **վիքիակումբի** համակարգող Իրինա Սաֆարյանն էլ ասել է, որ …. ցանկություն ունեն Արցախի բոլոր շրջաններում էլ **վիքիակումբներ** բացել *(ՀՀ, 17.03.2017):*

ՎՇՏԱԿՈԾՎԵԼ, բ. **Վշտանալ**: Լոկ դու գիտես, թե դեռ ինչքան կտրոփի // Սիրտն իմ՝Հոբի սրտի նման **վշտակոծված** *(ԼՄ4, էջ 61):*

ՎՇՏԱՍՈՒԳ, մկբ. **Վշտահար:** –Պարոնսեր, **վշտասուգ** շարունակեց Վեգները.... *(ՌԿ, էջ 419):*

ՎՍԵՄԱՇՈՒՆՉ, ած. **Բարձրարվեստ, վսեմաշուք:** Դա մի **վսեմաշունչ** ոեքվիեմ է ՝ նվիրված լույսի և ճշմարտության հաղթանակի համար ընկածների հիշատակին *(ԼՄ,էջ 38):*

ՎՍՏԱՀԱՇՈՒՆՉ, ած. **Վստահություն արտահայտող:** Ու հանկարծ իր նույն վերին աստիճանի իրազեկ ու **վստահաշունչ** տոնով նա մի նախադասություն արտաբերեց…. *(ՌՄՊ, հ. 2, էջ 467):*

ՎՐԱՆԱՍԵՆՅԱԿ, գ. **Վրանից պատրաստված սենյակ:** Եկան **վրանասենյակ** *(ՌՄՊ, հ. 1, էջ 93):*

ՎՐԱՑԱՊԱՏՈՒՄ, գ. **Վրացիների և Վրաստանի մասին պատմություն**: Որքան որ այս ժողովածուն բնույթով **վրացապատում** է, նույնքան էլ՝ հայապատում *(Իր., 18.10.2016):*

ՎՐԻԺԱԿԱՐՈՏ, ած. **Վրեժի բուռն ցանկությամբ համակված**: Բերում եմ սիրտս, որ երկնքի պես մթնած ու ամպած // Շանթել է ուզում **վրիժակարոտ** *(ԼՄ4, էջ 12):*

ՎՈՒՇԱԳՈՒՅՆ, ած. **Վուշի գույն ունեցող**: Եթե «Գնչուհին» զուգահեռն է Բիզեի «Կարմենի», ապա **վուշագույն** մազերով աղջիկը՝ անբիծ գեղջկուհին, նման է Կարմենի հակապատկեր հեզահամբույր Միքայելային *(Իր., 16.12.2016):*

Տ

ՏԱԲՈՒԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. 1. **Տաբուավորված լինելը: 2. Որոշակի առարկաների, բառերի գործածության արգելք, գործողությունների արգելում**: **Տաբուավորվածության** վիճակում են գտնվում Մեքսիկայի մուսուլման ուխտավայրերը, որոնց նույնպես արգելվում է մատանիներ կրել…. *(Ֆր., էջ 289):*

ՏԱԿԱՆՔՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Այլասերվածություն, բարոյազրկություն, ստորություն**: …. Որոշ դեպքերում էլ չի կարելի լաց լինել, որովհետև արածդ **տականքություն** կլինի *(Սարոյան, էջ 220):*

ՏԱԿԱՌԱԿԱՊԻՉ, գ. **Փայտյա տակառաշերտերը ամրակապող**: Հիմնակմախքը կազմված էր ձողափայտերից և **տակառակապիչներից** *(Ֆր., էջ 768):*

ՏԱՊԱԽԵՂԴ, ած. **Տապից խեղդվող:** ….Ճահճային **տապախեղդ,** ճպճպացող թփուտների մեջ ապրող թիթեռներն են…. *(ՌՍՊ, h. 2, էջ 61):*

ՏԱՏԱՍԿԱԽՈՏ, գ. **Մի տեսակ փշոտ բույս: Տատասկախոտը** ճանկռում էր Ալիսի ոտքերը, կարծես ուզում էր բռնել-պահել *(ՍԼ, էջ 81):*

ՏԱՐԱԾԱԽՏ, գ. **Տարածավախություն: Տարածախտով** հիվանդ մեկը, դեմքը ծածկելով, կհեռանար…. *(ՌՍՊ, h. 1, էջ 58):*

ՏԱՐԱՇԱՌԱՎԻՂ, ած. **Այլ շառավիղ՝ ուղղություն ունեցող**: …. **Տարաշառավիղ** ակունք …. *(Սաֆ., էջ 93):*

ՏԱՐԱՇԱՌԱՎԻՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարբեր շառավիղներ ունենալը, տարաշառավիղ լինելը**: …. Մարդկային ընկալումների **տարաշառավիղությունը** *(Սաֆ., էջ 5):*

ՏԱՐԱՇԵՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարաշերտ լինելը, տարբեր շերտերի պատկանելը**: …. Չարությունը մարդկային որոշակի դեմք է ստանում կերպավորման **տարաշերտությամբ** *(Սաֆ., էջ 128):*

ՏԱՐԲԵՐԱԶԱՆ, ած. **Տարաբնույթ**: …. Հոյակապ շինության **տարբերազան** կառուցվածքներ *(ԳԹ, 17.02.2017):*

ՏԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Տարբերաշրջանային հատուկ՝ վերաբերող, տարբերաշրջանի**: …. Լիարժեքորեն չի բացատրում, սակայն, գրականության և մշակույթի տարբերաշրջանային առանձնահատկությունները *(Սաֆ., էջ 3):*

ՏԱՐԵԳՐԱԲԱՐ, մկբ. **Ինչպես տարեգրության մեջ**: …. 30 տարվա իրադարձությունները **տարեգրաբար** պատմելով՝ չես նպաստի …. ժողովրդի կողմից նրա ընդունելությանը …. *(Սաֆ., էջ 19):*

ՏԱՐԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Տարբեր՝ այլատեսակ ընկալում**: …. Քրոնոտոպը՝ որպես ձևաբովանդակային կառույց, **տարընկալումներ** է ներկայացնում արվեստներից յուրաքանչյուրում …. *(ԲԱ1, էջ 75):*

ՏԱՐՈՆԱԿԱՆՉ, գ. **Կորցրած հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի՝ Էրգրի կանչը, Տարոնի կանչը**: …. Տեղի ունեցավ գրող, հրապարակախոս Վրեժ Սարուխանյանի **«Տարոնականչ»** պատմվածքների ժողովածուի շնորհանդեսը *(Իր., 21.10.2016):* …. Ձեր մեջ կա **տարոնականչ**, և այդ կանչով եկաք այստեղ *(Իր., 21.10.2016):*

ՏԱՓԱՏԵՐԵՎ, ած. **Տափակ տերևներով:** Տե՛ս ԽԱՂՈՂԱԹՈՒՄԲ -ի օրինակը:

ՏԵՂԱԽԱԽՏ, ած. **Տեղից խախտված:** Իսկ նա մեկուկեստոննանոց զառամյալի տեսք ուներ. ճմլված թևեր, **տեղախախտ,** ջարդուխուրդ կողեր…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 84):*

ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Տեղեկատվային դառնալը**: Այն կնպաստի Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների, **տեղեկատվայնացման**, հեռահաղորդակցության և ինովացիոն ոլորտի մրցունակության զարգացմանը …. *(ՀՀ, 24.02.2017):*

ՏԵՆԴԱՑՈԼՔ, ած. **Տենդագին ցոլք ունեցող:** Որոնք [թևերը] մեկ –մեկ ելնում էին իմ ճանապարհին՝ որպես սև դեկորների խառնիխուռն կիտուկներ, **տենդացոլք** աստղերով սփռված *(ՌՍՊ, հ. 2, էջ 23):*

ՏԵՍԱԱՊԱՑՈՒՅՑ, գ. **Ապացույցի արժեք ունեցող տեսանյութ**: Հայկական կողմն ունի **տեսաապացույցներ** …. *(Ազգ, 03.03.2017):*

ՏԵՍԱԴՐՈՒՅԹ, գ. **Տեսական դրույթ՝ կարծիք՝ տեսակետ**: …. Այդ **տեսադրույթից** …. ինքնին ածանցվում էր նաև հակադարձ հարցադրումը *(Հայրունի 1, էջ 506):*

ՏԵՍԱՇԱՐԺ, գ. **Տեսանելի շարժումը:** Լռեցրեք ինձ այն պահին, երբ այլևս անհնարին կհամարեք դիտելու զարհուրելի **տեսաշարժերը** *(ՌԿ, էջ 419):*

ՏԵՍԱՏԱՐԲԵՐԱԿ, գ. **Տեսագրված՝ տեսանկարված տարբերակ**: Ս. Հովսեփյանը նշեց, որ մտածում են այս խաղերն ունենալ նաև **տեսատարբերակով** *(ՀՀ, 25.02.2017):*

ՏԵՍԻԼԱՊԱՏՈՒՄ, գ. **Տեսիլային՝ աննյութական, աներևույթ, երևութական պատում**: …. Սրբի նշխարքի հետ առնչվող **տեսիլապատում** …. *(Սաֆ., էջ 95):*

ՏԵՐԵՎԱԹԻԿՆՈՑ, գ. **Տերևներից պատրաստված թիկնոց**: Երեխաները ճյուղեր են պոկում և դրանցով այնքան են փաթաթում տերևամարդուկին, որ **տերևաթիկնոցի** տակից միայն կոշիկներն են երևում *(Ֆր., էջ 157):*

ՏԵՐԵՎԱՄԱՐԴՈՒԿ, գ. **Որոշ ժողովուրդների մոտ ծառերի պաշտամունքի հետ կապված՝ տերևաթիկնոցով մարդը**: Տես ՏԵՐԵՎԱԹԻԿՆՈՑ-ի օրինակը:

ՏԵՐԵՎԱՆՎԱԳ, գ. (փխբ.): **Տերևների շրշյունը**:….Բարդու…. այլափոխիկ **տերևանվագից** առավել դյութիչ է շրջապատի անդորրը *(ՌԿ, էջ 182):*

ՏԵՐԵՎԱՇԱՂ, գ. **Թափված տերևներ:** Ամեն առավոտ ավլում սրբում էին …. **տերևաշաղը**, դեզ-դեզ կուտակում տերևները …. *(Գոլս., էջ 346):*

ՏԵՐԵՎԵ, ած. **Տերևներից կազմված, սարքված, պատրաստված**: Պանդոկում նա իր վրայից հանում է **տերևե** հագուստը *(Ֆր., էջ 163):*

ՏԻԵԶԵՐԱԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Տիեզերքի ընկալումը**: Տիեզերաընկալման, աշխարհընկալման քրիստոնեական համակարգն իր զուգահեռներն ունի քաղաքակրթական զանազան հուշարձանների տեքստերում …. *(Տոն., էջ 266):*

ՏԻՂՄԵ, ած. **Տիղմից պատրաստված**: **Տիղմե** արձանիկներ *(Ֆր., էջ4437):*

ՏԻՄԱՊԱՏՈՒՄ, գ. **Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) մասին պատմություն**: Հաղորդման վերնագիր *(Հեռ., Արմնյուզ, 23.04.2017):*

ՏՂՄԱՀՈՏ, գ. **Տիղմի հոտ**: …. Ոտից գլուխ **տղմահոտն** ու ձկնահոտը այնպես է փչում…. *(ՋԽ, էջ 318):*

ՏՆԱԲՈՒՅՐ, ած. **Տան բույրը ունեցող**: Կնոջս տնաբույր ճամպրուկում լվացքի պարան, անշուշտ, չկար …. *(Ռ. Հովս., էջ 266):*

ՏՎԱՅՏԱԼԻՑ, ած. **Տվայտանքներով լի՝ լեցուն**: **Տվայտալից** հակասություններ *(Սաֆ., էջ 169):*

ՏՐՏՄԱԽՈՀ, ած. **Տրտում և խոհուն, տրտմորեն խոհուն**: …. Աչքերը …. **տրտմախոհ** հայացքով հետևում էին աղջկան *(Գոլս., էջ 28):*

ՏՐՏՄԱՎՈՒՆ, ած. **Տխրավուն:** Կարճահասակ էր, ճաղատացող ու **տրտմավուն,** պիջակի բազուկները փայլում էին *(ՌՍՊ, հ. 2, էջ 532):*

ՏՈՒԺԱԳՈՒՄԱՐ, գ. **Որպես տույժ՝ տուգանք գանձվող գումար, տուժավճար**: …. Ինչո՞ւ փոստից չեք գանձում **տուժագումարը** *(Իր., 11.11.2016):*

ՏՈՒՆԱՎԱՆ, գ. **Տներից կազմված ավան**: Այս «Կարմրաքար» հանգստյան **տունավանը** տասնութ-տասնինը տարի առաջ է ստեղծվել *(ՍԽ, էջ 328):*

Ց

ՑԱԾՐԸՆԹԱՑ, ած. **Ցածր ընթացող:** Արշավում էին խավարում, **ցածրընթաց** ամպերի տակով…. *(ՌՍՊ, հ. 1, էջ 253):*

ՑԱՅԳԱՍԵՂԱՆ, գ. **Գիշերային սեղան**: …. Երկու փոքր **ցայգասեղան** վերցրեց *(Բ7, էջ 547):*

ՑԱՆՑԱԳՐՊԱՆ, գ. **Բիլիարդի գնդակների համար նախատեսված ցանցավոր գրպանիկ**: …. Ինչպես էր սեփական կինը խաղագնդերը դեպի **ցանցագրպաններն** ուղարկում *(Բոհջ., էջ 117):*

ՑԱՍՈՒՄՆԱՑԱՅՏ, ած. **Ցասում, խիստ բարկություն արտահայտող**: Ինքը ստիպված կլինի կանգնել թագավորի **ցասումնացայտ** երեսի առաջ *(Մենկ., էջ 88):*

ՑԵԽԱԾԵՓ, ած. **Ցեխով ծեփած**: …. Մի ամբողջ գիշեր շրջում էր Երևանի փողոցներով …., մտովի փաղաքշում նրա **ցեխածեփ** պատերը …. *(ԱԱ, ԸԵ, էջ 5):*

ՑԵՄԵՆՏԱՑԵԽ, գ. **Ցեմենտի ցեխ՝ շաղախ**: Շենքի հիմքում …. գիրթ ու գիբիլ լցրեք, ու վրեն՝ մի քիչ **ցեմենտացեխ** *(Մարտ., էջ 205):*

ՑՆՑՈՏԱՆՄԱՆ, ած. **Ցնցոտու նման**: …. Պարանոցը հազիվ ծածկող **ցնցոտանման** վզնոց …. *(Բ7, էջ 500):*

ՑՆՑՈՒՄՆԱՇԱՏ, ած. **Հաճախ ցնցման մեջ գտնվող, շատ ցնցումներ ունեցող**: Տե՛ս ՀԱՐԱԴՂԻՐԴ-ի օրինակը:

ՑՈՂԱՓՈՇԻ, գ. **Փոշենման ցող**: Ամպերի մեջ բացված նեղ ճեղքով երկինքը հաջողացրել է (Ճիշտ է՝ հաջողեցրել) հրեշտակային կարմիր **ցողափոշի** շաղ տալ Միջերկրականի խաղաղ ջրերի վրա *(Բոհջ., էջ 187):*

ՑՈՐՆԱԹԱՓ, գ. **Ցորենի թափվելը:** Ծպտյալ ախոյանն անշարժացել է հանդիպակաց արտերի մեջ և ոստնելու պահին պիտի բազմապատկվի անքանակ, ինչպես **ցորնաթափը**՝ փխրուն հասկերի միջից *(ՌԿ, էջ 183):*

ՑՈՐՆԱԽՈՒՐՁ, գ. **Ցորենի՝ հասկի կապուկ:** Փակոցափեղկերին ծաղիկ-ծաղկամաններ և **ցորնախրձեր** նկարեց *(ՌՍՊ, հ. 1, էջ 349):*

ՑՈՐՆԱՀՅՈՒՍՔ, գ. **Ցորնագույն՝ ցորենագույն հյուսք**: …. Իր **ցորնահյուսքերը** թաքցնելով սգո հագուստի տակ՝ ամբողջ աշխարհում որոնում էր Պերսեփոնեին *(Ֆր., էջ 463):*

ՑՈՐՆԱՏԵՂԻ, գ. **Ցորենի արտ:** Նրանց առաջապահ վաշտերը հեղեղել են **ցորնատեղին** *(ՌԿ, էջ 187):*

ՑՈՓՈՒՀԻ, գ. **Զեխ, շվայտ, անառակ կամ լկտի, լպիրշ կյանք վարող կին**: **Ցոփուհիները** ազատ ասպարեզ ունեին այստեղ *(Բ7, էջ 488):*

ՑՈՒՑԱՊԱԿԻ, գ. **Ցուցափեղկի ապակին**: Շուտով թեքվում ես ոլոր նրբանցք ու կանգնում գույնզգույն ներկված **ցուցապակու** մոտ *(Պաչյան, էջ 45):*

ՈՒ

ՈՒՂԵՂԱՐԴՈՒԿՈՒՄ, գ. (դիպվ.) **Մարդու մտածական կարողությունների վրա ազդում**: Մոլորակի վրա կան և գործում են ուղեղարդուկման բազմաթիվ ինստիտուտներ …. *(Իր., 21.02.2017):*

ՈՒՂԵՍԱՅԼ, գ. **Ճանապարհասայլ:** Մենք վարգում ենք անդունդի եզրին ընթացող **ուղեսայլի** մեջ, և ձիերը խրտնել են *(Հ, էջ 148):*

ՈՒՂԵՎԱՐ, գ. **Ուղին վարողը, գնալը՝ քայլելը վարողը՝ ղեկավարողը, ուղուն ուղղություն տվողը**: Մենք գնում էինք թանցուկ արած: Նրա **ուղեվարը՝** տասնյոթամյա գեղջկուհին, գալիս էր մեզ հետ …. *(Հունգ., էջ 83):*

ՈՒՂՂԱԹԵՔ, ած. **Ուղիղ թեքված՝ դեպի մի կողմ հակված՝ ծռված՝ շեղված:** Բարձրացա մի փոքրիկ ու **ուղղաթեք** սանդուղքով *(Բ5, էջ 176):*

ՈՒՂՂԱՄԵՋՔ, ած. **Ուղիղ մեջք ունեցող:** Տե՛ս ՎԵՀԱՍՊԻՏԱԿ-ի օրինակը:

ՈՒՇԱԳՐԱՎՈՐԵՆ, մկը. **Ուշագրավ կերպով**: …. Ոչինչ չէի լսում, չնայած լսողությունս **ուշագրավորեն** սուր է *(Բ7, էջ 45):*

ՈՒՇԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ուշ հայտնի լինելը:** Հայության հավաքական միտքը, ինչպես որ հայի հետին խելքը, **ուշահայտնության** խարանով է դրոշմակնքված *(Անդին, թ. 2, 2017):*

ՈՒՌԵՆԱԶԱՐԴ, ած. **Ուռենիներով զարդարված**:…Դուրս գալով Թավրիզի դռնից՝ նույն **ուռենազարդ** պողոտայով վերադառնանք Այգեստան *(ՄԽ, էջ120):*

ՈՒՐԱՆԱԼԵՌ, գ. **Ուրան պարունակող լեռ**: Տես ՀԱՐԱԴՂԻՐԴ-ի օրինակը:

ՈՒՐՎԱԿԵՑԱԿԱՆ, ած. (բնստ.): **Ուրվականի կեցվածքով**: Իմ թոդած կյանքը **ուրվակեցական** //Բլուրվեց կրծքիս՝ խոսքով անհունի *(ԲԱ, էջ 11):*

Փ

ՓԱԽՍՏԱԿԱՆՈՒՀԻ, գ. **Փախստական կին:** …. Սառնորեն ընդունեց **փախստականուհուն** …. *(Բ5, էջ 436):*

ՓԱԿՈՒՂԱՅԻՆ, ած. **Փակուղուն բնորոշ**: «Սառը պատերազմի» ավարտից հետո ԱՄՆ-ը և մյուս միջուկային տերությունները հայտնվեցին **փակուղային** իրավիճակում…. *(Անդին, թ. 5, 2016):*

ՓԱՂԱՔՇԱԿԱՆՈՐԵՆ, մկբ. **Փաղաքշական կերպով, փաղաքշանքով:** Նա զբաղվեց ինձնով՝ **փաղաքշականորեն** ինձ անվանելով «փոքրիկս» *(Բ5, էջ 347):*

ՓԱՅԼԱՐԱՆՄԱՆ, ած. **Թափանցիկ հանքաքարի՝ փայլարի նման:** Մառախուղը նստում էր խորունկ վիհերով, **փայլարանման** արևի տակ արդեն ցոլցլում էին Կարադաղի թաց լանջերը *(ՌՍՊ, հ. 1, էջ 360):*

ՓԱՅԼԱՐՁԱԿԵԼ, գ. **Փայլ արձակել՝ փայլել**: Տես ՍԱՌՑԱՁՈՂ-ի օրինակը:

ՓԱՅՏԱԿՈԹ, գ. **Փայտի կոթը:** Մարդը չհասցրեց, չկամեցավ հեռացնել այնտեղ իջեցրած **փայտակոթը,** թողեց փախավ *(ՌԿ, էջ 255):*

ՓԱՅՏԱՌԱՏ, ած. **Փայտով առատ, առատ փայտ ունեցող**: Խոյթը անտառավետ էր, **փայտառատ:** Մեր Թալինը անտառ չունի, անփայտ է *(ՍԽ, էջ 201):*

ՓԱՌԱՏԵՍ, ած. **Փառաբանության արժանի տեսքով**: Մյուսն ուրախ, ժպտերես, չքնաղ, ինչպես վայելք աստծուն՝ **փառատես** …. *(Ֆր., էջ 119):*

ՓԱՐԹԱՄԱԴԵԶ, ած. **Փարթամորեն դիզված**: …. Դեմքն ու մարմինը շատ բարալիկ էին թվում …. **փարթամադեզ** մազերի համեմատ *(Գոլս., էջ 21):*

ՓԱՐԹԱՄԸՆՉԱՑՔ, ած. **Փարթամ ընչացք ունեցող**: Տե՛ս ԽՈՀԺՈՌԱՀՈՆ-ի օրինակը*:*

ՓԱՓԱԳԱՇԱՏ, ած **.Շատ փափագելի:** Տե՛ս ՀԱՅԱՋԱՐԴ-ի օրինակը:

ՓԵՇԱԾԱԼՔ, գ. (փխբ.): **Լեռան լանջ:** Ահ, ինչքա՜ն անմոռուկներ շիկակարմիր ժայռերի **փեշածալքերում** և ինչքա՜ն հիրիկ՝ մի կալատեղ տարածքում սիրաբանող *(ՍՀ, էջ 17):*

ՓԵՏՐԱՎԵՐՄԱԿ, գ. **Փետուրով լցված վերմակ**: Պառկած էր անկողնում՝ հորաքրոջս **փետրավերմակով** ծածկված *(Պրուս, էջ 182):*

ՓԹԹՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գեղեցկակազմություն, առույգություն:** Ոչ մի կոպիտ ու ճչացող բան չկար նրա մեջ, չուներ խառնածիններին հատուկ չափից դուրս **փթթունությունը** *(ՍՍ, էջ 311):*

ՓՂԱԳԼՈՒԽ, 1. գ. **Փղի գլուխ:** 2. ած**. Փղի գլուխ՝ փղի գլխի նման գլուխ ունեցող**: [Շիվայի որդուն] պատկերում են **փղագլուխ** մարդու տեսքով *(Ֆր., էջ 566):*

ՓՂԱՍՊԱՆ, ած., գ. **Փիղ սպանող**: …. Հայտնվում է **Փղասպան** տիտղոսով մեծատոհմիկը և խեղդում է նրան *(Ֆր., էջ 42):*

ՓՇԱԼԱՐԵԼ**,** բ. **Փշալարով պատել**: Էլիզաբեթը հառաչում է՝ պատկերացնելով Արմենին հրացանն առաջ պարզած դեպի **փշալարած** սահմանագծերը վազելիս …. *(Բոհջ., էջ 120):*

ՓՇԱՅԱՆԿ, գ. **Փշոտ ճյուղերից սարքած պատնեշ, փշացանկապատ**: …. Ուզում էր եռյակ մի **փշացանկով** շրջապատել իրեն և պաշտպանել փոթորիկներից …. *(Բ7, էջ 109):*

ՓՈԹՈՐԿԱՀՈՂՄ, գ. **Փոթորկի վերածված հողմ**: **Փոթորկահողմը** հաճախ համարվում է չար էակի պես մի բան, որին կարելի է վախեցնել, քշել …. *(Ֆր., էջ 100):*

ՓՈԽՀԱՐԳԱՆՔ, գ. **Փոխադարձ հարգանք**: …. Բանակում արմատապես փոխվել են միջանձնային հարաբերությունները՝ ձևավորելով **փոխհարգանքի** ու կանոնագրքի պահանջները կատարելու հոգեբանություն-ավանդույթ *(ԳԹ, 03.02.2017):*

ՓՈԽՆՅՈՒԹ, գ. (դիպվ.): **Ոչ բնական, արհեստական:** ….Այդ շարժումը սերտած ու անբնական թվաց, միևնույն ձայնը, միևնույն կիսածիծաղը նմանապես **փոխնյութ** էին…. ոչ իրական…. *(ՌՍՊ, հ. 2, էջ 372):*

ՓՈԽՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. …. Եվ ամեն ինչ փոխկապակցված է, օժտված է **փոխտեղեկատվությամբ** *(Գարուն, թ. 5, 1999):*

ՓՈԿԱՄՏՐԱԿ, գ. **Փոկերից՝ կաշվի կամ այլ ամուր նյութերի բարակ ու երկար շերտերից հյուսված մտրակ**: Դյուման կիրճերում կրակում էր արծիվների վրա և, **փոկամտրակը** ձեռքին, ընտելացնում բռնած գառնանգղին *(Անդր., էջ 31):*

ՓՈՂԱԳԵՐԻ, գ. (դիպվ.): **Մոլի փողասեր**: …. – Առանց փողերի մնալն էլ դժբախտություն է …. , - տարակուսեց **փողագերի** Յավուր Յավուրյանը *(Մարտ., էջ 65):*

ՓՈՇԱՀԱՐ, մկբ. **Փոշոտված:** Հերսոտած ձայնողը հրեց, քաշքշեց զինվորին, որը քայլում էր ամպամած ու **փոշահար** *(ՌԿ, էջ 208):*

ՓՈՇԵԿԱՆԱՉ, ած. **Փոշու և կանաչ գույն ունեցող:** Հաստ շերտերով կապույտ վրձնահարվածներ նետեց աղոտ **փոշեկանաչի** մեջ ու հառաչեց…. *(Հ, էջ 146):*

ՓՈՇԵԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Փոշու և կանաչ գույնի երանգ ունեցող:** Սրտիս մոտեցեք, **փոշեկանաչավուն** ու աղոտ ծառեր *(Հ, էջ 145):*

ՓՈՐԱԳՐԱՆԱԽՇ, ած. **Փորագրությամբ նախշված**: Պատից կախված էր **փորագրանախշ** մի ժամացույց *(Հեմ., էջ 87):*

ՓՈՐԱՄԱՍ, գ. **Փորի մասը՝ հատվածը**: Մողեսի բարակ, սպիտակավուն **փորամասերը** տատանվեցին արագ *(ՍԽ, էջ 73):*

ՓՈՔՐԱՏԻՊ, ած. **Շատ փոքր**: Ամեն մի **փոքրատիպ,** հազիվ նկատելի կայարանում պետք է պարես գյուղական ավագների հետ …. *(Հունգ., էջ 6):*

ՓՏԱԽՏԱՀԱՐ, ած. **Փտախտով հիվանդ**: …. Անդամատի՛ր հիշողություններդ իբրև **փտախտահար** վերջույթներ, դրանք ի զորու են լոկ ավելի մեծ ցավ պատճառել *(Բոհջ., էջ 49):*

ՓՐԿԱՐՇԱՎ, գ. **Փրկելուն ուղղված արշավ:** Ցավոք, ահա թե պատերազմական հանգամանքների ու դաժան պարտադրանքների պատճառով ինչպես ավարտվեցին Բաքվի **փրկարշավի** գործողությունները *(Անդին, թ. 3, 2016):*

ՓՐՓՐԱՃԵՐՄԱԿ, գ. **Փրփուրի նման ճերմակ:** Տե՛ս ԺԱՆԵԿԱՇԱՐ-ի օրինակը:

ՓՈՒԹԱՔԱՅԼԵԼ, բ. **Արագ քայլել**: Նա ամուր սեղմեց ձեռքս իր կոշտաշատ բռան մեջ …. և **փութաքայլեց** *(ԱԱ, ԸԵ, էջ 69):*

ՓՈՒԼԱՆՑՈՒՄԱՅԻՆ, ած. **Փուլից փուլ անցնող**: [Ազգաբանական նոր շրջանի] դրամատիկ վայրիվերումները …. 1500-ամյա **փուլանցումային** շարժումով հասնում են նոր ժամանակների 20-21-րդ դարերը՝ պետականության վերագտնումների երեք ձևերի առկայությամբ *(Սաֆ., էջ 44):*

ՓՔՈՒՆԱՏԵՍ, ած. (փխբ.): **Ճոռոմ տեսք ունեցող:** Իսկ երեկոյան, երբ վերջին անգամ թեյեցինք **փքունատես** հյուրասենյակում, կանայք գործ էին անում …. *(ՍՄ, էջ 240):*

Ք

ՔԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Քաղագրում, քաղագրելով կազմված աշխատություն:** ….Նկատի պիտի առնել, որ հրապարակվել է ոչ թե հարցազրույցի լրիվ սղագրությունը, այլ սոսկ **քաղագրությունը** *(ՍՍ, էջ 585):*

ՔԱՆԱԿԱԾԱՎԱԼԱՅԻՆ, ած. **Ըստ քանակի և ծավալի, քանակով և ծավալով**: …. Շարժանկարների **քանակածավալային** ընդլայնում *(Հայրունի 1, էջ 388):*

ՔԱՆԴԱԿԱԿԵՐՏՈՒՄ, գ. **Քանդակ կերտելը:** Այդ կոմպոզիցիայում սինթեզված են մահմեդական և հինարևելյան …. և պարսկական

արվեստում հանդիպող **քանդակակերտման** եղանակները *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՔԱՆԴԱԿԱՁԵՎ, գ. **Քանդակների ձև:** Տե՛ս ՍԳԵՐԳԱՅԻՆ-ի օրինակը:

ՔԱՆԴԱԿԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ, ած. **Քանդակագործությանը և ճարտարապետությանը վերաբերող:** Այն կարելի է համարել որպես մեր օրերում **քանդակաճարտարապետական** համադրության ուսանելի ու լավագույն օրինակ *(Գարուն, թ. 3-4, 2016):*

ՔԱՆԴԱԿԱՊԱՏՈՒՄ, գ. **Քանդակներով պատելը**: Որոշված է **քանդակապատման** ենթարկել նաև Դսեղի կենտրոնական հրապարակը …. *(Ազգ, 08.09.2017):*

ՔԱՆԴԱԿԱՐՎԵՍՏ, գ. **Քանդակագործական արվեստ**: Պատվանդանները …. **քանդակարվեստի** մի գեղեցիկ տպավորություն էին թողնում *(ԲՇ, էջ 38):*

ՔԱՆՔԱՐԱՎՐԵՊ, ած. (բնստ.): **Տաղանդազուրկ, տաղանդը չգնահատող: Քանքարավրեպ** այս երկնքի տակ, //Այս մերկ ու անսեռ օրերի առաջ //Բախտիս ենթակա ինչ աստղ էր՝ մարեց *(ԲԱ, էջ 13):*

ՔԱՋԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Բարձր հնչող, քաջահնչող:** Երգի **քաջահնչյուն** հեղեղը հորձանք տալով քաղաքի փակ պատուհաններին, հորդում է մոտակա փողոցներից *(ՌԿ, էջ 306):*

ՔԱՋԱՄԱՐՏԵԼ, բ. **Քաջաբար մարտնչել**: Հայրենակարոտ մեր նախնիք, ելել են՝ լանջակների վրա արևի սուրբ նշանը և այդ նշանով **քաջամարտել**, ընկել են հերոսի վայել մահով *(ՌԿ, էջ 155):*

ՔԱՋԸՆԿԵՐ, գ.**Քաջ ընկեր:**- Դանիել,- դիմեց մի գնդապետ **քաջընկերոջը** գրկախառնվելուց հետո,-ես ոչինչ չգիտեմ *(ՌԿ, էջ 201):*

ՔԱՌԱՋԱՏԵԼ, նբ. **Չորս մասի բաժանել**: …. Տոհմանիշը …. **քառազատված** հորիզոնական զուգահեռներով *(ԲՏ, էջ 333):*

ՔԱՌԱԾՈՒՆԿ, ած. **Չորս ծնկաձև մաս ունեցող:** Տե՛ս ԲԱՐԴԱԿԱՋՄ-ի օրինակը:

ՔԱՌԱԿՈՒՍԱԾՆՈՏ, ած. **Քառակուսի ծնոտով՝ ծնոտ ունեցող**: Մի դող անցավ նրա **քառակուսածնոտ,** արծվաքիթ ծեր դեմքով *(Գոլս., էջ 24):*

ՔԱՐԱԳՈՒՅՆ, ած. **Քարի գույնի՝ գույն ունեցող**: Խոսողը **քարագույն** ու քարանման ծերունի է *(ՍԽ, էջ 37):*

ՔԱՐԱԴԱՇՏ, ած. **Քարերով պատված՝ քարոտ դաշտ**: …. Ապարանից է եկել այս **քարադաշտ** տեղում ապրելու *(ՍԽ, էջ 382):*

ՔԱՐԱԼԱՆՋ, գ. **Քարոտ՝ քարաշատ լանջ**: Հիմա ջուր են մղում **քարալանջը,** հողը տանում լցնում երախը, որ ծառ տնկեն *(ՍԽ, էջ 202):*

ՔԱՐԱՀԵՐՁ, գ. **Կտրտված քարաժայռ**: Տե՛ս ՄԵՐՁԱՐԱՔՍՅԱՆ-ի օրինակը:

ՔԱՐԱՆՁԱՎԱԳԵՏ, գ. **Քարայրագետ, անձավագետ**: Թե ինչու են **քարանձավագետների** առաջարկները պարբերաբար մերժվել նախորդ տարիներին, այնքան էլ պարզ չէ *(Իր., 29.11.2016):*

ՔԱՐԱՆՁԱՎԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Քարանձավագիտությանը վերաբերող՝ հատուկ, անձավագիտական, քարայրագիտական**: **Քարանձավագիտական** կենտրոնի նախագահ Սամվել Շահինյանը հավելեց …. *(Իր., 29.11.2016):*

ՔԱՐԱՊԱՏԿԵՐ, գ. **Քարի վրա պատկերված նկար**: Սաստիկ երաշտի դեպքում նրանք աղբյուրի մեջ են գցում սրբի հնագույն **քարապատկերը** *(Ֆր., էջ 95):*

ՔԱՐԵԿԱՄԱՐ, ած. **Քարից շինված կամար ունեցող**: …. Հովհաննես անունով մի վարպետ հողը վարել է, ջուրը հանել, **քարեկամար** աղբյուր շինել վրան *(ՍԽ, էջ 49):*

ՔԱՐՇԱԿԱՐԹ, գ. **Քարշակելու՝ քարշ տալու համար նախատեսված կարթ**: Տե՛ս ՍԱՆԴՂԱՋՐՎԵԺ-ի օրինակը:

ՔԵՖԱԾԱՂՐ, գ. **Քեֆի ժամանակ կատարված ծաղր**: …. Այս իմաստությունը …. հաստատվում է ճոխ ու փարթամ **քեֆածաղրի** մեջ հնչած գյուղացու կցկտուր ու թշվառ բառերով *(Արով., էջ 94):*

ՔԼՈՐԱԿԱՅԱՆ, գ. **Քլորամաքրման կայան**: Շինարարական աշխատանքները ներառում են՝ **քլորակայանի** շենքի կառուցում, քլորացնող սարքավորման ձեռքբերում, տեղադրում, փորձարկում, կարգաբերում …. *(ՀՀ, 09.02.2017):*

ՔՂԱՆՑՔԱԿԱԼ, գ. **Քղանցքը բռնող, փխբ. հլու կամակատար, քծնամոլ:** …. Այս հովվապետն ունի մի **քղանցքակալ՝** …. թերթի խմբագիր …. *(Բ5, էջ 704):*

ՔՆԱՀՈՏ, գ. **Քնի հոտը**: Կիսամութ էր, տների բաց լուսամուտներից, կտուրներից, բակերից փողոց էր թափվել գոլ **քնահոտը**, թաղի խաղաղ օդում խլրտում էին առավոտվա երազները *(Ռ. Հովս., էջ 4):*

ՔՆԱՍԵՂԱՆԻԿ, գ. **Մահճասեղան, կողասեղան, պահարանիկ (մահճակալի մոտ)**: …. Երբ զոհվեց, **քնասեղանիկին** միայն մի՝ ռազմարվեստի դասական Սուն-Ցուի «Պատերազմելու արվեստը» գիրքը գտան *(Ջան., էջ 57):*

ՔՆՔՇԱԳԵՂ, ած. **Քնքուշ և գեղեցիկ:** Այն միֆը իր խենթերն ու սիրահարներն ուներ, իր նշանավոր այրերն ու **քնքշագեղ** կանայք *(ԱՊ, էջ 235):*

ՔՆՔՇԱՋԳԱՑ, ած. 1. **Քնքուշ զգացմունքներով: 2. Քնքուշ զգացմունքներ առաջացնող, դրանց պատճառ հանդիսացող**: Ձեփյուռից օրորվող դեղին նարգիզների պարը դիտելու **քնքշազգաց** ցանկությունը *(Ֆր., էջ 382):*

ՔՆՔՇԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Նրբակեցություն, փափկակեցություն:** Նա այդ **քնքշակեցության** կողմնակիցը չէր *(ՍՄ, էջ 256):*

ՔՆՔՇԱՀՈՒՅԶ, ած. **Քնքշությամբ հուզող, քնքուշ և հուզիչ:** Դանիելն անտարբեր էր ժամանակակից **քնքշահույզ** մեղեդիների հանդեպ …. *(Օտ., հայ գր.,, էջ 234):*

ՔՆՔՇՇՇՈՒԿ, ած. **Քնքշորեն և շշուկով**: …. Գրկում եմ Քեզ՝ քրոջական սրտի **քնքշաշշուկ** աղոթքի բառերով *(Անդին, թ. 7, 2016):*

ՔՆՔՇԱՑՈՒՑԻՉ, ած. **Քնքշացնող, նվազափաղաքշական**: Դրա վառ արտահայտություններից է –իկ **քնքշացուցիչ** մասնիկը …. *(Սաֆ., էջ 143):*

ՔՈՉՎՈՐԱԾԻՆ, ած. **Քոչվոր ցեղից ծնված:** Եվ այսօր պատմության անպատ միջանցքներում մարդկային ցեղի մի աննկարագիր, **քոչվորածին** տեսակ ասում է՝ ես կատարեցի, ասում է՝ ոչնչացրու… *(Անդին, թ. 3, 2016):*

ՔՈՉՎՈՐԱԿԱՅԱՆ, գ. **Քոչվորավան՝ քոչվորների կայան, քոչակայան**: **Քոչվորակայանի** կանայք փեսայի ճանապարհին բազմապիսի խոչընդոտներ են հարուցում *(Ֆր., էջ 190):*

ՔՉԱՊԱՀԱՆՋ, ած. **Քիչ պահանջ ունեցող:** Ու երբեմն մտածում եմ, որ Աստված երկիր է ուղարկում կեժոներ՝ գթառատ ու ժպտաշուրթ, ներողամիտ ու համբերատար, չարությանը բարիով պատասխանող, **քչապահանջ** ու անպաշտպան, որպեսզի նրա միջոցով ստուգի մեզ, հայտնաբերի մեր չարիքը, ՄԵՂԱՎՈՐԻՆ *(ԱԱ, ԸԵ, էջ 72):*

ՔՎԵԱԿԱՐԳ, գ. **Քվեարկությունը անցկացնելու կարգը**: Նոր **քվեակարգը** լայնորեն կլուսաբանվի *(ՀՀ, 11.02.2017):*

ՔՐԴԱՀԱԼԱԾ, ած. **Քրդերին հալածող:** Տե՛ս **եզդիահալած**-ի օրինակը: *(ԳԹ, 03.02.2017):*

ՔՐԴԵՐԵՆԱԽԱՌՆ, ած. **Քրդերենի իրողություններով խառն**: …. Նանարի մասին է խոսում, թեև **քրդերենախառն** հայերենով *(Գյուլ., էջ 214):*

ՔՐԻՍՏՈՆԵԱՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ, ած. **Միջնադարյան քրիստոնեությանը հատուկ**: …. Կատարելիություն կրող **քրիստոնեամիջնադարյան** Աստվածը ամենուր է և անտեսանելի …. *(Սաֆ., էջ 9):*

ՔՐՏՆԱՊԱՏ, ած. **Քրտինքով պատված: Քրտնապատ** ճակատի տակ տնքաց միայն մի վճիռ *(ՌԿ, էջ 155):*

Օ

ՕԴԱՀԵՌ, ած. **Օդը հեռացնող**: Ջրատար համակարգի բարելավման շրջանակներում կարգավորվել են …. ջրատարների **օդահեռ** փականները *(Իրավունք, 29.11.2016):*

ՕԹԵՎԱՆԱՏԵՂ, գ. **Օթևանելու՝ իջևանելու՝ հանգստանալու տեղ՝ վայր**: Արդեն երկու ամիս է, ինչ նրանք անբաժան են թե ծղոտի վրա, թե **օթևանատեղում** վրանում, մերկ հողի վրա *(Հունգ., էջ 111):*

ՕԹՅԱԿԱՇԱՐՔ, գ. **Օթյակների շարք**: …. Գնալ …. երկրորդ **օթյակաշարք** *(Բ5, էջ 15):*

ՕԾԱՆԱԲՈՒՅՐ**,** գ. **Օծանելիքի բույր**: …. Իր զգայարանները տակնուվրա արած նրա անդիմադրելի **օծանաբույրը** բոլոր ադրբեջանցիներին է հասանելի *(Ազգ, 27.01.2017):*

ՕՁԱԺԱՊԱՎԵՆ, գ. **Օձի նման գալարներով ժապավեն:** Ջույգերը ցաքուցրիվ եղան, քարշ տալով **օձաժապավենի** կտորները *(ՌՄՊ, հ. 2, էջ 315):*

ՕՂԱՎԱՆԴԱԿ, գ. **Օղակաձև վանդակ**: …. Գեղեցիկ մարմինը պարկեշտորեն թաքցրած էր ահռելի լայն շրջազգեստի **օղավանդակում** *(Գոլս., էջ 187):*

ՕՇԻՆԴՐԱԾԱԾԿ, ած. **Օշինդրով ծածկված:** Ձին, ծանր շնչելով, տանում էր Օլգա Վյաչեսլավովնային **օշինդրածածկ** տափաստանով *(ՌՄՊ, հ. 1, էջ 205):*

ՕՎԿԻԱՆԱՄԵՐՁ, ած. **Օվկիանոսին մոտ:** Ընկել է նա անպարագիծ **օվկիանամերձ** մի քաղաք, //Ուր օտար է ամեն մի ձայն և ամեն մի աղաղակ *(ԼՄ4, էջ 141):*

ՕՐԱԿԵՍ, գ. **Կեսօր:** Հայոց երկնքի արեգակը հրդեհում էր **օրակեսը** *(ՌԿ, էջ 166):*

ՕՐԱՑԱՆԿ**,** գ. **Օրվա ընթացքում անելիքների ցանկը**: …. Բայց **օրացանկում** արձանագրված էր նաև փողի համար հաշվապահին հանդիպելը …. *(Անդին, թ. 7, 2016):*

ՕՐԻՆԱԴՐՈՒՅԹ**,** գ. **Այստեղ՝ օրինաչափություն**: Բարու և չարի հակադրելիության **օրինադրույթով** սահմանված չափաբաժնի խախտման պատճառով, չարը, իբրև փորձության գործիք, չարաշահում է իր գործառույթը …. *(Իր., 14.03.2017):*

ՕՐԻՆԱԿԵՐՊ, ած. **Օրինաչափ, ինքնին բխող, անխուսափելի**: Մոգության ճակատագրական արատը դեպքերի **օրինակերպ** հետևողականության ընդհանուր ենթադրությունը չէ …. *(Ֆր., էջ 63):*

ՕՐՀՆԱԲԵՐԱՆ, մկբ. (բնստ.): **Օրհնաբանելով:** Մինչ սկեսուրն աղոթք էր մրմնջում **օրհնաբերան,** Ազնիվը, վառվող մոմը ձեռքին բոլորի հետ լուռ կանգնած էր կրակի առաջ *(ՄԽ, էջ 41):*

ՕՐՀՆԱԵՂԵԳ, ած. (բնստ., դիպվ., փխբ.): **Օրհնությամբ լի, օրհնալի՝ օրհնալից:** Պիտի ահագնող եղծումին ընդդեմ //Գալիքը հառնի իմ **օրհնաեղեգ** *(ԲԱ, էջ14):*

ՕՔՐԱՅԱՄԱՏԻՏ, գ. **Կարմիր կամ դեղին գույնի բնական հանքային ներկով պատրաստված մատիտ:** …. **Օքրայամատիտով** կամ գրչով արված էտյուդները ծածկում էին պատկերը *(Բ5, էջ 473):*

Ֆ

ՖՈՏՈԳԵՂԱՐՎԵՍՏ, գ. **Լուսանկարչական գեղարվեստ**: Ժիրայրն իր այդ ինքնատիպ ստեղծագործությունները նախ անվանել է ֆոտոռեժիսուրա, հետո կոլաժներից անցում է կատարել մի այլ վիճակի, որը հայտնի է որպես **ֆոտոգեղարվեստ (Photoart)** *(Իր., 11.10.2016):*

ՖՈՏՈԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական ժամանակագրություն:** …. Վերջին տարիներին աշխատում է ՆԱՄ-ում՝ ստեղծելով միության միջոցառումների մշակութային **ֆոտոժամանակագրությունը** *(Ազգ, 08.09.2017):*

ՖՈՏՈՊԱՀՈՑ, գ. **Լուսանկարների պահոց, հավաքածու**: Տես ՄՈՒՏՔԱՆՈՒՆ-ի օրինակը:

ՖՈՏՈՎԱՎԵՐԱՑՈՒՄ, գ. **Վավերացում լուսանկարի միջոցով**: …. Սրանք պարզապես **ֆոտովավերացման** շարքեր չեն …. *(Ազգ, 08.09.2017):*

ՖՈՐԲՍԱՀԱՅ, գ. …. **Forbes ամսագրի՝ աշխարհի միլիոնատերերի ցուցակում գրանցված հայ:** Դեռ Կարեն Կարապետյանի նշանակումների օրերին խոսակցություն կար, որ, ըստ ամենայնի, ոչ անհայտ

մյուս **ֆորբսահայ,** «Ավրորա» նախագծի հեղինակ, «Գլոբալ հայեր» նախաձեռնության անդամ Ռուբեն Վարդանյանը կդառնա Կարեն Կարապետյանի խորհրդական՝ ոչ դասական, այլ միջազգային՝ նա-նոինդուստրիայի և գործարար, ստեղծագործ կապերի առումով *(Իր., 20.12.2016):*

ՖՐԱՆՍԻԱԿԱՆԱՆԱԼ, չբ. **Ֆրանսիական դառնալ**: Ուզո՛ւմ եք ասեմ, թե ինչպես է **ֆրանսիականացել** նրա անունը *(Սար., էջ 367):*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Գրքեր

ԱԱ ԸԵ Աղասի Այվազյան, Ընտիր երկեր, Եր., Նաիրի, 2001:

Աբով. Աբովյանագիտական 5: Եր., 2012:

Անդր. Կ. Անդրեև, Արկած որոնողները: Եր., Հայաստան, 1968:

ԱՊ Ալվարդ Պետրոսյան, Խմբերգերի ժամանակները: Եր., ՀԳՄ հրատ., 2008:

Բ Բալզակ, Մարդկային կատակերգություն: Երկերի ժողովածու, հհ 5,7, Եր., Հայպետհրատ,1957, 1959:

ԲԱ Բագրատ Ալեքյան, Մերկ լեռը: Եր., ՀԳՄ հրատ., 2010:

ԲԱ1 Բեքմեզյան Աստղիկ, Տողամիջյան ընթերցումներ: (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Եր., Վան Արյան, 2016:

Բոհջ. Քրիս Բոհջալյան, Ավազե ամրոցի աղջիկները: Եր., Ծիծեռնակ, թարգմ. Ա. Արսենյան, 2014:

Գևորգյան Մարիամ Գևորգյան, Գրիգոր Զոհրապը հրապարակագիր և գեղագետ, Եր., հեղին. հրատ., 2010:

Գյուլ. Խ. Գյուլնազարյան, Ձրաղաց: Արևիկ, 1989:

Գոլս. Ձ.Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը. Ասք ֆորսայթների մասին, 1, Սեփականատերը:

ԴԵ Դանիել Երաժիշտ, Ամենեն մաքուր հայելին ցեղին: Ակնարկներ դասական երաժշտության մասին: Եր., Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 2008:

ՁԽ Ձորայր Խալափյան, Մեռնող հառնող, Եր., «Հայաստան» հրատ., 1975:

ԻԿ Իտալո Կալվինո, Կատուն և ոստիկանը: Պատմվածքներ: Իտալ. թարգմ. Մ. Հակոբյան: Եր., Սով. Գրող, 1984:

ԼՀ Լևոն Հախվերդյան, Մտորումներ: (Հոդվածների ժողովածու): Եր., Սով.գրող, 1984:

ԼՄ 1 Լևոն Միրիջանյան, Կրկնվող օրեր: Վիպակ: Եր., Վան Արյան, 2004:

ԼՄ 2 Լևոն Միրիջանյան, Գրողի ճանապարհը: Կենսամատենագիտություն: Եր., 2005:

ԼՄ 3 Լևոն Միրիջանյան, Սրբազան ավանդներ: Ե., Գրական հայրենիք, 2006:

ԼՄ 4 Լևոն Միրիջանյան: Լուսաստղ: Եր., Գրական հայրենիք, 2013:

Լ. Հովս. Լ.Ս.Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը: Եր., Աստղիկ, 2016:

Խանզ. Սերո Խանզադյան, Հայրենապատում: Հայաստան, 1981, գիրք Բ:

Կորտ. Խուլիո Կորտասար, Պատմվածքներ: Անտարես, 2010, թարգմ. Հ.Բաղդասարյան:

Հայրունի Ա.Ն.Հայրունի, Հովհաննես Լեփսիուս. Հայանվեր գործիչն ու հրապարակախոսը: Միտք, Եր., 2001:

Հայրունի 1 Աշոտ Հայրունի, Հովհաննես Լեփսիուսի առաքելությունը: Նաիրի, Եր., 2002:

Հայրունի 2 Ա.Ն.Հայրունի, Հովհաննես Լեփսիուս. Հայանվեր գործիչն ու հրապարակախոսը: Միտք, Եր., 2001:

Հեմ. Է. Հեմինգուեյ, Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր: Վանաձոր, Սիմ, 2006, թարգմ. Ն.Ա.Ջաղինյան:

Հ Հերման Հեսսե, Ներսը և դուրսը: Պատմվածքներ: Եր., Ապոլոն, 1991, թարգմ. Ա. Ալեքսանյան:

ՀՄ Հրանտ Մաթևոսյան, Մի ուրացեք ձեր եղբորը: Եր., Վան Արյան, 2002:

Հյուգո Վ. Հյուգո, Թշվառներ: Առաջին մաս, Սով. գրող, 1987:

Հունգ. Հունգարական նովելներ: Եր., Սով.գրող., 1978, թարգմ. Ա.Մկրտչյան:

ՄԱ Մանիկ Աճեմյան, Փոքր Միեր: Լեգալ Պլյուս, Եր., 2011:

Մարտ. Ռ.Մարտիրոսյան, Առանց դիմակի, գիրք երկրորդ: Եր., Արևիկ, 1991:

ՄԼ Մարկ Լևին, Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը: Եր., Անտարես, 2014, թարգմ. Ռ. Միրզոյան:

ՄԽ Մկրտիչ Խերանյան: Փրկություն, Ձայն տուր ո՞վ ծովակ: Եր., Ձանգակ-97, 2000:

ՄՂ Մ. Ղուկասյան, Գիսավոր աստղի տարին: Եր., Ապոլոն, 2011:

ՄՍ Մկրտիչ Սարգսյան, Ինքնատիպ խոսք: Եր., Հայաստան, 2005:

ՄՍ Մկրտիչ Սարգսյան, Դեպի լեռն Աբուլ: Եր., Միտք, 2013:

Մուրադ. Ս.Մուրադյան, Հովհաննես Շիրազ, Բանաստեղծը, Մարդը, գիրք Ա: Եր., ԵՊՀ հրատ., 2012:

Պաչյան Արամ Պաչյան, Ցտեսություն, Ծիտ: Եր., Անտարես, 2012:

Պլուտ. Պլուտարքոս, Երկեր, Եր., 1987, Հայաստան, թարգմ. Համո Հարյան:

Պրուս Բ.Պրուս, Տիկնիկ, գիրք 1: Հայաստան 1975, թարգմ. Դորա Եսայան:

Ձան. Գ.Ձանիկյան, Դարի դեմքը: Եր., Ոսկի խատուտիկ, 2010:

ՌԿ Ռոբերտ Կարայան, Փրկություն: Եր., Վան Արյան, 2008:

ՌՀ Ռուբեն Հովսեփյան, Ես ձեր հիշողությունն եմ, Պատմվածքներ: Եր., ՀԳՄ, 2003:

ՌՍՊ Ռուս սովետական պատմվածք, հ. 1: Եր., ԵՊՀ հրատ., թարգմ. Ա. Հովհաննիսյան, 1986:

ՌՍՊ Ռուս սովետական պատմվածք, հ. 2: Եր., ԵՊՀ հրատ., թարգմ. Ա. Հովհաննիսյան, 1987:

Սար. Վ. Սարոյան, Ընտիր երկեր: Հ.4, Նաիրի, 1991:

Սարտր Ժան-Պոլ Սարտր, Սրտխառնոց: Անտարես, 2016, թարգմ. Հ. Ֆելեքյան:

Սաֆ. Վ.Սաֆարյան, Միջնադարի հայ գրականության պարբերացման հիմունքները, Եր., ԵՊՀ հրատ., 2012:

Սենկ. Հ. Սենկևիչ, Խաչակիրներ: Եր., Հայպետհրատ, 1957:

ՍՀ Սերգեյ Հովհաննիսյան, Պարոն Շերամաորդը: Եր., Փրինթինֆո, 2004:

ՍՍ Սերգեյ Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք 4-րդ: Եր., Տիգրան Մեծ, 2004:

ՍՄ Սոմերսեթ Մոեմ, Պատմվածքներ, Լուսին և վեցպենսանոց, թարգմ. Ա. Խաչատրյան: Եր., Լույս, 1989:

Սուրյան Փիթեր Սուրյան, Միրի, Պրինտ, Եր., 2013, թարգմ. Ա.Արսենյան:

Սուրյան 1 Փիթեր Սուրյան, Սպասումի մեկ դար: Եր., Գրաբեր, 2015, թարգ. Ա.Արսենյան:

ՎԴ Վահագն Դավթյան, Անքնություն: Բանաստեղծություններ, պոեմներ: Եր., Սով.գրող., 1987:

Վեռնոյ Անրի Վեռնոյ, Մայրիկ: Խորհրդային գրող, Եր., 1989, թարգմ. Սոֆի Ավագյան:

ՎՓ Վահրամ Փափազյան: Սրտիս պարտքը: Եր., Հայպետհրատ, 1959:

Տոն. Թադևոս Տոնոյան, Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը: Ստեփանակերտ, Վաչագան Բարեպաշտ, 2016:

Օտ. հայ գր. Օտարալեզու հայ գրողներ (ժողովածու): Եր., Եր.համալս. հրատ., 1989, Թարգմ.՝ Ա. Ալիքյան և ուրիշն.:

Ֆր. Ջ.Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը. Մոգություն և կրոնի ուսումնասիրություն: Եր., Հայաստան, 1989, թարգմ. Ս. Բաղդասարյան-Թափալցյան:

Բ. ամսագրեր

Անդին – Անդին
Աստղիկ – Աստղիկ (գիրք թարգմանչաց):
Արտ. գրակ. – Արտասահմանյան գրականություն
Գարուն – Գարուն
Լրաբեր – Լրաբեր հասարակական գիտությունների
Նորք – Նորք
ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

Գ. լրագրեր

Ագրոլրատու - Ագրոլրատու
Ազգ – Ազգ
ԳԹ – Գրական թերթ
Եր.համ.- «Երևանի համալսարան»ամսաթերթ
Իր. – Իրատես
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
Հրապ. – Հրապարակ
Դ. Այլ աղբյուրներ
Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հմց (համացանց), ռադիո:

Օգտագործված բառարաններ

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր.,Լույս, 1973:
3. Էլոյան Ս.Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Խլղաթյան Ֆ.Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան,1982:
6. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետ.հրատ.,հհ. 1-3, 1944, հ.4, 1945:
7. Մեյթիխանյան Փ.Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
8. Հ.Մեսրոպեան, Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրէալ, 2000:
9. Նոր բառեր. Ա պրակ (Ա.Ս.Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան, Լ.Ե.Սահինյան),Եր., 2015:
10. Նոր բառեր. Բ պրակ (Ա.Ս. Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան, Լ.Ե.Սահինյան),Եր., 2016:

11. Դ.Ս.Չիլինգարյան, Լ.Ե.Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն- հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., 2015:
12. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Ջ.Ա.Հացագործյան, Ա.Հ.Դարբինյան, Հ.Գ. Հովումյան, Գ.Հ.Սրվանձտյան), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
13. Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., 2000:

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՍԵՐԳԵՅԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԿԱՌԼԵՆԻ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԱ ԳՐԻԳՈՐԻ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Գ պրակ

Համակարգչային էջադրումը՝ Ա. Գուլոյանի

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am